ՆՇԱՆԱՎՈՐ
ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԸ

Վ. ՊՐՈՍԿՈՒՐՅԱԿՈՎ

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

ՊԵՏՀՐԱՏ 1936 ՅԵՐԵՎԱՆ

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՐՈՍԿՈՒՐՅԱԿՈՎ

655(09)
Պ-99

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961

Թարգմանեց

Մ. ԽԱՆՋԱԴՅԱՆ

A 19431

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1936

Խմբագրեց Ար. Առստամյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ Ա. Արզաքանյան

Պետհրատի տպարան
Գլավլիտ Վ.-305, Պատվեր 469
Հրատ 3673, Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 21 մարտի 1936 թ.
Ստորագրված է տպելու 7 մայիսի 1936 թ.

: 92 [Гутенберг]

ВЛАДИМИР ПРОСКУРЯКОВ
ГУТЕНБЕРГ
ГИЗ ССР Армении, Эривань

«Մամուլը միակ գործիքն է, վորի ոգնությամբ կուսակցությունն ամեն որ, ամեն ժամ խոսում է բանվոր դասակարգի հետ, իրեն հարկավոր լեզվով։ Ուրիշ միջոցներ՝ հոգևոր թելերով միացնելու կուսակցությունը և դասակարգը, ուրիշ այդպիսի ճկուն ապարատ բնության մեջ չկա... Մամուլը պիտի աճի վոչ թե որեցոր, այլ ժամեժամ։ Դա կուսակցության ամենաուժեղ և ամենասուր գործիքն է»։

ՍՏԱԼԻՆ (XII կուս համագումար)

Խ ո ս ք   ա ռ ա ջ ի ն

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մարդկանց կյանքի մասին տեղեկությունները, սովորաբար, թերի յեն և հակասական։ Մեծ մարդու կենսագրությունը միշտ ել առասպելի յե վերածվել։

Նույնիսկ այժմ, յերբ հազարավոր ֆոտոնկարներ նոր սերունդների համար պահպանում են մարդու արտաքին տեսքը ծննդյան օրից մինչև մահ, յերբ մամուլը լուսարձակի պես լուսավորում ե նրա բոլոր գործողությունները, յերբ մինչև անգամ ձայնը պահպանվում ե գրամոֆոնի թիթեղնիկի կամ հընչուն կինոյի ժապավենի վրա—այնուամենայնիվ կենսագիրները վիճում են մարդու կյանքի տարեթվերի, նրա սովորությունների և գործերի մասին։ Վորքան խորամուխ լինենք անցյալի մեջ, այնքան թույլ և հեղհեղուկ կդառնան կենսագրական նկարի ուրվագծերը, այնքան ավելի յերկբայելի կդառնան վկայությունների և փաստաթղթերի վավերականությունը։

Անվիճելի յե միայն որինաչափորեն զարգացող հասարակության ընդհանուր պատկերը և վավերական ե միայն անհատի կենսագրությունը, վորպես կադր այդ հոյակապ նկարի մեջ, կադր, վորն ամուր մխվել ե նրան առաջացնող ամբողջի մեջ և որգանապես ձուլվել նրա հետ։

Այսպես՝ կենսագրական առասպելի անզոր ցնորականությունը փոխարինվում ե դարի զավակի վերածնվող կյանքով։

Յեվ թող յերկարաձգվեն ծննդյան և մահվան թվականների, մազերի գույնի, վարմունքների հիմնավորումների մասին յեղած անհամաձայնությունները—մենք ժամանակի խոչընդոտների վրայով մեր ձեռքը տալիս ենք մի մարդու, վորն ապրել և պայքարել ե սոցիալական անցյալի անխախտելի ճշմարտության մեջ։

Ա ԱՋԻՆ ՄԱՍ

ՄԱՅՆՑԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՅՈՀԱՆ ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

I. ՄԱՅՆՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԳՐԱԳԻՐ ՆԻԿՈԼԱՈՒՍ ՎԵՐՇՏԱՏԻ ԱՐԿԱԾԸ

Պատմության դաշտերը գիտեն փոթորկահույզ ծաղկման դարաշրջաններ։ Անպտուղ հողերը դարերի ընթացքում դանդաղորեն և դժվարին կերպով ույժ են կուտակում։ Նիրհող գետինը շարունակ ծծում է անկման և նեխման նորանոր արգասիքներ։ Կազմալուծման օրերը, հասարակակարգի խորտակման օրերը, վորոնք ժամանակակից մարդու միտքը լցնում են սարսափով, աննկատելի կերպով նախապատրաստում են մոտիկ պտղաբերությունը։ XV դարը խամահողի հզոր բողբոջման դարըն է։ Արտադրողական ուժերի զարգացումն ուժեղ խթան է ստանում լեռնային գործի, տեքստիլ արդյունաբերության, ծովագնացության ու ռազմական արվեստի, գրատպության գյուտի և տեխնիկական կատարելագործությունների, մի շարք գիտությունների նվաճումներից։ Արդյունաբերության վերելքի, դրամական տնտեսության զարգացման և ներքին ու միջազգային փոխանակության ճնշման տակ սկսվում է ֆեոդալիզմի քայքայումը։

Հասարակական հարաբերությունները խճճվում են սրված հակասությունների կծիկի մեջ։ Ուժեղանում է դասակարգային պայքարը, աճում է առևտրական մրցությունն առանձին յերկրների միջև։

«Բոլորի կռիվը բոլորի դեմ»։

XV դարում հյուսվում են ծայրերն այն թելերի, վորոնք յերեքհարյուր տարի հետո պիտի գործեյին արդյունաբերական հեղաշրջման հանգույցը, վորն սկսեց կապիտալիզմի ուշագրավ և արյունոտ պատմությունը:

Մենք դեռևս համաշխարհային գյուտերի դարասկզբին ենք. այսօր 1434 թվականի մարտի 14-ն է:

Մի կարճատև ակնաթարթում հին փաստաթղթի տեսապակին եկրանի վրա յե գցում յերկու մարդու պատկեր—Մայնցի քաղաքային դրագիր Նիկոլաուս Վերշտատի և մայնցեցի աքսորական Յոհան Գուտենբերգի:

Նրանցից առաջինի յերևալը կարճատև է, իսկ Նիկոլաուս Վերշտատի ճանապարհն, այնուհետև կորչում է:

Գուտենբերգը դուրս է գալիս լուսավորված նախաբեմը—անցյալի խավարը—ընդմիշտ այնտեղ մնալու:

Գրատպության գյուտարարի կյանքի այս առաջին մեզ հայտնի միջադեպն ամուր շրջափակված է միջնադարյան քաղաքի հասարակական կապերի և ընդհարումների շրջանակի մեջ:

Քաղաքները, իբրև միջնադարի տնտեսական և քաղաքական ույժ, յերևան են գալիս արևմտա-յեվրոպական ֆեոդալիզմի յերկրորդ շրջանում (XI-XVI դ. դ.):

Գյուղն է վորոշում ֆեոդալական իրավակարգի եյությունն ու դեմքը—կալվածատերն ու կախյալ գյուղացին նրա կենտրոնական դեմքերն են: Ֆեոդալիզմի պատմությունն սկսվում է փակ բնատնտեսությամբ, մանր գյուղացիական տնտեսությունների դաժան շահագործումով խոշոր հողատեր-սենյորների կողմից: Այս շահագործման միջոցները վոչ միայն տնտեսական հարկադրանք է, այլ և բացարձակ բռնություն՝ հիմնված անմիջական արտադրողի անձնական կախվածության վրա:

Հարկավոր եր յերկարատև ժամանակամիջոց, վորպեսզի այդ շենքն առաջին ճեղքվածքները տար: Ապրանքային հարաբերությունների զարգացումն աստիճանաբար փշրում է ֆեոդալական տնտեսության բնական ձևերը, գյուղացիներն անցնում են դրամական տուրքի, և հողապրկությունը դուրս է շպրտում գյուղատնտեսական և արհեստավորական պրոլետարիատի ըսկըզբնական կադրերը: Այդ ժամանակ քաղաքը բաժանվում է գյուղից և սկսում է յուր զարգացման ճանապարհը՝ լի ներքին

պայքարով և արտաքին ցնցումներով, բայց և այնպես վերջնական հաշվով վճռական ետապներում ֆեոդալական գյուղից կախված։

Քաղաքացիների առաջին քաղաքական կռիվները—իրենց անկախության պաշտպանությունն եր ֆեոդալներից։ Քաղաքային ազատությունների և «խաղաղությունից» օգտվելու իրավունքների նվաճումը, որ կնշանակեր ֆեոդալների կամայականությունների վերացում, նշանավոր սկզբնավորություն եր։ Ստրասբուրգի հնագույն քաղաքային իրավունքն (XII դ.) ասում ե. «Այլ քաղաքների նմանությամբ հիմնված ե նաև Ստրասբուրգն այնպիսի արտոնությամբ, որ այնտեղ ամեն մարդ—թե օտար թե տեղացի—միշտ և բոլորից օգտվի «խաղաղությունից»։ Այնուհետև քաղաքացիները մարմնավոր և հոգևոր իշխաններից ձեռք են բերում ինքնավարության և մագիստրատի ընտրության իրավունք։

Քաղաքային առաջին ազատությունների պտուղներից օգտվեցին հարուստ ընտանիքները-պատրիկյան տոհմերը[1]։ Մագիստրատում միմիայն նրանք եյին նիստեր ունենում և վարում քաղաքային վարչության բոլոր պաշտոնները։

Քաղաքային ազատությունների համար մղվող պայքարում քաղաքացիների միացած ֆրոնտը՝ ընդդեմ սենյորների, պատռվում ե ներքին հակասություններից։ Արհեստավորների ամրացող դասակարգը բողոքում ե պատրիկների մենաշնորհի դեմ և ձգտում նրա սահմանափակմանը՝ կամ ավելին՝ իշխանության անմիջական գրավմանը։

Վերջապես յերևան ե գալիս նոր օպոզիցիա—քաղաքային պլեբսը, կազմված սնանկացած քաղաքացիներից և քաղաքացիների այն մասսաներից, վորոնք քաղաքացիական իրավունքներով չեյին օգտվում—վարպետացուները, օրավարձով աշխատողները և սաղմնավորվող բազմաթիվ լումպեն-պրոլետարները։ Քաղաքային պլեբսի յելույթները բանվորական ապստամբությունների ապագա փոթորիկների հեռավոր նախագուշակներն եյին։ Այդպիսի հրապարակային բունտի փայլուն դեպք եր չոմպիների[2] ապստամբությունը Ֆլորենցիայում 1378 թվականին։

Յոհան Գուտենբերգը Մայնց քաղաքից եր։ Նրա նախահայրերն ապրել եյին քաղաքային ազատությունների համար

վարած պայքարի առաջին էտապը. այս մասին, յերևելի ավանդություններ եյին պահպանվել նրա ընտանիքում։

Կարճ ժամանակով թողնենք Մայնցը, և թող մեր առջևից անցնեն մի այլ քաղաքի քաղաքացիների՝ տիրապետողների հետ ունեցած ընդհարումների նկարները, որ պատկերել ե միջնադարի տաղանդավոր գրողներից մեկը։

Իհարկե, սա մասնակի դեպք ե, բայց լույս ե սփռում այն բանի վրա, թե ինչպես եյին նվաճվում քաղաքային ազատությունները, ինչպես եր դասավորվում այն կյանքը, որի մեջ Գուտենբերգը պիտի սկսեր յուր դժվարին ճանապարհը։

ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակը XII դարն ե, տեղը — Լան քաղաքը Ֆրանսիայում։ Գործող անձինք՝ Լյուդովիկ թագավորը, Գոդրի յեպիսկոպոսը, հոգևորականությունը, սենյորները և քաղաքացիք։

Խոսքը տրվում ե Գվիբերտ Նոժանցուն — աստվածաբան և պատմագիր — որ թողել ե ինքնակենսագրություն՝ դարաշրջանի հրաշալի փաստաթուղթը։

«Այս քաղաքի (Լանի) վրա վաղուց ի վեր ցածրացել եր այնպիսի չարաբախտություն, որ այնտեղ ոչ ոք չեր վախենում ո՛չ աստծուց, ո՛չ իշխանություններից, այլ ամեն մեկը՝ յուր ուժերի և ցանկությունների համապատասխան քաղաքում կատարում եր սպանություններ և թալաններ։

Սենյորները և նրանց ծառաները բացարձակ կատարում եյին թալաններ և ավազակություններ. գիշերը անցորդն ապահովությամբ չեր ոգտվում. կանգնեցնում, բռնում և սպանում եյին — ահա միակ բանը, որ սպասում եր նրան։

Հոգևորականությունը, ավագ սարկավագները և սենյորները, տեսնելով իրերի այս դրությունը, հնարելով ամեն տեսակ միջոցներ ռամիկ ժողովրդից փող կորզելու համար, միջնորդների միջոցով բանակցությունների մեջ եյին մտնում նրանց հետ, առաջարկելով իրավունք տալ նրանց կազմել կոմունա, յեթե նրանք բավականաչափ գումար կտան»։

Ի՞նչ եր նշանակում կոմունա կազմել։

«Այն բոլոր բնակիչները, վորոնք պարտավոր եյին մարդագլուխ չինշ[3] վճարել, պետք է իրենց սենյորին տարեկան մի անգամ վճարեյին սովորական ճորտային տուրքեր և վճարեյին որենքով սահմանած տուգանքն այն դեպքերում, յերբ նըրանք վորեւե հակաորինական գործ կատարեյին։ Այս պայմաններով նրանք բոլորովին ազատվում եյին բոլոր այն հարկերից և մուծումներից, վորոնցով սովորաբար տուրքագրվում եյին սերվերը[4]։ Ոգտվելով դեպքից՝ փրկանքով ազատվելու բազմաթիվ ճնշումներից, ռամիկները փողի կույտեր տվին այդ արծաթասերներին, վորոնց ձեռքերը նման են անհատակ փոսի, վոր հարկավոր է լցնել»։

Այս պայմանագիրը կնքելիս, Գոդրի յեպիսկոպոսը բացակայում եր։ Վերադառնալով նա բարկանում է փոփոխությունների համար, բայց քաղաքացիներից փող ստանալով. զիջում է։

«Նա յերդվում է, վոր կպահպանի կոմունայի իրավունքները»։ Թագավորը, վոր հակված եր ռամիկների առատ նվերներով, համաձայնեց հաստատել այդ պայմանագիրը և վավերացնել յերդումով։

«Տեր իմ աստված, ով կարող է պատմել այն պայքարի մասին, վորը բորբոքվեց, յերբ, ժողովրդից ընծաներ ընդունելուց և այնքան յերդումներից հետո, այդ նույն մարդիկ սկսեցին փորձել քանդել այն, ինչ վոր իրենք ուխտել եյին պաշտպանել և փորձեցին նախկին դրության վերադարձնել այն ըստրուկներին, վորոնք մի անգամ փրկված և ազատված եյին լծի բոլոր ճնշումներից»։

Յեպիսկոպոսը և սենյորները մտադրվեցին վոչնչացնել կոմունան և Թագավորին ընծաներով հակեցին դեպի այդ միտքը։

«Լանի կոմունան ստեղծող պայմանագրերի խախտումը քաղաքացիների սրտերը լցրեց բարկությամբ և զարմանքով. բոլոր նրանք, վորոնք պաշտոններ եյին վարում, դադարեցրին իրենց պարտականությունների կատարումը. կոշկակարները և քոշակարները փակեցին իրենց խանութները. ճաշարանատերերը և պանդոկատերերը վոչ մի ապրանք չեյին ցուցադրում և վոչ վոք հույս չուներ, վոր ավարի ծարավ պարոններն ապագայում վորևե բան կթողնեն նրանց»։

«Արդեն վոչ թե բարկությունը, այլ վայրի գազանի ցասումը բռնեց ցածր դասակարգի մարդկանց. նրանք դավադրություն կազմեցին, վորն ամրացավ փոխադարձ յերդումով»:

Քաղաքացիները պատրաստվում եյին արյուն թափել կոմունայի համար: Յեպիսկոպոսն արհամարհանքով եր վերաբերվում բունտարար ստրուկներին, նա ասում ե. «Դուք կարծում եք, թե այդ մարդիկ կարող են վորև ե բան անել իրենց բոլոր ապստամբություններով: Յեթե ժակը-իմ նեգրը նրանցից ամենաահավորի քթից բռնած քարշ տա, վերջինս չի համարձակվի քրթմնջալ ժակի վրա: Ջե՞ վոր յերեկ յես նրանց հարկադրեցի հրաժարվել այն բանից, ինչ վոր նրանք իրենց կոմունան են անվանում իմ կյանքի ամբողջ տևողության ընթացքում»:

Գոդրիի արտասանած այդ խոսքերից հետո հետևյալ որն ապստամբությունը բռնկեց: Այդ զատկվա հինգերորդ որն եր:

«Կեսորից հետո յեպիսկոպոսը Գոտյե ավագ սարկավագի հետ դատողություններ եր անում այն փողերի մասին, վոր պիտի հավաքվեր քաղաքացիներից: Հանկարծ քաղաքում տագնապ տարածվեց, և բազմաթիվ մարդիկ գոչում եյին «կոմմունա, կոմմունա»: Սրերով, յերկսայրի կացիններով, նետերով, նիզակներով, տապարներով և մահակներով զինված քաղաքացիների բազմաթիվ խմբեր լցվեցին ամենասուրբ կույսի տաճարը և նետվեցին դեպի յեպիսկոպոսի պալատը»:

Մի քանի սենյորներ, վոր յեպիսկոպոսին աջակցություն եյին խոստացել, փորձում եյին նրան ոգնության գալ, բայց սպանվեցին ամբոխի ձեռքով: Այս որինակը մնացածներին զըսպեց:

«Յեպիսկոպոսը մի քանի զինված մարդկանց ոգնությամբ պաշտպանվում եր, ինչպես կարողանում եր՝ քարկոծելով և նիզակներ նետելով հարձակվողների վրա...: Վերջիվերջո անզոր լինելով յետ մղելու ժողովրդի համարձակ գրոհները, նա հագավ յուր ծառաներից մեկի հագուստը, փախավ յեկեղեցու տակի նկուղը, փակվեց այնտեղ և թագնվեց գինու տակառի մեջ, վորի ծակը կալավ մի հավատարիմ ծառա: Գոդրին կարծում եր, թե լավ թագնված: Քաղաքացիք դես ու դեն ընկան, վորոնելով նրա

թագստի տեղը և բարձրաձայն կանչում եյին նրան, անվանելով վոչ թե յեպիսկոպոս այլ սրիկա»։

Ծառան մատնեց յեպիսկոպոսին։ Յերբ տակառի անցքը բաց արին, բոլորն սկսեցին հարցնել՝ ով է ներսը։ Հալածողներից մեկը փայտով հարվածեց յեպիսկոպոսին, և նա սարսափից սառչելով պատասխանեց. «Այստեղ դժբախտ գերին է»։

«Մազերից քարշ տալով, Գոդրիին դուրս հանեցին տակառից, բազմաթիվ հարվածներ տեղացին և որը ցերեկով քարշ տվին վանքի նեղ նրբանցքը, կապելլան[5] Գոդֆրուայի տան մոտ։ Թշվառն ամենավողորմելի արտահայտություններով գթասրտություն եր հայցում, խոստանում եր յերդվել, վոր նրանց յեպիսկոպոսը չի լինի, առաջարկում եր մեծ գումար և պարտավորվում եր թողնել հայրենիքը, բայց բոլորը կատաղությամբ պատասխանում եյին վիրավորանքներով։ Նրանցից մեկը՝ Բերնար դը Բրյուերը, բարձրացնելով յուր յերկաթյա տապարը, դաժանորեն ճեղքեց նրա գանգը... Վերջապես Գոդրիի դիակը՝ թալանված մինչև մերկություն՝ գցվեց նրա կապելլանի տան անկյունը»։

«Յեպիսկոպոսի մարմինը շաբաթվա հինգերորդ որվա սկզբից մինչև հետևյալ որվա ժամի յերեքը բոլորովին մերկ փռված մնաց փոշու մեջ»։

Բարոնները և հոգևորականությունը փախան քաղաքից քաղաքացիք վրեժ եյին լուծում. կարգը քաղաքում վերականգնեց թագավորը։

Ռեյմսի արքեպիսկոպոս Ռաուլը ժամանեց Լան՝ յեկեղեցին վերականգնելու համար։ Ժամերգությունից հետո նա ճառ արտասանեց. «Ծառաներ — ասաց նա — ամենայն յերկյուղածությամբ հպատակվեցեք տերերին, ասում է առաքյալը»։

Նկարագրած դեպքերից 16 տարի հետո Գոդրիի հաջորդը հարկադրված եր ընթանալ կոմունան վերականգնելու ուղղությամբ՝ նրա նախկին իրավունքներով։ Լյուդովիկ VI Հաստ թագավորը Լանին ազատություն շնորհեց։

Թագավորի շնորհագիրն սկսվում եր այսպես՝

«Հանուն սուրբ և անբաժանելի յերրորդության։ Ամեն։

Վողորմությամբն Աստծո, Լյուդովիկ Ֆրանսիացիների թագավոր, հայտարարում ենք մեր բոլոր հավատարիմներին —

ինչպես հետագաներին, այնպես էլ ներկաներին—հետևյալ խագաղ վորոշումը, վորը մեր ազնվատոհմ իշխանների և Լանի քաղաքացիների խորհրդով և համաձայնությամբ, մենք հաստատեցինք Լանում, վոր տարածվում է Արդենից մինչև Բարձրանտասը, այնպես վոր նրա սահմանների մեջ մտնում են Լյուլի գյուղը, նույնպես խաղողի այգիները և սարը։

1. Առանց դատավորի թույլտվության վոչ վոք իրավունք չունի ձերբակալել վոչ ազատ մարդկանց, վոչ ճորտերին...»

Այսպես էր Լանում։

Վերադառնալով Մայնցին՝ նշենք նրա քաղաքային ազատությունների նվաճման հիմնական տարեթվերը։

Առաջին անգամ Մայնցի քաղաքացիներին 1135 թվականին արտոնություններ տվեց Ադալբերտ I արքեպիսկոպոսը։ Այդ փաստաթուղթը գծագրած է Մայնցի տաճարի ծանր բրոնզյա դռների վրա։

Մայնցի Մագիստրատը[6] գոյություն ունի 1244 թվականից, յերբ Զիգֆրիդ III արքեպիսկոպոսը Մայնցի բնակիչներին գրություն նվիրեց քաղաքային ազատությունների մասին։

Թեկուզ Յոհան Գուտենբերգի պատանեկության ժամանակ լռեցին ահազանգերը, վորոնք քաղաքացիներին պատերազմի կոչ էյին անում արքեպիսկոպոսների և իշխանների դեմ, սակայն պատրիկների և բյուրգերական օպոզիցիայի միջև յեղած կռիվը բորբոքման մեջ էր։

Զիգֆրիդ III-ի շնորհագիրը՝ Մայնցի ազատությունների մասին՝ քաղաքին արտոնեց խորհուրդ ընտրելու իրավունք։ Սակայն ընտրելու և ընտրվելու իրավունքով օգտվում էր միայն պատրիկների վոչ մեծ խումբը։ Նրանք էյին սահմանում տուրքերը և վարում քաղաքային վարչության բոլոր պաշտոնները։ Այդ շրջանում պատրիկյան տոհմերի շարքում արդեն պատահում է Գուտենբերգի ազգանունը։ Այսպես շարունակվեց մինչև 1328 թվականը։

Այս ժամանակներին աճեց ցեխային արհեստավորների նոր ուժեղ դասը (այն ժամանակ քաղաքում հաշվվում էր 58 ցեխ)։ Բնականաբար կոնֆլիկտ պիտի առաջանար։ Պատրիկների և հասարակ քաղաքացիների միջև հակասությունների սըրման և այդ քաղաքացիների բացերաց ապստամբության հիմք

ծառայեցին ռազմական դեպքերը։ Մայնցի արքեպիսկոպոսական աթոռի յերկու թեկնածուի պայքարի ժամանակ,—Բոլդվին Տրիրցու՝ ընտրված տաճարական կապիտուլից [35] և Հեյնրիխ Ֆիրնեբուրգի, վորին նշանակել եր Յոհան XXII-պապը և վորին պաշտպանում եյին քաղաքացիք,—ավերվեցին մի շարք վանքեր և տաճարական շենքեր։ Հաղթանակող Բոլդվինը քաղաքից պահանջեց վերականգնել յեկեղեցու ավերված գույքը։ Այս բանը մեծ գումարներ եր պահանջում։ Ցեխերը չեյին ցանկանում բարձրացրած տուրքեր վճարել առանց մասնակցություն ունենալու վարչության մեջ։

Գոռոզ պատրիկները փորձեցին զինված ձեռքերով խաղաղացնել արհեստավորներին։

Արհեստավորների դեմ կռվի մտած տոհմային քաղաքացիների շարքում մենք նորից հանդիպում ենք Գուտենբերգի նախահորը՝ Յոհան Գենսֆլեյշին։ Նրա տանն եյին հավաքվում դավադիրները։ Ցեխայինները հաղթեցին և մագիստրատում գրավեցին տեղերի կեսը։ Պայքարի առաջին ետապն անցած եր։

Բայց հասարակ քաղաքացիք սրա վրա կանգ առնել չեյին կարող։ Հաջորդ դարում հաճախակի ընկնում է իր իրավունքների լայնացումը պահանջող արհեստավոր դասի անբավականությունը։ 1428-1429 թվականների ցեխային հեղափոխությունն այդ հուզումների բոլորումն եր։ Նորից տնտեսական պատճառները պայմանավորեցին հեղափոխական շարժումը։ Այդ ժամանակ Մայնցը կրում եր ծանր ֆինանսական դժվարություններ, վոր առաջացել եյին քաղաքների անաչող պատերազմներին մասնակցելուց, ներքին անկարգություններից և վատ կառավարումից։

Ցեխային հեղափոխության գլուխ կանգնեցին յերկու մարդ—Երբերհարդ Վինդեկ և Նիկոլաուս Վերշտատ—վոր քաղաքային գրագիր եր համայնքի կողմից։

Գույքային բոլոր արտոնություններից զրկվելու սպառնալիքը պատրիկներին փախցրեց քաղաքից։ Մագիստրատն ընկավ ցեխերի ձեռքը և բարենորոգվեց։ Նրա 35 տեղերից միայն յոթն ստացան պատրիկները։

Բանվորների հաղթանակը յերկարատև չեղավ։ Արդեն 1430 թվականին նրանք հարկադրված եյին զիջումների գնալ, վորն առաջացավ քաղաքի ֆինանսական դրության հետագա վատա-

ցումից։ Պատրիկների հարուստ ընտանիքները ցանկալի վճարողներ էին։ Փախած նշանավոր ընտանիքներից շատերը վերադարձան՝ կողմերի մեջ խաղաղության համաձայնություն կնքելուց հետո։

Յոհան Գուտենբերգի յերակների մեջ խառնվել էր քաղաքային ավագանի ընտանիքի արյունը։ Նրա հայրն էր Ֆրիլե Գենսֆլեյշ։ Մայրը—Էլ՛զան, պատկանում էր Գուտենբերգների գերդաստանին, վորով հայտնի յե գյուտարարը։ Նրա ծնողների ամուսնությունը կայացել է 1386 թ.։

Յոհանն ուներ մեծ յեղբայր—Ֆրիլե և քույր—Էլզան, վորն ամուսնացավ 1414 թվականին։

Յոհանի մանկական և պատանեկական տարիների մասին ստույգ վոչինչ հայտնի չի։ Ճշտիվ պարզված չէ նաև նրա ծննդյան տարեթիվը. պայմանական կերպով համարում են 1400 թվականը։

Յոհանի պատանեկական տարիներն անցել են քաղաքային անընդհատ հուզումների և պատրիկների ընտանիքների հալածման հանգամանքներում։ Առաջին յերեսնամյակի ցեխային հեղափոխություններից մեկի ժամանակ, հնարավոր է, վոր հենց 1428-1429 թվականներին, Գենսֆլեյշները հարկադրված եյին թողնել իրենց հայրենի քաղաքը։ Հուզումներով և խռովություններով լի ջահելությունը Յոհանին վաղ ընտելացրեց վտանգների ու պայքարի և կոփեց նրա բնավորությունը։

Պետք է կարծել, վոր Գուտենբերգը վաղ հասակում սովորում էր Մայնցի յեկեղեցական դպրոցներից մեկում, վորտեղ և ձեռք է բերել կարդալու և գրելու վարժությունը։

Գենսֆլեյշները հարուստ չեյին։ Ակներև է, վոր քաղաքի ընդհանուր աղքատացումը և նշանավոր տոհմերի ազդեցության անկումն ազդել էր և նրանց բարեկեցության վրա։

Ապրուստի միջոցներ վաստակելու և վորոշ պրոֆեսիա ընտրելու խնդիրը պիտի անհանգստացնեյին ջահել պատրիկին դեռ ևս հոր տանը՝ Մայնցում և ամբողջ սրությամբ կանգնեցին նրա առաջ՝ հայրենի քաղաքից փախչելուց հետո։ Պետք էր արհեստով պարապել։

Բայց Յոհան Գուտենբերգը 1430 թվականին, թշնամական կողմերի հաշտությունից հետո, չվերադարձավ Մայնց։ Նա

միայնակ էր, ընտանիքը քայքայվել էր, հայրն արդեն մեռել էր, մայրն ապրում էր առանձին, Ֆրիելե յեղբայրը հաստատվել էր Էլտվիլում։ Մոտակա տարիները Յոհան Գուտենբերգը անց է կացնում Ստրասբուրգում և այնտեղ սկսում առաջին փորձերն այն «գաղտնի»արվեստի, վորին վոչ հեռու ապագայում վիճակված էր նվաճել քաղաքակիրթ աշխարհը։

Առաջ մղվելով փողի և փառքի ծարավով, ազատ ցեխային նախապաշարումներից և դուրս շպրտված յուր մահացող և քարացած դասի շարքերից, Յոհան Գուտենբերգը հիանալի նյութ էր տպագրական արտադրության հեղաշրջման ասպետ դառնալու, հեղաշրջում վոր մինչև այդ անվստահ և առաջին քայլերն էր անում միայն։

Ոտար քաղաքում ապրելու և այդ ժամանակ դեռևս ինչ վոր մթին ծրագրեր իրականացնելու համար, վորոնք հետագայում պիտի վերադարձնեյին նրա նախկին բարեկեցությունը՝ Գուտենբերգին հարկավոր էր փող, բայց աքսորականը միջոցներ չուներ։ Ճիշտ է՝ հայրենի քաղաք Մայնցը պարտք ուներ նրան, վոր ստանալու հույս ուներ Գուտենբերգը՝ յերբ սկսել էր ապրել Ստրասբուրգում, բայց նրա դիմումները մագիստրատին մնացին անհետևանք։ Վոչ վոք չկա, վորի վրա հույս դնի, կարիքը մոտենում է. հույսը պետք է դնել սեփական յեռանդի և հնարագիտության վրա։

Այնտեղ՝ Ստրասբուրգում, Գուտենբերգի համար այն ծանր վայրկյանին, նրա և Նիկոլաուս Վերշտատի ուղիները խաչաձևեցին։

Ժամանակագրությունն արդեն ծանոթացրեց մեզ Վերշտատի հետ։ Քաղաքային գրագիրը համեստ տիտղոս էր կրում, բայց միջնադարյան քաղաքում ազդեցիկ դեմք էր։ Գրագիրը սովորաբար կանգնած էր մտավոր զարգացման բավական բարձր աստիճանի վրա և համալսարանական կրթությամբ գրագիրների առկայությունը հազվագյուտ չէր։ Վերշտատը խոշոր դեր էր խաղացել նոր ծագած քաղաքային հեղափոխության մեջ։ Այդ նա յեր, վոր դուրս յեկավ պատրիկների վարչության մեղադրանքով, հայտարարելով, վոր «մեր նախնիքներն ու նախորդներն են քաղաքը ծանր պարտքերի տակ գցել»։ Այն, վոր նա յե յեղել հեղաշրջման իսկական առաջնորդներից մեկը, հաստատվում է այն սուր ատելությամբ, վոր հնչում է մի վոտանավորում,

որ պահպանված է այն ժամանակից ի վեր և պատկանում է նրա քաղաքական հակառակորդի գրչին։ Այդ վոտանավորում Նիկոլաուս Վերշտատին նվիրված է հետևյալ տողերը՝

«Թանգ է մեր գրագիրը նոր խորհրդին,
Քաղաքացիք կուզեն տալ նրան սատանին.
Աղջիկներն անառակ վոռնոց կբարձրացնեն,
Վոր նրա հաշվին չքեղ հագնվեն։
Յերկար գլխարկ թող դնի գլխին
Հափշտակած կայքերի հաշվին։
Թեկուզ վոսկով, արծաթով գրի,
Այլևս քաշը փողով չի լցվի.
Քո բարձունքներից, տեր արդարադատ,
Մեր գրագրին տուր արժանի դատ»։

Այս վոտանավորի մեջ անհայտ հեղինակը հաղթող կուսակցության առաջնորդի հասցեյին շռայլում է չար ակնարկների և անձնական մեղադրանքների սովորական պաշարը։ Դեռևս այն ժամանակ ծնունդ են առնում դեղին մամուլի «բարի» սովորույթները։

1434 թվականին Նիկոլաուս Վերշտատը ժամանեց Ստրասբուրգ, վորտեղ նրա գլխով անդուրեկան արկած անցավ։

Այդ արկածի մանրամասնությունները մեզ հայտնի չեն։

Հավաստի յե մի բան, վոր Յոհան Գուտենբերգը Մայնցի գրագրին զրկեց ազատությունից և հարկադրեց նրան յերդվել, վոր մինչև Հոգեգալուստը Վերշտատը կապահովի մագիստրատի յետ պահած փողերի վճարումը։

Հարկ չեղավ, վոր յերկու խոշոր քաղաքների իշխանությունները հարաբերության մեջ մտնեն և Ստրասբուրգի մագիստրատն ու քաղաքագլուխը հատկապես միջնորդեն, վոր Վերշտատին բանտարկությունից ազատեն։

Խոսքը տանք փաստաթղթին։ Գուտենբերգի հետևյալ նամակը, հասցեագրած Ստրասբուրգի մագիստրատին գտնված է այդ քաղաքի արխիվներում։

«Յես, Յոհան Գենսֆլեյշ կրտսեր, Գուտենբերգ կոչեցյալ այս նամակով հայտարարում եմ բոլորին. Մայնցի հարգելի և իմաստուն քաղաքագլուխն ու Խորհուրդը պարտավորվել են վճարել ինձ վորոշ տոկոս և ռենտա, համաձայն իմ նրանցից,

տացած նամակների, վորոնց վրա կնիք ե յեղել դրված և վորոնց մեջ, ի միջի այլոց, ասված ե հետևյալը.—այն դեպքում, յեթե նրանք ինձ տոկոսներ չվճարեն, յես կարող եմ նրանց վրա հարձակվել, ձերբակալել նրանց պարտքերի համար և արգելք դնել նրանց գույքի վրա և այս բանի դեմ չի պաշտպանի նրանց վոչ ազատությունը, վոչ փրկանքը յերաշխավորությամբ՝ ում կողմից էլ ուզում ե տրված լինի։ Վորովհետև ներկայումս վերը հիշած Մայնց քաղաքից ունեմ ստանալու տոկոսների զգալի գումար, և ինձ մինչև այժմ վոչինչ չի վճարված, յես՝ ակնհայտ կարիքի հետևանքով՝ կալանավորեցի Նիկոլասուսին, Մայնցի քաղաքային գրագրին, և նա հանդիսավոր կերպով խոստացավ և յերդվեց վճարել ինձ 310 լիարժեք ռեյնյան գուլդեն, ուղարկելով նրանց մինչև Հոգեգալուստ իմ քեռորդի, Որտ Հելգուսին, վոր բնակվում ե Լամպարտենի բակում՝ Ոպպենհեյնում։ Ներկա նամակով յես հաստատում եմ, վոր Ստրասբուրգի վողջմիտ և իմաստուն քաղաքագլուխն ու Խորհուրդը համաձայնության յեկան ինձ հետ նրանում, վոր յես, ի սեր նրանց և ի սեր նրանց պատվի, ազատում եմ կալանքից և բանտարկությունից պարոն Նիկոլասուսին՝ Մայնցի քաղաքային գրագրին, և յես ինքնակամ ազատեցի նրան ինձ տված հանդիսավոր խոստումներից, նույնպես 310 գուլդենի վճարումից և ներկա նամակով նրան լիովին ազատում եմ նրանցից, առանց ինձ վնաս հասցնելու՝ իրավունքների, տոկոսների և պարտքերի նկատմամբ, համապատասխան իմ վերը հիշած նամակների բովանդակության։

Այս վավերացնելու համար յես, վերոհիշյալ Յոհան Գենսֆլեյշս՝ կնիք դրի այս նամակի վերջին, վոր գրված ե առաջին կյուրակեյին, սուրբ Գրիգոր պապի որից հետո, հաշվելով Քրիստոսի ծննդից, 1434 թվականին»։

Այս նամակի վավերականության մասին, Գուտենբերգին վերաբերող գրականության մեջ, վեճ ե տարվում։

Փաստաթղթի քննադատները յելնում են նրանից, վոր ինքնոգնության իրավունքը գոյություն ուներ միայն XIII և XIV դարերում, բայց վոչ մի կերպ Գուտենբերգի ժամանակներում։ Այն ինչ ինքնոգնությունը գործադրվում եր XV և նույնիսկ XVI դարում։

Ահա մի դեպք, որ վերաբերում է նույն տարիներին։

Ֆրանկֆուրտի քաղաքային արխիվում պահպանվել են նյութեր, որ վկայում են հետևյալը. մայնցեցի մի քանի վաճառականներ, 1430 թ. աշնանը ուղևորվեցին Ֆրանկֆուրտի տոնավաճառը. նրանց ուղեկցում էր պահակը։ Տոնավաճառը հաջող վերջացավ, բայց հետո վաճառականները ձեռնարկեցին ուխտագնացության դեպի Հերցենհայն։ Ճանապարհին, սեպտեմբերի 8-ին, նրանք յենթարկվեցին զինված հարձակման, որ կազմակերպված էր յերկու ֆրանկֆուրտցի քաղաքացիների կողմից՝ Մայնցի կրեդիտորներ։ Վաճառականները ձերբակալվեցին և բանտ դրվեցին։ Մայնցի յեռանդագին խնդիրների հիման վրա բռնված պատասխանատուներին պաշտպան կանգնեց Ֆրանկֆուրտի մագիստրատը։ Տուժողներն ազատություն ստացան միայն հոկտեմբերին։

Այն ժամանակվա յերգերից մեկում վշտով ասվում է, որ Մայնցի սնանկությունից հետո, նրա քաղաքացիները վո՛չ մի տեղ չեն կարողանում իրենց ապահով զգալ։

Գուտենբերգի նամակի իսկության նկատմամբ յեղած անվստահության աստառը բացվում է հետևյալ խոսքերով։

«Հավատալ 1434 թվականի Ստրասբուրգյան փաստաթղթին—կնշանակի Գուտենբերգին և ասպետ-ավազակներին նույն մակարդակի վրա դնել»։

Այս խոսքերը գալիս են այն կենսագիրներից, վորոնք ուզում են ծածկել այն որերի կատաղի դասակարգային պայքարը, վորի մեջ անխուսափելիորեն պիտի ներս քաշվեր Գուտենբերգը և ձգտում են գյուտարարին տալ քրիստոնեական հեզության և մարդասիրության «բարձր» գծեր։ Մի շարք բուրժուական կենսագիրներ Գուտենբերգին պատկերում են համարյա վորպես Մեսիա անսահման համբերությամբ, վոր հաղթահարում է բոլոր խոչընդոտները յուր փշոտ ճամբին։

Միջնադարը մռայլ և կոպիտ ժամանակ էր, յերբ անհատի նախաձեռնությունն ամուր կապված էր բազմատեսակ անհատական կախվածության կապանքներով և բոլոր կողմերից շրջափակված էր դասային անջրպետներով։ Դժվար էր ճանապարհ բանալ ապադասակարգայնացած աքսորականին, ինչպիսին էր Գուտենբերգը։ Բայց դրա փոխարեն նա վոչինչ չուներ կորցնե-

լու և համարձակ նետվում է ապագան նվաճելու, չմտածելով այն մասին, վոր ինչվոր մեկը 500 տարուց հետո, նրան կհամեմատի ասպետ ավազակի հետ։

Գուտենբերգն ինքնուրույն կյանքն սկսում է իր արտասովոր յեռանդի փոթորկահույզ պայթյունով, վոր անմիջապես խփում է Վերշտատին և հետադարձ հարված տալիս յերկու քաղաքների մագիստրատներին ու խառնաշփոթություն մտցնում շրջապատի կյանքի մեջ։

Գուտենբերգի այս յելույթը դեռ ևս կապված է նրա իրավունքների հետ, վորպես պատրիկների դասի անդամի. բայց նրա կապն արդեն կտրվում է այդ միջավայրի հետ. ապրուստ վաստակելու համար ժամանակ էր վոր յերիտասարդ Յոհանը ձեռնամուխ ՝լիներ արհեստի։

Նրա վերը բերած նամակը Ստրասբուրգի մագիստրատին՝ առանձնապես արժեքավոր է մեծ գյուտարարի դեմքը վորոշելու համար։

Սրա շնորհիվ նա յուր ամբողջ հասակով միանգամից կանգնում է մեր առաջ—նա յեռուն արյուն ունեցող մարդ է, մարտիկ, վոր ընդունակ է հաղթահարելու առջևը կանգնած խոչընդոտները։

Նա այն աստիճան համարձակ և նախաձեռնող է, վոր կարողանում է կազմակերպել յուր հակառակորդին ճանկելը և միևնույն ժամանակ այնքան խելոք է և հաշվով, վոր ժամանակին հարգանք ու պատիվ է ցույց տալիս Ստրասբուրգի պարագլուխներին։

Գուտենբերգի հաշիվը ճիշտ է։ Արդեն 1434 թվականի մայիսին Մայնցի և Գուտենբերգի միջև կապված է պայմանագիր ցմահ ռենտա ստանալու մասին, վորը նրան վերապահեց նրա յեղբայր Ֆրիելին, իսկ 1436 թվականի հաշվեգրքերով մենք տեսնում ենք, վոր Գուտենբերգին փաստորեն վճարված են տոկոսների ապառքները։

Այսպես, ուրեմն, Գուտենբերգին փող էր հարկավոր։

Նիկոլաուս Վերշտատի կալանքն առաջացավ վոչ թե պատրիկների մոլի վորդու վիրավորված ինքնասիրությունից, այլ փողի անմիջական կարիքից։

Փողի բացակայությունը մի անեծք էր, վոր ծանրացած էր

Գուտենբերգի վրա, նրա ամբողջ կյանքի ընթացքում։ Փողի համար ռիսկով ձեռնարկության մեջ ե նետվում Վերշտատի հետ. փոխ առած գումարները վերադարձնելու անկարելիությունը նրան յերկու անգամ կանգնեցնում ե դատարանի առաջ և, վերջապես, նույն աղքատությունը նրա ստեղծած գործը գցում ե վաճառական Ֆուստի ձեռքը և ծերության օրերին դարձնում Կոմս Ադոլֆ Ֆոն-Նասսաուի պալատական թոշակառու։

Միջին դարերում գյուտարարը արտոնյալ դեմք չեր։ Շատ քաջարի մարդիկ զրկվել են կյանքից իրենց անզգույշ համարձակության համար, վորով նրանք մտածում եյին փոփոխել արտադրության սովորական ձևերը և օգնել իրենց նմաններին՝ կանգնել մի աստիճան բարձր բնության դեմ մղվող պայքարում։

Միջնադարյան գյուտարարների անունները ջնջված են պատմության եջերից, և նրանցից շատերի ձեռքերի գործը խորտակվել ե նրա համար, վոր նորից առաջ գան հետագա դարերում և, կամ ուրիշներին փառք բերեն, կամ մնան վորպես գյուտ անհայտ վարպետի։

Ո՞վ կարող ե ասել այն մարդու անունը, վորը X-XI դարերում ստեղծեց առաջին մահուդագործ մեքենան։ Մենք գիտենք միայն, վոր մահուդագործ մեքենան գործադրվում եր Գրենոբլում դեռ ես XI դարի կեսերին։ Բայց ամեն տեղ, ուր վոր ել յերևում եր, նրան հետապնդում եր արգելանքը՝ Փարիզում, ֆլամանդական քաղաքներում և, մինչև անգամ, դեռևս XV դարի վերջին, Լոնդոնում։

Իտալական աբբա Լանչելոտտիի վկայությամբ, Դանցիգցի Անտոն Մյուլլերը, համարյա 50 տարի առաջ (այսինքն՝ մոտավորապես 1525 թ.) Դանցիգում տեսել ե մի շատ ճարտար մեքենա, վորը մի անգամից պատրաստում եր 4-6 գործվածք. բայց վորովհետև քաղաքային խորհուրդը յերկյուղ եր կրում, վոր այդ գյուտը կարող ե բազմաթիվ բանվորների դարձնել մուրացկան, ուստի արգելեց այդ մեքենայի գործադրությունը և հրամայեց նրա հնարողին գաղտնի խեղդել կամ ջրահեղձ անել *)։

---

*) Կարլ Մարքս-Կապիտալ հ. I գլ. 13

Այն դեպքում, երբ գյուտը չէր սպառնում կրճատել բանվորների քանակը և վոչնչացնել գոյություն ունեցող ճյուղը, ցեխայինները հաշտվում եյին նրա հետ։

Ցեխային կորպորացիան յուր գաղտնիքն եր դարձնում տեխնիկական արտադրության ամեն մի այդպիսի բարելավում, սպառնալով գույքի գրավումով և մահապատժով յուր այն անդամին, վորը կհամարձակվեր մատնել ուրիշ քաղաքի։

Բոլոնիայում XIII դարի վերջին հնարվեց մետաքս վրանտալու դազգյահ։ Նրա տարածումը քաղաքից դուրս համարվում եր դավաճանություն։ Բոլոնիայի ցեխայինները յերկաթե ձեռքերով պահպանում եյին իրենց արտադրական գաղտնիքները։ Մետաքսի ցեխի յերկու վարպետ, վոր 1538 թվականին համարձակվեցին քոչել քաղաքից՝ բռնվեցին և կախվեցին։ Յերրորդ դավաճանի բախտը բերեց—նա դազգյահը հաջողությամբ հասցրեց Մոդենա։

Հայրենի քաղաքում նրա բացակայությամբ՝ փախստականին դատապարտեցին մահվան և հրապարակով այրեցին նրա նկարը։

Խոսք յերկրորդ

Յես կխոսեմ գյուտարարների և նրանց գործի մասին։

Գյուտարարությունը, ինչպես և ծննդաբերությունը, բընության սահմանած փառահեղ ստեղծագործական ակտ ե։

Յերկունքի ցավերի յերկյուղը չի կարող դադարեցնել նոր սերունդների յերևան գալը։ Գյուտարարին կարելի յե վոչնչացնել, բայց գյուտարարությունը կասեցնել չի կարելի։ Գյուտ ստեղծագործողի վոչնչացումն ամենավատ դեպքում՝ հետաձգումն ե։ Միտքն արդեն ծնվել ե. հազարներ և տասնյակ հազարներ՝ աշխատանքի սովորական առօրյայում, կուտակել են բազմատեսակ փորձ, վոր յուր ավարտմանն ե սպասում։

Յեվ ով ե հավատացած, վոր այսօր, յերբ այստեղ կյանք ե առնում մի զարմանալի նորություն, ինչ վոր տեղ, ուրիշ քաղաքում, գուցե ուրիշ յերկրում, այլ մարդիկ չեն դիմում նույն նպատակին և չեն հասնում նրան։

Բայց ինչ, ուզում են պսակազրկել հերոսներին և նվաս-

տացնել նրանց յերախտիքը։ Վոչ, պատմական հեռանկարում գյուտարարի աշխատանքը պատկերանում է վորպես հակիրճ ավարտում, վորպես գրված գրքի վերջին դարձվածքը։

Լեռնային բարձունքից մարդիկ թվում են կետեր և կյանքը մի ակնթարթ է հազարամյակների հանդիսավոր հոսանքում։ Իսկ կենդանի մարդն այսօր, հիմա կատարում է վիթխարի աշխատանք, հաղթահարում է դժվարագույն խոչընդոտներ, հաճախ նվիրում է ամբողջ տանջալից կյանքը գյուտի գործին։

Փոքր և մեծ գյուտարարների և հետազոտողների բազմալեզու ցեղը—հզոր խմորիչն է մարդկային շաղախի։ Սա չէ, վոր առաջացնում է մտքի, գիտության և տեխնիկայի խաղուն գինին, նա չէ ստեղծել անհամար մեքենաներ, վորոնք անչափելի կերպով մեծացնում են մարդկության ուժերը, նա չէ հիմնավորել քիմիական որենքները, վորոնք մատերիայի ներքին ուժերը յենթարկում են մարդուն. Նա չէ բացել մինչև վերջը և նրան է յենթարկվում յերկրագունդը և, ով գիտե, գուցե վաղը կնվաճի տիեզերքը։

Մարդկային ճահիճը—քաղքենիները, վորոնք խրված են նախապաշարումների և գոյության սովորական ձևերի տիղմի մեջ—միշտ վայրագությամբ ատել են այդ նոր ճանապարհներ վորոնողներին։

Ատելի չեն նրանք բոլոր և ամեն տեսակի մեռնող դասակարգերին, վորովհետև նրանց հետ միասին կյանքի դուռը թակում է փոթորկահույզ կյանքի նախապտուղը։ Իրենց համար աննկատելի կերպով, հաճախ հակառակ իրենց ցանկությունների, նախկին դարերի գյուտարարները քայքայիչ աշխատանք եյին տանում այն դասակարգային իրավակարգի հիմունքներում վորոնց հետ կապված է նրանց գոյությունը։

Գալիս են այլ առաջնորդներ, վորոնք գլխավորում են մասսաների հեղափոխական կռիվները և մասսաների հետ միասին լուծում են սոցիալական պրոբլեմները, բայց գյուտարարների անունները նույնպես միշտ ապրում են առաջավոր դասակարգերի մտքերում. Նրանց տված է հավիտենականության իրավունքը, ինչպես հավիտենական է բնությունը նվաճող մարդու աշխատանքը։

Գյուտարարը միջնադարի նահատակն է, գյուտարարը կա-

պիտալիզմի վայրկյանն է. իսկ ձեր հրաշալի ապագան—կոմունիստական հասարակության ազատ գյուտարար—ստեղծագործողն է։

Գյուտարարն անհույս տանջվում էր ֆեոդալական և կապիտալիստական իրականության հակասությունների մեջ և միայն սոցիալիզմն է ստեղծում անհրաժեշտ պայմաններ գյուտարարի կյանքի և աշխատանքի զարգացման համար, կազմելով կատարյալ ներդաշնակություն նոր հասարակության հետ։

Միջնադարյան արհեստավորը նման է յերկերեսանի Յանուսին[7]։

Նրա մի յերեսը պատկանում էր վարպետ-գեղարվեստագետին։ Միջնադարը, մանավանդ նրա վերջը, կերտվածքների բարձր գեղարվեստական կատարելության դարաշրջանն էր։ Վոչ թե գիտնական ճարտարապետները (սրանք հանդես յեկան միայն XVI դարի վերջին), այլ արհեստավորներն են կառուցել միջին դարերի հոյակապ տաճարներն ու քաղաքային ռատուշները[8]—շենքեր, վոր այսոր էլ չգերազանցված վարպետության նմուշներ են։ Արտադրություններն ու գեղարվեստական ստեղծագործությունը յերբեք այնքան ավելի քան սերտ կապված չեն յեղել մեկի մեջ, հանձին արտադրողի։

Կապիտալիզմի վարձու աշխատանքն սպանեց ֆիզիկական աշխատանքի գեղագիտական հաճույքը։ Կապիտալիզմը բանվորին դարձրեց մեքենայի կցորդ, դիմազրկեց նրա արտադրանքը և գործածությունից հանեց վարպետ—ստեղծագործողի ճարտարության հասկացողությունը։

Արհեստի մյուս յերեսը պատկանում էր մութ ույժին, վորը պայքարում էր տեխնիկական նորմուծումների և գիտության դեմ և յերկար ժամանակ արգելակում էր մարդկային հասարակության հառաջադիմությունը։ Մեքենան մտնում է պատմության մեջ ցեխային կազմակերպության արդեն փտած դիակի վրայով և գլխապտույտ վազք է սկսում վարձու ստրուկների արյան և քրտինքի միջով՝ դեպի ազատագրված մարդկության չտեսնված և աներևակայելի տիրապետությունը բնության վրա։ Միայն մեր ազատագրված աշխատանքի հասարակությու-

նը, որ արմատախիլ է անում կապիտալիզմի վերջին արմատները, կարող է գտնել արտադրողական արգասավորության բարձրագույն սինթեզը, որ կբավարարի հասարակական բոլոր պահանջները և արտադրողը կհիանա յուր աշխատանքով, և առաջ կգան բանվոր ստեղծագործողն ու գեղարվեստագետը։

Բայց պատմելով Գուտենբերգի կյանքը, մենք դեռ ևս տասնհինգերորդ դարի սկզբին ենք գտնվում։ Արհեստավորներն ամուր կանգնած են մոտիկ բարերարների բարձր միսիայի լիակատար գիտակցությամբ, և Գուտենբերգին գերմարդկային յեռանդ է հարկավոր՝ ֆեոդալական տնտեսական իրավակարգի բթամտությունը հաղթահարելու և հասնելու յուր հանճարեղ գաղափարի մարմնացմանը։

Գյուտարարն սկսեց պայքարը—Նիկոլաուս Վերշտատի կալանավորումը—նրա առաջին ետապն է։

II. ԽՈՍՔ—ՁԵՌԱԳԻՐ—ՄԱՄՈՒԼ

Գրատպության գյուտը հեղաշրջում էր նշանակում, բայց ամեն մի հեղաշրջում ունի յուր նախապատմությունը։ Գուտենբերգի գործը նշանավոր հանրագումարն է այն պրոցեսի, որ յերկարաձգված է հազարամյակներով։ Մարդկային հասարակության զարգացումը մոտեցել էր այն կետին, յերբ գրատպության գաղափարը թանձրացել էր մթնոլորտային խոնավության պես—ելի մի ակնթարթ՝ և անձրևը կթափվի։

Խոսքի առաջացումը—մարդկության կյանքի ամենանախնական ստիճանի նվաճումը—իսկապես վերաբերում է կապիկից մարդուն անցնելուն։

«Նախ աշխատանքը, ապա և նրա հետ միասին հոդաբաշխված խոսքը դարձան գլխավոր խթանները, վորոնց ազդեցության տակ կապիկի ուղեղը կարողացավ աստիճանաբար դառնալ մարդկային ուղեղ»*)։

Լեզվի զարգացումը միահյուսված է նախնի մարդկային հասարակության դասավորման և աճման պրոցեսի մեջ, վորպես նրա անհրաժեշտ հետևանք և գործող ուժ։

Բայց վորպեսզի գիրը զարգանար, մարդկությունը վիթխարի ճանապարհ պիտի անցներ։ Նախնական ցեղի հարաբերությունների պարզությունը, ցեղի անդամների միջև և շրջապատող աշխարհի հետ, թույլ էր տալիս բավարարվել բանավոր

*) Ֆ. Էնգելս—Բնության դիալեկտիկա. Աշխատանքի դերը կապկի մարդացման պրոցեսում։

հարաբերությամբ և անցյալի փորձի բանավոր հաղորդումով։ Միայն համայնքի քայքայումը, տիրող դասակարգի առանձնացումը և պետության կազմվելն ստեղծեցին անհրաժեշտ նախադրյալներ գրի ինքնահաստատման համար։ Տնտեսավարության նոր ավելի բարդ ձևերը՝ աշխատանքի բաժանման հիմունքով, ստեղծեցին գիրը՝ տիրող դասակարգի գործիքը, վաճառականի և վաշխառուի անհրաժեշտ զենքը։

Գրի յերեք հիմնական սիստեմներն առաջացան Յեգիպտոսի, Բաբելոնի և Չինաստանի պետություններում։

Հին պետությունների տեխնիկայի անկատարությունն անդրադարձավ նաև այն ժամանակ ստեղծված գրքի նախահոր վրա։

Չորս հազար տարի առաջ յեգիպտացիք, իրենց պիրամիդների քարերի վրա, փորագրում եյին պատմական զրույցներ և ավանդություններ։ Գրի նշաններ պահպանվել են Բաբելոնի ավերակների աղյուսների վրա։ Գրում եյին կավե տախտակների վրա և այդ գրանցումները նախնի ազնվականության հասարակական գրապահարաններն ու գրադարաններն եյին։ Միջագետքում նման գրադարաններ շատ կային։ Նինվեյում հավաքված է ահագին քանակությամբ այդպիսի տախտակ-գրքեր։

Ավելի հետագայում յեգիպտացիները, հույները և հռոմայեցիները զանազան տեսակի տեղեկություններ, պատմվածքներ և պաշտոնական փաստաթղթեր փորագրում եյին քարե և բրոնզե թիթեղների վրա։ Մոմապատ փայտե տախտակների վրա գրելու սովորությունը յերևան է յեկել հնում և անցել է միջին դարերին։ Մենք գիտենք, վոր այս յեղանակով ոգտվում եր Կառլոս Մեծը և XIII դարի փարիզյան արհեստավորական կորպորացիաների կանոնում մենք հանդիպում ենք մի բաժնի «նրանց մասին, վորոնք շինում են մոմած տախտակներ՝ գրելու համար»։

Ակներև է, վոր քարը, կավը, մետաղը և փայտն անհարմար նյութեր եյին գրելու համար։ Առաջխաղացության մեծ քայլ եր պապիրուսի գործածությունը, վոր մտցրին յեգիպտացիները։ պապիրուսի ամենահին ծրարը վերաբերվում է նախ քան մեր թվականության XXV դարին։

Պապիրուսը յեղեգնի առանձին տեսակն է, վոր բուսնում է Յեգիպտոսի, Պաղեստինի և Սիցիլիայի ճահիճներում։ Յեգիպտո-

սում նա մշակվում էր վորպես կուլտուրական բույս։ Նրա ցողունի միջին մասից կտրում էին բարակ, տափակ շերտեր և դարսում յերկու հարթ տախտակի արանքում, քսում էին սոսինձ, ուժեղ սեղմում և չորացնում արևի տակ։ Այսպիսով ստացվում էին գրելու համար պետքական թերթեր, վորոնք հեշտ փաթաթվում էին։ Պապիրուսի մի քանի թերթեր հաճախ միացվում էին իրար։ Այսպիսի գրքի վերնագիրը նշանակվում էր պիտակի վրա և ամրացվում այն ձողիկի ծայրին, վորի վրա փաթաթվում էր ծրարը։ Խիստ արժեքավոր ձեռագրերի համար կաշվից շինում էին պատյաններ․ սրանք արդի կազմի նախորդներն էին։

Հույները և հռոմայեցիք պապիրուսի վրա գրելը փոխ առան յեգիպտացիներից։

Պապիրուսի աշխարհագրական տարածման սահմանափակությունը և պապիրուս ստանալու դժվարությունն առաջացրին մագաղաթի յերևան գալը, վորպես նոր գրելանյութի։ Մագաղաթն առաջին անգամ գործադրության մեջ դրեց Եվնեմ թագավորը Պերգամ քաղաքում, մեր թվականության յերկրորդ դարում։ Ավանդությունն ասում է, վոր Եվնեմը ձգտում էր Պերգամում ստեղծել մեծ գրադարան։ Պտղոմեոսները՝ Յեգիպտոսի թագավորները, վորոնք չեյին ցանկանում իրենց նշանավոր Ալեքսանդրիայի գրադարանի մրցակցի յերևան գալը, արգելեցին պապիրուսի արտահանությունը։ Պերգամի թագավորը դժվարությունից դուրս յեկավ՝ կաշիների հատուկ մշակում կազմակերպելով։

Պերգամենտն իր եժանությամբ տեղի չեր տալիս պապիրուսին, բայց դրա փոխարեն շատ ավելի դիմացկուն էր և կարելի յեր գրել յերկու յերեսին։ Այդ թերթերից կապոցներ եյին կազմում և մի կողմից կարում։ Այսպիսի միացումով նրանք հիշեցնում են արդի գիրքը։ Մագաղաթի թանկությունն առաջ բերեց հին ընագրերը ջնջելու բազմաթիվ դեպքեր՝ նոր գործադրության համար։ Միջնադարյան անկիրթ վարդապետ-արտագրողները լվանում, կամ քերում էին թանկագին հին ձեռագրերը, վորպեսզի նորից և նորից արտագրեն սուրբ գիրքը։ Ժամանակակից գրադարաններում կարելի յե տեսնել քիմիական զանազան միջոցների ոգնությամբ վերականգնած, այսպիսի,

առաջներում վոչնչացրած յերկեր — դրանք կոչվում են «պալիմպսեստ»:

Բայց այս բոլորն անպետք եր գրքի մասսայական պատրաստման համար: Գրատպությունը պահանջում եր նախորոք պատրաստել նոր, եժան նյութ:

Թղթի տարածումը Յեվրոպայում տեղի ունեցավ գրատպությունից համարյա մի դար առաջ: Այդ ժամանակ թղթի արտադրությունն արդեն յերկար ճանապարհ եր անցել և փորձարկված եր յերկրագնդի մի շարք յերկրներում:

Թղթի գյուտը վերաբերում է մեր թվականության 153 տարվան, գյուտարարի անունն է Թսայ-Լուն: Արտադրության այս նոր ճյուղի յերևան գալու տեղը Յերկնային կայսրությունն է—Չինաստանը: Ըստ ավանդության, թղթի պատրաստման համար վորպես հում նյութ են ծառայել փալասները, կանեփի թելերի խուրձերը, բամբակի և թթենու թելերի խուրձերը: Թսայ-Լունի մտցրած արտադրության պրոցեսը շատ տարրական եր, գյուտարարը լավ յեփում եր այդ խուրձերը յեռացող ջրի մեջ, հետո ծեծում և հեղուկ մասսայից կաղապարում թղթի թերթեր:

Դեռ այն ժամանակ Չինաստանում թուղթն ստացավ բազմապիսի և լայն գործադրություն:

Գրքի պատրաստումը չինացիք գտել են թղթի գյուտից շատ առաջ: Դեռ ևս մեր թվականությունից ավելի քան յերկու հազար տարի առաջ, նրանք գրեր եյին փորագրում բամբուկի վրա: Թշինգ-Լի Հուանգի դինաստիայի դարաշրջանում (մեր թվականությունից 200-300 տարի առաջ) գործադրության մեջ մտավ գործվածքների վրա վրձինի ոգնությամբ ներկերով գրելը:

Չինական աղբյուրները պատմում են, վոր վրձին հնարեց գեներալ Մունգ-Թիենը:

Չինաստանում ծնված թղթի արտադրությունը դանդաղ շարժվում է դեպի Արևմուտք, աստիճանաբար ամրապնդվելով այլ ժողովուրդների նյութական կուլտուրայի մեջ: Մոտավորապես IV դարում չինացիք թղթի պատրաստումը մտցնում են Թուրքեստան, այստեղից նա անցնում է Պարսկաստան, Սիրիա և, վերջապես, արաբների մոտ՝ Արաբիա և Յեգիպտոս: Յեվրոպա-

-կան ցամաքում թղթի արտադրությունը հիմնեցին արաբները իրենց նվաճած Իսպանիայում, այս արդեն XI դարում եր։

Յեվրոպական կուլտուրայի միջնադարյան մթնշաղում՝ հենց արաբներն եյին, վոր վերցրին կործանված հունա-հռոմեյական աշխարհի գիտության ջահը և հասցրին վերածնության դարաշրջանը։ Արաբական գիտնականների ծառայությունները շատ մեծ են նախնական գիտելիքների պահպանման և նրանց հետագա զարգացման գործում, այն ե՝ փիլիսոփայության, մաթեմատիկայի և բնական գիտությունների մեջ։ Արաբների հըսկայական ազդեցությունը հետագա կուլտուրայի և յեվրոպական ժողովուրդների արդյունաբերական գրագրությունների վրա՝ անվիճելի յե։ Այդ ազդեցության արդյունքներից մեկն եր և այն, վոր թղթի արդյունաբերությունը XII—XV դարերում արագությամբ ողընտելության (ակլիմատիզացիա) ե յենթարկվում յեվրոպական յերկրներում, սկզբից Իտալիայում, Ֆրանսիայում (XII դար), իսկ հետո նաև Գերմանիայում։

Գերմանական առաջին թղթի ջրաղացը հիմնվում ե 1320 թվականին Գուտենբերգի հայրենիք Մայնց քաղաքում։

Ֆեոդալիզմի դարաշրջանի սկիզբը վոչ մի նախապայման չեր ստեղծում հեղափոխական փոփոխությունների գրային արտադրության մեջ։ Փոխանակության անկումը, Յեվրոպայի տընտեսական կյանքի ընդարմացումը զուգորդվում եր մտավոր անկման հետ։ «Միջնադարը զարգացավ բոլորովին պրիմիտիվ դրությունից։ Նա յերկրի յերեսից բնաջնջեց հին քաղաքակրթությունը, հին փիլիսոփայությունը, քաղաքականությունը, իրավագիտությունը և ամեն ինչ սկսեց բոլորովին սկզբից։ Միակ բանը, վոր միջնադարը վերցրեց կործանված հին աշխարհից՝ քրիստոնեությունն եր և մի քանի կիսավեր, իրենց նախկին քաղաքակրթությունը կորցրած, քաղաքներ»*)։

Գիտության ոազիսներ են դառնում վանքերը. մտավոր կրթության մենաշնորհն ստանում ե հոգևորականությունը, վորը յուր իսկական բնույթով դեմ եր լուսավորության լայն տարածման և գիտելիքների հասարակական առաջադիմության։

Մինչև այդ ժամանակ ամենաբարձր աշխարհիկ կառավա-

---

*) Ֆ. Ենգելս.—Գյուղացիական պատերազմը Գերմանիայում.

րիչներն անգամ անգրագետ էին։ Կառլոս Մեծը գրագիտություն սովորեց յուր կյանքի վերջին տարիներին։ Այն ժամանակվա ուսուցման բնույթի մասին պատկերացում է տալիս Ս. Հալեն-յան վարդապետի ժամանակագրությունը, վոր Կառլոսի աստվա-ծապաշտական գրքեր. կարդալու հոգացողության նկարագրին կցում է հետևյալ խոսքերը։

«Յեվ այս ճանապարհով նա հասավ այն բանին, վոր պա-լատում բոլորը հիանալի կարդում էին, թեև առանց ըմբռնե-լու»։

Շատ էլ լավ չէր դրված ստորին հոգևորականության կրթության գործը։

Աբելյարը[9] XII դարի սկզբին գրում էր.

«Նրանք, վորոնք այժմ ուսանում են վանքերում, այնքան քարանում են հիմարության մեջ, վոր բավականանալով բառերի հնչյուններով, չեն ցանկանում մտածել նրանց ըմբռնելու մա-սին և դաստիարակում են վո՛չ թե իրենց սիրտը, այլ միայն լե-զուն։ Յեվ ինչը կարող է լինել ավելի ծիծաղելի, քան այս ըզ-բաղմունքը—կարդալ՝ առանց ըմբռնելու»։

Աստվածաբանությունը տիրապետում է մտավոր գործունեյու-թյան բոլոր ասպարեզներին և այդ հասկանալի է, վորովհետև յեկեղեցին «գոյություն ունեցող ֆեոդալական իրավակարգի բարձրագույն ընդհանրացումն ու վավերացումն էր»։

[1] Բայց յեթե այս այսպես է, յեթե ֆեոդալիզմի սիստեմը լուսավորվում է յեկեղեցական հեղինակությամբ, ապա ամեն մի շեղում յեկեղեցական դոգմաներից՝ անխուսափելիորեն պիտի առաջացնի յեկեղեցու պայքարը։ Այդպիսի շեղումները համար-վում էին հերետիկոսություն։ Ձգտելով վո՛չ միայն արմատախիլ անել հերետիկոսությունը, այլ և կասեցնել նրա յերևան գալու ամեն մի հնարավորություն, յեկեղեցին արգելում է աշ-խարհականների մեջ տարածել սուրբ գիրքը և ծանր հանցա-գործություն է համարում այդ գրքի թարգմանությունը՝ ան-հասկանալի լատիներենից ժողովրդական լեզուներին։ Հենց սրա-նով ծանր հարված է ստանում լուսավորության գործը։

Բեզյեի ժողովի վորոշման մեջ (1246 թ.) ասված է.

«Ինչ վերաբերում է աստվածային գրքերին՝ աշխարհա-կանները չպիտի ունենան նույնիսկ լատիներենը. իսկ ինչ վե-

ըաբերում է ժողովրդական բարբառով աստվածային գրքերին՝ թույլ չտալ նրանց իսպառ. վոչ կղերականների և վոչ էլ աշխարհականների մոտ»։

XIV դարի վերջին, Կառլոս IV-ի եդիկտում[10] ասված է, «կանոնական վորոշման համաձայն յերկու սեռի աշխարհականներին անվայել է գրքից կարդալ վորևէ բան, թեկուզ ժողովրդական լեզվով, վորպեսզի, վատ հասկանալու հետևանքով՝ նրանք չընկնեն հերետիկոսության և մոլորության մեջ»։

Հասկանալի յե, վոր այսպիսի պայմաններում գրատպության առաջ համարյա անհաղթելի խոչընդոտներ են դրվում։ Հարկավոր եյին վճռական սոցիալական և տնտեսական տեղաշարժեր այս արգելքները խորտակելու համար։

Միայն միջնադարի վերջավորությունը՝ տնտեսական վերելքի և քաղաքների ծաղկման ու մտավոր կյանքի կենդանացման կապակցությամբ, դրեց գրատպության հարցը, վորպես դարաշրջանի կենսական պրոբլեմ և կանխորոշեց նրա անխուսափելի յերևալը։

Բարդացող պետական կյանքը պահանջում եր ամուր, գըրված ռեգլամենտացիա։ Յերիտասարդ սերունդների ուսուցումը դառնում եր անհրաժեշտություն։ Ձեռագիրը չեր կարողանում սպասարկել բազմապիսի հասարակական պահանջները և ֆիկսացիայի յենթարկել գեղարվեստի և գիտության ասպարեզում կուտակված փորձը։ Միջնադարյան մտավորականության առաջավոր խավերը յետ են դառնում դեպի հին աշխարհի մոռացված հոգեկան գանձերը, վորպեսզի նրանցից քաղեն ներկայի կողմնորոշումը։

Իտալիան, վորպես տնտեսապես առաջավոր յերկիր՝ առաջինն է բռնում «վերածնության» ուղին, կենդանացնելով գրականության և արվեստի հնադարյան հուշարձանները։ Այս պրոցեսն սկսվում է XIII դարում, բայց միայն XV դարն է կատարում խոշոր գյուտեր հնադարյան գրականության ասպարեզում, միայն այն ժամանակ են յերևան գալիս սիստեմատիկ գրադարաններ և դրսևորվում է յեռանդուն ձգտում դեպի թարգմանությունները և գրքերի արտագրությունը։ Նիկոլայոս V պապն եր առաջիններից մեկը, վոր հիմնադրեց խոշոր գրա-

դարան։ Դեռևս վարդապետ ժամանակից նա ծանրաբեռնված էր պարտքերով, շնորհիվ խոշոր ծախսերի, վոր կատարում էր մանուսկրիպտներ[11] գնելու և արտագրելու համար։ Նրա մահից հետո մնաց 5000–9000 հատոր, վորով դրվեց Վատիկանի գրադարանի հիմքը։ Ֆլորենցիայում հարուստ գրադարան ստեղծեց Նիկոլո Նիկկոլեն, Կոզիմո Մեդիչիի[12] գիտնական ընկերներից մեկը։ Հույն կարդինալ Վիսսարիոնը քրիստոնյա և կռապաշտ հեղինակների մինչև 6000 ձեռագիր հավաքեց, սրանց մի մասը մինչև այժմ պահպանվել է Վենետիկում՝ սուրբ Մարկոսի գրադարանում։

Միջին դարերի վերջին աճում է դպրոցների ցանցը։ Յեկեղեցական տարրական դպրոցների հետ միասին յերևան են գալիս նաև աշխարհիկ դպրոցներ։ XII և XIII դարերում Փարիզի և Բոլոնիայի դպրոցներն ստանում են համաշխարհային հռչակ և վերափոխվում համալսարանների։ 1400 թվականներին Յեվրոպայում կար 44 համալսարան, իսկ ռեֆորմացիայի շրջանին մոտ այդ համալսարանների թիվը հասավ 65-ի։ Համալսարանները դառնում են գիտական շարժման օջախներ, և նրանց շուրջն աճում էր պայքարն ընդդեմ միջնադարյան աշխարհայացքների թեոկրատիայի[13] և կրոնի վոգուց ու կապանքներից ազատվելու համար։ Կրթությունը, թեև պրիմիտիվ ձևերով, դառնում է ավելի և ավելի անհրաժեշտ պայման այն մարդկանց համար, վորոնք ցանկանում են մասնակցություն ունենալ վարչական, առևտրական և այլ հասարակական զբաղմունքների մեջ։

Հասարակական զարգացման նոր աստիճանը պահանջում էր գրքերի բազմացում այնպիսի տեմպերով, վորին չեյին կարող բավարարել միջնադարյան արտագրողները։ Այն մասին՝ թե վորքան մեծ է Գուտենբերգի գյուտի նշանակությունը մոտակա խոշոր սոցիալական դիպվածների համար՝ ասում է Լյութերի[14] կարծիքը, վորը գրատպությունն անվանում է «մարդկային ցեղի յերկրորդ փրկումը»։

Գրքի արտադրությունը, վոր գոյություն ուներ դեռ հույների և հռոմայեցիների մոտ, այժմ հղի յեր տեխնիկական հեղափոխությամբ։

Հին աշխարհում գրարտադրության և գրավաճառության առ-

կայության մասին են վկայում և՛ այն ժամանակվա գրական հուշարձանները, և՛ հնագիտական տվյալները։ Օրինակ՝ Պոմպեյի պեղումների ժամանակ գտնված է գրախանութ, որին կից գտնվում է գրագիրների բնակարանը։

Միջին դարերում գրքերի արտադրությամբ պարապում էին գլխավորապես վարդապետները։ Պահպանված մի շարք օրինակները վկայում են արտադրողների բարձր գեղարվեստական նվաճումների մասին, ինչպես գեղագրության, այնպես էլ նկարազարդման ասպարեզում։ Բայց գրքերի արտադրությունը, որ վիթխարի աշխատանք էր պահանջում, շատ դանդաղ և թանգարժեք գործ էր։

Օրինաչափորեն առաջ է գալիս գրքեր տպելու գաղափարը։

Այս գաղափարը, հավանորեն, փոխ էր առած Արևելքից, որովհետև դեռևս մեր թվականության VI դարում, գրքերի տպումը փայտե տախտակներով, հայտնի էր Չինաստանում, իսկ Թանգի դինաստիայի դարաշրջանում (601—906) լայնորեն տարածված էր։

Չինական աղբյուրները վկայում են նաև այն մասին, որ յերկրորդ հազարամյակի սկզբին հնարված էր շարժական տառերով տպագրությունը (տառերը շինում էին առանձին ձևով այրված հողի զանգվածից և բրոնզից)։ Բայց չինական գրության առանձնահատկության շնորհիվ (չինական այբուբենում կա մինչև 50,000 նշան, որոնք համապատասխանում են ամբողջ բառերի և հասկացողությունների) այս գյուտը Չինաստանում այնպիսի նշանակություն չունեցավ տպագրության համար, որքան Գուտենբերգի գյուտը՝ յեվրոպական ժողովուրդների համար։ Ոչ մի հիմք չկա յենթադրելու, որ Գուտենբերգը ծանոթ է յեղել չինացիների փորձերին, այլ, ակներև, շարժական տառերի պրոբլեմի լուծմանը նա հանգել է անկախ ուղիներով։

Յեվրոպայում տպումն առաջին անգամ գործադրվել է խաղաթղթերի արտադրության մեջ — XIII դարում։ Այնուհետև փայտագրությունը — ցցուն բնագրի կամ նկարի փորագրումը փայտի վրա և նրա տպումը թերթի վրա — անցնում է գրքի գործի ասպարեզը։ XV դարի սկիզբը նշանավոր է այս ձևով տպած նկարներով և փոքր շարադրություններով։

Տախտակներով տպելն առանձնապես զարգացավ Նիդերլանդիայում։

Մնում էր մի քայլ այլևս անել—հարկավոր էր տախտակը կտրել շարժական տառերի և անցնել շարվածքի։ Այս մտքի յուրացումն առանձին դժվարություն չէր ներկայացնի, թեկուզ այն պատճառով, վոր վաղուց ուսուցումը տարվում էր առանձին տառեր պատրաստելու և նրանցից բառեր կազմելու օգնությամբ։

Դեռ ևս IV դարում յերանելի Յերոնիմը «Դեռահաս աղջկա կրթության մասին» գրվածքում գրում էր. «Նրա համար տառեր պիտի շինել աճարի փայտից կամ փղոսկրից և անուններ տալ։ Թող խաղա նրանցով և խաղալով սովորի և թող նա մտքումը պահի վոչ միայն տառերի կարգը և վոչ միայն հիշողությամբ արտասանի նրանց անունները, այլ թող հաճախ խճճեն կարգը, խառնելով միջին տառերը վերջինների հետ, սկզբնականը՝ միջինների, վորպեսզի նա ճանաչի նրանց վոչ միայն հնչյունով, այլ և տեսքով»։

Տպագրության գյուտի առասպելը (իբր թե Լավրենտի Յոհան Կոստերի ձեռքով, հոլլանդական Հաարլեմ քաղաքում), պատկերում է մեզ այդ գյուտը, վորպես այդպիսի խաղի շարունակություն՝ կտրած տառերով։

Կոստերի մասին այդ պատմությունը 1568 թվականին գրել է հոլլանդացի պատմագիր Ադրիան Յունիուսը, վոր այդ ժամանակ Հաարլեմի լատինական դպրոցի ռեկտորն էր։ Այդ առասպելը լույս տեսավ մամուլում 1588 թվականին «Բատավիա» անունը կրող Հոլլանդիայի պատմության մեջ, վոր Յունիուսը բաց թողեց հումանիստական լատիներենով։

Ահա, ինչ է գրում Յունիուսը.

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Յես հաստատում եմ, վոր գրատպության գյուտի պատիվը պատկանում է Հաարլեմ քաղաքին, և մենք պետք է լիիրավունք պահանջենք այդ պատվի վերականգնումը...»

«128 տարի առաջ Հաարլեմում ապրում էր Լավրենտի—Յոհան Կիխենհյուստերը, կամ Կոստերը։ Այն ընտանիքը, վորը պատվով կրում էր Կոստեր անունը, այն ժամանակ ուներ ձեռընտու և պատվավոր տեղ։ Հիշած Լավրենտի—Յոհանը նույն այն

մարդն է, վորին, արդարացի պահանջով, վերադարձվում է այն փուքը, վորից անազնիվ կերպով խլել են ուրիշները։

Մի անգամ քաղաքին մոտ անտառում զբոսնելիս, նա աճարենու կեղևից տառեր կտրեց։ Հետո նա այդ տառերը ալեց թղթի վրա և զվարճության համար մի քանի տող կազմեց, վորպես նմուշ՝ իր փեսայի յերեխաներին տալու համար»։

Այնուհետև Յունիուսը պատմում է այն մասին, վոր Կոստերը հնարեց հատուկ ներկ, շատ ավելի գերադաս, քան գործածվող թանաքը։

Կոստերն աճարենու տառերը փոխարինեց կապարյա տառերով և, վերջապես, նրանց ամրությունն ուժեղացնելու համար՝ կլայեկ խառնեց։

Քանի դեռ գործը սահմանափակվում եր Կոստերի ընտանիքով՝ ամեն ինչ ընթանում եր հաջող։

Աճում եր հետաքրքրությունը դեպի արվեստը, արտադրությունը լայնանում եր, և անհրաժեշտություն առաջ յեկավ ընտանիքի անդամներին լրացուցիչ բանվորներ վերցնել։ Սա դժբախտության սկիզբը դրեց. բանվորների մեջ կար ինչ վոր Յոհան, վորը դավաճանեց յուր տիրոջը և նրան դժբախտության մեջ գցեց։

«Այս Յոհանը, վոր յերդումով պարտավորվել եր ոգնելու տպագրությանը, նախ և առաջ յուրացրեց տառերի միացման, կաղապարները ձուլելու և մնացած այլ անհրաժեշտ բաների հմտությունը։ Յեվ յերբ այս բոլորը նրան լավ հայտնի դարձավ, նա ոգտագործեց բարեհաջող հանգամանքը, այսինքն՝ ծննդյան գիշերը, յերբ, սովորաբար, բոլորն անխտիր յեկեղեցի յեն գընում։ Այդ գիշեր նա ձեռք գցեց տառերի ամբողջ պաշարը, հավաքեց յուր տիրոջ բոլոր գործիքներն ու սարքը և հապճեպ փախավ տանից՝ գողացածն ել իր հետ։ Առաջ նա ուղևորվեց Ամստերդամ, այնտեղից Կյոլն, վերջապես դուրս յեկավ Մայնց, կարծես սուրբ սեղանի պաշտպանության տակ, ուր նա հասանելիությունից դուրս եր և ապահով։ Այնտեղ նա հիմնեց տըպարան և հավաքեց յուր գողության հարուստ հունձը»։

Կոստերի պատմությունը Յունիուսը հիմնել է մի քանի քաղաքացիների վկայության և հիշողությունների վրա։ Մենք կանգ չենք առնի ապացույցների վերլուծության վրա, վոր

բերում են հաարլեմյան գյուտի վերսիայի պաշտպանները և հակառակորդները։

Հանճարեղագույն արվեստներից մեկի ստեղծագործողի փառքը պիտի պատկանի այն մարդուն, վորը նվիրել է յուր կյանքը, վորպեսզի վախճանին հասցնի յուր գործը և ստեղծի առաջին անգամ տպարանն ու գիրքը, այսինքն՝ այդ փառքը իրավամբ պատկանում է Գուտենբերգին։

Կարելի յե նրանից առաջ յեղել են մարդիկ, վորոնք կանխել են տպագրությունը և, մինչև անգամ, անցել են տանջալից գյուտարարական ճանապարհի մի մասը — բայց դա գործը չի փոխում։ Գյուտարարությունը գաղափար է, աշխատանքի և գաղափարի մարմնացում՝ աշխատանքով։ Գուտենբերգն յուր կյանքի ընթացքում իրականացրեց այդ գյուտարարության յերրորդության բոլոր մասերը։

Գյուտենբերգի աշակերտներն ամբողջ Յեվրոպայում տարածեցին շարժական տառերով տպագրությունը։ Դեռ ևս XV դարում, զանազան քաղաքներում և յերկրներում յերևան յեկած չափազանց բազմաթիվ բոլոր տպարաններից՝ ձգվում են անտեսանելի թելեր դեպի միակ կենտրոնը՝ վարպետ Յոհանի Մայնցի տպարանը։ Նա, և միայն նա յե զարմանալի նոր արվեստի իսկական նախահայրը։

Կոստերը պահանջելիք չունի, թեկուզ նրա մասին բոլոր գրվածները ճիշտ լինեն (վոր մինչև այսոր վոչ վոք չի ապացուցել), յեթե շրիֆտի և գործիքների գողությունը կարող եր նրան զինաթափել և յուր գյուտը չհասցնել վախճանին։

III. ՏԱՐԻՆԵՐՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

Միայն առողջ, կենսահյութերով հարուստ պոկած ճյուղը կարող է բռնել անպատրաստ հողում և ամրանալ նրա մեջ կպչուն արմատներով։ Տարիներն Ստրասբուրգում — այդ Գուտենբերգի փորձության և կոփման տարիներն են, և միևնույն ժամանակ, անկասկած, նրա գաղափարի հասունության շրջանը։

Գուտենբերգը բնակություն հաստատեց սուրբ Արգոբաստ վանքին կից, քաղաքի ծայրին։ Այս վանքի անունը հիշատակվում է դեռևս Ստրասբուրգի քաղաքային իրավունքի մեջ (1214 թվականին)։ «Ահա այն վանքերը, որոնք քաղաքի արշավանքի ժամանակ հայթայթում են ձիեր դրոշակակիր կառքի համար (թվում է յոթ վանք)։ Իսկ Ս. Արգոբաստի վանահայրը կհայթայթի մի ճոխ զարդարած ձի, որին հեծած կլինի կառքին ուղեկցող շուլտհեյսը։ Դրոշակը շինում են հրեաները»։

Ակներև է, որ այս վանքը դեռ այն ժամանակ մեծ կարողություն է ունեցել և վայելել է հարգանք։

Ուշադրությամբ դիտելով ապագան, Գուտենբերգը տեսնում էր յուր հույսերի անպտուղ լինելը՝ նախնիքների արտոնյալ դրությունը և արդյունավոր պաշտոնները վերադարձնելու խնդրում։ Նրա ձեռքի տակ գտնված փոքրիկ միջոցները շուտով պիտի դուրս հոսեյին նրա գրպանից և ամեն աղոտ յերևում էր աղքատությունը, գուցե և մուրացկանությունը։

Հավասարության գաղափարը միջնադարի հաղվագյուտ և արգելված հյութն էր։ Ջուր չէր, որ այն ժամանակվա ժողովըր-

ՅՈՀԱՆ ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

դական դիդակտիկական վեպերից մեկում, որ շատ կարդացվում էր Վերածնության դարաշրջանում, «փիլիսոփա Սիդրակի վեպում» գրված է.

Հարց: Արդյո՞ք բոլո՞ր մարդիկ հավասար են:

Պատասխան: Նրանք հավասար են միայն մահվան առաջ:

Միջնադարյան քաղաքը փայլուն լուսաբանություն է տալիս ամբակուռ դույքային անհավասարության: Հարստությունը կենտրոնանում էր սակավաթիվ ընտրյալների ձեռքին, իսկ հասարակական սանդուղքի մյուս ծայրին խմբվում էին չունևորները, որոնք հաճախ կազմում էին քաղաքի բնակչության մինչև յերկու յերրորդը:

Փողոցներում հանդիպելով բազմաթիվ մուրացկանների գյուտարարը հուզմունքով պիտի նայեր նրանց, վախենալով՝ որ վոչ հեռու ապագայում՝ ինքն ևս պիտի դառնար նրանց յեղբայրակիցը:

Վերշտատի կալանավորումից հետո հայրենի քաղաքից ստացած փողերը մի քիչ հետաձգեցին կարիքը, բայց ինչ ուզում է լինի՝ վաստակ պետք է:

Նրա ընտանիքի անցյալը կանխորոշեց զբաղմունքի ընտրությունը: Գենսֆլեյշների տոհմը, մյուս պատրիկյան տասնումեկ տոհմերի հետ միասին, հայրենի Մայնցում ոգտվում էր դրամի լիակատար կշռի, չափերի և կշիռների ճշտության վրա հսկելու իրավունքով: Դրամ կտրելու համար վոսկու և արծաթի գնման գործն էլ նրանց էր հանձնարարած: Այս զբաղմունքները պետք է կապեյին Գենսֆլեյշներ-Գուտենբերգներին վոսկերիչների, մետաղի վրա փորագրողների և ակնագործների հետ:

Իսկի էլ անհավանական չէ, վոր դեռևս պատանի ժամանակ, Յոհանը սովորում էր քարի հղկման, կամ դրամահատության վարպետության, վորովհետև, ինչպես ասում է յուր հիշողությունների մեջ Կյոլնի հարուստ քաղաքացի Հերման Ֆոն Վեյնսբերգը՝ «Շատերն արհեստ են սովորում, վորպես «պաշար» նրանով կերակրվելու համար. այսպես՝ յեղբայրս սովորում էր մորթեգործություն, բայց չեթե ավելի լավ ապրուստ է ներկայանում, նրանք մի կողմն են դնում իրենց արհեստը և սկըսում են այն, ինչ վոր վճարվում է»:

Ավելի լավ ապրուստ չկար, և Գուտենբերգը ձեռք է զարկում քարերի հղկման և հայելի պատրաստելուն։

Յեթե նա Ստրասբուրգի ունեոր ցեխային վարպետ լիներ, գուցե դրա վրա էլ կանգ առներ։ Յոհանի տաղանդը յերկար ժամանակով կապահովեր Գենսֆլեյշներ—Գուտենբերգների ընտանիքին պատվավոր տեղ ցեխում։ Ցեխի սուրբ հավանավորի տոնին, Յոհանը կկրեր ցեխային դրոշակը, իսկ յերեկոյան կըգլխավորեր վարպետների խնջույքին։

Բայց այս բոլորն անհասանելի յեր ապադասակարգայնացած յեկվորի համար։ Այդ ժամանակաշրջանում ցեխն առանձնացած կազմակերպություն եր և նրա մեջ յեկվոր միայնակի նախաձեռնությունը տեղ չեր գտնի։

Յեթե Գուտենբերգը լիներ պակաս գործնական և, գուցե, ավելի կրթված, նրան կսպառնար ալքիմիայի մեջ ընկնելու վտանգը—մի գիտություն, վոր խորամանկ եր և վտանգավոր և վորը յուր գիտակներին (ադեպտներին) խոստանում եր լուսավոր ապագա։ Շփվելով վոսկերիչների և քար հղկողների հետ, նա չեր կարող չլսել հրաշալի փիլիսոփայական քարի մասին, վորի ոգնությամբ ալքիմիկոսները կարծում եյին ցանկացած մետաղը դարձնել վոսկի և վաստակել չլսված հարստություն։

Թե վո՛րքան մեծ եր ալքիմիայի փառքը միջին դարերում, վկայում է անգլիական Հենրիխ VI-ի որինակը, վորի որով հոգևորականությանը հրաման տրվեց աղոթք անել աստծուն, վորպեսզի նա ոգնություն ուղարկի ալքիմիկոսներին՝ գտնելու փիլիսոփայական քարը։ Մեծ հետաքրքրություն եր ցուցահանում դեպի այդ գիտությունը Ֆրանսիական Կառլոս VII-ը, նույն այն թագավորը, վորը հետագայում մարդ ուղարկեց Մայնց Գուտենբերգի մոտ՝ նրանցից սովորելու գրատպության հոյակապ արվեստը։

Յեթե մարդը յենթարկվեր ալքիմիայի հմայքին՝ անպտուղ կերպով կկործանվեյին անաջող փորձերի տանջալից աշխատանքի որերն ու գիշերները, սնամեջ, միստիկ ֆորմուլների ուսումնասիրությունը և յելքի վորոնումները կախարդության միջոցով, վոր մութ մարդկանց գիտության վերջին ապավենն է։ Ռոժեր Բեկոնի հզոր միտքն եր պետք, XIII դարում տեսական

ալքիմիայի մեջ տեսնելու համար որգանական և անորգանական միացությունների գիտությունը, միացություններ, «վորոնք իրենց բաղադրությամբ նույն տարրերի և հեղուկների համակցության արդյունքն են՝ մասնավոր դեպք անորգանական նյութերի միացությունների», և այսպիսով նախատեսնելու ժամանակակից քիմիայի զարգացման ուղիները։

Գուտենբերգն ամուր կպել եր արհեստին, բայց վորոնում եր այնպիսի նոր արհեստ, վորը նրան ազատեր մրցումից ու գոյություն ունեցող ցեխերի արգելակող միջոցներից և խոստանար հարստություն և ամուր գույքային դրություն։

Գյուտենբերգ-Դրիցենի դատական գործը 1439 թվականին ցույց ե տալիս, վոր այդ մարդն արդեն մի քանի տարի, բացի հայելի պատրաստելուց, պարապում եր ինչ վոր «գաղտնի գործով» և այդ գործի գաղտնիքը նրա ընկերները լավ եյին պահպանում։

Այն աշխատանքը, վոր թաքցնում եր Գուտենբերգը, նոր արվեստի—գրատպության—վորոնումներն եյին։ Նրա գործունեյությունն ուղղվում եր յերկու գծով՝ վաստակը—դա քարերի հղկումն ե, հայելիների արտադրությունը, և աշխատանք ապագայի—նոր ճյուղ, վոր խոստանում ե պատիվ, փառք և փող։ Չարդարացած հույս։ Փառքը յեկավ միայն նրա մահից հետո—դա այն ժամանակվա գյուտարարների մեծամասնության վիճակն եր։ Պատիվն ու փողը մնացին անարդար ճակատագրին։

Գուտենբերգն ապրում եր յուր ծառա Լորենց Բեյլդեկի հետ, վոր նրա հավատարմատար անձն եր։

Գուտենբերգի գլխում հղացած նախագծերն իրենց կատարման համար օգնականներ եյին պահանջում։ Առաջին մարդը, վորը յեկավ Գուտենբերգի մոտ, Անդրեյ Դրիցենն եր, վորը դարձավ նրա օգնականը և ընդմիշտ ապավինեց նրան։

Յերիտասարդությունը մի պողպատե զսպանակ ե, հզոր կերպով նա յետ ե տալիս յուր վոլորտը և զնգոցով պատասխանում հարվածներին։ Դրիցենը ջահել եր։ Գուտենբերգը հանձն առավ նրան սովորեցնել քար հղկել։ Անդրեյը դառնում ե յուր ուսուցչի բոլոր ձեռնարկումների գործունյա մասնակիցը, տալիս ե նրան, համարյա ամբողջությամբ, հայրական ժառանգությունը, ձգտում ե գիտել այն բոլորը, ինչ հայտնի յե

Գուտենբերգին և մնում է նրան հավատարիմ մինչև շուտ վրա հասած, վաղաժամ մահը։

Գուտենբերգի աշխատանքը հաջող է գնում, արտադրությունը կարգի չի ընկնում, խնդիրն այն էր, որ ժամանակ և տեղ գտնվեր նրա շինվածքները ձեռնտու գնով վաճառելու։ Բարեհաջող դեպքը ներկայանում է։ Աախեն քաղաքում, Գերմանիայի հին սրբազան քաղաքում, գերմանական թագավորների թագադրության վայրում, 1439 թվականին պետք է կայանար ժողովրդական հանդես։ Ամեն յոթ տարին մի անգամ թագավորության և նույնիսկ, ուրիշ երկրների բազմաթիվ ուխտավորներ են թափվում Աախեն՝ նրա եկեղեցիներում պահվող բազմաթիվ սրբություններին երկրպագելու։ XV դարի փաստաթղթերը վկայում են, որ այդպիսի տոնախմբության մի օրում միայն քաղաքի դռներով անցել են հարյուր քառասուն երկու հազար ուխտավորներ։ Հանդեսը տևում է տասնչորս օր և այլացեղ բազմությունը անընդհատ հոսում է և փոխվում։

Սահմանված յոթնամյա ժամանակամիջոցն անցնում էր մի տարուց հետո, Գուտենբերգը պայման է կնքում հարևան քաղաքի Բուրգոմիստր Լիխտենաու Հանս Սիֆի հետ։ Նրանք ընկերություն են կազմում պատրաստելու այնպիսի առարկաներ, որ հույս ունեն ոգուտով վաճառել Աախենում։

Իմանալով ընկերության մասին, Անդրեյ Դրիտցենը թախանձագին խնդիրներով դիմում է Գուտենբերգին իրեն էլ մտցնել այդ նոր գործի մեջ։

Մի քիչ ուշ, Ստրասբուրգի նշանավոր քաղաքացի Անտոնիոս Հեյլմանը նույնն է խնդրում Գուտենբերգից յուր եղբայր Անդրեյի անունից։

Ընկերությունն աճում է չորս հոգու, ըստ որում երկու Անդրեյները մտնում են ընկերության մեջ, որպես Գուտենբերգի աշակերտներ։ Նրանք վճարում էին իրենց ուսուցման համար, բայց դրա հետ միասին իրավունք են ձեռք բերում ձեռնարկության օգուտներից մաս ստանալու։ Բարեհաջող կերպով սկսած գործն անսպասելի կերպով կանգնում է լուրջ դժվարությունների առաջ—Աախենի տոնախմբությունը մի տարով հետաձգվում է։

Դրիտցենն ու Հելմանը ցանկանում են ուսումը շարունակել և հարց են դնում այն մասին, վոր Գուտենբերգն իրենցից վոչինչ չծածկի և հայտնի յուր բոլոր վորոնումներն ու նվաճումները։

Վարպետի ջահել աշակերտներն արդեն գիտեյին, վոր Գուտենբերգի աշխատանքների և մտադրությունների մեջ գլխավորը հայելիները չեյին, և վոչ էլ այն, ինչ ընկերակիցները յենթադրում եյին—վաստակել Աախենում, այլ ինչ վոր ավելի խոստացող նոր բան։ Վարպետը չեր կարող իր փորձերը ծածկել նրանցից և, գուցե, չեր էլ ուզում ծածկել։

Այդ տարիներին Գուտենբերգը, տպագրության արվեստի ասպարեզում, համառորեն հետախուզություններ եր կատարում։ Այդ անկասկած ե. ստրասբուրգյան վոսկերիչ Հանս Դյունեն 1436 թվականին Գուտենբերգի համար պատրաստեց հարյուր գուլդեն խոշոր գումարի «իրեր, վոր վերաբերում եյին տպման»։

Բայց նա չեր մտածում վաճառքի հանել տպագրած աշխատանքներ։ Վարպետ Յոհանը այն ժամանակ դեռևս դուրս չեր յեկել գոյություն ունեցող արտադրությունների շրջանակներից և տպագրության մասին խոսք էլ չկար վորպես շուկայի համար շինվածների պատրաստող արվեստի։ Ստրասբուրգյան ժամանակաշրջանը դեռևս խարխափող թափառումներ են, գաղափարի սկզբնական հայտաբերում։

Յուր հիմնական մանրամասնությունների մեջ յուրացված գրատպությունը, հանկարծ չհայտնվեց Գուտենբերգի առաջ, ինչպես Միներվան Յուպիտերի գլխից, յերբ նա յուր կյանքի յերկրորդ կեսին վերադարձավ Մայնց։ Նոր արվեստի ստեղծագործման պրոցեսը դասավորվում եր դանդաղ և աստիճանաբար. այն ժամանակվա համար շատ բարդ ու դժվարին եր այդպիսի փայլուն նորմուծության վորոնումների անխուսափելի ճանապարհը։

Գրատպությունը ծնվեց Մայնցում, բայց նա սաղմնավորվել եր Ստրասբուրգում։

Սակայն նոր արվեստի հեռանկարներն արդեն պատկերանում եյին գյուտարարի առաջ և հմայում նրա յերևակայությունը։

Ինչ վոր ցնցող և լայն հեռանկարներ բացող նորությունով

միայն կարող էր Գուտենբերգը ձեռք գցել և գործի հետ կապել խանդավառ Դրիցենին։

Ցարերնեցի կին վկա Բարբելը դատարանին հաղորդում է Անդրեյի հետ ունեցած յուր նշանակալից խոսակցությունը։

Գիշեր էր, բայց Դրիցենը դեռևս չէր պատրաստվում քընելու։ Բարբելի հորդորներին նա պատասխանում էր, որ աշխատանք կա։ Հարցասեր կինը ճարպկորեն տեղեկանում է թե՝ որքան գուլդեն է դրել Անդրեյը հայրական կարողությունից յեկվոր Գուտենբերգի այդ, նրա համար մութ, գործի մեջ։ Լըսելով այն մեծ գումարի մասին, որ դուրս է գնացել յերիտասարդի ձեռքից, նա սարսափով բացականչում է «Սո՜ւրբ Նահատակ, ինչ կասես, յեթե դուք այդ բոլորը կորցնեք»։

Դրիցենի պատասխանը ընդգծում է նրա հավատը դեպի ուսուցիչը։

«Մենք չենք կարող կորցնել, մի տարի էլ չի անցնի, և մենք յետ կստանանք ներդրած փողերը և բախտավոր կլինենք, յեթե միայն տերը չցանկանա մեզ տառապանք ուղարկել»։

Նա այս ասում է համոզված տոնով։

Այդ մարդու որվա խղճուկ գոյությունը լուսավոր ապագայի հույսերի գրավիչ գույներով էր ներկված։

Դրիցենի հուզումնալից հավատը միայն փոփոխված արտացոլումն է Գուտենբերգի հանդիստ վստահության, որն արդեն փորձի և յուր գաղափարի ստուգման ինչ որ ճանապարհ է անցել։

Դրիցենի հավատը ձեռք է բերված այնտեղ՝ Ս. Արբոգաստի վանքում, որտեղ շարունակ ժամանակ էյին անցկացնում, ուտում և խմում Դրիցենն ու Հեյլմանը։

ԳՈՒՏԵՆԲԵՐԳԻ ՅԵՆԹԱԴՐՎՈՂ ԶՐՈՒՅՑԸ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԵՏ

Գիշեր է։ Սենյակ Գուտենբերգի տանը։ Լսվում է գետի ձայնը, որը հոսում է պատի տակով։ Սենյակում յերկու հոգի յեն՝ վարպետ Յոհանը և Անդրեյ Դրիցենը։ Նրանք շատ են աշխատել և այժմ հանգստանում են ու գինի խմում։ Վարպետը սովորականից շատ է խմում—նա վշտացած է։ Յերկուսն էլ լուռ են։

«Քանի՜-քանի՜ անգամ, գիտենալով յուր կատաղի բնավորությունը, յուր սանձարձակությունը, նա ասում էր իրեն—այս կլինի վերջին անգամ։ Մարդ առնանալով՝ ձեռք է բերում վըստահություն և անսասան հանդստություն, և ահա, նորից անաջողություն։ Այս բոլորի մեջ կինն է մեղավոր, բայց նա վարդապետի հո չի՞, սատանան տանի։ Հաճելի չէ զգալ այդ խոշոր մարմնի ուժն ու ճարպկությունը, որի չերակներում հոսում է իսկական արյուն—նվաճողի արյուն։

Ցավ հետո, նա չի թույլ տա, որ կողմնակի մարդիկ խըցկըվեն յուր գործերի մեջ, նա նրանց դաս կտա, ինչպես դաս տվեց այն քոշակարին։ Բայց դատերը նրան ձանձրացրել են»—այսպես էր մտածում Գուտենբերգը և զգում էր վիրավորանք, դառնություն ու չարություն։

«Այսպես սկսվեց. Աննան հոգևոր դատարանի առաջ նրան մեղադրում էր այն բանում, որ նրա հետ ամուսնանալու խոստումը դրժել է։ Թերևս նա իրավացի էլ է, բայց վո՞չ վոք չի կարող նրան ցուցումներ տալ։

Շոթեն Լավելը՝ այդ քոշակարը, համարձակվեց, վորպես վկա դուրս գալ դատարանում։ Սա անտանելի չէ։ Նա լավ հայհոյեց այդ ստախոսին և անպիտանին։ Նորից դանդատ, այժմ արդեն քաղաքային դատարան։ Կտուգանեն, իսկ փող այնքա՜ն քիչ է. փողը գործի համար է պետք»։

Անդրեյը լուռ է և ցած է գցել աչքերը։

«Այս լակոտն, իհարկե, ամեն ինչ գիտի և չլինի՞ թե, դեռ ծիծաղում էլ է նրա վրա».

Բարձրաձայն. Ի՞նչ ես լռել, Անդրեյ։

— Վարպետ, յես մտածում եմ քո գլխի մասին։

Գուտենբերգն աշխուժանում է. գրույցի մեջ կարելի չէ մոռանալ դառնությունններն ու վիրավորանքները։

— Արի խոսենք, չերազենք ապագայի մասին։ Թող մեր գոյության խղճուկ վիճակը, մեր վողորմությունն ու աղքատությունն այժմ դեռևս ստվերով ծածկված լինեն։ Մենք, վոր պատրաստում ենք գրատպության հրապարակ գալը, առայժմ միակ գիտցողներն ենք, վոր նա ինչպես կլինի, բայց մենք դեռ չենք կարող պարզել նրա հետևանքների ամենափոքրիկ մասն անգամ։

Մեր անհայտ ժամանակակիցը հնարեց վառոդը։ Մոտենում է վախճանը անմատչելի ամրոցի, զրահապատ ասպետի հզորության և քաջության, սրով և տապարով զինված ձեռքի տիրապետության։

Վառոդը կդառնա ավերածության և մահվան սարսափելի ույժ, բայց միտքն այդ ուժը կենթարկի մարդկանց վաղեմի պայքարին ընդդեմ բնության և վառոդը կծառայի նրա անհնազանդությունն ընկճելուն։

Բայց ավերածության և ստեղծագործական շատ ավել մեծ ույժ թագնված է իմ գյուտի մեջ։

Ասպետները, իշխանները, յեպիսկոպոսները, թագավորները, կայսրները և պապերը կխոնարհվեն նրա մեծության և տիրապետության առաջ։ Չտեսնված արագությամբ տպագրական մեքենան կնվաճի յերկիրը, յես տեսնում եմ իմ աշակերտներին, վորոնք տարածում են իմ գործը բոլոր քաղաքներում և յերկըրներում։ Գրքերը ձեռքից ձեռք կանցնեն, վոր պետք են և հասկանալի բոլորովին, վորպես վոսկե դրամները։ Տպագրիչները կստանան պատիվ և կարողություն։ Իմ անունը կկրկնվի սերունդների բերաններում։ Փառքը, նա, վորպես նոր գինի, գլուխըս ընկավ։

Հանդստությո՛ւն։

Նա լռեց և շարունակեց, կարծես մտամոլոր·

— Յես կտպագրեմ կտակարանը, ինչպես մտադրվել եմ։ Առաջինը յեկեղեցին կոգտագործի իմ գործը։ Բայց աշխարհական տիրողները, վաճառականներն ու վաշխառուները—նրանք ագահությամբ ձեռք կմեկնեն գրատպության, վորպես սրած զենքի՝ իրենց տիրապետության և շահի համար վարած կռվում։ Տպագրած խոսքը վիթխարի ոձի նման կփաթաթվի և կխեղդի, կհմայի և կխայթի։ Խեղճ քաղաքացիներ և հողագործներ, յերբ դուք կարդալ սովորեք, ինչ ստություն պիտի հրամցնեն ձեզ ձեր տիրողները։

Բայց չսարսափենք։ Յերկսայրի յե գրատպության զենքը· նա յուր մեջ կրում է յերկու մեծ ույժ՝ բանականություն և միաբանություն։ Իշխաններն ու յեպիսկոպոսները դիմացել են շնորհիվ ժողովրդի բաժան-բաժանության և տգիտության։ Ժամանակ

ե արդարությամբ վերադասավորել կյանքը։ Գիրքը բոլորը կը-կարդան. նա կշարժի կյանքը դեպի լավ ապագա և ներկայի աղքատության դեմ կարողություն կբորբոքի։ Ա՜յ, ուրախ ժամանակ կլինի։ Հավատա ինձ, Անդրեյ։ Յեվ մենք ենք նրա սկզբնավորողները։

Գուտենբերգը կանգնեց և, դառնալով դեպի լուսամուտը, վորի գունավոր փայլարի միջով թափանցում եյին արշալույսի առաջին ճառագայթները՝ շարունակեց։

— Յես նախ և առաջ ողջունում եմ իմ անհայտ ընկեր-ներին, վորոնք պիտի շարունակեն իմ գործը։ Գիտեմ մի բան՝ իմ նոր արվեստը կյանքի նման ե՝ նրան չի կարելի կոխոտել և ընկնել։ Նա ամեն տեղ ե, նա մշտական ե, քանի մարդկու-թյունը կլինի։ Յես տեսնում եմ—անցնում են դարեր, ահա դրված ե գիրքը, յես խոնարհվում եմ նրա վրա և կարդում եմ նրա վրա տպած ինչ վոր անհաշվելի տարեթիվ։

Դրիտցենը հիվանդացավ։ 1439 թվականի ճրագալույցին նա մերձիմահ եր. ինչ մտքեր եյին թափառում նրա թուլացած ուղեղում. արդյոք նրա ուսուցչի այս չարտասանած ճառի խոս-քերը չեյին։

Դրիտցենը մեռնում եր դանդաղ և դժվարությամբ։ Մեռ-նողի անկողնի մոտ եյին ազգականները։ Անդրեյը ցանկացավ խոստովանվել։

Նրա վերջին ապաշխարանքն ընդունեց Պետեր Եկկարտը՝ Ս. Մարտենի յեկեղեցու քահանան։

XIII դարի յեպիսկոպոսական հրահանգներից մեկն այսպես եր վորոշում հարցերի բովանդակությունը խոստովանության ժամանակ զանազան դասակարգերի համար։

«Գյուղացիներին հարցնել գողության մասին, գլխավորապես հողի չափը, առաջին պտղահարկը, հատիկատուրքը, հողային տուրքերը ծածկելու մասին, նմանապես հողի սահմանների խախտման, ուրիշինը հափշտակելու, նույնպես տուրքերի և հրձիգության մասին։

Բատրակներին, յեզապաններին, աշխատավորներին, հովիվներին և այլ նման մարդկանց քահանան թող հարցնի՝ հավատարմու-

թյամբ են նրանք պահպանել իրենց տերերի գույքը, ճի՞շտ են կատարել նրանց վրա դրած աշխատանքներն ու ծառայությունները։

Վաճառականներին և քաղաքացիներին հարցնել՝ չե՞ն գործել արդյոք ստություն, խաբեբայություն, վաշխառություն (վաշխառուական փոխառություն) անարդար փոխանակություն, արդյոք չե՞ն թերաչափել, չե՞ն թերակշռել»։

Խոստովանական խուզարկության լիավարտ սիստեմ՝ աշխարհի հզորների պետքերի համար։ Հարց է առաջ գալիս՝ ապա ու՞ր մընաց խոստովանության գաղտնիքը, վոր հայտարարել է յեկեղեցին։ Չէ՞ վոր այդ գաղտնիքը խախտելու համար հոգևորականին ծանր պատիժներ եյին սպասում։

Գուտենբերգի կյանքի պատմությունն այդ հարցին պատասխան տալիս է։ Անդրեյի մահից կարճ ժամանակ հետո, նրա յեղբայրների և Գուտենբերգի միջև առաջ յեկած դատական պրոցեսին, քահանայի ցուցումները Դրիտցենի խոստովանության բովանդակության մասին՝ լրիվ կերպով յերևան յեկան, մերկացնելով այդ «գաղտնիքի» իսկական եյությունը։

Հոգիների հովիվը—Եկկարտը, գործնական մարդ էր. փոխանակ թողություն տալու մեռնողին, նա ուղղակի հարցրեց՝ չունի՞ արդյոք Դրիտցենը պարտքեր և վորևե մեկը նրան պարտ չի՞։

Դրիտցենը հուզվեց և քահանային հաղորդեց յուր մասնակցության մասին Գուտենբերգի ընկերության մեջ, և այդ ընկերության մեջ մտցրած փողերի մասին։ Ըստ յերևույթին Անդրեյն այդ մեղք էր համարում յուր յեղբայրների վերաբերմամբ։

Պետեր Եկկերտը մանր պրովոկատոր էր, նա շատ էլ նման չէր յուր հեռավոր ապագայի յեղբայրակիցներին, յերբ նրանց հաջողվում էր խոստովանության ժամանակ դուրս կորզել դավադրությունների և ապստամբությունների մասնակցողների խռովահույզ հոգիների խոստովանանքը, վորոնք հավատում եյին գաղտնիքի իսկական սրբությանը, վորովհետև նա համարվում էր «պրուսցյաստծո հետ»։

Գուտենբերգը չկար յուր աշակերտի մահվան անկողնի

մոտ, նրան այլ բան էր հուզում. Նա վախենում էր յուր գաղտնիքի հրապարակվելուց, վորովհետև նրա նոր արվեստի հարմարանքների մի մասը գտնվում էր Դրիտցենի տանը։

Մի շարք վկաներ ցույց են տալիս, վոր Գուտենբերգը յուր ծառա Լորենց Բեյլդեկի և Անդրեյ Հեյլմանի միջոցով աշխատում էր, վոր Դրիտցենի տանը գտնվող մամուլից հանվեն ինչ վոր կաղապարներ և քանդվեն այնպես, վորպեսզի վոչ վոք չկարողանա հասկանալ՝ ինչի են նրանք ծառայում։

Հիմք կա կարծելու, վոր տպագրական մամուլը Գուտենբերգն արդեն հնարել էր և փոխարինել տպելու նախկին ձևը՝ թերթն արդուկելու միջոցով։ Իսկ կաղապարները, վորոնց մասին այնքան հոգատար էր Գուտենբերգը, պետք է յենթադրել, վոր ուղղակի կապ ունեյին շարժական մետաղե տառերի հետ։

Քիչ էր մնում Դրիտցենի մահը նոր բարդություններ առաջ բերեր գրատպության արվեստի կատարելագործման մեջ. Նրա յեղբայրները Գուտենբերգից գանգատ տվին, պահանջելով, վոր նա կամ վերադարձնի իրենց հանգուցյալ յեղբոր մտցրած փողը, կամ նրանց ընդունի, վորպես գործի մասնակիցներ։ Ըստ յերևույթին Գուտենբերգը իսկի էլ չէր ուզում գործի մեջ ընդունել Դրիտցենի յեղբայրներին, իսկ դրամական հայցն սպառնում էր սնանկությամբ։

Դրիտցենների գանգատի դեմ Գուտենբերգը դատարանին ներկայացրեց ընդարձակ բացատրություն. այդ գործով հարցաքննված են 39 վկա*)։

Դատական գործը քննող մեյստեր Կունո Նոպեն և խորհրդականները վորոշում կայացրին, վորով Գուտենբերգին դատապարտում եյին ընդամենը 15 գուլդենի վճարման։ Ըստ եյության դատը տարավ Գուտենբերգը։

Բայց դատի բարեհաջող վերջավորությունը Գուտենբերգի առաջ կանգնած հիմնական խնդիրը չէր լուծում։ Ստրասբուրգի գործերը ցույց տվին նրան, վոր յուր տրամադրության տակ գտնվող աննշան միջոցներով և նրանով, վոր կարող էր ստանալ այստեղ յուր ընկերակիցներից և աշակերտներից՝ նա չէր կարող ի կատար ածել սկսած գործը։

---

*) Այս պրոցեսի դատական գործը նյութ է տվել ներկա գլխի համար։

Գուտենբերգին հարկավոր էր հարուստ մարդ, վորը համաձայներ նրա սկսած ձեռնարկության մեջ մտցնել ավելի զգալի խոշոր գումարներ։

Այդպիսի մարդու վորոնումների մեջ մենք կհանդիպենք Յոհան Գենսֆլեյշին, վորը նորից Գուտենբերգ է անվանվում հայրենի քաղաք Մայնցում։

Գենսֆլեյշների տոհմային զինանշանի կարմիր վահանի վրա պատկերած է քայլող մարդ։ Բարձրացրած աջ ձեռքին նա ունի յուր առաջին լայն թաս, ձախով հենվում է ձեռնափայտին, քամին ծածանում է նրա թիկնոցը։

Նախնիքները գյուտարարին ժառանգություն են թողել աղքատությունն ու թափառումները. Թասը նա ինքը լցրեց ամենաթունդ գինով և մատուցանում է մարդկությանը։

IV. ԱՌԱՋԻՆ ՆԵՐԴՐՎԱԾ ՆՈՐԱՎԵՊԸ

(Վորի մեջ նկարագրված է որուգիեերը միջնադարյան քաղաքում յեվ պատմվում է մի գյուտարարի տխուր վախճանի մասին)

Աշնան առավոտյան քաղաք եր մտնում սայլերի գումակը։ Անցնելով քաղաքի դռները, առաջին սայլը թաղվեց հեղուկ ցեխի ղանգվածի մեջ։ Ձիերը չարչարվում եյին մտրակի հարվածների տակ, մարդիկ բղավում եյին՝ հրամաններն ու խորհուրդները միախառնելով ծանր հայհոյանքների հետ։

Գզգզված հագուստով մի թափառական վարդապետ, վորը սայլերի հետևից քաղաք մտավ, կանգ առավ, ականջ դրեց և նայելով տաճարի բարձր սրածայր գագաթին, վոր բարձրանում եր հեռվում աններդաշնակ ցածր տների վրա, շտապ առաջ շարժվեց։

Մի սայլ, վոր լիք-լեցուն բեռնած եր ապրանքներով, ծռվեց կողքի և քիչ եր մնում շուռ գար։ Ձիերի կողքին դես ու դեն ընկնող մարդիկ անեծքներ եյին ուղղում անմեղ քաղաքացիներին, մագիստրատին և այն բոլորին, ով՝ նրանց կարծիքով, այդքան դժվարացնում եր միջնադարի վաճառականի զբաղմունքը։

Վաճառականների ձիավոր մի խումբ ուղեկցում եր սայլերին։ Նրանցից մեկը չսպասեց պատահարի վախճանին, մտրակեց ձիուն և արագընթաց անցավ փողոցով։ Շուկայի հրապարակից նա թեքվեց նրբանցքը և թակեց փայտյա յերկհարկանի տան դուռը, վորը շրջապատված եր պատշգամբներով, աշտարակներով և կցած շենքերով։

Վերի լուսամուտում վայրկենաբար յերևաց մի կանացի դեմք։ Ճանապարհորդը քթով օդը ներս քաշեց—կերակուրի հոտ եր գալիս, ծխնելույզը ծխում եր։

Վաճառականը ծանրամարմին և կորացած տղամարդ եր, յերկարամորուս դեմքի վրա, ճակատի լայնությամբ, կարմրին եր տալիս սպին, թամբից կախված եր հասարակ կոթով սուրը։

Տանտերն անծանոթին անհամբույր ընդունելություն ցույց տվեց։ Փոքրիկ շեկ մարդը աղվեսային ձևերով, յուր մռայլ հյուրի առաջ վոտքից վոտ եր փոխվում և համառությամբ մի կողմ նայում։ Վերջին օրերի ծանր հանգամանքները նրան դուրս եյին գցել սովորական հունից, և նա վոչ մի կերպ չեր կարողանում վերադարձնել բնածին համարձակությունը։ Քաղաքում տիրում եր անհանգստություն՝ արհեստավորները թշնամաբար եյին տրամադրված դեպի պատրիկները, վորոնցից եր տանտերը։ Կարելի յեր սպասել հրապարակային ընդհարման։

Զբաղմունքով վաճառական, մագիստրատի անդամ՝ նա յերկյուղ եր կրում, վոր տուրքերը նորից կավելացնեն կամ, մինչև անգամ, կաքսորեն քաղաքից։

Բացի սրանից նա այսօր ուզում եր դստերը հարսանիք անել, և այս բոլորն անժամանակ եր։ Նորեկը տանտիրոջը մի նամակ տվեց և հակիրճ խոսքերով բացատրեց, վոր հարևան քաղաքի վաճառականական ավագը նրան վողջույն ե ուղարկում և խնդրել ե անցորդ վաճառականին, բերանացի ավելացնել այն, ինչ բաց ե թողած այս կարճառոտ գրության մեջ։

Տան տերն, ըստ յերևույթին, դեռևս չգիտեր, ինչպես վերաբերվի թե՛ նամակին, թե նրա առաջ կանգնած անծանոթին, իսկ նա չեր հեռանում, կանգնել եր նրա առաջ վիթխարի արջի պես, թվում եր թե սենյակը մթնեց և օդը պակասեց։

Վերջապես տանտիրոջ կարծր ուղեղը կշռադատեց ամեն ինչ և յուրացրեց գրությունը։ Միանգամայն անսպասելի աշխուժություն ցուցահանելով, նա կանչեց ծառային և հրամայեց, վոր վազի գտնի վարպետ Յոհանին՝ զինագործների ցեխի ավագին և ասի նրան... յո՛ւր խոսքը նա արդեն վերջացրեց դռան հետևին։

—Վարպետ Յոհանը մեծ մարդ ե մեր քաղաքում, շատ մեծ,

բացատրում էր նա՝ վերադառնալով։ Յես ու նա թշնամիներ ենք—նա հոհռաց, կարծես աղվես հաչաց—բայց ուրախ եմ նը բան ծառայություն անել, շատ ուրախ եմ։

Արջն ըմբռնողաբար նայում էր նրան և խուլ քրթմնջում էր։

Հետո նրանք կողք-կողքի նստած՝ սեղանի մոտ ցածր ձայնով զրույց էին անում. տանտիրոջ աղջիկը մի քանի անգամ մոտենում էր դռներին և ականջ դնում, բայց չէր կարողանում բան հասկանալ։

Ծառան վերադարձավ և հաղորդեց, որ զինագործների ավագին նա տանը չի գտել, նրան այնտեղ ասել են, վոր վարպետը գնացել է տաճար։ Այդ օրը կիրակի չէր։

Տաճարի դռների մոտ սպասում էր խեղճերի և մուրացկանների ամբոխը։ Քաղաքացիք բարձրանում և իջնում էին քարե սանդուխքներով։ Ժամերգությունը վերջանալու մոտ էր։ Ծառայի հասարակ հագուստ հագած միաչքանի մի մարդ մոտեցավ և վոտքով դեն հրելով մի հաշմանդամի, վորը նստած էր ներքևի աստիճանի վրա, բռնեց նրա հետ կանգնած կնոջ ձեռքը։ Ջահել կինը, ծանր հառած հայացքով, խղճուկ ցնցոտիներ հագած, անսպասելիությունից ճչաց և հետևեց միաչքանուն։ Անվոտը նրանց հետևից անվայել հայհոյանք ուղղեց։

-- Յես վարպետ Յոհանի կողմից եմ—կամաց ասաց կիկլոպը—դու յերդումով պիտի ցուցմունք տաս, վոր մեկը, վորին դու չգիտես, պատվազրկել է քեզ և կենակցում է քեզ հետ։ Սրա համար քեզ կվճարեն։

— Ինչո՞ւ։

— Քո գործը չէ։

— Յես ուզում եմ իմանալ։

— Բանը նրանումն է, վոր կանոնադրության մեջ ասված է, վոր այդպիսի արարքների համար վարպետին դուրս կանեն ցեխից։

Կինն աչքերը ցած գցեց և լռեց։

Տաճարը գլխապտույտ բարձրություն ուներ։ Վերևում տեղավորված յերկար ու նեղ լուսամուտների գունավոր ապակիների միջով յերերուն լույս էր ընկնում։ Նրան ընդառաջ բարձրանում էին յերգեհոնի հնչյունները։ Պատերի և բեմի վոսկեզօծվածքը առկայծում էր և սևին տալիս։ Աղոթողների գլխավերևը տարած-

ված էր քարի և կիսախավարի ճնշող զանգվածը, հաստատելով մարդկային անզորությունն աստվածային հզորության առաջ, վորն եյապես դիմակն էր յերկրային իշխանության։ Բաց դռների միջով յերևում էր աշնանային օրվա փափուկ փայլը։

Տաճարից դուրս յեկան մի խումբ մարդիկ, վորոնց հագուստից յերևում էր, վոր ունևոր արհեստավորներ են։ Նրանք դիմում եյին դեպի քաղաքային խորհրդարանը և նրանք չհասած կանգ առան Ռոլանդի արձանի մոտ։

Խոսում էր բարձրահասակ, լղար մի տղամարդ· վորը նման էր գետնի մեջ խրած Ռոլանդի սրին։ Լայնեզր կլոր գլխարկն ստվեր էր գցում դեմքի վերի մասի և մեծ քթի վրա, վոր դիշակեր թռչունի կտուցի պես կեռացած էր դեպի ցած և, կարծես թե, ուզում էր խրվել դուրս ցցված ակոսած կզակի մեջ։

— Իմ աշակերտը յերեկ յերեկոյան ականջ էր դրել դրամահատի դռանը։ Այնտեղ հավաքվել են նրա ազգականները և մի քանի նշանավոր քաղաքացիներ· յես ճանաչում իմ դրամահատի մոտ գնացողներին՝ բոլորին։ Պարծենկոտներն սպառնացել են դաս տալ լկտի արհեստավորներին, և դրամահատը, մինչև անգամ, փորձել է զրահները և դրել է սաղավարտը յուր դատարկ գլխին։ Նա ասել է, վոր ինքը բավականաչափ սուսերներ, տապարներ և համարձակ մարդիկ ունի՝ այդ գեղջուկների բազմությունը ցրելու համար, վորը փայտից էլ կվախենա։ Ի՞նչպես է դուր գալիս լսել այս բանը ձեզ՝ վարպետներիդ, վոր ձեր հմտությամբ ձեռք եք բերել փառք ամբողջ թագավորության մեջ, Ե՛հ, ի՛նչ եմ ասում-ամբողջ աշխարհում։ Բավական չե՞ այդ դատարկախոսները նստեն մագիստրատում և լցնեն իրենց առանց այն էլ ուռած քսակները։

Խոսողի ճառը համակրությամբ ընդունվեց։

Խրախուսված վարպետը շարունակեց՝

— Յես յերեկ խոսել եմ մեր սրբազան յեպիսկոպոսի կապելլանի հետ։ Նա ինձ հաղորդեց, վոր յեպիսկոպոսն էլ անբավական է մագիստրատից։ Պետք է գործի անցնել, քաղաքացիներ։

— Ջարդե՛լ պատրիկյան ճիվաղների գլուխները։

— Ջուլհակներն անհուսալի յեն վարպետ Յոհան—ասաց

մյուսը. Նրանք դժգոհ են իրենց փոքր ունեցվածքից և նախանձում են մնացածներին։

— Յենթավարպետների շրջանում վատ խոսակցություններ են տեղի ունենում։

Յոհան.—մի՞թե մենք՝ ցեխային վարպետներս, այնքան ուժեղ չենք, որ մեզ պաշտպանել կարողանանք։

— Ազնվական-ավագանին զվարճանում է—նորից ընդհատեցին նրան։

— Թող զվարճանան, կօգնենք նրանց՝ դժոխքը գաղթելու սատանայի մոտ։ Յես պատասխանատու յեմ զինագործների համար. նրանք կկանգնեն իրենց սուրբ հովանավորի դրոշի տակ։

Նորից լռություն.

— Հա, ել ի՞նչ սպասենք, յեթե նույնիսկ իմ վարպետների մեջ դավաճաններ կան—շարունակեց զինագործի խուլ ձայնը։

Յերկարատև ընդմիջումի լռությունը հուզմունքի նշան եր։

— Մեզնից մի քանիսը ճանաչում են յերկաթյա դռների մոտ ապրող Անդրեյին։ Մութ մարդ է. բարեկամություն է անում ոտար քաղաքացիների և թափառաշրջիկների հետ։ Նա մարդկանց առաջ պարծեցել է, որ գիտի արտադրության նոր գաղտնիքը և ավելի շուտ քոսոտ շան նման կսատկի, քան թե բաց կանի գաղտնիքը յուր ցեխային յեղբայրակիցներին։

Թշնամական հայացքների շրջանը շրջափակվեց, և խոսակցության մասնակիցներից մեկը հարց տվեց.

— Բայց ի՞նչ է մտածում զինագործների ավագը։

Քաղաքային խորհրդի շենքին մոտենում եր այլաքաղաքային վաճառականների գումակը.

Վարպետ Անդրեյը դեռևս յերիտասարդ եր։ Նա կանգնած եր յուր տան բակում, որ յերկաթե դռների մոտ է. քամին խաղում եր նրա սև մազերի հետ և շարժում նրա թիկնոցի ծալքերը։ Ձախ ձեռքում բռնած ուներ դաշույնը, որը նա զննում եր. Դաշույնը շպրտելով աջ ձեռքը՝ Անդրեյը տարավ-բերեց և նետեց պատին։ Պողպատը փայլեց օդի մեջ, շեղբը ցցվեց փայտի մեջ և լարի պես դողդողաց։

— Այս կամ աղջկանը, կամ տղային,—շշնջաց նա։

— Վարպետ,—դիմեց Անդրեյին մոտեցող պատանին — յես

այսօր անցնում էյի վաճառական Շտոկերի տան մոտից և խոհեցի ծառաների հետ։ Հարսանիքի ճաշ են պատրաստում։

Անդրեյը դաշույնը դուրս քաշեց պատից և ասաց.

— Դու հիմար ես, վարպետացու։ Այս դաշույնի շեղբն ավելի լավն է, քան սարացինյանը, որով անցյալ անգամ պարծենում էր յեկվոր ասպետը, և դաստակն էլ ավելի գեղեցիկ է։ Այս դաշույնը շինել եմ յես՝ վարպետ Անդրեյս։ Իսկ դու, այ, ընդմիշտ վարպետացու կմնաս՝ ինչպիսի հմտության էլ հասնելու լինես քո գործում, որովհետև դու մեր տաճարի վերջին առնետի պես աղքատ ես և չես կարող վճարել այն բոլոր տուրքերը, որ քեզանից կպահանջեն ցեխն ու իշխանությունները։ Վարպետները ճարպիկ կերպով ձեր հախիցը գալիս են. բայց յերևում է՝ յես էլ կ՚նկնեմ նրանց ճանկը։

— Շտոկերի դուստրը...— նորից սկսեց վարպետացուն։

Անդրեյը ընդհատեց նրան։

— Կարգն այսպես է՝ գյուղացին ասպետ ունի, յես—ցեխային ավագ, դու—վարպետ, մինչև անգամ կայսրին էլ են հուպ տալիս իշխաններն ու պապը, այլ կերպ նա քաղաքացիներից օգնություն չէր խնդրի։ Չգիտեմ միայն, թե ո՛վ է ճնշում սրբազան պապին և աստծուն, բայց նրանք էլ մեկն ու մեկը կունենան։

Փոխելով թեման՝ նա ասաց.

— Վաղը մարդ պիտի գա, դու նրան տուն չբերես, այլ միայն հարցրու՝ ո՛րտեղ նրա հետ հանդիպենք և լռություն պահպանիր այդ մասին։

Վարպետ Յոհանը չգնաց վաճառական Շտոկերի մոտ, նրանց տների մեջ դասային պայքարով փորած անդունդ կար, բայց նրանք այդ օրը հանդիպեցին.

Վարպետը յուր խոսակցին նայում էր վերից, գիշատիչ թռչունի ապակյա աչքերով-կարծես թե, ես է, կտուցով կխփի յուր առաջ նստած փոքրիկ գաղանին։ Շտոկերն աղվեսի ցածր հաչոց էր հանում, դատարկ բաներ խոսում և ոչ մի կերպ իր ասելիքին չէր անցնում։

Վերջապես ասաց.

— Այսօր հարևան քաղաքի իմ բարեկամից նամակ ստացա։ Նա գրում է, որ զինագործների ցեխի վարպետներից մեկը տե-

ղափոխվում է իրենց մոտ, հմուտ վարպետ, վոր գիտի ձեռ արհեստի նոր գաղտնիքները։

Թռչունը դես ու դեն շարժվեց, կարծես թե ուզում եր վեր թռչել, հետո փետուրները ցցեց։

Աղվեսը գոհ մնաց թողած տպավորությամբ և շարունակեց.

— Այդ մարդն ինձ ել է խանգարում։ Հետո յես հուսով եմ, վոր վարպետների վարպետը չի մոռանա իմ բարեկամական ծառայությունը. յես շուտով ուզում եմ վորդուս ուղարկեմ տոնավաճառ, իսկ այժմ զենքի մեծ պահանջ կա։

Հարսանիքի խնճույքին վաճառական Շտոկերի մոտ շատ հյուրեր եյին հրավիրված։ Տնից ձայներ եյին գալիս, պատուհաններում պայծառ լույս եր վառվում։ Տան առաջ, մթության մեջ անցուդարձ եր անում մի բարձրահասակ մարդ։ Շուկայի հրապարակի կողմից վոտնաձայն լսվեց։ Անցորդները գնում եյին դանդաղ և ցածրաձայն զրույց անում։ Բարձրահասակը թագնվեց անկյունի հետևին և ձգվեց պատնի վեր, նա լսեց.

— Վարպետն երեկ խաղ տանուլ է տվել հին փողոցի տանը։ Գիտե՞ս, յերեք կոբիճներ այնտեղ դահլիճ են սարքել զառ խաղալու համար. խարդախել չի կարելի, նրանք թույլ են տալիս խաղալու միայն իրենց զառերով։

— Ա՛յ թե, ինչո՛ւ նա այսօր այնքան չարացած ե։

Մարդիկն անցան, բայց մի քիչ դենը կանգ առան։

Դուռն աղմուկով բացվեց, և տանից յերկու հոգի դուրս ընկան մթության և ցեխի մեջ։ Նրանցից մեկը բարձր գկըռտում եր և փորձում յերգել. նա դրամահատն եր։ Մյուսը լռություն եր պահպանում։ Նրանք դուրս եյին յեկել թարմանալու և բնության տուրքը տալու։

— Յես ել, հո, խելքս հացի հետ չեմ կերել—ասում եր դրամահատը։—Այդ հիմարներն ինձ չեն կարող խաբել։ Յես մարդ կհավաքեմ և յես ել դեռ կարող եմ լավ սուր բանացնեմ, ինչ անենք, վոր յես ասպետ չեմ։ Ասպետը լավ եր յերգում հայտնի յերգը՝ «Մենք դաս կտանք գեղջուկներին»...

Նա նորից փորձեց յերգել, բայց բան դուրս չեկավ։

Պատի մոտ կանգնած մարդը շարժվեց։

Նրբանցքի ծայրին սպասող մարդիկ արագ մոտենում եյին.

խոտողների գլխավերևից մի մեծ քար թռավ և դիպավ դռան գրանդլին։

Առանց ծպտուն հանելու նրանք ծլկվեցին տուն։ Սողնակը շրխկաց։ Ներանցքում լսվեց փախչողների վոտնաձայնը։

Մի բոպե տունը խաղաղվեց, հետո աղմուկն ուժեղացավ և զենքերի շաչյուն բարձրացավ։

Այն ժամանակ բարձրահասակ մարդը հեռացավ պատից և արագությամբ անհայտացավ։

Անդրեյը՝ այդ նա յեր թագնվել անկյունի հետևին և վկա յեր դրամահատի վրա կատարված հարձակման, շտապ գնում եր դեպի քաղաքային դռները։

Պահակը նրան թողեց, վորովհետև նրան ճանաչում եյին, և նա ասաց, վոր պատվիրած զենքեր և տանում հարևան ամրոցի տիրոջը, վորը գտնվում ե սարի վրա, վոչ հեռու քաղաքային պարիսպներից։

Նա գնում եր աննպատակ, չնկատելով ճանապարհը։ Ցրտում եր։ Անդրեյը դանդաղեց քայլերը, աչքերը բարձրացրեց և ցնցվեց։ Աստղալից յերկնքի ֆոնի վրա յերևում եյին յերկու խոշոր սյուներ։ Դրանց վրա դրված փայտից, խաղաղ օդում, անշարժ կախված եր մի կիսաչորացած դիակ, վոր սարսափ եր ազդում շրջանցքի ավազակների վրա։

Կախաղանի տակ ինչ վոր բան շարժվեց։

— Բու յե,—անցավ Անդրեյի մտքով։

Գետնից բարձրացավ մարդկային կերպարանք։

Ցերեկնել՝ յերկու կենդանի արարածները և մեռածը, միատեսակ հանդարտ եյին։

Լռությունը խզեց գետնից բարձրացած մարդը։

— Ցես կարծում եյի գոնե այստեղ մինչև առավոտ վոչ վոքի չեմ հանդիպի։

— Ամեն տեղ կարելի յե ընկեր գտնել—հետևեց Անդրեյի պատասխանը։

— Դու ո՞վ ես, աննհանգստությամբ հարցրեց անծանոթը։

— Թափառաշրջիկ։

— Այդ լավ ե։ Հասկանո՞ւմ ես, չի կարելի ապրել—տերերն ամեն ինչ խլեցին՝ հողը, մարգագետինները, ջուրը։ Ցես հողագործ եմ, աշխատում եյի տիրոջ համար, վճարում եյի տուրքեր

և տուգանքներ, ամրոցի տիրոջ համար հավաքում էյի հարդ, պտուղներ, վորս էյի դուրս քշում։ Մոտ օրերում մերոնք լսել են մի լավ քահանայի, նա ասում եր, վոր այս բոլորը չկա սուրբ գրքում, տերերն աստծու դեմ են գնում։ Շներին քըս-քըս տալով վորդուս սպանեցին, այս էլ ե սուրբ գրքով։ Յես փախա։ Վաղը կմտնեմ քաղաք, ազատ ոդ կշնչեմ։

— Դու սովից սատկելու լիակատար ազատություն կստանաս։

Տիրեց խաղաղություն, այնպիսի խաղաղություն, վոր մարդ ուզում եր ճչալ։

Այս անգամ խոսել սկսեց Անդրեյը.

— Հոգեգալստին գետի այն կողմում անտառներն այրվում եյին։ Արեգակը նման եր կարմիր փայլատ վահանի։ Սրտերի մեջ բուն եր դնում խուլ անհանգստություն, յես ինձ կորցրած ման եյի գալիս և սպասում եյի ինչ վոր բանի, մարդիկ ասում եյին, վոր արյունոտ արևը ժանտախտ է նախագուշակում։

Ազնաուրը։— Հոգեգալստին մեր գյուղի մոտից բորոտներ եյին անցնում—մոտ տասը հոգի։ Նրանցից մեկն ուզում եր գյուղ մտնի։ Մենք նրան քարերով քշեցինք։

Անդրեյ։—Յես մի աղջիկ եմ սիրել և տանջվում եմ, ինչպես այն ժամանակ, հրդեհի ժամանակ։ Փակում եմ աչքերս և տեսնում եմ նրան, ձեռքս մեկնում եմ և զգում եմ նրան։ Սիրտս այնքան է մեծացել, վոր կուրծքս պատռվում է։ Այսօր այդ աղջկան մարդի յեն տալիս։

Ազնաուր։—Մեր տերտերը բանուգործ եր շինել իմ կնքահոր կնոջ մոտ գնալը։ Լավ խաղ խաղացինք նրա գլխին։ Յես քեզ կպատմեմ։

Կես գիշերին մոտ պանդոկի այցելուներն սկսեցին ցրվել։ Տերը հորանջում եր, հաճախ մոտենում եր դռանը և դուրս նայում փողոց։ Մի մեծ շուն ներս պրծավ սենյակը և թաքնվեց սեղանի տակ։ Շանը ծեծում եյին, կլանչոցով տեղից տեղ եր փախչում։ Վերջապես պանդոկատերը բերեց խանչողը և բզտեց շան դունչը, նա վոռնոցով դուրս թռավ դռնից։

Ամենից շատ խմում եյին վարպետ Յոհանն ու սպին ճակատին անցորդ վաճառականը։ Վաճառականն առավոտյան ճա-

նապարհը պիտի շարունակեր. ապրանքը տանում էյին տոնավաճառ։

Զինագործների ավագը հարբած էր։

— Իսկ չեթե նա փախած լինի՞, չէ՞ որ նա կարող էր փախչել,—հարցնում էր նա։

— Կարող էր—քրթմնջում էր վաճառականը, բարձրացնելով գավաթը։

Վաճառականը քանի խմում էր՝ լեզուն բացվում էր։

— Ցես հարգում եմ արհեստավորներին, բայց նրանք վաճառականներին չեն հասնի։ Մի նեղանա, վարպետ։ Ձեր քամակները կպել են նստարաններին և փոքերը—հայրենի քաղաքի գետնին։ Դուք ի՞նչ գիտեք և ի՞նչ եք տեսել։ Ոչինչ։

Ցես շրջել եմ շատ չերկրներ։ Հիմա վերադառնում եմ Վենետիկից։ Դուք չերազում էլ չեք կարող այդպիսի քաղաք հնարել։ Մենք՝ գերմանական վաճառականներս, այստեղ մեծ հարգանք ենք վայելում։ Մեր վաճառականական իջևանը ասպետական պալատներից լավ է։ Դու մի տեսնես, ամբողջ աշխարհից ինչպես են հավաքվում վաճառականները Ս. Մարկոսի հրապարակի սյունաշարում, ուր և քաղաքային կշեռքն է։ Սուրբ Կույսի վերափոխման օրը ցես տեսել եմ վենետիկյան դոժի նշանադրությունը ծովի հետ։ Ի՜նչ հանդես է։ Մինչև այժմ էլ մեջքս սառում է։ Ալեքսանդր պապը Վենետիկում հաշտվում էր մեր կայսր Ֆրիդրիխի հետ և այն ժամանակ, պապն ուրախանալով, նվիրեց դոժին մի մատանի, օրհնելով Վենետիկի իշխանի զուգորդությունը ծովի հետ։ Այն օրվանից վենետիկցիք իրենց ձեռքը գցեցին ծովի տիրապետությունը։

Նշանադրության օրը բազմացեղ ժողովրդի ահագին բազմություն է հավաքվում տոնին։ Ամբողջ ծովը, Ս. Մարկոսից մինչև Լիդո, վխտում է զարդարված նավակներով, ինչպես նեխված միսը որդերով։ «Բուկենտավրի» վրա, նավ, որ ցեկու հարյուր թիավար ունի, բարձրանում է դոժը՝ շրջապատված սենատով, խորհուրդով և դեսպաններով։ Դու մի տեսնեյիր այդ նավը. նա չերկհարկանի է, պատած ոսկով, արձանները նավեղրին։ Ամբոխը փոթորիկի պես աղաղակում և գոչում է։ Դոժը ջուրն է գցում մատանին և ասում՝ «Ծով, նշանվում ենք քեզ

հետ ի նշան մեր ճշմարիտ և հավիտենական տիրապետության»։

Վենետիկցիք իրենց նավերով շրջել են ամբողջ աշխարհը։ Մի Վենետիկցի վաճառական ինձ պատմում եր, վոր նա յեղել է Յեվրոպայում, վորտեղ բոլոր մարդիկ մեր նման սև են, իսկ այդ տեղերից մոտիկ ապրում են մարդիկ, վոր շան գլուխ ունեն։

Վարպետը վիրավորված է, բայց վիճել չի ուզում։

— Խմում եմ արհեստավորների և վաճառականների կենացը,— ասում է վարպետ Յոհանը, վորովհետև, ինչպես ասված է սուրբ գրքում՝ մենք ենք յերկրի աղը։ Կայսրը, յերբ կարիքի մեջ եր լինում, քաղաքներից փող եր պարտք վերցնում։ Ո՞ւմ փողերն եր նա փոխ առնում։ Մեր։ Սրբազան հայրը և նրա յեպիսկոպոսները մեր նվերներով են կառուցում տաճարներ և դատապարտության համար չեմ ասում—լավ կյանք վարում։ Մեր փողերով։ Ճի՞շտ եմ ասում։

— Ճիշտ է,— հաստատեց վաճառականը։

Դուռը բացվեց և նրա հետևից յերևաց միաչքանու անճոռնի դեմքը։

— Ժամանակ է,— ասաց վարպետ Յոհանը,— պանդոկատեր, վառիր լապտերը։

Միաչքանին վերցրեց լապտերը և գնաց լուսավորելու յուր տիրոջ ճանապարհը։

Վաճառականը նստած որորվում եր, նստարանը նրա տակին ճռճռում եր։

— Վերադարձա՞վ,— հարցրեց վարպետը։

— Այո։

— Ասացիր մարդկանցը։

— Ասացի։

— Հիմար վաճառական, զահլես տարավ պարծենկոտությամբ և հեքիաթներով։ Նա կանուխ է գնալու։ Այս րոպեյիս հարբած է և չի կռահի, վոր նրա սուրն անհայտացել է։ Պիտի լավ պահել, վորպեսզի չգտնեն։

Անդրեյը վերադարձավ քաղաք կես գիշերին մոտ։ Նրան նորից քաշեց դեպի վաճառական Շտոկերի տունը։ Կես ճանապարհին լսեց, վոր հետևից գալիս են։ Նա կանգ առավ, վոտնաձայնը հետևից դադարեց։

Մոխրագույն պատառոտուն ամպերի մեջ շարժվում էր լուսինը։ Թույլ լուսավորված գետնի վրայով սողում էին անորոշ ստվերներ։

Անդրեյ արագացրեց քայլերը, նրա հետևից ցեխի մեջ հաճախացավ մարդկանց ծանր վազքը։ Օդի խոնավ դատարկության մեջ մի քանի հարվածի ձայն չեկավ, և ապա հառաչանք և մահամերձ խռխռոց։

Մի պանդուխտ վարդապետ, որ գիշերելու տեղ որոնելով, անցնում էր հարևան արոտավայրով, քարացած կանգ առավ, դողացող շրթունքներով աղոթք մրմնջաց և արագությամբ յետ դարձավ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՏԸ

Ե. ՎՈՍԿԵ ՔԱՂԱՔ ՄԱՅՆՑԸ

Վիթխարի հարթավայր, վոր յուր յեզրերով հեռանում ե դեպի անհայտը. հարթավայրի կենտրոնում ցամաքի կղզին, վոր բոլոր կողմերից վողողվում ե ովկյանոսի մրրկածուփ և խորհըրդավոր ալիքներով—այսպես ե պատկերացնում միջնադարյան մարդը յերկիրը։

Յերկրի գնդաձևության թեորիան, վոր հանճարեղ կերպով հիմնավորել են դեռևս Պյութագորը[15] և Արիստոտելը[16] մոռացված ե։ Միջնադարյան կուլտուրայի աղջամուղջի գնդանի վրա, կրոնական նախապաշարմունքների մուրճը տափակացրեց յերկըրագունդը հարթ շրջանի «նման անիվի»։

Ովկյանոսը ցամաքը բաժանում ե յերեք մասի՝ Ասիա, Յեվրոպա և Աֆրիկա։ Միայն Ասիան կազմում ե յերկրի կեսը, Յեվրոպան և Աֆրիկան—մյուս կեսը։ Ամերիկան կգտնի Քրիստափոր Կոլոմբոսը[44] Գուտենբերգի մահից 24 տարի հետո և կընդունի նրան Հնդկաստանի տեղ։

Մեծ Գյուտերի դարաշրջանում յերկրագնդի պատկերացումը նորից վերածնվում ե։ Ֆլորենցիայի աստղաբաշխ Տոսկանելլին 1474 թվականին գրում եր յուր ընկեր, պորտուգալական թագավոր Ալֆոնս V-ի պալատականին. «Յես մի անգամ արդեն քեզ ասել եմ ծովային ճանապարհի մասին դեպի համեմունքների աշխարհը, վոր ավելի կարճ ե, քան այն ճանապարհը,

վորով դուք գնում եք Գվինեյի միջով։ Թեև յես լավ գիտեմ, վոր այդպիսի ճանապարհի գոյությունը կարող է ապացուցվել յերկրի գնդաձևության հիման վրա, այսուամենայնիվ, հարցն ավելի պարզ դարձնելու և ձեռնարկությունը դյուրացնելու համար, յես վճռեցի նշանակել ճանապարհը ծովագնացային քարտեզի վրա, վոր յես շինել եմ սեփական ձեռքերով, վորի վրա պատկերացրած են ձեր ափերն ու կղզիները, վորտեղից դուք պետի անցնեք՝ հասնելու համար այն տեղը, վորտեղ կան ամենայն առատությամբ համեմունքներ և թանգագին քարեր։ Մի զարմանաք, վոր Արևմուտք եմ անվանում այն յերկիրը, վորտեղ բուսնում են համեմունքներ, այն ինչ նրանց սովորաբար անվանում են Արևելք, այդ այն պատճառով, վոր շարունակ դեպի Արևմուտք լողացող մարդիկ կհասնեն այդ յերկրները ծովային ընդյերկրյա ճանապարհով, այն ինչ, յեթե դուք ուղևորվեք յերկրրագնդի այս (վերին) կողմով, այն ժամանակ այդ յերկրները կլինեն Արևելքում»։

Տոսկանելլիի այս խոսքերը յերկու հազարամյակի արգելքների միջով ձայնակցում են Արիստոտելի պնդմանը. «Այն մարդիկ, վորոնք միացնում են Հերկուլեսյան սյուների մոտ գտնված շրջանը Հնդկաստանի մոտ գտնված շրջանի հետ և այդպիսով պնդում, թե ծովը մի յե, վոչինչ անհավանական բան չեն ասում»։

Կոլումբոսը նամակագրություն ուներ Տոսկանելլիի հետ և, հավանորեն, ուներ նրա քարտեզը։

Կոլումբոսի որերի աշխարհագրական պատկերացումների իրեղեն ապացույցն է մինչև այժմ պահպանված «յերկրի խնձորը», վոր պատրաստել է 1492 թվականին Նյուրենբերգի աշխարհագրագետ Մարտին Բեհայմը։ Բայց յերկրագունդը դեռ տիեզերքի անշարժ կենտրոնն է և անհրաժեշտ է Գալիլեյի[17] քաջության նոխազ դառնալը, վորպեսզի յերկրի հանգիստը վրդովվի և մարդկանց հարկադրվի հավատալ յերկրի անվերջ վազքին ցերեկվա լուսատվի շուրջը։

Միջնադարյան առաջավոր յեվրոպացուն հավասարորեն հայտնի տարածությունը խղճուկ է։ Վորքան հեռու Յեվրոպայի կենտրոնից, այնքան ավելի և ավելի ֆանտաստիկ և անհեթեթ

ծն գտնում տեղեկություններ յերկրների, նրանց բնակչության, բուսական և կենդանական աշխարհների մասին։

Թող մեր փոխարեն խոսեն XIII դարի վերջին, Լյունեբուրգում (Հյուսիսային Գերմանիա) կազմած քարտեզի մակագրությունները։

Ասիայում քաղաքները, մարդիկ և կենդանիներն իսկապես արտասովոր են.

«**Գառնանգղ**—ժողովուրդ, վորոնց մոլեգնությունից. սաքսերը, ինչպես ասում են, յեկան Գերմանիա. մյուս մարդկանց մեջ նրանք այն են, ինչ վոր կարիճները կենդանիների մեջ։

Մարդակերներ — արագաշարժ մարդիկ, վորովհետև ձիու վոտների նման վոտներ ունեն. ապրում են մարդկանց մսով և արյունով։

Ականջեղ— այնպիսի մեծության ականջներով, վոր նրանցով ծածկում են իրենց ամբողջ մարմինը։

Սամարղանդ— քաղաք, վոր գտնվում է Խողարիայում, այսինքն Սկյութական յերկրում. Բաբելոնից մեծ է, շրջապատն է հարյուր մղոն. նրան տիրում են միասին պիղծ թագավոր և քրիստոնյա թագավոր։

Հնդկաստանում— ոձերն այնքան խոշոր են, վոր կլանում են յեղջերուներին և մինչև անգամ լողալով անցնում են ովկիանոսը։

Գանգեսում— ապրում է մի ճիճու, վորը խեցգետնի նման յերկու չանչ ունի, նրանցով նա բռնում է փղին և նրա հետ միասին ջրասույզ լինում։»

Հրաշքներով բնակեցրած է և Աֆրիկան։

«**Մավրիտանական յեթովպացիներ**— ունեն չորս աչք՝ չեշտակի նետաձգության համար։

Աֆրիկայում ապրում է վիշապ՝ փորձանք, միակն աշխարհում։ Ոձ, յերկարությամբ մեկ ու կես վոտնաչափից սկսած»։

Արժանահավատության ապոթեոզը—մակագրություն. «Դրախտը հեռավոր Արևելքումն է, այնտեղ կա բարու և չարի գիտության ծառը։ Այս ծառն իսկապես տեսանելի յե և մարմնավոր, ինչպես և ամեն մի ուրիշ ծառ»։

Նշանակալից մակագրություն, վոր բաց է անում ծածկված եյությունը։ Կրոնը—այդ այն է, վոր հազարամյակներով յետ է

շպրտել մարդկային հարցասեր միտքը, վոր աշխարհը բնակեցրել է հրեշներով, վոր տանջանքի և խարույկի յերկյուղի տակ, արգելում եր յերկրի շարժման մասին ուսմունքը։ Յուր տիրապետությունը պահպանելով շիկացած յերկաթով՝ նա այրում եր ամեն ինչ, վոր ավել եր ասված, քան սուրբ գրքում, վոր կարող եր ներշնչել ամենափոքրիկ կասկած յեկեղեցու հեղինակության անսասանության մասին։ Բայց ամեն ինչ փոփոխվում է։ Յեկեղեցու ստեղծած աշխարհագրական հնարովի յերկիրը կըսկըսեն քանդել վաճառականները, վորոնք նոր շուկաներ վորոնելիս՝ առաջ են մղում վաստակի և կողոպուտի ծարավով—առաջին անաստվածներն ու թերահավատները։

Այդ կործանումն սկսվեց, և Չինաստանի, Ճապոնիայի և Հնդկաստանի մասին յեվրոպական աշխարհին ճշգրիտ պատմություններ հաղորդող մարդկանցից մեկը Մարկո Պոլոն եր։ Նրա պատմվածքները հավաքված և գրված են «Աշխարհի զանազանակերպության մասին» գրքում։

Այդ գրքի առաջաբանում ասված է.

«Այն ժամանակից, յերբ տեր աստվածը սեփական ձեռքերով ստեղծեց նախահայր Ադամին, մինչև այժմ ել չի յեղել այնպիսի քրիստոնյա, կամ հեթանոս, կամ թաթար, կամ հընդկացի, կամ վորևե այլ մարդ ուրիշ ազգերից, վոր տեղեկանար և գիտենար յերկրի մասերի և նրանց զարմանալիքների մասին, ինչպես Պոլոն տեղեկանում եր և գիտեր։ Յեվ այդ պատճառով նա ինքն իրեն ասաց՝ լավ չի, յեթե այն բոլոր զարմանալիքները, վոր նա ինքն է տեսել, կամ վորոնց մասին ճշմարտություն է լսել, գրվեն, վորպեսզի այս բաները չ՛տեսած և չ՛լըսած ուրիշ մարդիկ ել կարողանան սովորել այսպիսի գրքով։ Կասեմ ձեզ ելի, քսանվեց տարի նա տեղեկություններ եր հավաքում աշխարհի զանազան մասերում և քրիստոսի ծննդյան 1298 թվականին, նստած Ճենովայի բանտում, յուր հետ բանտարկված Ռուստիկան Պիզեցուն հարկադրեց գրել այս բոլորը»։

Մարկոն Վենետիկցի Պոլոյի վորդին եր, վորը առևտրական նպատակներով յուր յեղբոր հետ միասին մտավ Արևելք և այնտեղ 26 տարի մնաց մոնղոլների ծառայության մեջ։ Յերիտասարդ Մարկոն ամբողջ ճանապարհորդությունն անցկացրեց հոր հետ և ապրում եր նրա հետ ասիական տիրապետողների մոտ։

Բայց Պոլո ընտանիքը—ավելի քան հազվագյուտ բացառություն է և յեվրոպացիների իսկական ծանոթությունը յերկրագնդի հեռավոր յերկրների հետ սկսվում է միայն աշխարհագրական մեծ գյուտերի դարաշրջանում։

Ամուր վոտներով է կանգնած միջնադարը արևմտայեվրոպական ցամաքում և այդ նրա սեփական, անկապտելի, նրան հայտնի յերկրային տարածությունն ունի յերկու բևեռ։

Մի բևեռը գտնվում է Միջերկրական ծովի մոտ, վորտեղ փարթամորեն ծաղկեց Հռոմը, վորտեղ զարգացավ նրան փոխարինող հարուստ Բյուզանդիան, վորտեղ խոշորագույն առևտրական քաղաքներ՝ Վենետիկը և Ճենովան վարում են կենդանի փոխանակություն Արևելքի հետ, առասպելային հարուստ Արևելքի, վոր նվիրական բաղձանքն եր ասպետների և գյուղացիների, ավազակների և վարդապետների։

Մյուս բևեռը հյուսիսումն է. նա շատ ավելի ուշ է հաստատվում։ Այնտեղ զարգանում են գերմանական Հանզան և ֆլամանդական քաղաքները։ Նրանք առևտուր են անում Լոնդոնի, Շվեդիայի քաղաքների, Նորվեգիայի և Դանիայի հետ, այնուհետև նրանք մուտք են գործում հյուսիս արևելք Մեծ Նովգորոդը՝ ռուսական անծայր հարթավայրի նախադուռը։

Այս յերկու բևեռների շուրջը զարգանում է տնտեսական և կուլտուրական կյանքը։ Այնտեղ յերևան են գալիս հզոր, հարուստ քաղաքներ, այնտեղից հեռու ճանապարհ են ուղևորվում բազմաթիվ նավատորմեր, այնտեղ են հոսում զանազան ցեղերի և զբաղմունքների մարդիկ։

Առևտրա-տնտեսական բևեռներն իրար փոխադարձ ձգում են, վորպես մագնիսի բևեռներ։ Կարևոր չէ, վոր նրանց արանքում ընկած է շաբաթների և ամիսների դժվարին և վտանգավոր ճանապարհ։ Առևտրականներն ու վարդապետներն առաջինը կըհաստատեն մշտական ճանապարհները հարավի և հյուսիսի հարուստ ափերի միջև—միջնադարյան քարտեզը կակոսվի կապի յերկու գծով։

Քարավանները խիզախորեն կկտրեն ցամաքը և Ջրառատ Հռենոսը կդառնա գլխավոր առևտրական մագիստրալը։

Նավերը կշարժվեն ափերի յերկայնությամբ Ջիբրալտարի

միջով, և իտալական վաճառականները ցած կգան նրանց վրայից Ֆլամանդիայի ափերին։

Բայց և այնպես Միջին Գերմանիային, վորտեղ Գուտենբերգի հայրենի քաղաք Մայնցն է, հետագայում վիճակված է լինել միայն միջանկյալ կես ծաղկած շրջանների միջև, իսկ վոչ շատ առաջ Մայնցն ինքը կենտրոն էր, թագավորության գլխավոր քաղաք, վոսկյա խոշորագույն քաղաք։ Միջազգային հարաբերությունների զարգացումը, յերկրների և ժողովուրդների ներգրավումը առևտրի շրջապտույտի մեջ՝ Մայնցի հզորության անկումն էր նշանակում։

Այս քաղաքի ծաղկումն սկսվում է IX—X դարում և հասնում է յուր գագաթնակետին XII դարում։ Գերմանական առևտուրը զարգանում է Կարոլինգների տիրապետության վերջին, բայց տարածարար նա դեռ չափազանց սահմանափակ է։ Ապրանքները հոսում են ամենակարևոր գետային զարկերակների յերկայնությամբ։ Բայց գետերի վրա էլ առաջակալներ կան, վորոնք Գերմանիային բաժանում են հարուստ հարևան առևտրական շրջաններից․ Բյուզանդիա տանող ճանապարհը արգելակել են հունգարացիք, ճանապարհը դեպի հյուսիս-արևելք կտրել են հետամնաց սլավոնները։ Իտալիա տանող ճանապարհի վրա դժվարանցանելի Ալպերն են։

Հռենոսը գերմանական առևտրի կենտրոնատեղին է․ Նրա շուրջն առաջանում և բազմանում է անդադրում և հարուստ կյանք։

Մայնցն ընկած է կարևորագույն գետային զարկերակների հանգույցում, նրա մոտ, Հռենոսի հոսանքի մեջ են թափվում Մայն գետի ջրերը, վորի ակունքները միանում են Դանուբին, իսկ ափերին աճում են առևտրական նոր քաղաքներ։

Ամրանում են կապերն Իտալիայի ափերի հետ, և այս հանգամանքը նորից ջուր է ածում Մայնցի՝ հարավային Գերմանիայի խոշորագույն քաղաքի տնտեսական հաջողությունների ջրաղացին։ Գերմանական հարավի առևտրական բարեհաջողությունն առանձնապես ուժեղանում է Խաչակրաց արշավանքի դարաշրջանում, յերբ այստեղից անցնում են խաչակիրների և ուխտավորների բանակները և աճում է ապրանքների հոսանքն Արևելքից։

Դեռ ևս հռոմայեցիների ձեռքով հիմնած քաղաքին վիճակվում է նախանձելի բաժին։

X դարի արաբ ճանապարհորդը գրում է նրա մասին.

«Մայնցը շատ մեծ քաղաք է, նրա մի մասը բնակեցրած է, իսկ մյուսը՝ ցանած։ Գտնվում է ֆրանկների աշխարհում, Հռենոս գետի վրա և հարուստ է ցորենով, գարով, աշորայով, խաղողի այգիներով և պտուղներով։ Այնուհետև պիտի նշել, որ այնտեղ ել կան համեմունքներ, որ լինում է միայն ամենահեռավոր Արևելքում, թեև ինքը, Մայնցը գտնվում է ամենահեռավոր Արևմուտքում։ Օրինակ՝ կա պղպեղ, կոճապղպեղ, մեխակ, նարդոս, նաև փղոսկր։ Սրանք բերվում են Հնդկաստանից, որտեղ շատ են աճում»։

Ընթերցողը թող չտարակուսի այն տեղեկությամբ, որ քաղաքի մի մասը ցանված էր—դա սովորական է միջնադարի համար, որովհետև այն ժամանակվա քաղաքը քիչ էր նման ժամանակակից քաղաքին։ Մինչև անգամ XV դարում, հենց Մայնց քաղաքի մեջ, դեռ շատ խաղողի այգիներ և ցանքսեր կային։

Մայնցի վերելքի տարիներին կառուցվում են տաճարի, քաղաքային խորհրդարանի, բազմաթիվ յեկեղեցիների հրաշալի շենքերը, զարգանում են արհեստները և առևտուրը, քաղաքը հարստանում է։

XIV դարի սկզբին Մայնցն այնքան հարուստ էր, որ կարողացավ Կառլոս IV կայսրին 71.000 գուլդեն պարտք տալ։

Քաղաքի ծաղկումը զուգորդվում էր Մայնցի արքեպիսկոպոսի հզորության ուժեղացման հետ։ Նա թագավորության առաջին իշխաններից մեկն էր։ Յոթը կուրֆյուրստների[18] շարքում, արքեպիսկոպոսն ընտրում է գերմանական թագավորին և հռոմեական կայսրին։

Յեթե նա կայսրի բարեկամն է, այն ժամանակ հաճախ առաջնակարգ տեղ է գրավում պալատում և մասնակցում է կայսրության կարևորագույն ձեռնարկումներին։ Այսպիսին էր Քրիստիանը՝ Ֆրիդրեխ I Բարբարոսսայի մեծագույն զինվորականներից և դիպլոմատներից մեկը։ Նա կայսրի հետ միասին արշավանք կատարեց Հռոմի վրա։

Լոմբարդիայի արշավանքից հետո, Ֆրիդրիխը, Մայնցում տոն կազմակերպեց՝ հեքյաթային հրաշալիությամբ։ 1184 թվականի մայիսին այնտեղ՝ Հռենոսի ափին, հավաքվեցին քառասուն հազար ասպետներ։ Յեկեղեցական հանդեսները, ասպետական զինախաղերը և ժողովրդական զվարճությունները տևեցին յերեք օր։

Յերկար ժամանակ ճանապարհորդած տրուվերներ՝[19] Հենրիխ Վիմբեկեն և Հյուգո Պրովանսացին պատմում եյին այդ հանդեսի չլսված փայլի մասին։

Յեթե Մայնցի արքեպիսկոպոսը լինում եր կայսրի թշնամին, այն ժամանակ նա լինում եր վտանգավոր և անխնա թշնամի։



Մ Ա Յ Ն Ց
Հնադարյան քանդականկար

Ռուդոլֆ կայսրի մահից հետո կուրֆյուրստները նրա վորդու փոխարեն ընտրում են կոմս Ադոլֆ Նասսաույին։ Այս ընտրության մեջ ղեկավարող դեր է խաղում Մայնցի արքեպիսկոպոս Հերհարտը։ Կոմսի ընտրության պատճառն այն եր, վոր նոր կայսրը պարտավորվեց մի շարք զիջումներ անել իշխաններին և, մասնավորապես, վճարել Մայնցի արքեպիսկոպոսի պարտքերը։

Կայսրի կառավարությունը յերկարատև չեղավ։ Ադոլֆը փառամոլ արքեպիսկոպոսի ճաշակով չեր։ Հերհարտը դավադրություն է կազմակերպում կայսրի դեմ և գահի է կանչում Ռուդոլֆի վորդի Ալբրեխտ Ավստրիացուն։

Ընտրությունից չորս տարի հետո—1289 թվականի հունիսի 23-ին—Մայնցում հրավիրվում է կուրֆյուրստների և

«իմաստուն մարդկանց» ապօրինի խորհրդակցություն, որն ընդունում է կայսրին գահընկեց անելու վորոշումը և Մայնցի արքեպիսկոպոսն այդ մասին հրովարտակ է հրատարակում։

Այդ հրովարտակում ասված է.

«Վերոհիշյալ պարոն Ադոլֆին, որն իրեն այնքան անարժան ցուցաբերեց թագավորական իշխանությանը և որը յուր չարագործությունների և այլ վարմունքների համար մերժված է աստծուց, մենք զրկում ենք թագավորությունից—և թող չթագավորի այլևս—և բացիբաց հայտարարում ենք, որ նրան աստված զրկեց և սրանով իսկ, համաձայն կուրֆյուրստների արտահայտած միահամուռ վորոշման՝ վորոշում ենք ազատել անքակտելի յերդումից բոլոր նրանց, վորոնք դրանով կապված էն նրա հետ, խիստ արգելելով վորեվե մեկին հետագայում հպատակվել և ծառայել նրան, վորպես թագավորի»։

Հուլիսի 2-ին Ալբրեխտն ընկավ թագավորական գահի նոր թեկնածվի դեմ վարած ճակատամարտում։

Մայնցի տաճարում, Պետրոս ֆոն Ասպելտի գերեզմանաքարի վրա, պատկերացված է այդ յեպիսկոպոսի հրաշալի ըդգեստավորված հսկայատիպ կերպարանքը։ Նրա առաջին են յերեք թագավոր՝ Հենրիխ III, Լյուդովիկ Բավարացին և Յոհան Բոհեմացին, վորոնց թագադրել է Պետրոսը։ Նրանք հազիվ հասնում են մինչև արքեպիսկոպոսի գոտին, վոր տիրաբար մեկնել է ձեռքերը նրանց վրա։

Բար, վոր ազդակում է անցյալ փառքի մասին։

Մայնցի տաճարը, կառուցված 1181 թվականին, քարե գիրքն է քաղաքի այդ անցած վեհության, սքանչելի նմուշ ռոմանական վոճի և միջնադարյան ճարտարապետության հաղթանակի։

Ծաղկման օրերն անցան անդառնալի կերպով, XIV—XV դարում Մայնցի ազգաբնակությունը հասնում է միայն 5 հազար հոգու, իսկ Ստրասբուրգում, Նյուրենբերգում և Աուգսբուրգում արդեն հաշվում են մինչև 20 հազար։

Քաղաքի առևտրական նշանակությունը խախտվում է Հանզայի առաջանալով, գերմանական ներքին առևտուրը փոխադրվում է Հյուսիս և արևելյան առևտուրը կրճատվում է՝ առաջ խաղացող թյուրքերի հետ ունեցած կռիվների պատճառով։

Արդյունաբերության հաջողությունները Մայնցի կողքով են անցնում, և տնտեսական ու քաղաքական կյանքի առաջին պլանն են դուրս գալիս Գերմանիայի մյուս քաղաքներն ու շրջանները:

Քաղաքը ծանրաբեռնված է պարտքերով, մշտական ներքին խռովությունները ուժասպառում են նրան:

Բայց, ինչպես վոր յետ գնացող ծովը դարավոր կուտվածքների հարստություն է թողնում, այնպես էլ յերկրի կամ քաղաքի անցյալ տնտեսական և կուլտուրական ծաղկումն անհետ չի կորչում:

Մայնցի անցյալը հարություն կառնի Գուտենբերգի մեջ և նրա միջոցով կծածկի քաղաքն անթառամ փառքով:

Բայց և այնպես նորից Յոհան Գենսֆլեյշ-Գուտենբերգին քաշեց այդ քաղաքը, այստեղ է նա փորձում ավարտել յուր սկսած զարմանալի ձեռնարկությունը: Նա Մայնց վերադարձավ, հավանորեն, 1444 թ. վերջին, կամ 1445 թ. սկզբին:

Մանուկ հասակում նա լսել էր պատմություններ հայրենի քաղաքի անցյալ վեհության և յուր նախնիքների լավագույն որերի մասին:

Քաղաքի կերպարանքը նա հիշում էր յերկար տարիներ, նրա աչքերի առաջ հայրենի Մայնցը այնպես էր կանգնած, ինչպես տեսել էր նրան պատանի ժամանակ:

Քաղաքը շրջապատված է վիթխարի պարիսպների լայն գոտով, (պատերի հաստությունը $5^{1}/_{2}$ վոտնաչափ) բազմաթիվ աշտարակներով և ամրոցներով, վորոնք դուրս են գալիս Հռենոսի վրա:

Քաղաքի վրա տիրապետում էր տաճարը՝ քաղաքացիների հպարտությունը և հոգևոր կենտրոնը միջնադարյան բյուրգերական հանրակացարանի: Քաղաքական կենտրոնն էր քաղաքային խորհրդարանը, գոթական վոճով, վորի ծաղկումը զուգադիպում էր քաղաքային ազատությունների նվաճման դարաշրջանին: Յեռհարկ, դաժանատեսիլ շենք, անկյուններում չորս աշտարակ, շինված քաղաքի ամենաբարձր կետերից մեկում, նա, կարծես, պատրիկյան իշխանության խորհրդանշանն էր: Շուրջը թևերի նման վոլորվում էյին բազմաթիվ փողոցներ՝ նեղ, ծուռ և կեղտոտ, ինչպես և բոլոր միջնադարյան քաղաքներում:

1332 թվականի ցեխային հեղափոխության ժամանակից՝ պաշտոնական աշխարհիկ կենտրոնին — քաղաքային խորհրդարանին, հակադրվում էր մի ուրիշը՝ քաղաքականապես վոչ պակաս ուժեղ։ Նա պատկանում էր ցեխերին։ Համայնքի խորհուրդը և և ցեխերը հավաքվում էին յերկու տան մեջ — Մոմպաղիլիեր (այս կոչումն առաջ էր գալիս նրանց տերերի ազգանունից — Մոնպելյե)։

Յերկու կենտրոն, յերկու խումբ, վոր պայքարում էին իշխանության համար։ Այս բոլորը հիշում է Յոհանը մանուկ հասակից։

Շենքերի այդ ծովի մեջ տաճարը միայնակ չէ. շատ վանքեր ու յեկեղեցիներ կան Մայնցում։ Նրանց կից դպրոցներ։ Այն ժամանակվա փաստաթղթերի համաձայն դպրոցներ կային ս. Վիկտորի, ս. Քրիստոֆի և այլն յեկեղեցիներին կից. սրանցից մեկում ուսանել էր ինքը Յոհանը։ Կարմելիտների[20] վանքին կից լատինական դպրոցն է, վորտեղ ավանդում էին փիլիսոփայություն և թեոլոգիա,[21] այդ դպրոցը հիմք դրեց համալսարանի առաջացման, վորը հիմնվեց Մայնցում միմիայն 1477 թվականին։

Գյուտարարի կենդանության ժամանակ քաղաքում թող համալսարան չլինի, նրա բնակիչները այլ քաղաքներում են կրթություն ստանում։ Գուտենբերգին ժամանակակից մինչև յոթ քաղաքացի էին հաշվում, վորոնք դասընթացն անցել են Բոլոնի հռչակավոր համալսարանում։ Նրանցից մեկն էր դոկտոր Կոնրադ Հումերին, վորի հետ կյանքը մոտեցրեց Գուտեմբերգին նրա վերջին տարիներին։

Վոչ միայն յերիտասարդության հիշողություններով, այլ և առհասարակ այն ժամանակվա հասկացողությամբ՝ քաղաքը հսկա չէր, ահագին։ Նրա արտաքինն էլ հարուստ է, հոյակապ, նա մրցում էր գերմանական մյուս քաղաքների փայլի հետ։

Այդ դարաշրջանի Գերմանիան ուներ բյուրգերների յերկիր է, նրանց կենցաղի արտաքին փայլը զարմացնում է օտարերկրացիներին։ Իզուր չէր վոր կարդինալ Էնեյ Սիլվիոս Պիկկոլոմինին, (հետագայում Պիոս II պապ) վոր այցելեց Գերմանիան 1458 թվականին, գրում է.

«Մենք անկեղծությամբ ասում ենք, վոր Գերմանիան յեր-

բեք ավելի հարուստ չի չեղել, և նա յերբեք ինձ այսպես չի ապշեցրել յուր փայլով, ինչպես ներկա ժամանակ։ Դժվար ե գտնել Յեվրոպայում վորևե բան ավելի հրաշալի և ավելի գեղեցիկ, քան Քյոլնը յուր զարմանալի յեկեղեցիներով, քաղաքային խորհրդարաններով, աշտարակներով ու պալատներով, նրա հպարտ բյուրգերներով, վեհ գետով և պտղավետ դաշտերով»։

Պակաս գովասանքներ չի շռայլում Մայնցին, Վորմսին, Շպեյերին, Բազելին և Բեռնին։ Ստրասբուրգի քաղաքացիների տներից մի քանիսն այնքան վեհասքանչ են և հարուստ, վոր վոչ մի թագավոր իրեն համար ստորացուցիչ չեր համարի նրանցում բնակվելը։ Կասկած չկա, վոր շոտլանդական թագավորներն ուրախ կլինեյին նույնպիսի հարմար բնակարաններ ունենալու, ինչպիսով ոգտվում են միջակ նյուրնբերգյան բյուրգերները։ Վոչ մի քաղաք աշխարհում հարստությամբ չի գերազանցի Աուգսբուրգին։ Վիեննայում կան մի քանի պալատ և յեկեղեցի, վորոնց կարող եր նախանձել ինքը Իտալիան»։

Յեվ ահա այժմ, յերբ տարիների թափառումներից և պայքարից հետո, տեսածի և ապրածի փորձով իմաստուն դարձած Գուտենբերգը վերադառնում ե Մայնց, իհարկե, քաղաքը նրան ուրիշ ե թվում — վոչ այնպես, ինչպես յերեխա ժամանակ — հսկա և փառահեղ։ Խիստ են աչքի ընկնում հակադրությունները փառահեղության և աղքատության միջև, վեհասքանչ շենքերի և նրանց կողքին դասավորված խղճուկ խրճիթների միջև։ Ավելի՛ չե աչքի ընկնում կեղտոտ փողոցների խղճուկ տեսքը, վորոնց մասին չի կարողացել լռել նույնիսկ սիրալիր կարդինալ Ենեյ Սիլվիուսը։

Յոհանը սովորել եր հասկանալ, վոր առերևույթ բարեկեցության և հարստության տակ ծածկված ե քաղաքի ծանր տնտեսական դրությունն և սրված հասարակական հակասություններ։

Այս քաղաքում արտաքուստ ամեն ինչ ծանոթ ե նրան՝ շենքերը, փողոցները, Հռենոսի հզոր հոսանքը, շուկայի աղմկոտ ամբոխը, յեկեղեցական զանգերի վաղեմի ղողանջը, բայց, իր յերկար տարիների բացակայության ժամանակ, այդ ծանոթ թաղանթի մեջ աճել ե նոր մարդկանց նոր կյանքը։

VI. ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐՄՆԱՑՈՒՄԸ

1428—29 թվականների ցեխային հեղափոխությունը կարճ ժամանակով միայն գերակշռություն տվեց արհեստավորներին քաղաքային վարչության մեջ։ Պատրիկները շուտով կազդուրվում են իրենց հասցրած պարտությունից և 1437 թվականին մագիստրատում գրավում տեղերի կեսը, փաստորեն նրանք են նորից կառավարում քաղաքը։

Մի խղճուկ վարչություն, որ վերջանում է կատարյալ սնանկությամբ։ Նա ապացուցեց ավագանու վերնախավի անընդունակությունը՝ քաղաքականապես և տնտեսապես ղեկավարելու Մայնցը փոփոխված պայմաններում և ուղղելու քաղաքային քայքայված տնտեսությունը։ Նոր հեղափոխությունը մահացու հարված է հասցնում Մայնցի պատրիկյան օլիգարխիային[22]։

Այդ հեղափոխության սկիզբը դրվեց սահմանադրական ակտով. 1444 թվականին, ցեխերի պահանջով, մագիստրատը, զատեց չորսի հանձնաժողովը՝ (երկուսը պատրիկներից, երկուսը ցեխայիններից) քաղաքի ֆինանսական դրությունն ստուգելու համար։ Արհեստավորներն ու վաճառականները—այդ հաշվով և ժլատ տնտեսները—միջոցների ծախսման հաշիվ էին պահանջում, որ քաղաքը պոկում էր նրանց կուտակումներից, նրանք երաշխիք էին պահանջում, որ, վերջապես, նրանց դրամամուտքները ամուր հենարան ստանան։

Չնայելով մագիստրատի բոլոր ջանքերին, չէր կարելի ծածկել նրա տնտեսական քաղաքականության կատարյալ փլու-

զումը։ Ռենտայի վճարումը $3^1/_2$-ից բարձրացավ $5^0/_0$-ի, քաղաքի պարտքը համարյա յերկու անգամ ավելացավ, Մայնցի վարկն ընկավ։ Վարչության անտնտեսավարությունն աղաղակող էր։

Նոյեմբերին տեղի ունեցավ մագիստրատի արձակումը և նրա նոր կազմը կազմակերպվեց բացառապես ցեխերի ներկայացուցիչներից։ Որենսդրական ակտը դեկտեմբերին ազդարարում է, որ այսուհետև Խորհրդի անդամներ կարող են լինել արհեստավորները։

Տապալված մագիստրատի դեմ, 1445 թ. սկզբին, սկսվեց դատական պրոցես։ Արդարադատ պատժիչ սուրը պետք է ավարտեր արհեստավորների հաղթանակը նրա վաղեմի թշնամիների հանդեպ։

Քսան տարի առաջ ցեխային հեղափոխությունը հարկադրեց Գուտենբերգին թողնել Մայնցը։ Այժմ, յերբ, այն դասը, որին նա պատկանում էր, վերջնական պարտություն է կրում ցեխերի հետ ունեցած կռվում՝ նա յետ է վերադառնում։

Ի՞նչ տարօրինակ հակասություն։ Չլինի՞ թե ուրիշ Գուտենբերգ յերևան յեկավ Մայնցում։

Այս հակասությունը բացատրվում է թափառումների տարիներով և Ստրասբուրգում անցրած կյանքով։

Յոհան Գենսֆլեյշ—Գուտենբերգը Մայնցը թողեց, որպես դատարկապորտ, նշանավոր տոհմի հպարտ սերունդ, արտոնյալ հասարակական դիրքի հավակնություններով։ Նրա խայտաբղետ յունկերական հագուստն արագությամբ մաշվեց, իշխանության հավակնությունները, արտոնություններն ու հարստությունը պայթեցին սապնի պղպջակների նման։

Ստրասբուրգում ծնվեց ուրիշ Գուտենբերգ։

Պայքարի և աշխատանքի անցած տարիները պատանուն վո՛չ միայն հասուն մարդ դարձրին, ծավալեցին կուրծքը, ծանրացրին իրանը, կնճռոտեցին ճակատը և զինեցին փորձառությամբ նրա արտասովոր խելքը,—վոչ, փոփոխությունները շատ ավելի խորն էյին։

Մայնց վերադարձավ Գուտենբերգը—գրատպության գյուտարարը։ Մարդ, որ յուր կյանքի լավագույն ստեղծագործական մասը տվեց աշխատանքին, առաջին աշխատավորը մինչ այդ անհայտ արվեստի՝ նրա ստեղծագործողը։ Նրա պատրիկյան դասին պատկանելու առավելությունները այստեղ թող ցնորական

և անկշռելի լինեն, թող նա աղքատ լինի, դրա փոխարեն Գուտենբերգը տիրապետում է նոր արվեստի գաղտնիքին և անծանոթ արհեստի փորձին՝ ապրանք վոր անկապտելիորեն պատկանում է իրեն և վորը նա կարողացավ իրացնել լավ գնով։

Ցեխերի հաղթանակը չէր կարող վախեցնել Յոհանին, ընդհակառակ, նա թույլ էր տալիս նրան հուսալու, վոր հայրենի քաղաքը տնտեսական վերելք կունենա, և նա ինկատի ուներ այժմ այնտեղ գտնել բարեհաջող հանգամանքներ յուր հիմնած գրային արտադրության համար։

Այսպես էր լուծվում յերկու Գուտենբերգների, վերամարմնացման գաղտնիքի հարցը և այդ գաղտնիքը յուր մեջ չուներ վո՛չ կախարդություն, վո՛չ հմայում, վորոնց սրբությամբ հավատում էր միջնադարը։

Գուտենբերգի բախտն է, վոր կախարդության այդ հավատը նրա գյուտարարական ճանապարհի առաջը չկտրեց։

Գրատպությունն առաջին հերթին վաստակից զրկում էր վարդապետ արտագրողներին, վորոնք ցրված էին անհամար վանքերում։ Նոր արվեստից պաշտպանվելով, նրանց համար վոչինչ չարժեր այդ արվեստը հայտարարել չար վոգու ստեղծագործություն, իսկ գյուտարարին—սատանայի սպասավոր, վորքան էլ այս անհավատալի թվա քսաներորդ դարի մարդուն։

Միջին դարերի գերմանական որենսդրությունը հաճախ պաշտոնապես հիշատակում է կախարդության մասին։ «Սաքսոնյան հայելի»-ում կախարդությունը հերետիկոսության և թունավորման շարքն էր դրվում, մի հանցանք, վոր խարույկով էր պատժվում։ Յեկեղեցին ինքը պահպանում էր հավատը դեպի կախարդությունը։ 1445 թվականի Ռուանի ժողովը խոսում էր կախարդների մասին, իսկ 1448 թվականի Լիդյեյի ժողովը հրամայում էր քահանաներին տոն և կիրակի որերը բանադրված հայտարարել բոլոր վաշխառուներին, կախարդներին և գուշակողներին։

Ֆուլդյան վանքի ժամանակագրությունը պատմում է մութ ուժերի դեմ վարած կռվի ասպարեզից հետևյալ միջադեպը, վորն անմիջական առնչություն ունի Մայնցի հետ։

«Բինգեն քաղաքից վոչ հեռու կա ինչ վոր գյուղ, վորտեղ չար վոգին ակներև կերպով ցուցահանել է յուր նենգությունները։

Սկզբից նա արտահայտեց յուր թշնամությունը դեպի տեղական մարդիկ՝ շպրտելով քարեր և ցնցելով պատերը, կարծես մուրճով, հետո թշնամին ուղղակի խոսում ե, մատնելով ուրիշներին սրան կամ նրան իբրև գողերի և գյուղի բնակիչների մեջ թըշնամություն ցանելով։ Վերջապես նա լարեց բոլորին մի մարդու դեմ, որի մեղքերի պատճառով, իբր թե, բոլորը տուժում են... Յեվ ահա այդ մարդը, յուր համագյուղացիների գթասըրտությունը շարժելու համար, մաքրվեց շիկացած յերկաթով բոլոր հանցագործություններից՝ ինչ որ նրան վերագրվում եր։ Այն ժամանակ Մայնց քաղաքից ուղարկվեցին քահանաներ և սարկավագներ մասունքներով և խաչերով՝ չար ոգուն այդ տեղերից դուրս քշելու համար։ Յեվ յերբ նրանք տներից մեկում, որտեղ նա ավելի կատաղաբար եր վարվում, ժամերգություն կատարեցին և որհնած ջուր սրսկեցին՝ հինավուրց թշնամին, քարեր շպրտելով, այդ գյուղի այստեղ հավաքված բնակիչներին արյունաշաղախ արավ. այնուամենայնիվ նա բավական ժամանակ խաղաղվեց»։

XV դարից հետո կախարդության հավատալը շատ ու շատ դարեր ապրեց։

Որ այդպիսի վտանգը Գուտենբերգի համար իրական եր՝ ապացուցում ե տպագրած աստվածաշնչի առաջին որինակների այրումը Քյոլնում, որպես սատանայի գործ։ Այս տեղեկությունները փաստացի չեն, բայց նրանք բնորոշ են Քյոլնի համար, որպես գերմանական օրթոդոքս[23] կաթոլիկության կենտրոնի և ինկվիզիցիայի[24] ակտիվ գործողությունների վայրի։ Քյոլնի համալսարանը 1487 թվականին պարզաբանեց, որ ամեն ոք, որ կժխտի վհուկների հմտության իսկությունը, կհետապնդվի, որպես ինկվիզիցիայի գործունեության խանգարող։ Իզուր չե, որ XVI դարի սկզբին հենց Քյոլնի հոգևորականությունն եր գլխավորում Յոհան Ռեյխլինի[25] հալածանքը և այդ քաղաքը կենտրոններից մեկն եր, որ կռիվ եր մղում հումանիզմի և «մութ մարդկանց» շարքի դեմ, որ հանճարեղ կերպով ծաղրել ե Ուլրիխ Հուտտենը[26]։

1444 թվականի մարտ ամսին Գուտենբերգը դեռևս գըտնըվում եր Ստրասբուրգում։ Մենք տեսնում ենք, որ ոչ մի

քան նրան չկարողացավ յետ պահել Մայնցում յերևալուց, բայց մութն է մնում, թե ինչու նա թողեց Ստրասբուրգը։

Նրա գաղթը, ըստ յերևույթին կապ ունի արմանյակյան պատերազմի հետ։

Արմանյակները ֆրանսիական վարձկան զուգաղներ (դրուժինա) եյին, վոր այդպես կոչվում եյին իրենց առաջնորդ կոմս դ՛ Արմանյակի անունով։ Ժողովուրդն անչափ կատակով նրանց տվել է «արմենակեն» (խեղճ հիմարներ) մականունը, վորը քիչ եր համապատասխանում այդ ավազակային բանդաների մռայլ քաջագործություններին։

Արմանյակների ճակատագրական յելույթը Ելզասում, վոր յուր հետևից բերեց այդ հարուստ յերկրի քայքայումը, Ֆրիդրիխ կայսրի անզգույշ խնդրի հետևանքն եր, վորով ֆրանսիական Կառլոս VII թագավորից ոգնություն խնդրեց՝ անհնազանդ Շվեյցարիայի հետ կռվելու համար։

Ֆրիդրիխ III-ը կայսերական գահը գրավում եր 1440 թվականից մինչև 1486 թվականը։ Նրա ամբողջ թագավորությունն՝ առանց այն էլ վարկաբեկված կայսերական իշխանության անաջողությունների և հետագա անկման շղթա յեր։ Նա կայսր— հողատեր եր, վորի գլխավոր հոգսը Հաբսբուրգյան տան կալվածների կլորացումն եր, վորի ներկայացուցիչն եր նա։

Վոչ թե կայսրությունը, այլ յուր իշխանական կալվածների շահերն եյին ուղղություն տալիս նրա քաղաքականությանը, և այդ ասպարեզում, պետք է ասել, նա կարողացավ մի շարք հաջողություններ ունենալ։

Այս կայսրի հակիրճ և փայլուն բնորոշումը տվել է մի կարդինալ յուր ընկերոջ գրած մի նամակում. «Ֆրիդրիխը անվճռական և ծածկամիտ մարդ է, վոր վոչ մի ընդհանուր բանի մասին հասկացողություն չունի և ամեն ինչ թեքում է յուր անձնական ոգուտին»։

Յուր թագավորության սկզբին, կայսրը պահանջեց Շվեյցարիայից, վորի հետ Հաբսբուրգները յերկարամյա թշնամություն ունեյին, վերադարձնել նրա տնից բոլոր խլածը, վորի փոխարեն Ֆրիդրիխը համաձայնում եր վավերացնել նրա արտոնությունները։ Շվեյցարացիք մերժեցին կայսրին, գիտենալով նրա իրական իշխանության խաբուսիկ լինելը։

Հենց այդ ժամանակ Ֆրիդրիխը Ֆրանսիակ ան թագավորի օգնությանը դիմեց։ Կառլոսն ուրախ էր ազատվ եցող արմանյակներից, և նրանց զորքը, որ 20-ից մինչև 40 հազար էր հաշվըվում, Դոֆինի առաջնորդությամբ յեկավ, վոր ոչնչացի Հաբսբուրգների դաշնակցությամբ ջախջախեն Շվեյցա րիան։

Ֆրիդրիխն, ըստ յերևույթին, ինքն եշ չէր սպասում արմանյակների այսպիսի բազմաթիվ հորդ ների յերևալուն յուր յերկրներում։

Շվեյցարացիք հերոսական դիմադր ություն ցույց տվին դաշնակիցներին, և սուրբ Հակոբի մատո ւռի մոտ, Բիրս գետի վրա տեղի ունեցած ճակատամարտից հե տո՝ արմանյակները նահանջեցին և խուժեցին Էլզաս, գերագույ յանելով խաղաղ գերմանական ազգաբնակության թալանը՝ շվեյց արական ռազմիկ աշխարհազորի ծանր կռվից։

Մինչև հուսահատություն հասցրած էլզասցիք արմանյակների բանդաներին հարկադրե ցին հեռանալ իրենց յերկրից միայն 1445 թվականին։

Էլզասի կողոպուտը Ֆրանսիայի վարձկանների ձեռքով չէր կարող չանդրադառնալ ու Ստրասբուրգի անտեսական դրության վրա։ Ավելին՝ տե ղեկություններ կան, վոր 1444 թվականին արմանյակների հրոսակախմբերը հարձակվեցին Ստրասբուրգի վրա և կողոպ տեցին ս. Արգոբաստի վանքը, և նրան մոտիկ տները։ Հնարա վոր է, վոր տուժեց և Գուտենբերգի բնակած տունը։ Հենց այդ օրերին Գուտենբերգն ուղևորվում է Մայնց, անփոփոխ ս ծառա Բեյլդեկի ուղեկցությամբ։ Պետք է կարծել, վոր Գո ւտենբերգը հետը տանում է յուր արվեստի ս ծիքներն ու հա րմարանքները, վորովհետև շուտով լույս են որ նում մարդկ ության պատմության մեջ առաջին ս տես յերկերը։ տպագրած

Գուտ ենբերգի տպագրական մամուլի տակից, Մոտավորապես 1445 թվականին, լույս տեսավ ահեղ դատ աստանի Ֆրագմենտը,[27] իսկ յերկու տարուց հետո աստ ղաբաշխական օրացույց 1448 թվականի համար։ Այս յերկու յերկն էլ տպագրված են մ՛ետաղյա շարժական տառերով։

Աստղաբաշխական օրացույցը գտել է Գոդֆրիդ Ցենդլերը 1901 թվականին Վիսբադենյան գրադարանում։ Նա տպագրված է ամենից ավելի հին հայտնի շրիֆտով։ Վորովհետև այդ օրացույցը վերաբերում է 1448 թվականին բոլոր հիմքերը կան յենթադրելու, վոր նա տպագրված է վոչ ուշ 1447 թվականի վերջից։

Օրացույցի տպագրության տեխնիկան, հարաբերաբար, այնքան կատարյալ է, վոր նա չի կարող լինել Գուտենբերգի առաջին փորձը։ Նրա համեմատությունը մի քանի այլ մանր տպագրական յերկերի հետ, թույլ է տալիս վերջիններս համարել այդ օրացույցի նախորդներ։

Ահեղ դատաստանի մայնցյան ֆրագմենտը, վոր պահվում է Մայնցում՝ Գուտենբերգյան թանգարանում, տպագրված է օրացույցի նման, բայց և այնպես, մի քիչ ավելի անկատար տառերով։ Այդ ֆրագմենտի լույս տեսնելն ավելի վաղ շրջանի գործ են համարում և վերագրում են 1445 թվականին։

Յեթե Գուտենբերգը Մայնց վերադառնալով կարող եր յուր համաքաղաքացիների զարմանքն առաջ բերել յուր նոր դեմքով, ապա նոր արվեստը պիտի զարմացներ ամբողջ մարդկությանը, վորովհետև անչափ մեծ եր տարբերությունը մինչ այդ յեղած տպագրության (յերբ Գուտենբերգը նվիրեց նրան յուր տաղանդն ու աշխատանքը) և գրատպության միջև, վոր գտավ մինչ այդ անհայտ Մայնցի քաղաքացին։

Մինչև Գուտենբերգը յեվրոպական տպագրական արհեստի ամենակատարյալ օրինակները ժողովրդական նկարներն եյին, հաճախ մի քանի տող բնագրով, վորը բացատրում եր նրա բովանդակությունը։ Այդ նկարները պատրաստելու տեխնիկան այսպես է՝ գրագիր—նկարիչները փայտե տախտակի վրա, սովորաբար տանձենու, անում եյին նկարներ և ստորագրություններ։ Նկարից ազատ՝ տախտակի բոլոր մասերը խորացվում եյին քանդակով, և նկարը դառնում եր ցցուն։

Տախտակին ներկ եյին քսում, վրան փռում եյին մի թերթ թուղթ և շփում փայտի կամ վոսկրի կտորով։ Այդպիսով ստացվում եր տպումը։

Տեխնիկական այսպիսի միջոցներով և այսպես կազմակերպած տպագրության պրոցեսով չեր էլ կարելի մտածել ընդարձակ բովանդակությամբ գրքերի վերարտադրության մասին, վորովհետև փորագրելու և տպագրելու աշխատանքը սարսափելի յերկարատև և թանգ կլիներ։ Բացի սրանից փայտյա շրիֆտը հաճախակի սեղմումներից մաշվում եր։ Փոքրաթիվ օրինակների

պատրաստումից հետո՝ անհրաժեշտ էր լինում նորից սկսել բը-
նագրի փորագրության ծանր աշխատանքը տախտակների վրա։

Գուտենբերգի գյուտը հիմնական հեղաշրջում առաջ բերեց
այն պատճառով, որ նա լուծում էր ցանկացած ծավալի գրքի
պատրաստման պրոբլեմը, բազմաթիվ անգամ արագացնում էր
նրանց տպագրության պրոցեսը, նա ապահովում էր գրքերի
ընդունելի գներ և աշխատանքի շահավետություն։

Այս գյուտը բոլորովին փոխեց տպագրության տեխնիկան
և վերաշինեց տպագրության պրոցեսի կառուցվածքը։

Գուտենբերգն ամենապարզ տպագրության արհեստավորա-
կան միասնականությունը բաժանեց աշխատանքի առանձին մաս-
նագիտացված տեսակների՝ շրիֆտի պատրաստում, շարվածք և
տպագրություն։ Դուցե նրան վիճակվեց կանխելու մանուֆակ-
տուրային ձևերի արտադրության կազմակերպման պատիվը,
որոնք XVII դարից սկսած պետք է հաղթեյին արհեստին,
որպեսզի հետո ծնեյին կապիտալիստական արտադրությունը և
կործանվեյին նրա հզոր բուռն գրոհից։

Գյուտի հիմքը կազմում է այն բանի ստեղծագործումը,
որ այժմ շրիֆտ են անվանում, այսինքն՝ մետաղյա ձողիկների
(լիտեր), որ մի ծայրից ցցուն է և տալիս է տառի պատկերը։

Լիտերն այնքան պարզ բան է, որ մենք նրան ընդունում
ենք, որպես ինքն ըստինքյան հասկանալի մի բան, և տարօ-
րինակ է թվում այն մանրակրկիտ և յերկարատև աշխատանքը,
որ լիտերներ հնարելու համար պիտի կատարեր Գուտենբերգը։
Բայց, այնինչ առանց չափազանցության կարելի յե ասել, որ
Գուտենբերգը գործով ապացուցեց յուր հանճարեղությունը՝
շրիֆտի պատրաստման հարցը լուծելով, և հենց սրանով ստեղ-
ծեց նոր արվեստ։

Ըստ յերևույթին նա սկսեց փայտյա տախտակի հասարակ
բաժանումով՝ շարժական փայտյա լիտերների։ Բայց այդ նյութը
յուր դյուրաբեկության, խոնավությունից ձևերը փոխելու և
տպագրական կաղապարի մեջ ամրացնելու անհարմարության
հետևանքով, շուտով ապացուցեց յուր անպետքությունը՝ գյու-
տարարի առաջ կանգնած խնդիրների լուծման համար։

Մետաղյա շրիֆտի գաղափարի ծագումը դեռևս չէր կան-
խորոշում անհրաժեշտ արդյունքների նվաճումները։ Ամենայն

հավանականությամբ Գուտենբերգն սկսեց տառերը փորագրել անմիջապես մետաղյա տախտակների վրա և միայն ավելի ուշ յուրացրեց ձուլած տառերի միակերպ, մի անգամ ընդմիշտ ստեղծած ձևի հսկայական առավելության միտքը:

Բայց կար ելի մի դետալ, վորի համար գյուտարարը քիչ չաշխատեց—դա պունսոնի (տառահայր) հնարումն եր:

Ի հարկե կարելի յե մետաղի մեջ խորությամբ փորել տառի կամ խոսքի ձևը և ապա այդ ձևով պատրաստած կաղապարի մեջ լցնել դյուրահալ մետաղ և ստանալ լիտերներ՝ դուրս ցցված տառի կոկոնով:

Բայց հնարավոր ե խնդիրը բավականաչափ պարզեցնել, յեթե շինվի կարծր մետաղի վրա դուրս ցցված տառի մի մոդել—պունսոն: Պունսոնով ավելի փափուկ մետաղի վրա տպում են մի շարք հարկավոր տառերի խորացրած հակադարձ կերպարանքը, ստացվում են մատրիցներ (տառամայր) և դրանից հետո կազմակերպում են ցանկացած քանակությամբ լիտերների արագ ձուլումը:

Հետևյալ ետապը մետաղի խառնուրդի գտնելն ե, վոր միաժամանակ ապահովում ե ձուլման հեշտությունը և շրիֆտի բավականաչափ ամրությունը, վոր դիմանում ե բազմակի տպագրության:

Միայն պունսոնի, անհրաժեշտ մետաղի խառնուրդի և տառաձուլման կազմակերպումը հավերժացրին վճռական և անդարձ հաջողությունը:

Այդ վորոնումների ամբողջ ճանապարհը չափազանց յերկար և դժվար եր, և զարմանալի չե, վոր Գուտենբերգը նրան անցնելու համար գործադրեց ստրասբուրգյան կյանքի տասնհինգ ամյա ժամանակաշրջանը:

Ակնհայտ ե, վոր Գուտենբերգին ե պատկանում առաջին տառարկղի և տպագրության խոշոր նորմուծության—տպագրական դազգյահի ստեղծումը:

Գուտենբերգի տպագրական դազգյահը չափազանց պարզ ե, դա հասարակ փայտյա պտուտակային ճնշիչ գործիք ե:

Մի քանի րոպե մոռանանք արդի վիճակը, լինոտիպների և մոնոտիպների շարքերը, ռոտացիոն մեքենաների խելառ վազքը, տպարանների նորագույն, հզոր, ժամանակակից մեխանիզացիան



XVI դարի տպարանի ընդհանուր տեսքը

Մենք վերադառնանք տպագրական արվեստի առաջին տարիներին։

Բանդոլլի կաղապարները, որը պարունակում են ձուլվող տառի խորացրած ձուլածոն՝ արդեն պատրաստ են։

Փոքր վառարանի մեջ թաղած կաթսայում հալվում է մետաղը։ Ֆլորենցիայի վանական տպագրության ծախսերի գրքով, 1447 թվականից մինչև 148; թվականը, մենք գիտենք մետաղների խառնուրդի բաղադրությունը՝ մետաղ, (հավանորեն ծարրաքար), պղինձ և կլայեկ։

Թեք դրած շրիփտի արկղի մոտ, տառակալը ձախ ձեռքում բռնած՝ աշխատում է գրաշարը։ Տառակալը փայտից է, քիչ տողեր է տեղավորում և հարմարեցրած է մի չափի համար։ Սկզբներում գրաշարները հաճախ շարում էյին ոչ անմիջապես ձեռագրից, այլ թելադրությամբ։ Շարվածքի էջերը (նախապես շարված շերտերի հարմարեցնելը գրքի՝ յերկարությամբ հավասար յերեսներին) արդեն XVI դարում կատարում էյին հատուկ բանվորներ—մետրանպաժները։*)

Տպագրական ներկը վաղորոք պատրաստված է. Նրա բաղադրությունն է՝ յեփած կտավհատի ձեթ, մոխրաջուր, խեժ, որդան կարմիր և մուր։

Հրդեհի յերկյուղից ձեթը սովորաբար յեփում էյին քաղաքից դուրս, և հաճախ տպարանների համար տոնախմբության նման մի բան էր։

Վերջապես շարվածքն էջերի յե բաժանված, ամրացրած և տեղավորված տպագրական մամուլի տախտակի վրա (տալեր)։ Այնուհետև գլանավարպետը քսում է ներկը. Նրա ամեն մի ձեռքում գտնվում է մացա, (փայտե կլորակ, որի մի կողմից փափուկ կաշվե բարձն է, մյուս կողմից՝ կոթը), որով նա ներկ է քսում շարվածքի ցցուն մասին։ Թղթի թերթերը դնում են դեկելի վրա (նեղ շրջանակ՝ վրան կտոր քաշած) և նրան սեղմում մի ուրիշ միջանցիկ շրջանակով—ռաշկետով։ Այս ամբողջը թղթի հետ միասին դրվում է շարվածքի վրա։ Տալերը անց են կացնում մամուլի տակ։ Մնում է պտտել դազգյահի կոթը և մամուլի վերի տախտակով թուղթն ամուր սեղմել շարվածքին։

*) Մետրանպաժ—բարձրորակ գրաշար, որը զբաղվում է էջկապով։ Ծ. Թ.

Միջնադարյան արհեստը տպագրական գործի մեջ գտավ համեմատաբար շատ բարդ յեղբայրակից, վոր յուր տեսակով մոտենում եր մանուֆակտուրային և շուտով պահանջեց աշխատանքի կրկնակի բաժանում։ Հին քանդականկարներում գրաշարները պատկերած են հանդիսավոր հագուստներով, հաճախ սրերով. տպագրողները նրանցից տարբերվում են ավելի հասարակ և հարմար հագուստներով։ Հեռու չեր այն ժամանակը, յերբ մինչև անգամ տառերի ձուլումը կպահանջեր յերեք պրոֆեսիա՝ ձուլող, ձեռքով փորձատպող և հղկող։

Նորից վերադառնանք Գուտենբերգին, վորը յուր տպագրական գործունեյությունն սկսեց Մայնցում։

Առաջին տպագրական գործերն ըստ յերևույթին արագությամբ սպառեցին նրա, առանց այն ել, սուղ միջոցները։ Արդեն 1448 թվականին նա մեծ կարիք եր զգում. այդ տարվա հոկտեմբերին ազգականները նրա համար 50 գուլդենի փոխառություն կնքեցին Մայնցի քաղաքացիներ Ռեյնգարտ Բրոմզերից և Յոհան Ռոդենշտայնից։

Առաջին փորձերի հաջողությունը—իրականում նրա գյուտի հսկայական արդյունավետության վավերացվելը իրականում, այսինքն թղթի այն թերթերը, վոր պատվում եյին մինչ այդ չտեսնըված պարզության հասնող տառերով, աղաղակում եյին ի լուր աշխարհի, վոր Գուտենբերգի իրավունքները՝ նոր արվեստի և նրա պտուղների վրա, անկապտելի յեն։

Բոլոր տարակուսանքները, վոր մինչև այդ որերը մթագնում եյին առանձին հաջողությունների ուրախությունը, չքացան այն բանից հետո, յերբ առաջին ստեղծագործությունը դուրս յեկավ տպագրական մամուլի տակից ավարտված տեսքով։

Բայց մանր հրատարակությունները և, մինչև անգամ աստղաբաշխական որացույցը, չեյին բավարարում գյուտարարին։ Առաջ յեկավ մի անհաղթելի ձգում—ցնցել աշխարհը նոր, մեծ, այն ժամանակվա հասկացողությամբ, հոյակապ աշխատանքով՝ ստեղծել առաջին տպագրած աստվածաշունչը։ Տարածման վո՞րպիսի հսկայական հնարավորություններ, ի՞նչ փայլուն հեռանկարներ կբացվեն Յոհանի առաջ, յերբ ամենազոր հոգևորակա-

նությունը շահագրգռվածություն զգա նրա գյուտի մեջ, և յեկեղեցու գանձարանները բացվեն նրա տպագրած սրբազան գըրքերը գնելու համար։ Բայց այս խնդրի լուծման համար պետք եր խոշական տպարան, անհրաժեշտ եյին զգալի ներդրումներ՝ սարքավորման, շրիֆտի, թղթի համար, տեական ծախսեր՝ վարպետների աշխատավարձի համար։

Այս բոլոր փողերը Գուտենբերգը կարող եր շուտով վերադարձնել, մինչև անգամ լավ տոկոսներով։

Այժմ փողը նրա համար միայն հենման կետ եր, վորովհետև նա արդեն գտել եր մի հզոր լծակ, վորով նա վոչ հեռու փայլուն ապագայում ամբողջ յերկիր շուռ կտա։

Ծանր եր մտածել, վոր ինչ վոր տեղ, նրա հարուստ համաքաղաքացիների մոտ հարստություններն ընկած են առանց գործադրության, իսկ յեթե նրանք լինեյին գյուտարարի ձեռքին՝ նա կարող եր հասնել հոյակապ արդյունքների։ Միթե նա այնքան ապաշնորհ ե, վոր չի կարող բացատրել յուր հանճարեղ, պարզ գաղափարը և հարկադրել այդ մեռած փողերը գործադրելու նրա համար թանկագին գործի վրա։ Այսոր խոսքն ինչ վոր փորձերի մասին չի, ինչ վոր անորոշ և հեռավոր բանի մասին —նրա ձեռքին են անվիճելի ապացույցներ, վորոնք ընդունակ են համոզելու ամենաբութ գլուխներին։ Հարցը վճռված ե՝ նա կգտնի հարուստ ընկերակից և կերջանկացնի նրան։

Գուտենբերգը սիրալիրություն չի խնդրում, ողորմություն չի վորոնում, նա ինքն առատորեն կվարձատրի այն մարդուն, վորը նրան փոխառություն կտա անկորուստ ձեռնարկության համար։ Նա չի հոգում այն պայմանների մասին, վորոնցով կըտացվեն փողերը։ Նրա գործի հաջողությունն ու շահը և նրա իրավունքը տպագրական արվեստի վրա—անվիճելի յեն։

Տպարան ստեղծելու համար կատարած վորոնումների ժամանակ, Գուտենբերգը հանդիպում ե մայնցյան բյուրգեր Յոհան Ֆուստին։ Ֆուստը հարուստ եր։ Այս մասին անվիճելի կերպով վկայում են այն (ժամանակվա չափով) շատ մեծ գումարները, վոր նա մտցրեց Գուտենբերգի գործի մեջ։ Այս բյուրգերը սուրբ Կվիրինինի յեկեղեցական դատարանի անդամ եր—դա պատվավոր տեղ եր յեկամուտներով ապահովված մարդու

համար: Նրա եղբայր Յակոբ Ֆուստը աչքի ընկնող քաղաքային գործիչ էր և 1462 թվականին վարում էր Մայնցի Բուրգոմիստրի պաշտոնը: Յոհան Ֆուստի ընտանիքը կազմում էին՝ նրա կին Մարգարիտը, երկու որդին՝ Յոհանը, որ հոգևոր աստիճան ուներ և Կոնրադը, որ մասնակից էր նոր տպարանային գործին և, վերջապես, Քրիստինան, հետագայում Ֆուստի ընկերակից Պետեր Շեֆերի կինը:

1450 թվականի օգոստոսի 22-ին Գուտենբերգի և Ֆուստի միջև պայմանագիր կնքվեց, որով վերջինն օժանդակություն էր տալիս գյուտարարի գործին: Այդ պայմանագիրը, որ ճակատագրական եղավ Գուտենբերգի համար, ապահովեց առաջին տպագրած աստվածաշնչի լույս տեսնելը և գրատպության տարածման լայն հիմքը դրեց:

ԵՐԿՈՒ ՅՈՀԱՆՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՎՈՂ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Յոհան Գուտենբերգ.— *Հարգելի պարոն Ֆուստ, ես ձեզ պատմեցի իմ նոր արվեստի մասին, նրա մեծ ապագայի մասին: Ձեզ մնում է որոշել՝ ցանկանու՞մ եք արդյոք աջակցել աստվածահաճո գործին:*

Յոհան Ֆուստ.—*Կտանք աստծունը՝ աստծուն և կայսրինը՝ կայսրին: Ես ուժեղ եմ աստվածարանության մեջ, յունկեր Գուտենբերգ, իմ որդին, եթե կատարվեն իմ ցանկությունները, կդառնա փոխանորդ, գուցե և ավելի բարձր: Ձեզ փո՞ղ է հարկավոր, հարգելի Գուտենբերգ:*

Գուտենբերգ.—*Փառքը ձեզ է սպասում, Ֆուստ: Վո՜չ հեռու ապագայում բոլոր գրքերի վրա կտպենք Յոհան Ֆուստի անունը:*

Ֆուստ.—*Թեև մենք՝ գերմանացիներս, մեր բնությամբ պարզամիտ ենք, բայց մենք հասկանում ենք մեր շահերը: Ի՞նչ կարող է տալ ձեր գործը, Գուտենբերգ:*

Գուտենբերգ.—*Սկզբից ինձ անհրաժեշտ է մի քիչ՝ 800—1000 գուլդեն: Ձեր փողերը շատ կվերադառնան, ավելի շատ, քան դուք կարող եք ենթադրել:*

Ֆուստ.—*Հազա՞ր գուլդեն: Հարգելի Գուտենբերգ, այդպիսի փող ես չունեմ: Ես չեմ կարող իմ բոլոր խնայողությունները*

ձեզ տալ։ Գիտե՞ք, առածն ասում է՝ դժբախտ է այն մուկը, որը մի բույն ունի։

Գուտենբերգ.— *Դե՛հ, լավ, Ֆուստ, վստահելի մարդիկ ինձ ասել են, որ Ֆուստը շատ ավելի փող ունի։ Իմ գործը մեծ եկամուտներ կբերի։*

Ֆուստ.—*Եկամուտները—այդ ապագա յի և անորոշ ապագա։ Ի՞նչ տոկոս եք խոստանում այն գումարին, որ յես կմըտցընեմ։*

Գուտենբերգ.—*Ես չգիտեյի, որ վաշխառուի հետ գործ ունեմ։*

Ֆուստ.—*Չպետք է վրդովվել, հարգելի յունկեր։ Շարունակենք մեր խոսակցությունը։ Ես շահամոլությամբ չեմ տառապում։*

Գուտենբերգ.— *Մենք կտպագրենք աստվածաշունչը։ Աստված...*

Ֆուստ.— *Աստծուն թողնենք։ Առևտրական գործը մեծ վաստակներ է տալիս։ Ես գիտեմ մարդիկ, վորոնք իրենց դրամագլուխը յետ են ստացել հինգ և ավելի անգամ աճած։*

Գուտենբերգ.—*Առևտուրը կապված է համարձակության հետ, կարելի յե հարստություն շահել և կարելի չե ամեն ինչ կորցնել։*

Ֆուստ.— *Նորերս ինձ առաջարկում եյին...*

Գուտենբերգ.— *Թողեք, Ֆուստ։ Ներկայումս առևտուրը կանգնած է։ Ես գիտեյի, վոր դրա մասին դուք կխոսեք։ Մինչև անգամ իտալացի վաճառականները գանգատվում են վատ գործերից։ Գերմանիայում՝ մեր հայրենիքում, դրությունն ավելի վատ է։ Արհեստով խոմ չե՞ք պարապելու հարգելի Ֆուստ։*

Ֆուստ.—*Լավ, իմ պայմաններն են՝ ձեզ տալիս եմ 800 գուլդեն 6%-ով ձեռնարկության կազմակերպման համար և ամեն տարի 300 ական գուլդեն՝ նրան վարելու համար։*

Գուտենբերգ.—*Համաձայն եմ։*

Ֆուստ.—*Իսկ ոգո՞ւտը.*

Գուտենբերգ.—*Ֆուստն ստանում է ոգուտի կեսը։*

Ֆուստ.—*Կարծես թե քիչ է։*

Գուտենբերգ.—*Չե՛ վոր, գյուտն իմն է...*

Ֆուստ.—*Իսկ յես տալիս եմ դրամագլուխը։ Ձեր գյուտով*

մինչև այժմ շատ բան եք ձեռք բերել, յունկեր։ Հետո համարձակությունը։ Չէ՞ որ մենք կարող ենք անաջողության հանդիպել։

Գուտենբերգ.— Անաջողություն չի կարող լինել։ Դուք ձեր ձեռքին բռնած ունեք իմ հրատարակած գիրքը։

Ֆուստ.—(Մտածելով) համաձայն եմ։

Գուտենբերգ.—Հետո, ես ուզում եմ հավատացած լինել...

Ֆուստ.—Ինչո՞ւմ, թանկագին Գուտենբերգ։

Գուտենբերգ.—Նրանում, որ հաջողության դեպքում, իմ ստեղծած գործը, իմ զավակը դեն չի շպրտվի, կասեմ ուղղակի—չի խլվի ինձնից։ Պետք է լինի երաշխիք, պայմաններ։

Ֆուստ.— Ո՛չ մի պայման։

Գուտենբերգ.— Ի՞նչպես, այդ ձեր վերջի՞ն խոսքն է։

Ֆուստ.— Վերջին։ Մայնցի բյուրգերների գործերին ծանոթ եմ, Գուտենբերգ։ Այսօր դուք ոչ ոքի, բացի Ֆուստից, դիմել չեք կարող։

VII. ՖՈՒՍՏ ԵՎ ՇԵՖԵՐ

Գուտենբերգի լույս ընծայած բոլոր տպագրական յերկերը գաղտնի չեն պահում հրատարակչի անունը. Նրանց մեջ նշանակված չեն գրքի լույս տեսնելու տեղը և ժամանակը։

Առաջին անգամ գյուտարարի վերջին ստեղծագործության «Կաթոլիկոնի» մեջ (լատիներեն բառարան, Յոհան Բալբուսի քերականությամբ) ասված է.

«Այս հրաշալի «Կաթոլիկոն» գիրքը, տիրոջ մարդացման 1460 թվականին, փառավոր քաղաք Մայնցում, վոր պատկանում է փառապանծ գերմանական ժողովրդին, վորին աստծո վողորմությամբ այսքան բարձրացել է հոգևոր լուսով և ազատ վողորմած պարգևով գերադասված է և բարձրացրած է յերկրի այլ ժողովուրդներից՝ տպագրված և վերջացրած է վոչ թե յեղեգնի, յերկաթե գրչի և փետուրի օգնությամբ, այլ պատրոնների և կաղապարների հրաշալի համաձայնեցման և համաչափության միջոցով»։

Դժվար է վորոշել, թե ինչն էր հարկադրում Գուտենբերգին աննահանջ կերպով հրաժարվել տպագրած գրքերում յուր անունը հիշատակելուց։ Հնարավոր են զանազան բացատրություններ։ Բազմաթիվ պարտատերերի յերկյուղը, վախը յեկեղեցուց, վորը հայտնի չէ, ինչպես կընդունի նոր արվեստի յերևան գալը, Գուտենբերգի համեստությունը, վերջապես, գուցե, ուղղակի այդ բանը գյուտարարի մտքով չէր էլ անցնում։

Յոհան—Գենսֆլեյշ — Գուտենբերգը գրատպության գյուտի

պատմության առաջին էջն անզգուշությամբ թողել է բաց. սրա մասին, ի վնաս Գուտենբերգի, հոգացել են ուրիշները։ Նրա ամենամերձավոր հաջորդների գրքերը ազդարարեցին աշխարհին իրենց հաջողությունների և Ֆուստի ընտանիքի փառքի մասին, վորն ստեղծել է նոր մեծ արվեստը։

Նախ Ֆուստը և ապա Շեֆերը յերևում են տպագրած յերկերի յերեսների վրա, վորպես փառքի և հարգանքի հավակնողներ։

Գյուտարարի մահից հետո Պետեր Շեֆերը շուտով առաջին յերկչոտ փորձն է անում յուր աներոջը հռչակելու համար։

“Institutionen Justinians„ գրքի յեզրափակման մասում, տըպված 1468 թվականի մայիսի 24-ին, Շեֆերը զետեղում է մի վոտանավոր, վոր նրա պատվերով գրել եր Յոհան Ֆոնսը։ Այդ վոտանավորը խոսում է Մայնցի նախատպող յերկու Յոհանների մասին, ըստ յերևույթին ինկատի ունենալով Գուտենբերգին և Ֆուստին։

Ֆուստի և Շեֆերի սերունդները ժառանգեցին նրանց տպագրական գործը։

Անցնում են տարիներ, փոխվում են մարդիկ, մոռացության է տրվում անցյալը և Շեֆերի վորդի Յոհանը ավելի վստահ է խոսում պապի և հոր գրատպության գյուտարարներ կոչվելու անվիճելի իրավունքի մասին։ Նրա համար Գուտենբերգն այլևս բոլորովին գոյություն չունի։

1503 թվականի հրատարակության մեջ Յոհան Շեֆերը իրեն հպարտությամբ անվանում է ժառանգ այն ընտանիքի, վորը հնարել է գրատպությունը։ Վեց տարի անց “Enchiridion seu Breviarium Moguntinum„ գրքի մեջ Յոհան Ֆուստը կոչվում եր նոր արվեստի գյուտարար։

Վերջապես վանահայր տրիտեմիուսի “Compendium annalium Francorum„-ի մեջ տրված է պարզաբանված շարադրանք, վորը փառքի անվիճելի և միակ ժառանգ կոչվելու իրավունքը տալիս է Ֆուստ—Շեֆերի ընտանիքին։

«Տպված և վերջացրած է այս ժամանակագրությունը 1515 թվականին... ազնիվ և նշանավոր Մայնց քաղաքում, վորի պարիսպների մեջ է գտնված տպագրության արվեստը Յոհան

Շեֆերի ձեռքով, թոռ հանդուգյալ առաքինի մարդու և Մայնցի բյուրգեր Յոհան Ֆուստի, առաջին Գյուտարարի հիշյալ արվեստի, վորը, վերջապես, 1450 թվականին, ոգոստափառ թագավոր Ֆրիդրիխ III-ի և Մայնցի փառավոր արքեպիսկոպոս Դիտրիխ Շենկ ֆոն Երբախի վարչության 13-րդ տարեշրջանում, սկսեց կշռադատել և ուսումնասիրել գրատպության արվեստը և 1452 թվականին, աստծո ոգնությամբ, լիովին յուրացրեց այն, վորպեսզի տպագրության արտադրությունը դնի շնորհիվ ոգնության և բազմաթիվ անհրաժեշտ գյուտերի Պետեր Շեֆերի՝ յուր ծառայի և վորդեգրի, վորին նա կնության տվեց յուր դուստր Քրիստինին, վորպես արժանի վարձատրություն այսքան բազմաթիվ աշխատանքների և գյուտերի։ Բայց նրանք յերկուսն էլ՝ Յոհան Ֆուստը և Պետեր Շեֆերը, գաղտնի յին պահում իրենց արվեստը, ընդվորում նրանք իրենց ոգնականներին և ծառաներին յերդումով պարտավորեցնում եյին չհրատարակել այդ արվեստը, յերբ, վերջապես 1462 թվականին, ոգնականներն արվեստը տարածեցին շատ յերկրներում և մեծ ծավալում ստացավ»։

Ֆուստ-Շեֆերի ընտանիքի ձեռքում մամուլը դարձավ մամուլ ստեղծողի դեմ և մոռացության թունավոր խայթը խլեց նրա Աքիլլեսյան կրունկը—յուր անունը սեփական գրքերում լռության մատնելու անբացատրելի արարքի պատճառով։

Յոհան Շեֆերին կշտամբելու բան չկա. նա այլ ձևով շարունակեց միայն այն կռիվը, վոր սկսվել եր նրա պապի և Գուտենբերգի միջև, միատեղ աշխատանքի հենց սկզբից։

Այն պայմանագիրը, վոր կնքեց գյուտարարը Ֆուստի հետ 1450 թվականին, յուր մեջ արդեն պարունակում եր առաջիկա կոնֆլիկտի անխուսափելիությունը։

Արտաքուստ ամեն ինչ խոսում եր Գուտենբերգի ոգտին- նա գործի միահեծան տերն է. «բարեսիրտ» Ֆուստը, առանց իսկ հսկողության, նրա տրամադրության տակ է դնում այն ժամանակների համար մի չափազանց նշանավոր գումար — 800 գուլդեն, ձեռնարկության մեջ դնելու համար — 6%-ով և 300-ական գուլդեն ամեն տարի գործը վարելու համար։ Ոգուտը պիտի բաժանվի յերկու մասնակիցների մեջ հավասար։

Բայց այդ փայլուն դրամները, վոր հարուստ Ֆուստը շռ-

Գուտենբերգի 42 տողանոց աստվածաշնչի մի թերթը

պըրտեց գյուտարարին, ունեյին իրենց հակառակ մութ յերեսը:

Տեր ու տիրականը փաստորեն Ֆուստն եր, վորովհետև նա միշտ կարող եր յետ պահանջել յուր ներդրումները, վոր Գուտենբերգի համար կնշանակեր տպարանը կորցնել և խայտառակությամբ հեռանալ յուր ստեղծած ձեռնարկությունից: Գյուտարարն ու նրա գործը ըստ եյության ամբողջովին հարուստ բյուրգերի իշխանության տակ եր:

Գիտակցու՞մ եր այս բանը Գուտենբերգը:

Գուտենբերգի անցյալը ցույց ե տալիս նրա գործարար մեծ փորձառությունը, սուր խելքը և գործնական կռահումը, ուստի չի կարելի կարծել, վոր նա իրեն հաշիվ չտար յուր ստորագրած խորհրդավոր համաձայնության մասին: Ակնհայտ ե, վոր ուրիշ յելք չկար: Սա վերջին մոլեգին խաղն եր, տանուլ տալով, Գուտենբերգը պիտի հեռանար թղթախաղի սեղանից:

Առաջին ութ հարյուր գուլդենը պարզ ե, վոր արագությամբ ծախսվեց, վորովհետև արդեն 1452 թվականին Ֆուստը տալիս ե յերկրորդ փոխատվությունը՝ նույն չափով: Հենց նույն տարին գործի մեջ ե մտնում և Պետեր Շեֆերը:

Ֆուստի ով լինելը մենք գիտենք: Շեֆերը յերիտասարդ ե՝ անհայտ և անփող, բայց անվիճելի ընդունակություններով, վորոնք նրան թույլ են տալիս արագությամբ կյանքի լավ դիրք անել:

Պետերը ծագումով Հերնցհայմից եր:

1449 թվականին Փարիզում նա արտագրող եր:

Շեֆերը Գուտենբերգի ամենատաղանդավոր աշակերտներից եր. նրան են վերագրում շրիֆտ ձուլելու մի շարք բարելավումները:

Հին գրավյուրները մեզ թողել են այդ յերեք մարդու պատկերները, վորոնք ամիջականորեն մասնակցել են գրատպության ձևավորմանը: Թեկուզ այդ պատկերներն իսկական պատկերներ չլինեն, բայց համենայն դեպս՝ նրանք պատկերում են գյուտարարի և նրա գործակիցների բնավորությունը՝ նրանց մոտակա սերունդների տեսակետից:

Գուտենբերգի կերպարանքը, վոր գրավյուրներից տեղափոխված ե Տորվալդսենի նշանավոր քանդակագործության մեջ,

խոշոր է և հզոր—այդ առողջ, քաջարի մարմնի մեջ ապրում է գյուտարարի և մարտիկի առողջ ոգին։ Դիմագծերը և կանոնավոր են և խիստ, աչքերը նայում են հանգիստ և իմաստուն, ավելի շուտ փիլիսոփայի հայացք, քան արհեստավորի, որ բարձրացել է մինչև նոր արվեստի գիտակցման և մարմնացման։

Ֆուստը փայփայած է, ինչպես վայել է հարուստ բյուրգերին և լիավարտ ինքնագոհ է. այդ մարդու կոչումն աշխատանքը և դժվարությունների հաղթահարումը չէ, այլ բախտի բերմունքը։

Երիտասարդ Շեֆերն ամբողջովին՝ սկսած հասակից և վերջացրած անգույն և հիշողության մեջ չպահվող դեմքով, համեմատած Գուտենբերգի հետ՝ մանր է և ապաշնորհ։ Միայն ամուր, կլոր կզակը և սեղմ շրթունքները ասում են համառ բնավորության մասին, որ այդ կորիճին կապահովի անկարոտ և պատվավոր ապագա։

Գուտենբերգի և Ֆուստի միատեղ գործը շարունակվեց հինգ տարի։ Այդ շրջանն անպտուղ չէր։ Համարյա կատարյալ հավաստիությամբ հաստատված է, որ 1451 թվականին նրանք լույս են ընծայել Դոնատի լատինական քերականությունը, պապական ինդուլգենցիաներ[28] և ժողովրդի համար մի գրքույկ՝ «կոչ քրիստոնեությանը ընդդեմ թյուրքերի»։ Բայց գլխավոր աշխատանքն էր աստվածաշնչի հրատարակության նախապատրաստությունը։ Հենց աստվածաշնչի հրատարակության հսկայական աշխատանքը և խիստ սխալ հաշիվները Գուտենբերգի պլանների մեջ, հիմնական պատճառներն էին, որոնք հարկադրեցին նըրան կրկնապատկել Ֆուստի տված փոխառությունը և վերջնականապես խճճել յուր փոխհարաբերությունները հարուստ փոխատվի հետ։

Առաջին աստվածաշունչը բաղկացած է իսկապես յերկու հատորից "in folio„[29] 324 և 317 յերկսյունակ եջից։

Այս առաջին հիմնական աշխատանքն է, որի պատրաստումն անկասկած ահագին դժվարություններ պիտի ներկայացներ, չնայած նախորդ մանր հրատարակությունների փորձին։

Դոնատներ[30]. Փարիզի ազգային գրադարանում պահպանվել են մագաղաթի յերկու 27 տողանի թերթիկներ, որոնք կազմում են դոնատների մի մասը։

Սրանք առանձնապես հետաքրքիր են նրանով, որ ցուցադրում են շրիֆտի կատարելագործման պատմության մի մասնիկը։ Առաջին 9 տողի վրա յերևում է չափազանց փափուկ կապարյա լիտերների մաշվածությունը։ Այնուհետև, նույն յերեսի վրա, տառերն, ըստ յերևույթին, ձուլված են արդեն ավելի լավ, կարծր մետաղից։

Ինդուլգենցիաներ. Մինչև այժմ գտնված է ինդուլգենցիայի 41 օրինակ՝ տպագրած մագաղաթի վրա։ Նրանք հետաքրքիր են ավելի մանր շրիֆտի գործադրությամբ, քան աստվածաշնչում։ Այս տպագրած թերթերում տեղ է թողնված ստացողի անունը, տեղը և ժամանակը գրելու համար։

Կոչ. «Կոչ քրիստոնեության ընդդեմ թյուրքերի» գրքույկը տպագրած է 9 եջում, թերթի քառորդ մասի վրա։ Նրա բովանդակությունն է՝ կոչ քրիստոնյաներին՝ ոտքի յելնելու և գլխովին ջարդելու թյուրքերին՝ Կոստանդնուպոլիսը տիրողներին։

Աստվածաշունչ. Գուտենբերգը տպագրել է յերկու աստվածաշունչ—մեկը 42 տողանի և մյուսը 37 տողանի։ Այս գրքերի վրա հրատարակության տարին չի նշանակված։ Մանրակրկիտ համեմատությամբ հաստատված է, որ, ըստ ժամանակի, ավելի առաջ լույս է տեսել քառասունյերկու տողանոցը։ Նրա լույս տեսնելու ժամանակը համարվում է 1456 թվականի առաջին կեսը։

Նրա տիրաժի մի մասը տպագրված է մագաղաթի վրա, մյուս մասը— թղթի։ Եջերի, սյունատողերի,[31] կուստոդների,[32] ինիցիալների[33] նշանակում չկա։

Յերեսունվեց տողանի աստվածաշունչը յերկսյունյակ է և ունի 1726 եջ, նա կազմած է սովորաբար յերկու կամ յերեք հատորով, նրա մեջ տեղեր են բաց թողնված ինիցիալների համար, որ ձեռքով եյին արվում։

Ինդուլգենցիաների և «Կոչ քրիստոնեության ընդդեմ թյուրքերի» գրքույկի հրատարակությունն առաջին անգամ մամուլն իսպաս դրեց յուր ժամանակի քաղաքական խնդիրների։ Գուտենբերգի հրատարակած կոչն արդեն կրում է յուր մեջ ապագա տպագրական լրագրի և քաղաքական պամֆլետի սաղմերը։

Բնորոշ է, որ ինդուլգենցիան եր առաջին տպագրական յերկերից մեկը—կաթոլիկական յեկեղեցու շահագործական տենդենցների մարմնացումը՝ հիմնված ժողովրդական մասսաների խավարամտության վրա։ Իզուր չէ, որ ինդուլգենցիաների լայն վաճառքը բարենորոգչական շարժման առիթներից մեկը դարձավ և մի շարք յերկրներում սահման դրեց կաթոլիկության իշխանությանը և վերջնականապես խախտեց նրա վաղեմի հզորությունը։

Կաթոլիկական յեկեղեցին ուսուցանում եր, որ Հիսուս

Քրիստոսի և սրբերի բարի գործերի թիվն այնքան մեծ է, որ նա բավական է բոլոր մեղապարտների արարքները քավելու համար։ Ուրեմն՝ յեկեղեցին կարող է թողություն տալ ապաշխարողներին և դրանով նրանց ազատել այն պատիժներից, վորոնց նրանք արժանի եյին իրենց մեղքերի համար։ Ինդուլգենցիա կոչվում եր այն գիրքը, վոր առարկայացնում եր յեկեղեցու պարգևած ներումը ապաշխարողին։ XI դարից այդպիսի ներումը կարելի յեր գնել փողով։ Ինդուլգենցիաների անպատկառ առևտուրը դարձավ պապական վարչության յեկամուտների ամենախոշոր աղբյուրներից մեկը։ Ինդուլգենցիաների վաճառքը լայն ծավալ եր ստանում առանձնապես այն ժամանակ, յերբ պապը ձեռնարկում եր հսկայական ծախքեր պահանջող գործի՝ պատերազմի անհավատների դեմ, Հռոմի սուրբ Պետրոսի տաճարի կառուցման։

Գուտենբերգի և Ֆուստի միատեղ աշխատանքի որերին, քրիստոնեական աշխարհը սասանող դեպք պատահեց—1453 թվականի մայիսի 25-ին թյուրքական հրոսակները գրավեցին Կոստանդնուպոլիսը։

Զառամյալ, յուր վաղեմի ուժը կորցրած Բյուզանդիան արդեն մի շարք տարիներ կորստյան յեզրին եր գտնվում։ XIV դարի յերկրորդ կիսին թյուրքերը մտան Բալկանյան թերակղզին և հաստատվեցին այնտեղ. նրանց տիրապետությունները, 1400 թվականին մոտ, հասնում եր Եգեյան ծովից մինչև Դանուբ։ Լենկ-Թեմուրի արշավանքը և թյուրքական սուլթան Բայազետին հասցրած ծանր պարտությունը Բյուզանդիայի կործանումը հետաձգեցին, բայց չկարողացան խափանել նրան։

Ներքին հակասություններից ծվատվող Յեվրոպան չեր կարող և չեր ուզում իրական օգնություն ցույց տալ Բյուզանդիային։ Իզուր եր պապը նոր խաչակրաց արշավանքի կոչ անում՝ ս. Պետրոսի տեղակալի հզոր հեղինակության որերն անցել եյին անդառնալի կերպով։

1451 թվականի օգոստոսի 12-ին, Նիկողայոս V պապը հայտարարեց մեղքերի թողություն այն բոլորին, վորոնք փող կնվիրեն պատերազմին՝ ընդդեմ թյուրքերի։ Այդ ինդուլգենցիաների իրացումը Գերմանիայում կատարում եր Մայնցում բը-

նակվող Պավլինիուս Ցապպը։ Սկզբում առևտուրը թույլ էր գնում։ Կոստանդնուպոլիսը վերցնելուց հետո միայն քրիստոնյաներն արձագանք տվին պապի կոչին։ «Ապագա յերանության անդորրագրերի» պահանջի ուժեղանալը հարկադրեց Գուտենբերգի գյուտը հարմարեցնել նրանց տպագրությանը։

Բայց այս բոլորը Գուտենբերգի աշխատանքի մեջ մանրունք էր, հիմնականն աստվածաշնչի հրատարակությունն էր, վորին գնաց հինգ տարվա աշխատանքը և փողերը՝ 1450 թ. մինչև 1455 թ.։ Յերբ այս հիմնական խնդիրը թվում էր վերջնականապես լուծված և աստվածաշնչի պատրաստի թերթերը ընկած էյին գյուտարարի առջև՝ մի աղետ պատահեց։

1455 թվականին Յոհան Ֆուստը Գուտենբերգին 2020 գուլդենի հայց ներկայացրեց. այս գումարը գոյացել էր Ֆուստի գործի մեջ ներդրած 1600 գուլդենից և 420 գուլդեն տոկոսներից։

Պրոցեսի վախճանը պարզ էր՝ գյուտարարը հնարավորություն չուներ այդ ահագին գումարը վճարելու, և նրա ստեղծած տպարանը պիտի անցներ Ֆուստի ձեռքը, վորը, հանձին Շեֆերի, նախապատրաստել էր հմուտ հաջորդ՝ տպագրական արտադրությունը շարունակելու համար։ Գյուտարարի վողբերգությունն անսպասելի ծանր էր այն պատճառով, վոր նա առաջինն էր. հետագա պատմությունը նման շատ դեպքեր գիտի, յերբ ձեռնարկող կապիտալիստը գյուտարարին դուրս է գցում փողոց, ոգտագործելով նրա գաղափարը և նախապատրաստական աշխատանքը։

Ֆուստ-Գուտենբերգի պրոցեսին վերաբերող միայն մի փաստաթուղթ է մնացել—Բամբերջյան կղերականի[34] և նոտար Ուլրիխի Հելմանսպերգի գրառումը։

Ըստ այս արձանագրության դատարանի վորոշումը, վոր կայացել է Ֆուստի գանգատի քննելուց և Գուտենբերգի բացատրություններից հետո, ասում է.

«Յոհան Գուտենբերգը պետք է կազմի տպարանում կատարված մուտքի և յելքի հաշիվը, նաև այն բանի, թե ինչ է ստացել բացի դրանից, այս պետք է հաշվառել 800 գուլդենի մեջ. բայց յեթե նա, հաշվի համաձայն, ծախսել է 800 գուլդենից ավելի և այդ տպագրության արտադրության համար, չի

գործադրված, այս դեպքում նա պիտի վերադարձնի։ Յեթե Յոհան Ֆուստը կհաստատի յերդումով կամ կլիենտուրայով, վոր նա հիշված գումարը պարտք է տվել տոկոսով և վոչ յուր սեփական փողերից, այդ ժամանակ Գուտենբերգը, համաձայն պայմանագրի, պիտի վճարի նրան այդ տոկոսները»։

1455 թվականի նոյեմբերի 6-ին Ֆուստն այդ յերդումը տվեց Ֆրանցիսկյան վանքում մի շարք վկաների ներկայությամբ, վորի կապակցությամբ կազմված է նոտարի արձանագրությունը։

Գուտենբերգը, հավանորեն, յուր գործը տանուլ տված համարելով, ներկա չեր յերդմանը։ Նրա անունից այդ արարողությանը մասնակցում եյին ս. Քրիստոփ յեկեղեցու քահանա Պետեր Գյունտերը և գյուտարարի յերկու աշխատակիցները։

Դատարանի վերջնական վճիռը չի պահպանվել։ Համենայն դեպս ստույգ է, վոր սրանցից հետո Մայնցում գրատպությունն իրագործվում եր յերկու տպարանում՝ Գուտենբերգի և Ֆուստի (Բարգելլանուսի վկայությամբ «ամեն մեկը տպում եր յուր մամուլով»)։ Վոչ սակայն անվիճելի յե, վոր Ֆուստին անցավ Գուտենբերգի 42 տողանի աստվածաշնչի շրիֆտը։

Ֆուստն ու Շեֆերը 1457 թվականի ոգոստոսին լույս ընծայեցին սաղմոսի հրաշալի հրատարակությունը։ Այս գիրքը չափազանց արագ տարածվեց և նրա յերկրորդ հրատարակությունն արդեն լույս տեսավ 1459 թվակականին։

Գուտենբերգը 1460 թվականին տպագրեց յուր յերրորդ և վերջին խոշոր արտադրանքը «կաթոլիկոնը»։

Գուտենբերգին դժվար եր մրցել Ֆուստի հետ, վորովհետև հարուստ բյուրգերն ավելի խոշոր դրամական միջոցներ ուներ և, բացի սրանից, հանձին Շեֆերի ձեռք բերեց յերիտասարդ և յեռանդոտ ոգնական։

Ֆուստն ու Շեֆերը գրատպության զարգացման մեջ դրին իրենց լուման, բայց ամեն մեկին պետք է հատուցանել ըստ յուր արժանիքի։ Յեկեղեցական իրավունքի դասատու, կնիքը պահող և Մայնցի ս. Վիկտոր յեկեղեցու կանոնիկոս[35] Իվո Վիտտիգը յուր՝ Լիվիոսի թարգմանության մեջ, վոր տպել է Յոհան Շեֆերը, թողել է ձոն Մաքսիմիլյան թագավորին, վորտեղ ասված է.

«Վորպխսի քաղաքում (Մայնցում) նույնպես առաջին անգամ հնարված է տպագրության հրաշալի արվեստը, նախ Յոհան Գուտենբերգի ձեռքով, ինչպես հաշվում են 1450 թվականին մեր տեր քրիստոսի ծննդից հետո, և ապա բարելավված և ամրացած է ջանասիրությամբ և աշխատանքով Յոհան Ֆուստի և Պետեր Շեֆերի»։

VIII. ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԿԱՅՍՐՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՊԵՐԸ

Գուտենբերգի կյանքն անցավ գերմանական յերկու մեծ քաղաքներում՝ Մայնցում և Ստրասբուրգում։ Նրանցում նա վկա է յեղել բյուրգերության պայքարին ընդդեմ յեպիսկոպոսական ու իշխանական կառավարության, արհեստավորների և քաղաքի բարձր դասի պայքարին, բայց այդ բոլորը ներքին կռիվ եր սոցիալական շենքի վերին հարկերում, գզվոց՝ «հասարակ ժողովրդից» կողոպտած բարիքները բաժանելու համար։

Ֆեոդալական իրավակարգի արտոյալ խմբերի ամեն տեսակի բազմազան խճճվածքի տակ, կազմելով նրա սկզբնական հիմքը, նրա վոտքի տակի հողը, գտնվում է ռազմիկը՝ անողաքաբար շահագործվող գյուղացիական ահագին մասսան և իրավազուրկ քաղաքային պլեբսը։

Այդ մասսաների կեղեքումն ու շահագործումը ավելի և ավելի սարսափելի յեն դառնում՝ դրամական տնտեսության զարգացման ազդեցության տակ։

Ճիշտ է՝ իշխանության ապակենտրոնացումը, հաղորդակցության ճանապարհների վատ վիճակը, ժողովրդի անկուլտուրականությունն ու խավարամտությունը, ազգային խտրություններն ու տարբերությունները, գյուղացիության և պլեբսի շահերի յուրահատկությունը—այս բոլորը ճեղքրտում է սոցիալական հողը և խափանում մասսաների ցասման միասնական հզոր բռնկման հնարավորությունը։ Բայց գետինն անընդհատ յերերում է, այստեղ—այնտեղ առաջանում են տեղական յերկրաշարժի եպիկենտրոններ։[36] XIV դարի վերջից ժողովրդական հեղա-

փոխական ալիքներն ավելի և ավելի հաճախ են բարձրանում, վորպեսզի XVI դարի կեսին հասնեն գերմանական գյուղացիական պատերազմի հեղեղման։

Ստորերկրյա հարվածների մշտական արձագանքները զգացվում են ամենուրեք, աշխարհը լցնում անվստահությամբ և տագնապով, և այն միջավայրը, վորի մեջ շփվում եր գյուտարարը, չեր կարող յուր վրա չզգալ նրանց ազդեցությունը։ Փոփոխություններն անխուսափելի յեն, հեղափոխական բռնկումները անխափանելի, մինչև անգամ այնպիսի չափավոր մարդը, ինչպես եր Հուտտենը, «Վատիսկուս կամ հռոմեական Յերրորդության» մեջ ասում ե պատկերավոր և կծու.

«Աղքատները կերակրվում են յերեք բանով — նեխուրով, սոխով և սխտորով. հարուստները՝ յերեք բոլորովին այլ բաներով — աղքատների քրտինքով, վաշխով և կողոպուտով»։

Ապստամբությունները հաճախ սկսվում եյին նրանից, վոր յելք չեր մնում, կյանքը մահից վատ եր դառնում։ 1348 թվականի ժանտախտի ծանր հետևանքները, հարյուրամյա պատերազմների ավերումները, հողագործների մշտական կեղեքումները, ազնվական շահագործման ուժեղացումը — առաջացրին գյուղացիական զայրույթի բռնկում՝ տարերային և դաժան։

Այդ ապստամբության մասին պատմել ե Ֆրուասսարը՝ XIV դարի աչքի ընկնող գրող, ժամանակագրության հեղինակ, ավագանու սպասավոր — նրան մահու չափ վախեցրել են ժակերը[43] և ապշած ե խռովարարության աճումից։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Շուտով... Պատահեց զարմանալի և մեծ խռովություն ֆրանսիական թագավորության շատ շրջաններում, այն ե՝ Բովեզիում, Բրիում, Մառնի և Լաոննեյի վրա, Վալուայում և ամբողջ յերկրում մինչև Սուասոն։

Շատ գյուղական բնակիչներ, վոր իրենց առաջնորդ չունեյին, հավաքվեցին Բովեզիում։ Սկզբից նրանք հարյուր հոգուց ավելի չեյին։ Նրանք ասում եյին, վոր ֆրանսիական թագավորության ամբողջ ազնվականությունը — ասպետները և զինակիր-

ները — խայտառակեցին և դավաճանեցին պետությանը և շատ լավ կլիներ նրանց բոլորին վոչնչացնել։ Յեվ այսպես ասողին ամեն մեկը գոչում եր՝ «իսկական ճշմարտություն, ասաց, անեծք նրան, վորի պատճառով պատահի վոր ազնվականներին չվոչնչացնեն մինչև վերջին մարդը»։ Այն ժամանակ նրանք հավաքվեցին և անկարգ ուղևորվեցին դեպի հարևան ասպետությունը, չունենալով այլ զենք, բացի սրածայր յերկաթներով փայտերից և դանակներից։ Նրանք ավերեցին և հրդեհեցին տունը սպանեցին ասպետին, նրա կնոջը, յերեխաներին, թե՛ անչափահասներին, թե՛ չափահասներին։ Սրանից հետո նրանք գնացին ուրիշ ամրոց վրա և այնտեղ ավելի վատթար վարվեցին»։

Յեվ այնուհետև Ֆրուասսարը պատմում ե գյուղացիների վայրենի դաժանությունների և նրանց շարժման աճման մասին. բունտարարների թիվը շուտով հասավ վեց հազարի, իսկ հետո դարձավ հարյուր հազարից ավելի։

«Յեվ գործում եյին նրանք մեծագույն չարագործություններ։ Նրանք կործանեցին Կուսի, Վալուայի, Լանի յեպիսկոպոսության, Սուասոնի և Նուայոնի շրջաններում ասպետների և զինակիրների ավելի քան հարյուր դղյակ և լավ տներ։ Նրանք սպանում և կողոպտում եյին բոլոր պատահածներին։ Բայց աստված յուր վողորմածությամբ ոգնություն ուղարկեց, վորի համար նրանից շատ շնորհակալ պիտի լինենք»։

Ֆրուասսարը պարզորոշ դասակարգային ժամանակագրության մեջ փորձ ե անում ներկայացնել ժակերիան, վորպես սարուկների վայրենի բունտ, անմիտ դաժանությունների շարան և պատկերել ասպետությունը վորպես անմեղ զոհ, բայց նա էլ չի կարողանում ծածկել շարժման թափը և ազնվականներին պատած յերկյուղը։

Իրոք ժակերիան այդպե՛ս չեր ընթանում։

Տարերայնորեն վոտքի յելած գյուղացիությունը շուտով, հանձին Գիյոմ Կալի, ձեռք բերեց զինվորականի հմուտ առաջնորդ։

Ժակերն աջակցություն ստացան քաղաքացիներից, վորոնք նույնպես անողորմ կերպով տուժում եյին ասպետների անկարգություններից։

Ապստամբությունը հաջող զարգանում եր։ Յերբ ապստամբ-

ները մոտեցան Փարիզին՝ քաղաքը նրանց հետ դաշն կապեց, Ֆրանսիայի մայրաքաղաքում այդ ժամանակ միջին դասը ընդվզեց Թագավորական իշխանության դեմ։ Փարիզյան քաղաքացիների պարագլուխը—վաճառականական ավագ Ետյեն Մարսելը, որ ղեկավարում էր այդ պայքարը, վորոշեց օգտագործել ժակերին՝ փարիզի մասղաշ ազատությունները փրկելու համար։ Դոֆինի[37] կողմնակից ազնվականները ընդհանուր թշնամիներ եյին թե մայրաքաղաքի քաղաքացիների և թե գյուղացոց։

Փարիզցիք միանալով ապստամբներին՝ մայրաքաղաքի շրջակայքում վոչնչացրին մի շարք ասպետական բներ և պաշարեցին Մո քաղաքը, վորտեղ Թագնվել եյին Դոֆինի կինը, դուստրը և քույրը։

Անեղ վտանգի հանդեպ ազնվականությունը համախմբվեց. վճռական ճակատամարտում նրա առաջնորդն եր Նավարյան Կառլոս Չար Թագավորը։

Ռուանյան ժամանակագրությունն ասում է. «Այն ժամանակ ազնվականները գնացին Լոնգվիլ դղյակը Նավարյան Թագավորի մոտ և խնդրում եյին նրան, վոր ոգնություն ցույց տա և միջոցներ ձեռք առնի ժակերին ցրիվ տալու, ջարդելու և մահացնելու համար։ Նրանք ասացին նրան «Սիր,*) դուք առաջին ազնվականն եք աշխարհում, մի թույլ տաք, վոր ազնվականությունը իսպառ բնաջնջվի»։

«Յեթե այդ մարդիկ, վորոնք իրենց ժակ են անվանում, դեռ յերկար պիտի գործեն, իսկ բարի քաղաքացիք նրանց ոգնություն ցույց տան, նրանք իսպառ կվոչնչացնեն ազնվականությանը և ամեն ինչ կավերեն»։

Դոֆինի և Փարիզի միջև տեղի ունեցող պայքարում, Կառլոսը խռովարար քաղաքի կողմնակից եր, բայց նա այդ պառակտումը մոռացության տվեց հանդեպ այն թշվառությունների, վոր սպառնում եյին նրա դասակարգին։

Այդ ժամանակ բախտը յերես դարձրեց ապստամբներից. նրանց ուժերը, փարիզեցիների հետ միացած, ջարդվեցին Մոյետակ և փախան։

---

*) Ֆրանսերեն—տեր, արքա։
Ծ. Թ.

Նավարյան Կառլոսը դուրս չեկավ ժակերիայի հիմնական ուժերի դեմ, նենգորեն կանչեց, ծուղակ գցեց Կալին և հարձակվեց առանց առաջնորդի մնացած և վոչինչ չսպասող գյուղացիների վրա։ Կառլոսի ասպետներն առանց դժվարության ջախջախեցին կարգապահության անվարժ, վատ զինված ու վարժեցրած ապստամբական զորքը։

Հաղթողները Գիլյոմ Կալին «թագադրեցին» շիկացած յեռոտանիով և գլխատեցին։

Քաղաքացիք, ինչպես սովորական է մանր բուրժուայի համար, ձեռք վերցրին քիչ առաջվա դաշնակիցներից և նրանց վերապահեցին հաշիվները վերջացնեն, ինչպես ուզում են։

Հաջողությունից թև առած ասպետությունը ժակերիային խեղդեց արյան մեջ։

Ֆրուասսարը, վոր այնքան շատախոս է գյուղացիների դաժանությունները հաղորդելիս, Մոյի պաշարման նկարագրության վերջում համառոտ ասում է. «Մոյում կրած պարտությունից հետո վիլլանները[38] այլևս վոչ մի տեղ չեյին հավաքվում, վորովհետև դը Կուսի սիրը յուր մոտ հավաքեց բազմաթիվ ազնըվականներ, վորոնք նրանց անողորմ և անխնա կերպով ջարդում եյին, վորտեղ ել պատահեյին»։ Ազնվական ասպետների վորսորդությունը գյուղացիների հետևից՝ անողորմ եր, իսկ կենդանի մնացած վիլլաններին հարկեցին մեծ տուգանքով, վորը նրանց մատնում եր գերմարդկային կարիքի։

Սրանից հետո, հարյուրամյա պատերազմների տևողության ժամանակաշրջանում, ելի բռնկում եյին առանձին, շատ ավելի թույլ ապստամբություններ, այսպես կոչված՝ «մանր ժակերիաներ»։

Ֆրանսիայում փոթորիկը հանդարտվելուց հետո, շուտով ամպերի վորոտ լսվեց ծովի մյուս կողմից։

Ֆրանսիայի և Անգլիայի հարյուրամյա պատերազմը, վոչ միայն ֆրանսիական ժակերին մոլեգնության հասցրեց, այլև քայքայեց անգլիական ժողովրդական ստորին խավերը։ Անգլիական կառավարության չտեսնված չափով յերկարաձգված արկածախնդրությունը շարունակ նոր և նոր փող եր պահանջում, վոր պարտավոր եյին վճարել նույն իրավազուրկ և թալանված մասսաները։

Ընդհանուր տուրքը ռազմական կարիքների համար—նոր

տուրք, որ որոշեց պառլամենտը 1381 թվականի նոյեմբերին—կառավարչական բախտախնդիրների անպատկառ թալան էր։

Նա մի կայծ էր, որին հետևեց գրանդիոզ բռնկումը։

Տուրքը վատ էր հավաքվում և մի քանի պալատական հարուստներ թագավորից կապալով ստացան ապառքների հավաքումը։ Զինվորական ուժերի օգնությամբ, կապալառուների գործակալները սկսեցին խուզարկություններ կատարել և քամել ապառքները՝ «անմարդավարի վարվելով ժողովրդի հետ և հասցնելով նրան վիրավորանքներ և ճնշումներ։

Ապստամբությունն սկսվեց Եսսեքսում. ժողովրդական ամբոխները կոտորեցին հարկահավաքներին և նրանց՝ ձողերի վրա անցրած գլուխները, ման էյին ածում քաղաքում։ Իշխանությունններն ու դատավորները փախան։

Եսսեքսներն իրենց մարդկանց ուղարկեցին հարևան գավառները, կոչ անելով միանալ իրենց հետ, որպեսզի «ձեռք բերեն ազատություն և փոխեն թագավորությունն ու նրա վատ սովորույթները»։

Կենտի բնակիչներն առաջինն արձագանքեցին Եսսեքսների կոչին։

Ժողովրդական յերկու հոսանք, ձյան հյուսի նման, շարժվեցին դեպի Լոնդոն—Կենտցիները հարավ արևելքից և Եսսեքսները՝ հյուսիս արևելքից. նրանք գլորվում էյին՝ արագ աճելով, որպես ձնագնդեր։

Սկզբում անկազմակերպ և անձև՝ գյուղացիների, բատրակների և քաղաքային պլեբսի մասսան, ընդունում էր ռազմական գուզագների (դրուժինա) անհրաժեշտ կերպարանք և գտավ տաղանդավոր առաջնորդներ, որոնց՝ հեղափոխական ալիքը բարձրացրեց կատարը։

Մայրաքաղաքի ճանապարհին ինսուրգենտները[39] գրավում էյին վանքերն ու կալվածները, ավերում և կողոպտում էյին կալվածատերերի տները, քաղաքներում ավերում էյին ժողովրդին ատելի մարդկանց տները. խոռվարարները բաց էյին անում բանտերը և բանտարկյալներին ազատ արձակում։

1381 թվականի հուլիսի 11 և 12-ին, Կենտցիները, Ուոտ Տայլերի և Ջոն Բոլլի գլխավորությամբ և Եսսեքսները, Թոմաս Ֆարրինգտոնի առաջնորդությամբ՝ մոտեցան Լոնդոնին։

Հետևյալ առավոտյան, հուզված բազմության առաջ Ջոն Բոլլը—«այդ խելագար տերտերը Կենտյան կոմսությունից», ինչպես անվանել է նրան մեր ծանոթ Ֆրուասսարը, արտասանեց յուր նշանավոր քարոզը։

«Անգլիայի վորոմները նրան ճնշող վարիչներն են, և հասել է հնձի ժամանակը, յերբ բոլորի պարտականությունն է հավաքվել և հաշիվ տեսնել բոլոր չար կալվածատերերի, անիրավ դատավորների, որենսգետների և այն բոլորի հետ, ովքեր վտանգավոր են ընդհանուր բարիքի համար։ Այն ժամանակ միայն նրանք հանգստություն ձեռք կբերեն ներկայում և վստահություն՝ ապագայում։ Վորովհետև, յերբ այս աշխարհի մեծերը վոչնչանան, բոլոր մարդիկ կսկսեն օգտվել միանման ազատությամբ, միանման նշանավորությամբ, արժանապատվությամբ» և իշխանությամբ»—այսպես է հաղորդում Բոլլի խոսքերը տարեգիրը։

Բայց խռովարարները դեռ ևս չեն հասկացել հիմնականը —վոր իշխանությունը և այս աշխարհի մեծերը վտանգի հանդեպ միշտ համախմբվում են. մի յեն նրանք կռվի մեջ ժողովրդի դեմ։ Ապստամբները պահանջում են Թալանչի—իշխաններին՝ Լանկաստերի հերցոգի և արքեպիսկոպոս Սեդբերի հանձնումը և հույս ունեն Թագավորի արդարամտության վրա։ Սրա համար նրանք շուտով խիստ կպատժվեն։

Ռիչարդ Թագավորն ընդամենը տասնչորս տարեկան է, բայց նա Թագավոր է և վայ ռամիկներին, վորոնք համարձակվում են յերազել ազատության մասին և ցնցել աստծու հաստատած իշխանությունը։

Յերեք հանդիպում ունեցավ Ռիչարդը ապստամբ ժողովրդի հետ։

Առաջին անգամ Թագավորը շքախմբի հետ նավակներով ցած իջավ Թեմզայով դեպի ճամբարը՝ յուր ժողովրդի հետ խոսելու համար։

Աղմուկ, զենքերի շաչյուն, սպառնալիքների հետ խառն աղաղակներ նրա խորհրդականների հասցեյին, վախեցրին Ռիչարդին և նա, օգտվելով մթությունից, յետ փախավ Լոնդոն, պալատ։

Ապստամբները գիշերը մտան մայրաքաղաք, հրդեհեցին Լանկաստերյան հերցոգի պալատը և ավերեցին Տեմպլը։[40] Թա-

գավորը հասկացավ, վոր իր պալատի պատերը չափազանց թույլ արգելքներ են. նա չի կարող խուսափել յուր «զավակների» հետ տեսակցելուց։

Թագավորի յերկրորդ հանդիպումը հպատակների հետ տեղի ունեցավ քաղաքի պարիսպներից դուրս։ Ռիչարդ Թագավորի առաջ յելավ չթագադրված առաջնորդը—Ուոտ Տեյլորը. նա բացատրեց անգլիական գյուղացիության պահանջները՝ բոլոր ֆեոդալական տուրքերը պիտի վերանան, հողի հետ կապված ճորտերն ազատ դառնան, առուծախսի բոլոր սահմանափակումները պիտի վոչնչանան, շուկայի արտոնյալ տեղերի մենավաճառը վերանա։ Ապստամբությունն արդարացի յե և հաղթել է, ուստի այս որերին գյուղացիների բոլոր կատարածը պիտի մոռացության տրվի։

Յելք չկար, Թագավորը համաձայնեց բոլորին, գրագիրների գործն է պատրաստել կառավարական վավերագրերը, վոր կվավերացնի նորին մեծությունը։

Պահանջների մի կետ մնաց, դա անիրավ խորհրդատուների պատիժն եր, Թագավորն այս հարցում աննպատակ տատանվում եր, վորովհետև ժողովուրդն յուր վրա յեր վերցրել դատավորի և դահճի դերը։ Շուտով արքեպիսկոպոսի, գանձապետ Հելսի, գլխահարկի որենքի հեղինակներ՝ Եպլտոնի և Լեջի գլուխները ձողերի ծայրին՝ բարձրացան Լոնդոնի կամուրջի դարպասի վրա։

Յերրորդ և վերջին տեսակցությունը տեղի ունեցավ հունիսի 15-ին. այդ որը Սմիտֆիլդյան մարգագետնի վրա վորոշվեց ապստամբության բախտը։

Նորից Տայլերը դուրս յեկավ Թագավորին հանդիպելու և խոսեց ապստամբների անունից։ Նա հավատում եր յուր և գյուղական զորքի ուժին և հայտնեց նոր պահանջներ, «յեկեղեցական հողերի բռնագրավում, յեպիսկոպոսության վերացում, վորսորդական որենքի վոչնչացում և բոլոր դասակարգերի լիակատար հավասարեցում»։

Ազնվական և Թագավորական իշխանության հիմունքները տատանվում եյին, կորուստ եր սպառնում այն կարգերին, վոր հավիտենական եյին թվում։ Անգլիան չտեսնված սոցիալական հեղաշրջման նախորյակին եր գտնվում։

Միայն սրի վրա կարող եր հենվել ցնցված գահը—սրի

յերեք հարված կարճեցին Ուոտ Տեյլորի կյանքը Սմիտֆիլդյան մարգագետնում։

Խաբեբայությունն ու դավաճանությունը ցրեցին ապստամբներին։ Միակ մի բան էր մնում նրանց—հավատ դեպի թագավորական խոսքը և նրա կնիքով կնքված գրերը։

Բայց հրատարակվեց հրովարտակ, որով անվավեր հայտարարվեցին թագավորի՝ պառլամենտի կողմից չհաստատած խոստումները։ Պառլամենտը 1381 թ. նոյեմբերին, թագավորի հաճությամբ, յերիտասարդ Ռիչարդի խոստումները չ՛հաստատեց։

Ապստամբության առաջնորդներին վիճակվեց մահ, իսկ գյուղացիներին՝ ճորտական դրություն։

Գետինն ամենուրեք յերերվում է. հաճախակի և ավերող են ստորերկրյա հարվածները։

Համարյա նույն այդ ժամանակ, յերբ ապստամբվում են անգլիական հողագործները, հեռու Իտալիայում, հարուստ արդյունաբերական քաղաք Ֆլորենցիան դարձավ ցնցող դեպքերի ասպարեզ, դեպքեր՝ այնքան անհավանական, որ թվում է, թե այդ քաղաքը դուրս է խլված ֆեոդալական դարաշրջանից և փոխադրված XIX դարը։

«Իտալիայում, որտեղ կապիտալիստական արտադրությունն ամենից վաղ է զարգանում, ամենից վաղ էլ քայքայվում են ճորտային հարաբերությունները։ Ճորտն այնտեղ ազատագրվում է նախ քան կարողանում է ապահովել յուր համար հողի վաղեմիության որևէ իրավունք։ Այս պատճառով ազատագրումն ամիջապես նրան դարձնում է հասարակությունից դուրս դրված մի պրոլետար, որը բացի սրանից իսկույն նոր տերեր է գտնում քաղաքներում, որոնք մեծ մասամբ պահպանվել են դեռ ես հռոմեական ժամանակաշրջանից ի վեր»*)։

Սրա մեջ է այն բանի գաղտնիքը, որ չոմպիների ապստամբությունը Ֆլորենցիայում՝ առաջին բանվորական ապստամբությունն է, և որ նա ընթանում և հանգչում է հենց քաղաքի մեջ, չներգրավելով յուր շրջագծի մեջ գյուղացիական ազգաբնակությունը։

XIV դարում Ֆլորենցիան յերիտասարդ, հարուստ, բուր-

---

*) Կարլ Մարքս—Կապիտալ հ. I, գլ. 24.

ժուական հանրապետություն։ և Լավագույն մահուդները պատրաստվում են այդ քաղաքում, որ ամենուրեք գնում են հաճույքով—Եվրոպայում և նույնիսկ Արևելքում։ Շատ փող է հոսում Ֆլորենցիա, նա ամբողջ Արևելքի և հենց պապական աթոռի բանկիրն է։

Ֆեոդալական արիստոկրատիան, որի շահերի համար անմահ Դանտեն 1289 թվականին Կամպալդինոյի մոտ կռվում էր ֆլորենտինյան զորքերի առաջին շարքերում, հեռացրած է իշխանությունից։

Ֆլորենտինյան շքեղ նավի կապիտանը «պարարտ ժողովուրդն է»— յոթ ավագ ցեխերը, որոնք պարփակում են ազգաբնակության ամենաունևոր մասը՝ բանկիրներ, մահուդագործ—արդյունաբերողներ, բուրժուական մտավորականություն։

Մանր և միջին բուրժուազիան, որ կազմակերպված է 14 կրտսեր ցեխերում, նոր միայն սկսել է կռվել իշխանությանը մասնակցելու, յուր շահերի ներկայացուցչության համար։

Անկազմակերպ աշխատավոր մասսաները՝ «վտիտ ժողովուրդը», մահուդի արհեստանոցների իրավազուրկ պրոլետարները, նայում էին տերերի տուրուդմփոցին և իրենց ժամին սպասում։

Սկսվեց սովորականի պես. կրտսեր ցեխերի մանր և միջին բուրժուազիան, Սիլվեստր Մեդիչիի գլխավորությամբ, խոշոր բուրժուաների իշխանության դեմ ապստամբություն բարձրացրեց, բայց յուր նպատակների համար պետք է օգտագործեր նաև բանվորական մասսային։ Քաղաքային չքավորությունը փողոց դուրս եկավ և սկսեց դատ տեսնել ատելի հարուստների հետ։ Վախեցած մանր բուրուժաները հաշտվեցին քաղաքի տերերի հետ, որոնցից նրանք ձեռք բերին մի քանի զիջումներ և հարձակվեցին իրենց յերեկվա ոգնականների վրա։

Ֆլորենցիայի բանվորական մասսաները—ինչպես նրանց կոչում էին՝ չոմպիները (քրջոտներ) հասկացան, որ վոչ վոքի վրա հույս չպիտի դնեն, բացի իրենցից։

1378 թվականի հունիսի 20-ի գիշերը, կոչնակի հնչյունների տակ, զինված մասսաները մոտեցան սինյորային[41] և ամբողջ քաղաքում «կրակ և արյուն» աղաղակներով, հրդեհի մեջ վոչնչացնում էին հարուստների տներն ու գույքը։

Հետևյալ որը գրոհով վերցրին քաղաքագլխի դղյակը և պաշարված սենյորիան համաձայնեց չոմպիների պահանջներին՝ սահմանել յերեք նոր ցեխ, վորոնց մեջ պիտի մտնեն այն աշխատավորները, վորոնք մտած չեն ցեխերի մեջ, սենյորիայի մեջ յերկու անդամի տեղ տալ ցածր դասակարգին, ազգաբնակության մեջ հավասարապես բաժանել հարկերի ծանրությունը և այլն։

Սարսափած պարագլուխներն ամեն ինչի համաձայնեցին, բայց բանվորները չեյին հավատում վաճառվող և ուխտադրուժ սենյորիային և, ցրելով նրանց, իրենց առաջնորդ և Ֆլորենցիայի դիկտատոր ընտրեցին նախկին զինվոր Միքելե Լանդոյին։

Հունիսի քսաներկուսին հանրապետությունը բանվորների ձեռքին եր։

Ամբողջ յերկրում պտտում եյին տագնապալի լուրեր, ասում եյին, վոր ամբոխը քաղաքը քարուքանդ ե արել, վոր բոլոր հարուստներն սպանված են, վոր կողոպտված են համարյա բոլոր տները։ Իտալական բուրժուազիայի յերկյուղը զարմանալի չի, վորովհետև առաջին անգամն եր բանվորական դասակարգն իշխում քաղաքի վրա։ Բայց մինչև անգամ ապստամբության թշնամիները պետք ե խոստովանեյին, վոր այդ բոլոր սարսափները վախեցած բուրժուազիայի հնարած դատարկ սուտեր են — քաղաքում կարգ կար։ Մի ժամանակակցի նամակում այսպես ե ասված.

«Փոշու մեջ չի թաղված Ֆլորենցիան, արյունով չի ողողված, ամայացրած չի գիշատիչների ձեռքով։ Անվնաս կանգնած են տները, կանգուն են բարձր պալատները, հարստությունները պահպանված են և համարյա բոլորի գույքն անվնաս ե։ Քաղաքը լի յե ժողովուրդով։ Ինչ վոր այստեղ կատարվել ե՝ բռնության, և վոչ դժբախտության համար ե։ Ցեվ կռիվը վոչ թե ավարի, այլ իշխանություն ստանալու համար ե յեղել։ Կողոպտողներին յերբեք չեյին տալիս, այլ նրանց սանձարձակությունը ճնշում եյին»։

Բայց վերցնելով իշխանությունը, Ֆլորենցիայի բանվորները չկարողացան պահել այն, չկարողացան իրենց ստրկացնող-

ների դիմադրությունն ընկճել և նրանց իշխանության վերադառնալու ճանապարհը կտրել, չկարողացան մինչև անգամ զենքը պահել իրենց ձեռքին։

Միքելե Լանդոն դուրս յեկավ դավաճան և ունենգատ։ Նրա աջակցությամբ եր պատրաստվում որինավոր իշխանության կազմակերպումը բուրժուազիայի մասնակցությամբ, փաստորեն՝ իշխանության վաճառումը բուրժուազիային։ Չոմպիներն ուշացնում եյին վճռական հարվածը, իսկ նրանց յերեկվա առաջնորդ Լանդոն շտապ զորքերն ի մի յեր հավաքում՝ բուրժուական կարգերի պաշտպանության համար։

Վերջին ճակատամարտը տեղի ունեցավ օգոստոսի 31-ին։ Քաղաքի կենտրոնական հրապարակում շարվեցին զինված ցեխերը, չոմպիների ուժերը կենտրոնացան քաղաքի ծայրամասերում։ Կանոնավոր հետևազորը և հեծելազորը հարվածեց անհմուտ և զուրկ փորձառու առաջնորդներից չոմպիներին և ջարդեց նրանց։ Բուրժուազիան հաղթանակում ե, ունենգատ Մեքելեն հաղթական յերթով, զորքի գլուխ անցած, սենյորիայի շենքից շարժվում ե ամբոխների աղաղակների տակ։

Չոմպիների ապստամբությունը նշանավոր յերևույթ ե։ Բայց սա XIV դարի քաղաքային պլեբսի միակ բունտը չի բնավ։ Պատմությունը մեզ քիչ քանակությամբ տվյալներ ե թողել հեղափոխական շարժումների մասին միջնադարյան քաղաքներում, իսկ բուրժական պատմագրերը խնամքով նրանց մի կողմ եյին թողնում. բայց և այնպես մենք կարող ենք պատմել մի ուրիշ բանվորական բունտի մասին, դուցե պակաս փայլուն, բայց դրա փոխարեն՝ ավելի յերկարատև։

Այդ տեղի ունեցավ Թեսալոնիկայում, Կոստանդնուպոլսից հետո, յերկրորդ առևտրական նավահանգստում։ Հունական այս քաղաքի ծովային առևտուրը միջազգային բնույթ եր կրում. «Թեսալոնիկայի շուկայում կարելի յե գտնել Յեվրոպայի բըրդեղեն և վուշե գործվածքներ (ֆլանդրական, ֆրանսիական, տոսկանական), գինիներ և իտալական բուսական յուղեր, Վենետիկի և Անկոնայի ոճառներ և նույնպես Ասիայի և Հունաստանի ամենատեսակ հագուստներ և գործվածքներ»։ XII դարի աղբյուրները Թեսալոնիկան անվանում են ամբողջ աշխարհի

ամենահայտնի քաղաքը և նրա ազգաբնակությունը հաշվում են յերկու հարյուր հազար մարդ (թիվն անկասկած չափազանցված է)։

XIV դարի սկզբին այդ քաղաքում դասակարգային շերտավորումը պակաս հեռու չեր գնացել քան Ֆլորենցիայում։ Մի կողմը կանգնած եր հզոր առևտրական և վաշխառուական կապիտալը, մյուս կողմը՝ պրոլետարացած արհեստավորների և նավահանգստային բանվորների բավականաչափ մասսաներ և նավաստիների կորպորացիաներ։ Ժողովրդական այդ ցածր դասն ուներ յուր զելոտների կուսակցությունը և յուր առաջնորդները. նրանք կազմակերպված եյին՝ ահա գլխավորը։

Յերբ քաղաքական բարեհաջող հանգամանքներ դասավորվեցին, մասսաները՝ զելոտների ղեկավարությամբ, ձեռք բերին հեղափոխական հաղթանակ և գրավեցին իշխանությունը։

Բյուզանդական գահի յերկու թեկնածու՝ Պալեոլոգների ընտանիքի օրինավոր ժառանգը և փոքրասիական խոշորագույն հողատեր Կանտակուզինը, 1341 թվականին, իշխանության համար կռիվ եյին մղում։ Այդ դինաստիական կռիվը Թեսալոնիկայում արագությամբ փոխվեց քաղաքացիական կռիվների. Ժողովրդական մասսաները, զելոտների ղեկավարությամբ, ջախջախեցին ֆեոդալական բարձր դասը և հաստատեցին մասսաների դիկտատուրա։ Դիկտատուրան հենվում եր ահաբեկման վրա, վորն անհրաժեշտ եր, վորովհետև քաղաքին սպառնում եյին Կանտակուզինի զորքերը, նրա կանչած սերբիական և թյուրքական ինտերվենտները և հունական ֆեոդալները։

Հերոսական քաղաքը դիմադրում եր ութ տարի և միայն 1349 թվականին զելոտների իշխանությունն ընկավ թյուրք—օսմանների ուժի ճնշման տակ, վորոնք Թեսալոնիկան նորից յենթարկեցին Բյուզանդիայի կենտրոնական իշխանությանը։

Ժամանակակիցներից մեկը—Գրիգոր Պալաման—ասում է. «զելոտների կարգերը—ամբոխի առաջին անգամ յերևացած իշխանությունն եր, կարգեր, վորոնք նոր եյին ծնվում և մարդ չեր կարող կշռադատել»։

Զելոտների ծրագրի հիմնական կետերը արժանի յեն զարմանքի—այդ մարդիկ իրենց ժամանակից շատ առաջ եյին ընկել։

Ջելոտներն իշխանության մասին ասում եյին, որ նա ստեղծվում է ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներից, չսահմանափակված ցենզերով և դասերով։ Այդ իշխանությունը, հիմնըվելով մասսաների աջակցության վրա, կարող է և պետք է լինի դիկտատուրական։ Այդպիսի իշխանության իրավունքն է բռնի կերպով վերցնել հարուստների կայքը և գործադրել հասարակական կարիքների համար։ Արտոնյալ դասեր գոյություն չունեին։ Հարուստ ազնվականների գույքը, նույնպես վանքերինը և յեկեղեցիներինը, անձեռնմխելի չեն, դրանք բոլորը պատկանում են ժողովրդին։

Ջելոտների հեղափոխական իշխանությունն էլ կործանվեց —ժողովրդապետության ժամանակը դեռ չեր հասել։

Բայց անընդհատ առաջանում են նորանոր հարվածներ և ցնցումներ այն կարգերի, վորոնք հիմնված են բռնության և թալանի վրա։ XV դարը հարուստ է հեղափոխական բռնկումներով Չեխիայում և Գերմանիայում։

Չեխական գյուղացիական պատերազմները կոչվում են «հուսյան», կրոնական ռեֆորմատոր Յան Հուսի[42] անունով։ Հուսի ուսմունքը Կոստանցիայի ժողովում դատապարտվեց, վորպես հերետիկոսական և նա ինքը մեռավ խարույկի վրա 1415 թվականին։

Բայց Հուսի անունը միայն դրոշ եր, կրոնական հարցերը շարժման ծածկոց միայն. հուսյան պատերազմները շատ ավելի խոր սոցիալական պատճառներ ունեյին և տարվում եյին այլ նպատակներով։

Չեխերը պայքար սկսեցին կաթոլիկական յեկեղեցու դեմ, սա ամբողջ ժողովրդի պայքարն եր, վորովհետև բոլորը՝ սկսած խոշոր ֆեոդալներից և վերջացրած գյուղացիներով, յենթակա եյին կաթոլիկ հոգևորականության կեղեքման, վորը տիրում եր չեխական թագավորության հողային տարածությունների համարյա չորրորդ մասին և կենտրոնացրել եր յուր ձեռքին հսկայական հարստություն։ Պայքարի ընթացքում բոլորը միասին եյին՝ և՛ հարուստ ֆեոդալները, և՛ մանր ազնվականությունը, և՛ գյուղացիները, բայց հաղթությունից հետո, աշխարհական խոշոր կալվածատերերը ձեռք գցեցին վորսը. գյուղացիներին և մանր կալվածատիրական ասպետներին յեկեղեցական ռեֆորմը վոչինչ չավեց։

Ընդհակառակը՝ գյուղացիների դրությունը խիստ վատացավ շնորհիվ դրամական տուրքի դրույքի և գների բարձրացման, վորն առաջացավ Չեխիայում արծաթի հանույթի լայն զարգացման հետևանքով։

Գյուղացիությունը, վորն առաջ աջակցում էր ազնվական կուսակցությանը՝ դարձավ նրա դեմ, իսկ մանր ազնվականությունն որորվում էր յերկու թշնամի բանակների միջև՝ միանալով մերթ մեկին, մերթ մյուսին։

Գյուղացիական կուսակցությունը տաբորյան անունն ընդունեց։ Տաբոր լեռը դարձավ հեղափոխական գյուղացիների ամրացված ճամբար և նոր ուսմունքի կենտրոն։ Այնտեղ էյին հավաքվում բոլոր զրկվածներն ու ճնշվածները, գալիս էյին փախած գյուղացիները, հողազրկված հողագործները, քաղաքային պլեբսը, հարուստ ֆեոդալներից քայքայված մանր ազնվականները։ Ապստամբներին ոգնություն էյին ցույց տալիս արծաթահանքերի բանվորները, վորոնց աշխատանքի պայմանների ծանրությունը գերմարդկային էր։

Այս բազմաբնույթ մասսան ընդհանուր նպատակներ ուներ, վորոնք միացնում էյին նրանց—խոշոր ֆեոդալներից խլել կալվածները և քաղաքներում հաստատել արհեստավորական աշխատանքի ավելի հավասար պայմաններ։ Բայց նրանց միասնականությունը միաժամանակ բաժանվում էր մի շարք ներքին հակասություններով, վորոնց շնորհիվ նրանք միայն ժամանակավոր ուղեկիցներ էյին։

Տաբորիտների մեջ ավելի և ավելի նշանակություն էր ձեռք բերում կոմունիստական ուսմունքը*)։

Քարոզիչների խոսքերը՝ քրիստոսի հազարամյա թագավորության շուտով գալու մասին, վորտեղ վոչ աղքատ կլինի, վոչ հարուստ, վոչ ծառա, վոչ տեր—ուսմունք՝ սեփականության

*) Կոմունիստական գաղափարները, վոր տարածվեցին տաբորյանների մեջ (գլխավորապես ընչազուրկ մասսայի), ուտոպիական կոմունիզմի բնույթ էյին կրում և ունեյին վորոշակի կրոնական գունավորում։ Նրանք համապատասխանում էյին գյուղացիների և քայքայվող արհեստավորների տրամադրության, բայց վո՛չ պրոլետարիատի։ Ժամանակակից հեղափոխական և գիտական կոմունիզմը միանգամայն տարբեր է սրանից, վորը, ըստ էության, աղանդավորական կոմունիզմ է։ Ֆ. Է.

լիակատար վոչնչացման և տնտեսական անհավասարության վերջնական բնաջնջման—գրավում եյին աղքատ գյուղացիներին, հանքերի բանվորներին և քաղաքային պլեբսին։

Բայց մինչև անգամ գյուղացությունն ու աղքատ արհեստավորները, սրանք բոլորը սեփականատերեր եյին և մինչև վերջը գնալ այս կոմունիստական լոզունգների հետևից չեյին կարող։ Վաղ թե ուշ տաբորյանների ներսում ճեղքվածք պիտի առաջանար։

Կաթոլիկական յեկեղեցին չեր ցանկանում այսքան հեշտ կերպով բաժանվել յուր տիրապետություններից և թույլ տալ Հուսի հերետիկոսական ուսմունքի տարածումը Չեխիայում։ 1420 թվականի մարտին պապն սկսեց խաչակրաց արշավանքի կոչ անել հավատարիմ քրիստոնյաներին բոհեմյան հերետիկոսների դեմ։ 150 հազար ասպետներ, վարձկաններ, բախտախնդիրներ և ջերմեռանդ կաթոլիկներ՝ հրապուրված մեղքերի թողությամբ, շարժվեցին հուսյանների վրա։ Այդ վտանգի հանդեպ, տաբորյանները կալիկստինների հետ (ազնվական հուսյան կուսակցություն) դուրս յեկան պաշտպանելու յերկիրն ու ժողովրդին։

Տաբորյանները, վորոնց առաջնորդում եր Հարյուրամյա պատերազմի վետերան Յան Ժիժկոն, հիանալի հետևազոր եյին՝ կռած խստագույն դիսցիպլինայով։ Տասը տարի տևեց դաժան պայքարը և, վերջապես, 1431 թվականին, Տաուսի ճակատամարտում խաչակիր զորքը անփառունակ կերպով ջարդվեց։ Պապը և թագավորը հարկադրված եյին զիջումների գնալ—յերկու տարուց հետո կնքվեց խաղաղությունը—«Պրագայի կոմպակտները», վորով թալանած յեկեղեցական գույքը մնաց ազնվականությանը, և հուսյաններն իրավունք ձեռք բերին ժամերգությունը կատարել չեխական լեզվով և յերկու ձևի հաղորդություն ստանալ։

Հենց այդ ժամանակ ել ճեղքվածք առաջացավ իրենց տաբորյանների մեջ և ավելի չափավոր խավերը յետ քաշվեցին։

Կալիկստինյաններն ոգտագործեցին իրենց համար այս բարենպաստ դրությունը՝ ձախ տաբորյաններին վոչնչացնելու համար, վորոնք իրենց կոմունիստական ուսմունքով սպառնում եյին ամենասուրբ մասնավոր սեփականությանը։ 1434 թվականի մայիսի 30-ին, Լիպարի մոտ, տաբորյանների տասնութ

հազարանոց զորքը հանդիպեց կալլիկստյանների քան հազարանոց բանակին: Ճակատամարտը տևեց որուգիշեր և համառ ու դաժան եր—տաբորյանների տասներեք հազար դիակ ընկավ պատերազմի դաշտում: Վերջացավ միջնադարյան հեղափոխական դրամայի ևս մի գործողությունը:

Գերմանիան տնտեսապես հետամնաց յերկիր եր վոչ միայն Իտալիայի համեմատությամբ, այլև Ֆրանսիայի և Անգլիայի, ուստի գյուղացիական ապստամբություններն այնտեղ ավելի ուշ են բորբոքվում: 1391 թվականի գյուղացիական բունտը Գոտի շրջանում մեկուսի չեր և կարճատև: Տաբորյանները, վորը ցրիվ եյին յեկել Գերմանիայում լիպարյան պարտությունից հետո՝ Գերմանիա մտցրին կոմունիստական ուսմունքը—1446 թվականին Վյուրցբուրգյան յեպիսկոպոսության մեջ բուն դրին խռովարար հուսյանները. 1496 թվականին նույն տեղում ասպետները ջարդեցին շատ բունտարար գյուղացիների, վորոնց վոտքի յեր հանել Հանս Դուդարը:

Գերմանիայում գյուղացիական պատերազմի հզոր մրրիկն անցավ արդեն Գուտենբերգի մահից հետո, հասնելով յուր գագաթնակետին 1525 թվականին:

Միջնադարյան Յեվրոպայի վրա տարածված եր մութ գիշեր, հորիզոնը տեղ-տեղ լուսավորում են ժողովրդական ապստամբությունների հրդեհները, ոդը հեղձուկ ե և ծանր:

Բայց հասարակության ֆեոդալական զարգացման գիծը կոտրվում ե—փողն ու առևտուրը ավելի և ավելի մեծ իշխանություն են ստանում, արհեստը ձևափոխվում ե մանուֆակտուրայի՝ կապիտալիստական արդյունաբերության ուղին պատրաստելու համար: Ծնվում ե բուրժուազիան, վոր կվերաշինի աշխարհը յուր պատկերի նման—կվերագծի պետական սահմանները, կփոփոխի ջրաբաժան գծերը դասակարգերի և դասերի միջև և կհաստատի նոր իշխանություն, յուր իշխանությունը կապիտալի և բորսայի: Ֆեոդալիզմի յերազները՝ կայսրների համաշխարհային տիրապետության և պապի տիեզերական գլխավորության մասին, արդեն խորտակվեցին և յերբեք հարություն չեն առնի:

Մինչև անգամ Գուտենբերգի որերին կայսրը և պապը լոկ

ուրվականներ են, անզոր ստվերներ, հանդեպ ծնվող ազգային թագավորների և յերկրային իշխանների ուժի և նոր բուրժուական դասակարգի իշխանության։

Ենեյ Սիլվիուս Պիկոլոմինը գրում է այդ օրերին՝

«Պապը և կայսրը հպարտանում են իրենց բարձր դիրքով, բայց նրանք վոչ այլ ինչ են, յեթե վոչ փայլուն ուրվականներ. նրանք ընդունակ չեն հրամայելու և հպատակվել չեն ցանկանում. ամեն պետություն ունի առանձին միապետ և այդ միապետներից ամեն մեկն ունի առանձին շահեր։ Ո՞ւմ ճարտարախոսությունը կարող կլինի մի դրոշի տակ միացնել այսքան տարբեր և միմյանց հետ թշնամություն անող ժողովուրդներին»։

Վաղուց և անդարձ կերպով անցել են Գրիգոր VII և Իննոկենտիոս III հսկա պապերի ժամանակները, վորոնք իրենց ձեռքին բռնած ունեյին տախտակներ, վրան գրված.

«Միայն պապը կարող է կարգադրել կայսերական արժանապատվության նշանները».

«Պապը կարող է գահազրկել կայսրներին», իսկ իրականում կայսրներին և թագավորներին հրամայողներին։

Չեն վերադառնա նաև Կառլոս և Ֆրիդրիխ Բարբարոսա կայսրները. նրանց գահի վրա չե Ֆրիդրիխ III-ը — թույլ իշխանությամբ և գլխով։

Վերևում ֆեոդալական իրավակարգի գերագույն գլուխների ուրվականներն են միայն, իսկ ներքևում՝ ֆեոդալիզմի յերերվող շենքը։

Աշխարհը մարդկային պատմության նոր գլխի նախորյակին է, բայց միայն նախորյակին — նոր իրավակարգի ծնունդը կլինի ցավագին և յերկարատև։

IX. ՎԱՌՈԴ, ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ, ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ

Յոհան Գենսֆլեյշ—Գուտենբերգի ստեղծագործությունը վիթխարի չէ, այնքան վիթխարի, որ մեր օրերին դժվար է չերևակայել նրա վեհությունը XV դարի սոցիալական և իրային շրջապատման մեջ։ Հիշենք կուլտուրայի միջնադարյան աղջամուղջը, գիտության լճացումը, արհեստավորական տեխնիկայի մանկական դրությունը և տնտեսական զարգացման ցած մակարդակը—այդ ֆոնի վրա տպագրության գյուտը պատկերանում է վիթխարի սրածայր գագաթի նման՝ վեր բարձրացրած մարդկային հանճարով։

Տպագրության գնահատումը՝ նրա գյուտի հետևանքների տեսակետից մարդկության համար, էլ ավելի ռելյեֆ կերպով է ընդգծում Գուտենբերգի գործի հոյակապությունը։

Համաշխարհային գիտության և տեխնիկայի նվաճումներից քչերը միայն կարող են դրվել գրատպության հետ մի շարքում՝ իրենց ունեցած ներգործությամբ մարդկային գոյության և հասարակական զարգացման վրա։

Այդ նոր արվեստի մեջ դրված պոտենցիալ ուժերն այնքան մեծ են, որ նա կարող էր առաջանալ և ձևավորվել միայն սոցիալական ստեղծագործական էներգիայի հսկայական կուտակման հետևանքով։

Գուտենբերգի գյուտն աշխարհ է մտնում սոցիալական և տնտեսական ցնցումների փոթորկի և մրրիկի ժամին, նա ինքը հեղափոխական ակտ է՝ յերկաթյա անհրաժեշտությամբ, որ քարշ է տալիս հետևից նորանոր փոփոխություններ։

Ֆեոդալական իրավակարգի սկսված հեղաբեկումը, հասունացող տնտեսական տեղաշարժերը, XIV և XV դարերի ժողովրդական հեղափոխությունները, այն, ինչի մասին, առաջին հայացքից առանց բավականաչափ կապի Գուտենբերգի կյանքի և գործի հետ, մենք խոսեցինք վերևում — այդ բոլորն ստեղծում է գրատպությունը, հաստատում է նրա կեցությունը և դարձնում է նրան գալիք սոցիալական փոփոխությունների հզոր գործիք։

Այսպես և գյուտարարի անձնավորությունը ձեռք է բերում իսկական անկապտելիորեն իրեն պատկանող հզորություն, որովհետև այդ ստեղծագործական նվաճումը արտացոլում է յուր ճառագայթները Յոհան Գուտենբերգի կերպարանքի վրա։

Թող ժամանակը շատ բան ջնջած լինի նրա գործերի ցուցակից. միթե մենք, հանուն արդարության, չպետք է վերականգնենք այդ մարդու պատկերը գույների ամբողջ փայլով։ Կարելի յե այնքան էլ անարդարացի չեն նրանք, որոնք, առանց բավականաչափ փաստացի հիմքերի, փորձում են հաստատել, որ Մայնցում և Ստրասբուրգում ապրելու արանքին գյուտարարը շատ թափառել է, տեսել և ապրումներ է ունեցել։ Բոլորովին անհավանական չէ և այն, որ հենց այդ տարիներին կյանքը նրան բախեց քաղաքային հեղափոխական պլեբսի հետ, ցույց տվեց նրան գյուղացիության ծանր կացությունը, որ կրում էր յուր մեջ պայքարի և բունտարարության անխուսափելիությունը և վերջապես, բացեց նրա առաջ բուրժուական հարաբերությունների սաղմերը, բարձրացնելով Գուտենբերգին շատ ավելի վեր գերմանական միջին քաղաքացու մակարդակից։

Պատմական այն շրջանում, որի մեջ ներփակվում է Գուտենբերգի կյանքը, աշխարհը գտնվում էր մարդկային պատմության նոր գլխի նախօրյակին։

«Թեև կապիտալիստական արտադրության առաջին սաղմերը յերևան յեկան արդեն XIV և XV դարերում Միջերկրական ծովի առանձին քաղաքներում, այնուամենայնիվ կապիտալիստական դարաշրջանի սկիզբը վերաբերում է միայն XVI դարին»*)։

*) Կարլ Մարքս. հ. I, գլ. 24։

Վարպետ Գուտենբերգի գործը պակաս դեր չխաղաց այդ նոր դարաշրջանի նախապատրաստման մեջ։—«Վառոդի, կողմնացույցի և գրատպության գյուտը—բուրժուական զարգացման անհրաժեշտ նախադրյալներն են»։

Կ. Մարքսը, շոշափելով 1848 թվականի հեղափոխությունը, ասաց. «Գոլորշին, էլեկտրականությունը և մանելու մեքենան շատ ավելի վտանգավոր հեղափոխականներ էին, քան քաղաքացիներ Ռասպայլը և Բլանկին»։

Ոչ պակաս իրավունքով կարելի յե պնդել, որ վառոդը, կողմնացույցը և գրատպությունը միջնադարին պակաս վտանգավոր հեղափոխականներ չեյին, քան Ուոտ Տայլերը, Գիյոմ Կալը, Հուսը և Մյունցերը։

Քայքայվող ֆեոդալական իրավակարգի ընդերքում աստիճանաբար ծնվում են բոլոր անհրաժեշտ պայմաններն անցնելու նոր ապրանքա-կապիտալիստական արտադրության՝ բուրժուազիայի հաղթության համար։ Կարծես մի հսկայական անոթի մեջ էլեկտրոդներ են ընկղմել։ Հեղուկը—ֆեոդալիզմի սոցիալական խմբավորումների բարդ խառնուրդը, տարրալուծվում է, զատելով մի բևեռում հողազրկած գյուղացուն, որը վերափոխվում է պրոլետարի, իսկ մյուսում՝ բուրժուազիայի դասակարգը, որ հարստություն է կուտակում՝ արտադրության միջոցները յուր ձեռքը գցելու համար, «ազատելով» նրանից անմիջական արտադրողին։ Ռեակցիան ընթանում է, առաջացնելով բուրժուական հեղափոխության փոթորկալի բռնկումներ։

Եվ ահա վառոդը, կողմնացույցը և գրատպությունը ձգված են այդ անոթի մեջ, որպես քիմիական միացնողներ, որոնց վիճակված է արագացնել պատմականորեն անխուսափելի պրոցեսը։

Վառոդի և կողմնացույցի գյուտի մասին XV դարում ասվում է, իհարկե, միայն պայմանական կերպով։ Այդ ժամանակաշրջանում, արտադրողական ուժերի զարգացման որոշ մակարդակի վրա, նրանք մտան ժողովուրդների կյանքը, որպես հասարակական պրոգրեսի ռեալ շարժող սկզբնավորությունը և տիրապետության ու հպատակության գոյություն ունեցող ձևերի հեղաբեկման գործիքներ։

Վառոդն ու կողմնացույցը հայտնի եյին Չինաստանում դեռ սրանից շատ առաջ։ Կողմնացույցի մասին հաղորդում է մեր թվականության յերկրորդ դարի չինական մի գրվածք։

Յեվ նորից Ասիայի արևելքի և Յեվրոպական ցամաքի միջև, ինչպես թղթի պատրաստման գործում, միջնորդ հանդիսացան արաբները, այդ՝ միջին դարերի գիտության առաջավոր ժողովուրդը։

Փարիզում պահված է Մարկ Գրեկի ձեռագիրը, վորի մեջ առաջին անգամ Յեվրոպայում տեղեկություն կա վառոդի մասին, այդ գրվածքը համարվում է 1450 թվականի։

Վառոդը հեղաշրջում մտցրեց ամբողջ ռազմական գործում։ «Բայց վառոդի և հրազենի կիրարկության մեջ դնելը չէ՞ վոր բռնությամբ չի կատարվել, այլ արդյունաբերական, այսինքն՝ տնտեսական պրոգրեսով։ Արդյունաբերությունը մնում է արդյունաբերություն, անկախ նրանից, թե նա ուղղված է վորևե առարկաների ստեղծման կամ կործանման։ Հրազենի գործադրության մեջ դնելը արմատական փոփոխություններ է մտցնում վոչ միայն ռազմական գործի մեջ, այլ և տիրապետության և հպատակության քաղաքական հարաբերությունների մեջ։ Վառոդ և հրազեն ունենալու համար անհրաժեշտ եր ինդուստրիա և փող. և այս և այն ունեին քաղաքացիք։ Այս պատճառով հրազենը հենց սկզբից քաղաքների և նրանց վրա հենվող միապետական իշխանության գործիքն եր՝ ֆեոդալական ազնվականության դեմ մղած պայքարում։ Առաջվա անմատչելի ազնվական դղյակների քարե պարիսպները խորտակվում եյին թնդանոթների հրետագնդերի հարվածներից, իսկ քաղաքացիների հրացանների գնդակները ծակում եյին ասպետական զրահը։ Ազնվականության՝ զրահով սպառազինված հեծելազորի հետ միասին՝ փլվեց նաև ազնվական իշխանությունը»*)։

Վառոդը շուտով արդյունաբերական գործադրություն է գտնում այն ժամանակվա արտադրության առաջավոր ճյուղում լեռնային գործում։

Հենց այստեղ, առաջին անգամ Յեվրոպայում, առաջանում է աշխատանքի կապիտալիստական կազմակերպումն։

---

*) Ֆրիդրիխ Ենգելս. Անտի-Դյուրինգ. բաժ. II,. գլ. 3.

Կերի հանքերի մասին մեզ հասած վկայությունները (որ վերաբերում են 1455 թվականին) արտադրության կապիտալիստական նոր ձևերի պատկեր են տալիս արդեն, մենք տեսնում ենք վարձու բանվորներ, որ աշխատավարձ են ստանում. աշխատանք հերթափոխությամբ, աշխատանքի և կարգապահության խիստ տնորինություն՝ (регламентация) հանուրդի և տուգանքի սպառնալիքով, գործիքների անվնասության պատասխանատվություն: Այն ժամանակ արդեն այդ բանվորների ցածր մասսայից ջոկվում է որակավորված տեխնիկական պերսոնալ, որը կազմակերպում և ղեկավարում է արտադրության տեխնիկան—«որոնք գործում են կարկինով և քառակուսիով»:

XVI դարի սկզբին հանքահորերն այնքան ընդարձակ էին, որ աշխատանքների ժամանակ վառոդ էր գործադրվում, իսկ բանվորների՝ հանքի մեջ իջնել—բարձրանալը կատարվում էր մեքենաների օգնությամբ, որոնք շարժման մեջ էին դրվում ձիերով կամ ջրի ուժով: Հետաքրքիր է, որ այս նույն հանքերում հանքասրահ փորելիս՝ կողմնորոշման համար կողմնացույց էր գործադրվում:

Արդեն XII դարում կողմնացույցը հայտնի դարձավ յեվրոպացիներին. այդ ժամանակվա պրովանսալական մի գրքում ասվում է. «Յերբ նավորդները մառախլապատ յեղանակին չեն օգտվում պայծառ արևի բարերարությամբ, կամ գիշերային խավարի վրա հասնելով չգիտեն ինչ յերկնային ուղղությամբ է շարժվում նավը, նրանք մագնիսի վրա ասեղ են ամրացնում, որը պտտվում է, մինչև որ նրա սուր ծայրը, շարժումը դադարելուց հետո, ցույց կտա հյուսիսային ուղղությունը»:

Ֆլավիո Ջոյան XIV դարում կատարելագործեց կողմնացույցը, տեղավորելով ասեղը փակ ամանի մեջ և շուրջը նկարած նշանակետերով (հորիզոնը բաժանվում է 32 մասի, որոնք նշանակետ են կոչվում): Այս կատարելագործությունը լայնացրեց կողմնացույցի օգտագործումը ծովագնացության մեջ, որ նավաշինարարության բարելավման հետ միասին հասցրեց մեծ աշխարհագրական գյուտերի, որոնք նույնպես հսկայական դեր խաղացին մարդկային հասարակության վերակառուցման գործում:

Միջնադարյան Յեվրոպայի մեծագույն ծովագնացների— վենետիկցիների և ջենովացիների—գործողությունների շրջանը յերկար ժամանակ սահմանափակված էր Միջերկրական ծովով։

Ջիբրալտարի նեղուցը նրանց թվում էր սարսափելի և վերջին սահմանը, որից դենը խելացնորներին սպասում է անխուսափելի կորուստ, այնտեղ «խաղաղ ծով է, կարծես անծայր, անշարժ վիթխարի զանգված, աչքերի առաջ փռված է մառախուղը և ցերեկը փոխվում է աղջամուղջի, աստղեր չեն յերևում, բացառությամբ մի քանի անհայտների»։

XIV դարում այդ սահմանն անցած է—սա ծովագնացության տեխնիկայի և մասնավորապես կողմնացույցի լավացման արդյունքն էր։ Ջենովացիք գտնում են Կանարյան կղզիները, հետո Մադեյրան և Ազորյան կղզիները։ Այնուհետև առաջին ծովագնացների փառքն իտալացիներից անցնում է Պիրենյան թերակղզու պետություններին, որոնք առաջինը ձեռք գցեցին ամենահարուստ ավարը և գաղութները ովկիանոսների ափերին։

Կոլումբոսի[44], Վասկո-դա-Գամայի[45], Դիացի[46] և ուրիշների հռչակավոր գյուտերն արվեցին XV դարի վերջին տասնհինգամյակում և XVI դարի սկզբին։ Նրանք բոլորովին փոխեցին յերկրագնդի նախկին պատկերը, պատմական ասպարեզ դուրս քաշեցին նոր տնտեսական ուժեր, ստեղծեցին հզոր նախադրյալներ՝ բուրժուազիայի ձեռքում հարստություններ կուտակելու համար։

Բայց այդ հետո յեր, իսկ Գուտենբերգն ուներ մի ժամանակակից—զարմանալի և խելացնոր մի մարդ, որ մտամոլի համառությամբ ձգտում էր ծովեզրեր գտնել—նրան տրված է Հենրիխ Ծովագնաց անունը։

Ինֆանտ*) Հենրիխը պորտուգալական Յոհան թագավորի յերրորդ որդին էր, քրիստոսի միաբանության միաբանապետ, որի տրամադրության տակ էյին այդ միաբանության հսկայական հարստությունները։

Ինֆանտ Հենրիխը սեռուն իղձ ուներ՝ ծովային արշավախմբի կազմակերպում Ատլանտյան ովկիանոսից դեպի Աֆրիկայի

---

*) Արքայազն Իսպանիայում և Պորտուգալիայում.

Ծ. Թ.

ափերը։ Փող շատ կար և յուր պատասխանատվությամբ ու ռիսկով նա սկսում է արշավախմբեր ուղարկել։

Ծովի ափին, Վինցենտ հրվանդանի մոտ է Հենրիխի հարուստ բնակարանը. նա ուսումնասիրում է ճանապարհորդություններ, նկարագրություններ և քարտեզներ, հավաքում է նավորդներ և այնտեղից ամեն տարի յերկու-յերեք անգամ նավեր ուղարկում ովկիանոս։ Բայց Հենրիխի ցնորամտության մեջ կա սիստեմ—նրա նավերը ավելի և ավելի յեն թափանցում դեպի հարավ, գտնում են նոր կղզիներ և առաջ շարժվում աֆրիկական ափերի յերկարությամբ։ Ձեռնարկությունն սկսում է օգուտներ տալ, վորովհետև Ինֆանտի արշավախմբերը, նրա ասելով, նպատակ ունեն նոր յերկրների բնակիչներին դարձնել քրիստոնեյական հավատի, սակայն այդ արշավախմբերը մասնագիտանում են գերիներ վորսալու մեջ։ Այն ժամանակվա մի գրող սրտառուչ կերպով նկարագրում է մի արշավախմբի աջողությունները։

«Վերջապես, տեր աստծուն՝ բարի գործերի տվողին, հաճելի յեր, ծառայության մեջ նրանց կրած բազմաթիվ դժբախտությունների համար, նվիրել նրանց հաղթական օր, փառք՝ նրանց չարչարանքների համար և վարձատրություն՝ վնասների համար, վորովհետև բռնված են ընդամենը տղամարդ, կին և յերեխա 165 գլուխ»։

Գերեվաճառությունն, անկասկած, «նոր յերկրներ գտնողների» բոլոր նավարկությունների ամենաուժեղ խթանող շարժառիթներից մեկն եր։

Ֆերդինանդին և Իզաբելլին գրած տեղեկագրում, Կոլումբոսն ել շեշտում է յուր կենդանի ապրանքի օգտավետ կողմը. նա գովաբանում է յուր գերած կարաիբների ուժը և դիմացկունությունը և առաջարկում ձեռնարկել նրանց կանոնավոր առևտրին։ Յեվրոպայում գունավոր ստրուկները խոշոր մասշտաբով չպատվաստվեցին՝ նրա թույլ արդյունաբերական զարգացման, բանվորների սուր պահանջի բացակայության և կլիմայական անբարեհաջող պայմանների հետևանքով։

Բայց դրա փոխարեն «ստրկական» կապիտալիզմը բարենպաստ հող գտավ յեվրոպական ձեռնարկողների՝ Աֆրիկայի և Ամերիկայի պլանտացիաներում և սակավ դեր չխաղաց բուր-

ժուազիայի համար՝ հարստությունը իր ձեռքում կուտակելու և իշխանությանը տիրապետելու գործում։

Ինֆանտի յերախտիքն անտարակույս այն եր, որ նրա ծառայության մեջ դաստիարակվեցին պորտուգալական ծովագնացների կադրեր, որոնց և պատկանում հետագայում բազմաթիվ համարձակ նավարկությունների և գյուտերի պատիվը։ Ինֆանտի օրով պորտուգալացիները հետախուզեցին Աֆրիկայի ափերն ու կղզիները համարյա մինչև հասարակած։

Հենրիխ Ծովագնացը մեռավ 1460 թվականին։

Այդ ժամանակ գրատպության արվեստն արդեն դարձել եր անվիճելի փաստ, ռեալ ուժ, որին վիճակված եր ցույց տալ յուր հզոր ներգործությունը վիթխարի պատմական հեղաշրջման մեջ։

Գրատպությունը նույնպես, ինչպես և մեծ աշխարհագրական գյուտերը, ուժգին կերպով լայնացնում եր տնտեսական կապերը և ազդեցությունները և՛ մարդկության մտավոր հորիզոնը, և նույնպես, ինչպես վառոդը, պայթեցնում եր տիրապետության և հպատակության գոյություն ունեցող հարաբերությունները և, մասնավորապես, կաթոլիկական յեկեղեցու տիրապետությունը։ Յեթե վառոդն ու կողմնացույցը ավելի վաղ կուլտուրայի նվաճումների ուշագրավ օգտագործումն եյին, հապա գրատպությունը XV դարի գյուտն եր, նրա հսկայական հաջողությունը, հաջողություն, որը հարկադրում ե մեզ առանձին ուշադրությամբ և զարմանքի հարգանքով նայել Գուտենբերգի կերպարանքին—այդ մարդը պատմական ծանրակշիռ խոսք ասաց։

Մի ժամանակ Նապոլեոնը դուրս թռցրեց բազմանշանակալից ֆրազ՝ «Թնդանոթն սպանեց ֆեոդալիզմին։ Թանաքը կսպանի այժմյան հասարակակարգը»։ Անկասկած թանաքը, ոչ այնքան թանաքը, որքան, իհարկե, մամուլը կոչված ե ոչ փոքր դեր խաղալու բուրժուական իրավակարգի քայքայման մեջ։

X. ՅԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԴՐՎԱԾ ՆՈՐԱՎԵՊ

(վորի մեջ պատմվում ե արտակարգ պատահարների մասին մի միջնադարյան վանքում, չհաջողված «արքի» կորուստի յեվ տպագրած գրքի առաջնայի ստեղծագործության մասին)։

Գարնանային արևոտը առնական պայծառություն ուներ․ ծառերի և խոտերի վերածնված կանաչը, գետերի ջրերի բյուրեղը, քարերի և գետնի բազմերանգ բծերը փայլում եյին գույների անկրկնելի թարմությամբ։ Բնությունը շռայլում եր հզոր ուժերի հավելուրդը, թվում եր կյանքի սկզբնական ակունքները բացվել են չեղած ծաղիկներով դեռատի արևի ճառագայթների մեջ։

Վանքի ներսի բակում փթթել են պտղատու ծառերը, կանաչում ե թփուտը։ Նստարանի վրա, արևի տակ տաքանալով, նստած եր մի ծանրամարմին վարդապետ, ջերմությունը գգվում եր նրա ծերացած մարմինը, քաղցրությամբ փակվում եյին հոգնած աչքերը։ Յեղբայր Եվզեբիոսը—արտագրող—հենց նոր եր դուրս յեկել սկրիպտորիայից[48], վորտեղ նա լուսածագից սկսել եր յուր աշխատանքի որը։ Մոտեցող քայլերի ձայնն ընդհատեց նրա նիրհը, լուսնաձև դեմքի վրա բացվեցին աչքերի նեղ ճեղքերը, բերանը ձգվեց սովորական քաղցր ժպիտով։

Եվզեբիոսի առջև կանգնած եր մի պատանի՝ հիվանդությունից չորացած դեմքով, անառողջ կարմրությամբ և ջերմի կրակով աչքերի մեջ․ նրա մաշված, անմաքուր վարդապետական հագուստից հիվանդանոցի սուր հոտ եր փչում։

Երիտասարդ վարդապետը նստեց նստարանին, հաստամարմնի կողքին և սկսեց խոսել տաք-տաք և կցկտուր, կարծես թե նա պետք է պատռեր հուզող մտքերի ձանձրալի վոստայնը, վորոնք կտրում են լույսի առաջը և մոլորեցնում ճանապարհը:

— Դու բարի էյիր ինձ հետ, Եվգեներիոս: Յերբ յես պառկած էյի հիվանդության մահճում, դու ինձ համար կարդում էյիր քո արտագրած սրբերի վարքի մասին: Յես ցնցված էյի: Նրանց բարձր որինակը վերածնեց հոգիս և հիվանդությունը թողեց իմ մեղավոր մարմինը: Յես հասկացա—յես կանգնած եմ հերոսության գործելու առաջ: Բայց վայ դժբախտին, ամեն ինչ քանդվում է և յես դայթակղության տիրապետության տակ եմ: Այս ծնվեց հակառակ իմ կամքի, հանկարծակի առաջացավ մտքումս և չի թողնում ինձ: Լսիր…

Նրա ձայնն ընդհատվեց—շնչառությունը բռնվեց:

— Սուտն ու խաբեությունն են թագավորել աշխարհում: Մոտ է հատուցման ժամը, վերջին դատաստանի ժամը, վորի գալու մասին դոչում էյին մոլեգնած ամբոխները ժանտախտի [illegible]

և մեզնից [illegible]

վոր սրբագրածները մաքուր են, վոր մեր աչքերն [illegible] սրբատես են, վոր կնկատեն նրանց տոնական հագուստի բծերը: Յես հասկացա՝ սրբերից վոմանք, Թյուրինգյան Ելիզաբետի նման, ուրիշների խղճուկ խաղալիքն են. Ելիզաբետան վոչնչությունն էր Թյուրինգյան Հենրիխի ձեռքին, վորը թողեց նրան և նրա յերեխաներին ինքնաուրացման հերոսության, վորպեսզի տիրի յուր հանգուցյալ յեղբոր և Ելիզաբետի ամուսնու հարուստ ժառանգությանը: Վոմանք իրենք մասնակից են այս աշխարհի զորեղների խաբեության և նենգության: Իշխանությունն ու փողը ղեկավարում են վոչ միայն հանցավոր ամբոխներին, այլև սրբերի գործերը: Յեվ այժմ, խարազանելով ինձ, լսելով ձայնը, վոր կոչում է ինձ ուսուցչության և հրաժարման ուղին, ինձ թվում է, վոր յես էլ տոնավաճառային խեղկատակ եմ— ապետակ պարսպի հետևին թաքնված են հաշիվն ու ընչասիրու-

թյունը և ուղղություն են տալիս իմ քայլերին։ Շուրջը բոլորը ստում են, և դու, Եվգերիոս, նրանց հետ միասին։ Խոսի՛ր։

— Լռի՛ր, պիղծ,—գոչեց Եվգերիոսը, արյունը խփեց նրա գլուխը, մանր աչքերը վախեցած դեսուդեն էյին վազում՝ չլինի՞ թե լսող լինի։

— Ժխտի՛ր, բաց արա իմ աչքերը—խուլ շշնջում էր պատանին, բռնելով վարդապետի հագուստից։

— Ժխտում եմ, ամեն ինչ ժխտում եմ,—կրկնում էր ծերունին,—ամեն ինչ կասեմ աբբային, նա քեզ կանիծի։ Ապաշխարիր և հրաժարվիր մոլորություններից։ Դու խենթ ես, յեղբայր Գրիգոր։

Պատանին ժպտաց և կամաց ասաց.

— Մենք յերկուսս էլ խենթ ենք, յես էլ, հայր աբբան էլ, բայց նա իշխանություն ունի, ուստի նրա խենթությունն ավելի սարսափելի յե։ Ցես միշտ զգում եմ՝ նա թաքնված է ինչ որ մոտիկ տեղ։

Եվգերիոս յեղբայրն անսպասելի արագությամբ նստարանից բարձրացրեց յուր ծանր մարմինը և մանրիկ քայլերով շտապ հեռացավ։ Սրահում, որ գտնվում էր փոքր բակը, նա հանդիպեց [illegible]։ Դռնապանը վազում էր դեպի աբբայի բնակարանը։ [illegible] Գրիգորի հետ ունեցած խոսակցության [illegible]։

— Սուրհանդակ է յեկել։ Կոմս ֆոն Նըրանը՝ աբբայի պայծառափայլ յեղբայրը, գալիս է վանք։ Վազում եմ հաղորդեմ—հևալով շշնջաց դռնապանը։

Նեղ լուսամուտներով, գորշ պատերով և քարե հատակով բարձր և յերկար սենյակում մութն էր և խոնավ։ Կաղնյա մեծ սեղանի մոտ, կաշեպատ բազկաթոռում նստած էր հարուստ և ազդեցիկ վանքի աբբան։ Մետաքսյա փարաջան պատում էր հսկայի կմախքը։ Տափակ դեմքի այտոսկրները քիչ էր մնում պատռեյին չորացած դեղին կաշին։ Ուռած կարմիր կոպերը համարյա ծածկում են աչքերը բների խոր փոսերի մեջ, բարակ շրթունքները հազիվ են նկատվում կզակի մեծ քառակուսու վրա։

Աբբայի ձայնը խուլ է, բայց վարդապետները գիտեն, որ հուզմունքի և զայրույթի րոպեներին նա հնչում է խլացուցիչ կերպով, որպես մարտական փող։

Աբբայի ձախ կողմից կանգնած է պրիորը[50]*, նա ստորաքարշ է և խղճուկ. դիմացը սեղանի առաջ՝ քաղաքացիների խումբն է շքեղ հագուստներով—հարևան քաղաքի բուրգոմիստրը*) և մագիստրատի անդամները։ Աբբան կամայականություն չի հանդուրժում, նա վրդովված է այդ մարդկանց վրա, որոնք իրենց պահում են, ինչպես թվում է նրան, ոչ բավականաչափ հարգանքով։ Քաղաքացիների և հոգևորականության թշնամությունը պարզ է կողմերի հայացքներից, շարժումներից, շեշտավորումից. մինչև անգամ, երբ լռություն է տիրում, սենյակի նեխած օդը թվում է լարված և ծանր, ինչպես փոթորկից առաջ։*

Խոսում է բուրգոմիստրը։

— Սրբազան հայր, անհամար պարտքերը, որ թողել են մեր քաղաքին մեր մագիստրատի շռայլ և անփույթ նախորդները, ջանասեր քաղաքացիների ուժերից վեր են։ Քաղաքին սպառնում է փառավոր ապագա—հմուտ են նրա արհեստավորները, քանի գնում ավելի և ավելի ժողովուրդ է թափվում մեր տոնավաճառները։ Հեռու չի այն օրը, երբ մենք լրիվ կերպով պարտահատույց կլինենք։ Բայց այժմ փոխառուները պիտի սպասեն. անմտություն է ձմռանը կթել մերկ ճյուղը, եթե աշնան դեմ կարելի է նրանից քաղել հրաշալի պտուղներ։ Մենք խնդրում ենք պարտքի տոկոսների հետաձգում, որ պահանջում է մեզնից ձեր հարուստ և փառավոր վանքը։

Աբբա. — *Ես լսել եմ, որ քաղաքի արհեստավորները բացարձակ խոսում են արտոնությունների վերացման մասին, որ դարերից ի վեր տրված է մեր վանքին և, որ մագիստրատն արժանի հակահարված չի տվել պիղծերին, չի պատժում այդ չլսված հանդգնության համար։ Ճիշտ է արդյոք այս, որդյակ իմ։*

Բուրգոմիստր. — *Սրբազան հայր, բոլոր արտոնությունները կհաստատի մագիստրատը, եթե...*

---

*) *Բուրգոմիստր—քաղաքագլուխ*
Ծ. Թ.

Աբբան ընդհատում է նրան.

— Հերետիկոսները քաղաքում իրենց ապահով են զգում։ Աշխարհական իշխանությունն արմատախիլ չի անում այդ վորոմներն աստծու արտից. մոլախոտերն սպառնում են խեղդել բերքը։ Հիշեցեք, վոր ձեր իշխանության վրա էլ դատավոր կա։ Պետրոս առաքյալը կորնթացոց թղթում ասում է. «Միթե չգիտեք, վոր մենք հրեշտակներին պիտի դատենք, առավել ևս գործերն առորյա»։

Ինձ հայտնի չէ, վոր քաղաքացիք կոմս ֆոն Երբախի հետ բանակցություններ են վարում նրա և վանքի վիճելի հողերի մասին և կոմսին աջակցություն են խոստացել այդ պայքարում։ Ճիշտ է արդյոք այս, վորդյակ իմ։

— Կոմս ֆոն Երբախը ձեր յեղբայրն է,— նուրբ ծաղրով ասաց բուրգոմիստրը։ Աբբան գունատվում է, բայց շարունակում է խուլ և սահուն։

— Բոլոր հավատարիմներն իմ յեղբայրներն են ի Քրիստոս։ Յես գրել եմ նորին սրբազնություն արքեպիսկոպոսին քաղաքի ծանր մեղքերի մասին յեկեղեցու դեմ։ Ձեզ վրա ինտերդիկտ[51] կդրվի և քաղաքի դիվային գոռոզությունը կկոտրվի։

Հուզմունք քաղաքացիների մեջ, և բուրգոմիստրը հարվածին հարվածով է պատասխանում։

— Մենք կարդացել ենք նամակը։ Արքեպիսկոպոսի մոտ ուղարկվածը բռնվեց, սրբազան հայր։

Աբբան բարձրացնում է ձայնը.

— Ձեր հանդգնությունն անօրինակ է, բայց յես պատահականությունների չեմ վստահում խոշոր կարևորության գործերը։ Յերեք սուրհանդակ յերեք նամակով ուղարկվեցին արքեպիսկոպոս Ադալբերտի մոտ։ Սուրհանդակներից մեկն երեկ վերադարձավ։

Ներս մտավ մի վարդապետ, վորի հետ խոսելուց հետո՝ պրիորը թեքվեց աբբայի ականջին և մի քանի խոսք փսփսաց նրան։

Աբբայի ջլուտ ձեռքերը ամուր սեղմեցին բազկաթոռի թևերը, և նա կտրուկ հրումով բարձրացավ յուր ամբողջ հսկա հասակով։

Եկեղեցու զինվորը այդ րոպեյին՝ հայացքով, կեցվածքով, շարժումներով, կերպարանափոխվեց աշխարհական զորապետի. քաղաքացիներին թվաց, թե նրա գոտու վրա սուր տեսան։

— Խոնարհվեցե՛ք։ Մտածեցեք այն մասին, վոր դուք պետք է հրաժարվեք բոլոր դավերից և քավեք ձեր հանցանքը վանքի առաջ։ Պատասխան դուք կստանաք վաղը։ Քաղաք կգա հայր պրիորը և կհաղորդի մեր վորոշումը։—Ապա խոնարհությամբ և հանդարտ ասաց.

— Իմ աշխարհային աշխատանքների ժամը վերջացավ։ Տերը ժամերգության է կանչում յուր ստրուկների ստրուկին։

Քաղաքացիք հեռացան, և աբբան ասաց պրիորին.

— Իմ յեղբոր սուրհանդակն այդ մարդկանց չպիտի տեսնի։

Պրիորը դուրս գնաց։

Աբբան մտազբաղ մի քանի անգամ անցուդարձ արավ սենյակում, հետո կանգ առավ և ծափ տվեց։ Ներս մտնող վարդապետին հրամայեց կանչել յեղբայր Եվգերիոսին։

Երբ արտագրողը կամացուկ ներս մտավ, ավելի ճիշտ՝ ներս սողաց սենյակ, աբբան նորից անշարժ նստած եր բազկաթոռին։ Աբբայի շրթունքներն ինչ վոր կամաց շշնջում եյին. Եվգերիոսը կանգնած եր հեռու և սպասում եր. բացի նրանցից սենյակում վոչ վոք չկար։

Պրիորը կամացուկ մոտեցավ դռանը և ականջը դրեց ճեղքին։

— Դու ծերանում ես և անփույթ ես դառնում, յեղբայր,— խուլ հնչեցին առաջին խոսքերը։—Քեզ մեծ պատիվ է արված նրանով, վոր յես քեզ հանձնարարեցի այնքան կարևոր և աստծուն հաճելի գործ։ Դու ինչ ես արել։

— Հայր, իմ միտքը թույլ է,—լալագին ասաց Եվգերիոսը։

Նորից հնչեց աբբայի ձայնը.

— Լսիր դու, անփույթ անասուն։ Հիշում ես, յերբ դու սպասարկում եյիր վանքի հյուրանոցում, մեզ մոտ մեռավ մի անցորդ վաճառական։ Նրա վերջին շունչը փչելիս ներկա եր յեղբայր Եվգերիոսը։ Հետո հանգուցյալ պրիորը ցուցարկեց այդ յեղբոր մոտ մի քանի վոսկի գտնվեց։ Պրիորը քեզ մեղա- [illegible] դրեց վաճառականին թալանելու մեջ։ Դու հրաժարվում է [illegible]

եկիր, որ այդ փողերը դու հետդ բերել ես վանք մտնելիս և պահել ես։ Դու գիտե՞ս, թե ի՛նչ է հարկավոր անել կանոնագրության 39 գլուխը խախտողին, որն արգելում է վարդապետին սեփականություն ունենալ։ Սրբազնագույն Գրիգոր պապն ասում էր «Մի օբոլ[52] ունեցող վարդապետը, մի օբոլ չարժի»։ Իսկ յեթե յես վկա բերեմ, որը հաստատի թե այդ գուլդենները կարված են յեղել վաճառականի գոտում, այն ժամանակ դու ի՞նչ կանես։ Այդ գործի համար խելքդ բավականացա՞վ։ Յես ներել եմ ուխտը խախտողին, յես ներել եմ գողին, բայց հիշիր որ դու իմ ձեռքին ես։

Պրիորը լսում էր, թե ինչպես ծանր խզզոցով շնչում էր Եվգերիոսը։ Աբբան խփեց սեղանին և շարունակեց.

— Մեզ հարկավոր է սուրբ, որ բարձրացնի մեր վանքի փառքը նոր բարձունքների, որը գրավի այս պարիսպների մեջ անհամար ուխտավորներ, հարստացնելով մեր գանձարանը հավատացողների անթիվ նվերներով։ Մենք կկանգնեցնենք նրան մեր առաջ, որպես վահան և կոմսերը, քաղաքացիք և այլ ավագակներ չեն համարձակվի մտածել անգամ մեզ հետ վիճելու։ Յեվ ահա յես ասացի, որ այդ սուրբը կլինի։ Դա պիտի լինի մի մարդ՝ աստվածային կրակով բռնված հոգով, մի անմիտ, որ անխախտ կերպով հավատա յուր սրբությանը։ Նրա սրբագործությունը կհաստատվի հրաշքներով։ Հրաշքները կկատարվեն, դու հասկանո՞ւմ ես ինձ։ Նրանք կկատարվեն ի փառս ամենակարողի։ Մոտ արի, Եվգերիոս։

Ձայները ցածրացան մինչև շշունջ և դրանից հետո, որքան էլ աշխատում էր պրիորը, նա ոչինչ չլսեց։

Մի առ ժամանակից հետո ժամանեց կոմս Երբախը, նրան ուղղակի առաջնորդեցին հայր աբբայի մոտ։ Աբբան հուզմունքով սպասում էր նոր այցելուին։ Նա գիտեր յեղբոր կատաղի բնավորությունը։ Սպասվում էր դժվար և վտանգավոր տեսակցություն։

Դռները բացվեցին և մուտքի համարյա ամբողջ տարածությունը բռնելով և գլխով հասնելով դռան շրջանակին, հայտնվեց աբբայի կրկնորդը՝ (двойник) տիրական իշխանի ճոխ հագուստով։

Գրաֆ ֆոն Երբախը մտնելով, խոնարհվեց աբբայի օրհնության տակ և ծանր քայլելով, ուղղվեց դեպի նա։

— Յես ուրախ եմ քո գալուն, իմ սիրեցյալ յեղբայր,— քաղցրությամբ ասաց աբբան։ Կոմսը նստեց։ Ֆոն Երբախների դեմքի թույլ մկանները նրանց դեմքերը դարձնում եյին անարտահայտիչ։ Նրանք նստած եյին լուռ և միայն խեթ-խեթ դիտում եյին միմյանց։

Հատակի վրա խաղում եր արեգակի վորմնաշողը։

Սկսեց կոմսը։

— Պարոն աբբա, յես վաղուց և շարունակ հետամտում եմ ձեզ, ձեր բոլոր խեղկատակությունները ինձ լավ հայտնի յեն։ Այդ դուք եք գրգռում քաղաքացիներին իմ դեմ, դուք կռվեցրիք ինձ յեպիսկոպոսի հետ, դուք կորզեցիք անարդար դատով իմ հողերի մի մասը ագահ վանքի համար։ Ձեր վոտնձգությունների վերջը յես չեմ տեսնում։ Յես ուզում եմ վերջին անգամ խոսեմ ձեզ հետ, բայց հենց սկզբից նախազգուշացնում եմ, վոր ուժը կլուծի մեր վեճերը և ուժն իմ կողմն ե։

— Սիրելի յեղբայր, դուք ժառանգել եք մեր հոր հարուստ կարողությունը։ Յես չեմ ցավում այդ մասին։ Դուք փայլուն կյանք եք վարում։ Յես չեմ նախանձում ձեզ։ Բայց դուք մի խառնվեք իմ գործերի մեջ, մի հանդգնեք քանդել այն, ինչ վոր յես ստեղծում եմ այսպիսի ջանքերով։ Մտածեցեք, յեղբայր, տասը տարի յեմ կորցրել իմ վանքը բարեկարգելու համար։ Յես շատ բանի յեմ հասել այս տարիների ընթացքում։ Իմ անվան փառքը—այդ՝ և ձեր փառքն ե։ Յեվ ահա դուք այսօր յեկել եք իմ մոտ և սկսում եք սպառնալ այն բոլորի վոչնչացմամբ, ինչ վոր իմ աշխատանքը…

Կոմսն ընդհատեց նրան անհամբեր և կտրուկ։

— Յես գործ չունեմ ձեր աշխատանքների հետ։

— Հիշեցեք, յեղբայր, մանուկ հասակում մենք միասին ենք խաղացել։

— Այն հողերը, վորոնք դուք ստացել եք կաշառքով և ստությամբ, պետք ե վերադարձվեն ինձ, իսկ դուք յերդումով կպարտավորվեք այսուհետև դադարեցնել ձեր մեքենայությունները։ Ահա իմ պայմանները։

Աբբայի մտերմական և նույնիսկ շողոքորթող տոնը փոխվեց, նա սկսեց խոսել կցկտուր և կոպիտ, կարծես ընդօրինակելով խոսակցին։

— Զգուշացեք, յեղբայր, իմ թիկունքին կանգնած և ամենազոր յեկեղեցին։

— Իսկ իմինը—թագավորական և իշխանական զորությունը։

— Փորձենք համաձայնության գալ,—նորից մեղմ ասում է աբբան,—աթոռը մոռեցրեք, չէ, ինչ վոր, սկսել եմ վատ բաներ լսել, յեղբայր։ Ցեվ հետո՝—հիշեցեք, կոմս, վոր Գրիգոր պապը բանադրեց Հենրիխ կայսրին, և կայսրը գնաց Կանոսսա)։*

— Լավ կամպանիա հանդիպեց նրան Կանոսսայում՝ յերդըմնազանց Հիլդեբրանդը և անառակ Մատիլդան։ Իսկապես Հենրիխը կույր և վախկոտ եր։

— Դուք մոլորվում եք, յեղբայր, Հենրիխը աչալուրջ քաղաքագետ եր, իսկ կույր եք դուք։ Ցես ձեզ վրա կբարձրացնեմ բոցավառ հոգևոր սուրը և յերկաթե սուրն աշխարհի։

Ցես կարող եմ վոչ միայն փարաջա կրել, այլ և մարտնչել թշնամու հետ։ Անպիտանին և հերետիկոսին խնայում չի լինի։ Մեր կուրփյուրստին վաղուց են դուրս գալիս ձեր դղյակները, իսկ քաղաքացիներին արդեն վոտքի յեմ հանել ձեր դեմ։

Ցնցում անցավ կոմսի դեմքով, աչքերը լցվեցին արյունով։

— Ոձ, դու վոչ միայն գողտուկ ես խայթում, այլև համարձակվում ես բացեիբաց հարձակվել ինձ վրա։ Իմ սուրը հետս է, և դու այստեղից կենդանի չես դուրս գա, նախքան…

Կոմսը ձեռքը տարավ թանկագին դաստապանին։

— Հանդստությո՛ւն—փշշաց վարդապետը, տանելով ձեռքը դեպի կուրծքը՝ փարաջայի տակ։—Ցես ունեմ ձեռքիս դաշույն և առաջ քան դու գլուխ կհանես քո յերկար սրի հետ, դու մեռած կլինես, յեղբայր։ Համեստ սև հագուստի տակ մենք թագցընում ենք վոչ միայն մեր հանցավոր մարմինը, այլև պողպատե շեղբեր թշնամիների համար, իսկ վանքի նկուղները պահած

**) Զղջում։ Գերմանացոց կայսր Հենրիխ IV-ը 1077 թ. գնաց Կանոսսա դղյակը Գրիգոր VII պապից թողություն խնդրելու։*

Ծ. Թ.

ունեն զենքի պաշար ապագա ճակատամարտի համար։ Հանգստություն, յեղբայր։ Ցած իջեցնելով ձեռքը, աբբան յերկու անգամ խփեց սեղանին։

Սենյակ մտան մի քանի վարդապետ։ Մեկի անզգույշ շարժումից խուլ զրնգաց զենքը, վորը դիպավ դռան դրանդուն։

Յեղբայրների դեմքերը նորից անտարբեր և անարտահայտիչ եյին։ Կոմսը նստած եր լուսամուտին դառած։ Աբբան խոսեց բարձր և սահուն, կարծես վերջացնում եր յերկարատև մտերմական զրույցը։

— Այսպես ուրեմն՝ մենք համաձայնության չեկանք, սիրելի յեղբայր իմ։ Յես քեզ խորհուրդ եմ տալիս լավ մտածել իմ խորհրդի մասին և վարվել այնպես, ինչպես յես ասացի։ Մեզ բոլորիս վտանգ ե սպառնում։ Գյուղացիները հասել են հուսահատության՝ աշխարհիկ տերերի բռնություններից և տուրքերից։ Նրանք պատրաստ են ապստամբելու, յեղբայր իմ, իմ վարդապետներն ավելի լավ գիտեն հողագործների գաղտնի մտքերը, քան քո բազմաթիվ ծառաները։ Ապստամբների ցասումը կփլչի ասպետների վրա, բայց վանքերին ել չի խնայելու, վորովհետև չքավորները հարստություն կվորոնեն և մինչև անգամ չեն վախենա աստծու ցասումից։ Ահա այն վտանգը, վոր մենք պետք ե միասին յետ մղենք։ Դուք լսում եք, յեղբայր,— թեթև ծաղրով վերջացրեց աբբան,— ճանապարհը ձեզ հոգնեցրել ե, վանական հյուրանոցում ձեզ համար սենյակներ են պատրաստված։

Աբբայի մոտից դուրս գալով, Եվգերիոսը ուղղվեց դեպի սկրիպտորիա։ Մեծ, լուսավոր սենյակում, սեղանների մոտ նստած եյին տասն արտագրող։ Բարձր սեղանի մոտ, սենյակի մեջ տեղում, մի վարդապետ բարձրաձայն կարդում եր սուրբ գիրքը, յեղբայրները գրում եյին նրա թելադրությամբ։ Եվգերիոսն, անցնելով, գլուխը խոնարհեց մուտքի մոտի մեծ խաչելության առաջ և մոտեցավ միջին սեղանին։

Այդ ժամանակ այն դռնից, վոր տանում եր կից գրադարանը, յերևաց Յոհան յեղբոր գլուխը—գրադարանի պահպանողի. կենդանի, ուրախ աչքերը զննեցին արտագրողներին, և Յոհանը դուրս յեկավ, նա ուրախ եր և գոհ։

— Յեղբայրներ, տեսե՞լ եք արդյոք նշանավոր աստվածաշունչը Մայնց փառավոր քաղաքից։ Ուրախացեք, մեր ծանր աշխատանքի վերջը գալիս ե։ Ինձ ասացին, վոր գրատպության նոր արվեստը շատ ավելի արագացնում ե գրքեր պատրաստելու աշխատանքը և բազմապատիկ եժանացնում։ Սրբազան գըրքերը կբազմանան, ինչպես ծովի ավազը և կհասնեն յերկրի վրա, ինչպես ջրեր գարնանային։ Այս հրաշքը վիթխարի յե և անբացատրելի։

— Սուտ ե,—ծղրտոցով և սուր ձայնով, գոչեց Նիկեփորոսը —վոչ թե աստված, այլ սատանան, վոր տիրապետել ե Մայնցին, նա յե ստեղծել այդ աստծու համար զազրելի գիրքը։ Խարույկի տալ այդ գիրքը և փառք մեր բարձր աշխատանքին։

— Յեթե աշխարհականներն այնքան գիրք պատրաստեն, վորքան ավազ կա, հապա ո՞վ կգնի մեր գրքերը—հարցի տոնով ասաց վարդապետներից մեկը։ Նրա խոսքերը հնչեցին ծանրակշիռ և բոլորը լուռ եյին։

Գրադարանապետը պարտություն կրեց։ Նիկեփորոսը նայում եր նրան հաղթանակողի արհամարհանքով։ Յոհանն արտագրողի յերդվյալ թշնամին ե, վորովհետև գրադարանապետը գիտուն ե և արբայի հովանավորության տակ գրում ե աշխատանք «Դեվերի դավերի և խարդավանքների մասին մարդկանց դեմ»։ Նրա մեջ, իմիջիայլոց, ասված ե. «Լվերի և վոջիլների կծելը կատարվում ե դևերի միջոցով։ Յեթե վորևե մեկը առաջ ինձ այդպիսի բան ասեր, յես նրան կանվանեյի կիսախելագար։ Բայց այդ բանը յես հիմա հաստատ գիտեմ յերկարամյա սեփական փորձով»։ Նիկեփորոս յեղբայրը նախանձում ե գիտնական մարդուն։

Զանգակների ղողանջը միաբանությանը հրավիրում ե կապիտուլի[53] դահլիճը խորհրդակցության։ Յերկար փայլուն նստարանները տեղ-տեղ սևին են տալիս, դահլիճն աստիճանաբար լցվում ե. կամացուկ փսփսում են վարդապետները, կարծես հսկայական գրքի թերթերն անընդհատ շուռ են տալիս։

Հանկարծ բոլորը վոտքի յեն կանգնում և գլուխ տալով կորանում—դահլիճ մտավ աբբան։ Հենվելով յերկար, ծռած ծայրով գավազանին, դանդաղ գնում ե դեպի յուր տեղը՝ վանքի այդ անսասան տերը։

Աբբան յելնում է բարձրության վրա և նրա առանց այն էլ խոշոր կազմվածքը թվում է ավելի հոյակապ, դեմքը հանդիսատ է և անարտահայտիչ. սարսող միաբանությունը յերբեք չգիտի ժամը, թե յերբ կվորոտա ամպը։ Աբբան նստում է և նրա շուրջը՝ պրիորը, կամերարը[54], ապոկրիզարը[55] և ցելարը[56]։

Խորին լռության մեջ դրակալի մոտ միաբաններից մեկը կարդում է սրբի վարքը, վորի հիշատակը տոնվում է այդ որը և ապա մի գլուխ վարդապետական կյանքի կանոններից։

Ընթերցումը վերջացած է։

Հնչում է աբբայի ձայնը.

— Խոսենք մեր միաբանության մասին։

Մի քանի մանր գործեր քննված են և այն ժամանակ անսպասելի կերպով վեր է կենում աբբան։

— Յեղբայր Եվգեբիոսին այսօր տեսիլք է յեկել և խընդրում էր իմ թույլտվությունը հաղորդելու այդ մասին։ Թեթևացնենք յեղբոր հոգին։

Եվգեբիոսը դժվարությամբ քարշ տվեց յուր ծանր մարմինը բարձրության վրա, նայեց շուրջը, թարթելով նեղ աչքերը և սկսեց այսպես.

— Յեղբայրներ, յերեկ դորմիտորիայում[57] շոգ էր և խեղդուկ, վորովհետև այնտեղ դեռ շարունակում են վառել, չնայելով, վոր գարունը յեկել է։ Յեղբայր Յոհան—գրադարանապետը խիստ խռմփացնում էր և խանգարում էր ինձ քնել։ Յոհան յեղբայրը միշտ խռմփում է արտասովոր կերպով, յերևի մեղսալից յերազները հալածում են նրան գիշերային հանգստի ժամերին։

Աբբայի ատամները կրճտացին՝—հիմար։ Չասաց, բայց կամաց դուրս շնչեց նա։

Արտասանողն ինքնաբավական կերպով ժպտաց և շարունակեց.

— Այսպես ուրեմն՝ քունը յերկար ժամանակ չէր փակում իմ հոգնած աչքերը, վերջապես յես ընկա անզգայության մեջ։ Հանկարծ լսում եմ հանդարտ քայլերը մոտենում են իմ անկողնին, և մի ձեռք ծանր իջնում է կրծքիս վրա։ Գիշերային յեկվորը սկսեց խոսել, և նրա խոսքերն ընկնում էյին, ինչպես

քարե սալերը սառած գետնին։ Սարսափը պատեց ինձ, յեղբայրներ։

Ամեն ինչ լռեց. լսելի չեր, ինչպես հեռու գետի վրա յերգում եր փոխադրողը։

Նվգերիոսը յերանության մեջ եր գտնվում՝ առաջին անգամն եր նա ամբողջ վանքի ուշադրության կենտրոնը։

«Յեվ ասաց սատանան, այո, այո, այդ նա չեր, յես նրան ճանաչեցի։

Աղմուկ. շատերը սարսափեցին. իսկ ինչ-որ մեկը կամացուկ, բայց պարզ ասաց.—Լավ ե, որ յեղբայրն այդպես հաստ ե, թե չե սատանան նրան հետը կտաներ դժողք։

Ուրիշ ձայն.—Իսկ ինչպիսի տեսք ուներ նա»։

Նվգերիոսը հասկացավ անաջողությունը և անզոր կերպով կանգ առավ. թեթև ծիծաղ։

Վեհապետի գավազանի հարվածը վերականգնեց խաղաղությունը։

— Սատանան ասաց՝ յես աշխարհի թագավորն ու տերն եմ, ինձ կխոնարհվեն ժողովուրդները։ Յերկար ժամանակ ճնշում եյին ինձ, բայց այժմ գալիս ե հաղթանակի ժամը։ Կախարդության և հմայության ինձ յենթակա ուժերով՝ իմ ծառաները կռել են նոր զենք, որով կնվաճեն հազար հազարներ։ Բոլոր արգելքները կընկնեն նրա առաջ, ինչպես Յերիքովի պատերը փողերի ձայնից։ Իմ ձայնը կլսեք և կկարծեք, որ ամենակալի խոսքն ե. մեծ գայթակղություն կտիրի ամենուրեք։ Դուք, որ ծածկվել եք վանքում՝ նույնպես չեք փրկվի. աննկատելի կմտնեմ ձեզ մոտ և կխառնակեմ միաբանությունը։ Սպասեցեք, վաղը կլինեմ ձեզ հետ։

Ինչպես հասունացած արտն ուժգին քամուց, ցնցվեցին վարդապետների շարքերը։ Հառաչանք դուրս թռավ ինչ-որ մեկի կրծքից, շատերը, աղոթք մրմնջալով, վեր թռան։

Միայն Նվգերիոսն անվրդով շարունակեց, յերևում ե լավ եր անգիր արել յուր ճառը։

— Այնուհետև կատարվեց ամենամեծը, յեղբայրներ։ Վորոտաց, որորվեց աշխարհի հաստատությունը և սատանան անհայտացավ կրակի մեջ։ Ծխի և ծծումբի հոտը խեղդում եր ինձ։

Բայց ահա տարածվեց աննկարագրելի լույս և անուշահոտություն. իմ առաջ կանգնեց պայծառ համբավաբերը: Բաղցրալուր ձայնն ասաց. «Յեվ թող չխռովի քո սիրտը, յեղբայր Եվզեբիոս: Անզոր են դևի դավերը ձեր վանքի դեմ, վորովհետև ընտրված ե նա բարձրյալի վողորմությամբ և աշխարհին կտա նոր սուրբ, վոր կլինի ուժեղ աստուծո առաջ»:

Հուզմունքը շարունակ աճում եր, և ընդհանուր խուլ աղմուկի միջից ճիչ դուրս պրծավ՝ — նրա անունը:

Եվզեբիոսի մինչև այժմ հանդարտ ձայնը ամրացավ. բվվոցը հաղթահարելով, նորից հանդարտ հոսում ե ճառը, — և իմացրեց ինձ հրաշալի համբավաբերը — ինձ ե վիճակված մերկացնել դևի դավերը: Յես ճանաչեցի նրա ստեղծագործությունը, յեղբայրներ:

Ամեն ինչ լռեց և, կարծես, պողպատով ապակին չանկռելով, ճչացող ձայնով, անսպասելի կերպով նորից արագ սկսեց Եվզեբիոսը:

Ցերեկ նա մտել ե մեր պարիսպների մեջ, դա կախարդական գիրք ե, գրված վոչ մարդկային ձեռքով: Յեղբայրներ, փախեք գաղթակղությունից, յես ճանաչեցի թշնամուն, հոտը մատնեց նրան՝ գրքից կրակի և ծծումբի հոտ եր գալիս:

Արդեն վոչ թե գոչյունը, այլ վորոտը ցնցեց դահլիճը:

Այրել, հրդեհել:

Տեղից բարձրացած աբբայի յերկյուղն անգամ չդադարեցրեց փոթորիկը: Հնչեց նրա գավազանի կտրուկ հարվածը:

Ակնթարթ, և ամեն ինչ լռեց:

— Յեղբայրներ, այդ գիրքը մենք դատապարտում ենք խարույկի և թող կրկնապատիկ ջանասիրությամբ և հավատով առ աստված աշխատեն մեր վանքի արտագրողները, վորոնք արդեն հռչակված են գրելու և սրբազան խոսքերը զարդարելու հրաշալի հմտությամբ:

Աբբան կանգ առավ, սպասեց և ծանր հայացք գցեց պրիորի վրա:

Կռահող պրիորը վոտքի յելավ և հարցրեց.

—Ասա, յեղբայր Եվզեբիոս, ով ե մեր վանքում ընտրված անոթը:

— Համբավաբերի առաջ յես ծունկ չոքեցի —շարունակեց Եվգերիոսը— և աղաչում էյի նրան բանալ ընտրյալի անունը, և հրեշտակն ասաց.— տեսնում եմ նրա փառավոր ճանապարհը, ճանապարհ պահքի, աղոթքի և ինքնախոշտանգման— նրա անունն է Գրիգոր։

Լսվեց սուր ճիչ և սակվեց, կարծես խոր թաղվեց շրջապատի գերեզմանային լռության մեջ. այդ գունատ Գրիգորն արձակեց, նվաղած վայր ընկավ և գլուխը հատակին էր տալիս։

Երբ վերջանում էր, միաբանները վերադարձան դաշտից, արհեստանոցներից։ Վանքում պառկում էյին քնելու՝ վերջին ժամերգությունից հետո։ Հանդարտ և մռայլ նայում էյին լայն փոսով շրջապատված քարե պարիսպները։ Անցորդի համար դժվար էր զանազանել վանքը ասպետական ամրոցից։

Միայն վանական հյուրանոցում կենդանություն կար դեռ ևս։

Հյուրանոցի մուտքից ոչ հեռու խարույկ է վառած։

Գետնի մեջ, ոչ մեծ փոսում, դրված են խութոտ ծուռ կոճղեր, վորոնց վրա ճարճատյունով բոցավառվում են ճյուղերը։ Բոցը լիզում է ճյուղերը, բռնկում է ասեղնատերևների վրա և կարմիր կրակները թափվում են ցած՝ կոճղերի հյուսվածքի մեջ։ Ժամանակ առ ժամանակ քամու թեթև թափից բոցն ու ծուխը մի կողմն են թեքվում և փռվում գետնին։

Խարույկի մոտ պառկած մարդը հաճախ ջախ է ավելացնում. այդ րոպեներին պարզ լուսավորվում է նրա մեծ, ջլուտ ձեռքը, նա ինքն ամբողջովին ստվերի մեջ է։ Խարույկի մոտ յերկու հոգի յեն—խարույկը վառ պահողը, վորը քթի տակին ինչ-վոր փնթփնթում է շարունակ, և յերկրորդը—նա, վոր պառկած է մի կողմը և լուռ է։

— Վառվիր, ուրախ վառվիր,—փնթփնթում էր մարդը— չես ուզում, լափելու քի՞չ բան ունես։ Վոչինչ, համբերիր, մեծ հրդեհներ կլինեն։ Մենք քեզ առատ լավ փայտ կտանք, մարդկային աղնիվ մսի համը կտեսնես. յեթե դու կարողանայիր քար ուտել՝ մենք քեզ կշպրտեյինք ամրոցների և պարիսպների կույտեր։ Վառվի՛ր, վառվի՛ր—դու կծառայես ժողովրդին։

— Ի՞նչ ես փնթփնթում, բարեկամ—հարցրեց լռակյացը։

— Կարևոր գործ եմ մտարկում։ Քո տիրոջ՝ վաճառականի քսակում շատ փող կա։

— Բայց քեզ ինչ։

Խոսակցությունն ընդհատվեց։

Լռությունից հետո վաճառականի ծառան ավելացրեց.

— Տերս ամբողջ ճանապարհին ինչ-որ նոր գրքերի մասին էր խոսում։

— Գրքերը և թղթերը տերերի վորոգայթներն են մեր դեմ. նրանց մեջ գրում են ապառքներն ու տուգանքները, մենք կայրենք այդ գրքերը, յերբ մեր որը գա։

Խավարը թանձրանում էր, անտառից սողում էր մառախուղը, խոնավությունը պատում էր մարդկանց՝ մտնում էր հագուստի տակ, կպչում էր մարմնից։

Կրակ պահպանողը մոտ շարժվեց դեպի լույսը և մի ակընթարթ լուսավորվեց նրա դեմքը՝ խիտ սև մորուքով, թուխ հոնքերի թփերով և յերկար ծուռ քթով։ Լույսի և ստվերի շարժումներից, նրա դիմագծերը ավելի խոշոր և խիստ եյին թվում, աչքերը պահված եյին սև, խոր վիհերի մեջ։ Ավելի հարմար տեղավորվելով, նա շրջեց գլուխը և նրա խոսակիցը ցնցվեց՝ այդ մարդը ականջ չուներ։

Անականջը նորից խոսեց.

— Կրակը վորկրամոլ է գյուղացու ստամոքսի նման։ Այսոր յես նրա տերն ու տիրականն եմ, ուզենամ կկերակրեմ, կամ կթողնեմ քաղցից սատկի։ Տրտնջում ես—դուր չի՞ գալիս։ Եհ, լավ, առ քեզ—և նա գցեց մի քանի ճյուղ։

Խարույկի մոտ, կիսամթության մեջ յերևաց մի վարդապետի վտիտ կերպարանք. նա մոտեցավ այնքան անլսելի, վորպես հանկարծ թանձրացող մառախուղը։

— Գիշատիչ թռչունները կրակին են գալիս—քրթմնջաց միականջանին։

— Ապաշխարեցեք,—գոչեց վարդապետը։—Ապաշխարեցեք, վորովհետև ժամանակը լրացել է և մոտ է դատաստանի որը։

Լռություն։

Շուտով կբացվի յերկնքի հաստատությունը, և աստված բոլորին կկանչի յուր դատավճռին, վորտեղ չի լինի վոչ հելլենացի,

վոչ հրեա։ Ապաշխարեցեք, խոնարհվեցեք և սպասեցեք—յես գուշակում եմ ձեզ այդ մասին։

— Խոնարհվե՞լ։ Ես, վոչ։ Լսիր սև Թաչուն։ Աստվածաբանության մեջ յես էլ ուժեղ եմ։ Քրիստոսը ջուր արյունը թափեց բոլորիս համար և հավասարապես փրկեց բոլորին՝ սկսած ավագանուց մինչև հովիվը։ Բայց ո՞վ ստրկացրեց մեզ՝ ճորտերիս։ Դատ կլինի, բայց այստեղ՝ յերկրի վրա և ավելի շուտ, քան դու կարծում ես։

— Գոռոզությունն է խոսում քո շրթունքներով, յեղբայր։ Նայիր ինձ, յես մեծազարմ եյի, բայց այժմ հագիս քուրձ է, և իմ խարազանը մարմինս ծածկել է խոցերով։

— Ուզո՞ւմ ես ցույց տամ այն սպիները, վորոնցով նաշխել են ինձ իմ ամենավողորմած կոմսի ծառաները։ Սրան էլ նայիր—նա կրակին մեկնեց յուր ձախ ձեռքը—ո՞ւր են ձեռքիս մատները, իսկ ակա՞նջս ուր է։ Միայն յես չեմ, մենք հազարներ ենք, անթիվ—անհամար։ Մենք կգանք ավագանու և հարուստների մոտ, և ձեզ մոտ՝ նրանց սպասարկողներիդ և կպահանջենք այն ամենը՝ ինչ խլված է մեզանից, մեր հայրերից ու պապերից։

Վեր թռավ ամբակազմը, գզգզվածը, սարսափելին՝ շարժելով ձեռքի անձև կոճղը։

Պայծառ բոցավառվում եր խարույկը՝ շուրջը կայծեր շաղ տալով։

Գյուղացին արագ քայլելով հեռացավ։

Յեղբայր Գրիգորը, ինչպես հայտնվել եր, այնպես էլ անհայտացավ. հալվեց թանձրացած մառախուղը և չկա վոչինչ։ Խարույկի մոտ պառկած մնաց միայն վաճառականի ծառան, վորը քիչ անց, սողալով անցավ գյուղացու տեղը և սկսեց ջախ գցել կրակին։ Կրակն այրում եր փոթորկահույզ և վաղանցուկ, ծնվում եյին փայլուն հրապուրիչ գույներ և թառամում վայրկենապես, փոխարինվելով ավելի ևս պերճ և գրավիչ գույներով։

Այդ ժամանակ յերկու վարդապետ դուրս յեկան վանքի դարպասից և զրուցելով ուղղվեցին դեպի հյուրանոց։ Սրանցից մեկը վանքի հյուրանոցի ծերունի վարիչն եր, մյուսը՝ Մարտին յեղբայրը, աբբայի սուրհանդակը, վորն այսօր եր

վերադարձել հեռավոր ճանապարհորդությունից։ Նրանք բարձր եյին խոսում՝ այդ ժամին չվախենալով անհամեստ ականջներից։

— Յես յերկար ժամանակ բացակայում եյի, յեղբայր, և յետ եմ մնացել վանական գործերից։ Կապիտուլի այսօրվա ժողովը վորոտի պես ցնցեց ինձ։ Զարմանալի յեն մեր վանքի գործերը, պատմիր ինձ, յեղբայր, ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Ծերունին ըստ յերևույթին խուլավուն եր, վորովհետև նրա ձայնը զիլ եր հնչում։

— Պարոն աբբայի հաճությամբ նոր սուրբ է յերևան յեկել մեզ մոտ։

— Գիտեմ, բայց ինչո՞ւ աբբայի հաճությամբ — հարցրեց Մարտինը։

— Տեր աղվես աբբան ուզում է բարձրացնել յուր վանքը և գերազանց հանդիսանալ յեպիսկոպոսի և պապի առաջ։ Յեվ դրա հետ միասին պիտի ուղղել և դրամական գործերը. ուխտավորների թիվը պակասում է հա պակասում։ Ի՞նչ անի։ Նա սարքում է նոր սուրբ։ Սպասիր, շուտով նրան սուրբ կհայտարարեն, հրաշքները կսկսվեն և կգան հիվանդների, խեղանդամների և պարզապես դատարկաշրջիկների խմբերը։ Ինչո՞ւ Գրիգորին ընտրեցին։ Նախ և առաջ նա խելագար է և յերկրորդ՝ հիվանդ և յերկար չի ապրի։ Մեռավ՝ և մասունքը պատրաստ է։

Ծերունու շեշտավորումները չար և կծու եյին։

— Վորտեղի՞ց գիտես այդ բոլորը, յեղբայր։

— Շատախոս կլինարմատ-Եվգեբիոսը պատմել է ինձ բոլորը։ Տես հա՛, լռիր այդ մասին, թե չե, գիտե՞ս, աբբան յերկար ձեռքեր ունի։

— Հենց ինքդ կամաց խոսիր, խուլ։

Յեղբայր Մարտինը անհանգստությամբ յետ եր նայում, նրան թվաց, վոր մառախուղի մեջ վայրկենաբար մարդկային կերպարանք յերևաց։ Նա ուշադրությամբ դիտեց խավարը և վորոշեց, վոր սխալվել է։

Վարդապետները մոտենում եյին հյուրանոցին. վոչ հեռու՝ աղոտ կարմրին եյին տալիս խարույկի կրակները, դռան հետևին ձայներ եյին լսվում։

Մարտինը մտավ ներքևի ընդարձակ սենյակը, վորտեղ վառարանի մոտ նստած եր վաճառականը և կոմս Երբախի ծա-

տան։ Նրանց գրույցը դանդաղ էր և զգույշ։ Վաճառականը պատմում էր․— պատահեց, որ անցնելու ժամանակ յես յեղա Մայնց քաղաքում և իմացա, որ այդ քաղաքում, որ հռչակված է հացի և գինու առևտրով, հնարված է նոր զարմանալի արվեստ —գրքերի պատրաստման արվեստ, առանց արտագրողների։ Գրքերը կտպեն, ինչպես և նկարներն ու քարտեզները, հեշտ և բավականաչափ քանակությամբ։ Այն ժամանակ մենք՝ վաճառականներս, կարող ենք վաճառել տոնավաճառներում հարուստ մարդկանց և վանքերին և, կարծում եմ, լավ օգուտ կստանանք, յեթե գործը շնորհքով տանենք։

— Մեր իմաստուն աբբան — ընդհատեց վաճառականին Մարտինը — դատապարտել է այդ արվեստը, որպես սատանայական։ Արտագրող-վարդապետների բարեպաշտ ձեռքերով պետք պատրաստվեն սուրբ գրքերը։

— Ընթերցանությունը վարդապետական գործ է։ Իմ տերը, փառք աստծո, թքել էլ չի ուզում գրագիտության վրա, մեզ էլ նա խելք հարկավոր չի, իսկ վաճառականներն ուրախությամբ սատանային էլ կծախեն, միայն թե շահվեն — ասաց ծառան — ժամանակ է սանձ դնել անաստվածների բերանը։ Շուտով ազնըվաբարո մարդիկ ստիպված կլինեն մուրալու, իսկ բոլոր փողերը կհավաքվեն վաշխառուների և վաճառականների անհատակ գրպաններում։

— Առևտրական գործերը վատ են գնում — կարծես ուզենալով արդարանալ, ասաց վաճառականը։

— Վատ են, վատ, հոհռաց զինվորը, — բայց խոստովանիր՝ քանի՞ գուլդեն ես պահել պարկումդ, որ խնամքով ցած բերիր սայլից։

— Յես աղքատ մարդ եմ։

— Յեթե ազնիվ կոմսը թույլ տար տնտղել քո քրեղենները, կգիտենայինք թե ինչպիսի աղքատ ես դու — նորից ընդհատեց նրան հակառակորդը։

— Որը ցերեկով թալանողներ շատ կճարվեն։

— Անպիտան, — բացականչեց զինվորը — դու համարձակվում ես ամբաստանել կոմսին. յես քեզ ցույց կտամ, — և շարժվեց դեպի վաճառականը, բայց ճանապարհին հանդիպեց պնդակազմ վարդապետին։

— Խաղաղություն ձեզ, յեղբայրներ,— ասաց Մարտինը և բռնեց զինվորի ձեռքերը: Վաճառականն արագ անհայտացավ սենյակից:

Յերբ յեղբայր Մարտինը դուրս յեկավ հյուրանոցից, քամին ցրել էր ամպերը, մառախուղը չքացել էր, փայլում էր լուսինը: Ճանապարհին, որ տանում էր դեպի վանական դարպասը, կանգնած էր մի մենավոր ծառ: Մոտենալով նրան, Մարտինը տեսավ տարօրինակ կերպով բարձրահասակ մի մարդ՝ գլուխը կախ՝ կանգնած էր ճյուղերի տակ:

Սուրբ հայտարարված վարդապետի տանջված մարմինը նա հանեց պատանից դեռևս տաք:

— Վազեմ աբբայի մոտ, շուտ, շուտ— ասում էր ինքն իրեն Մարտինը:

— Ոչ ոք չի՞ տեսել հանգուցյալին — հարցրեց աբբան:

— Ո՛չ ոք:

— Անքննելի յեն աստուծո կամքը: Մոռացիր այն բոլորը, ինչ տեսար: Յեղբայր Գրիգորը հանգիստ ավանդեց հոգին:

Դու կերթաս կարթացնես Եվգեբիոսին և դուք յերկուսով կհեռացնեք յեղբորը, աստված կանչեց յուր սրբին:

— Բայց, հայր սուրբ, Գրիգորի տեսքը սարսափելի յե, լեզուն դուրս է ընկել:

— Կենդանի մարդու լեզուն էլ կարելի յե կարել, յես քեզ չպետք է սովորեցնեմ, յեղբայր:

Եվգեբիոսը խոր և քաղցր քնած էր. յերազում նա նորից ապրում էր յուր հաջողությունների և տարօրինակ դիպվածների որը: Նա տեսնում էր՝ ահա աբբայի սենյակը և սրբազանն ասում է նրան:

— Գրիգորը հիվանդ է մարմնով և նրա հոգին շփոթության մեջ է: Դու պետք է աննահանջ հսկես նրան, քո խոսքերով ուժեղացնես նրա անհանգստությունը, խրախուսես հերոսության ծարավը, պահանջես ինքնախոշտանգում, Հասկացա՞ր:

— Հասկացա, բայց յես հիմա յերազ տեսա:

— Յես գործ չունեմ քո յերազների հետ, յեղբայր Եվգեբիոս:

— Յես իմաստուն յերազ տեսա։

— Դու պիտի յերազ տեսնեյիր, վոր մեր վանքը ընտրված է աստծուց և յեղբայր Գրիգորը ընտրված անոթն է։

— Կարող եմ յերկու յերազ տեսնել։

— Լավ, լսենք քո յերկրորդ յերազը—վողորմածաբար ասաց աբբան և յուր ծանր ձեռքը դրեց նրա ուսին։

Բայց ինչքա՜ն աբբան բղավում և սեղմում է նրա ուսը ավելի և ավելի ուժեղ։ Եվսեբիոսն արթնացավ և անմիտ աչքերով նայում եր յուր վրա կռացած Մարտինին։

Վաղ առավոտյան թաղման զանգերի ղողանջը և կոչնակի վորոշակի հարվածները ազդարարեցին վարդապետներին, վոր յեղբայրակիցներից մեկը վերջացրեց յերկրային գոյությունը։ Յեղբայրները շտապ հավաքվում եյին մեռածի մահճի մոտ։

ՄԱՐԴՈՒ ՄԱՀԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԻ ԿՅԱՆՔԸ

XI. ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՆՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՏԵՆԲԵՐԳԻ ՄԱՀԸ

Յեկավ ծերությունը—մարդկային գոյության վերջալույսը։ Գուտենբերգի այդ վերջին տարիները (1461—68) նոր արվեստի համար անպտուղ են՝ ութ տարվա ընթացքում նրա ձեռքով նախապատրաստված վոչ մի նոր տպագրական արտադրություն լույս չտեսավ տպագրական մամուլի տակից։

Յոհան Ենսֆլեյշ-Գուտենբերգը չկա նաև հայրական քաղաքի փոթորկահույզ դեպքերի ակտիվ գործող անձանց շարքում. նա միայն հանդիսատես է մայնցյան դրամայի։ Ներս են խուժում քաղաք վարձկան զորքերը, բոցավառվում են հրդեհները, և թափվում է քաղաքացիների արյունը։ Շուրջը յեռում է կատաղի կյանքը, բայց նա անցնում է ծերացած գլուտարարի կողքով, չդիպչելով նրան։

Արհեստավորների տասնյոթ տարվա կառավարումն ազատ քաղաք Մայնցի գոյության վերջին շրջանն եր։ Յուր առաջին քայլերից, ցեխեր նվաճած նոր մագիստրատը, ապարդյուն կերպով ուժ է ծախսում՝ քաղաքային ֆինանսները կարգավորելու և ամրացնելու համար։ Քաղաքի սնանկությունն անխուսափելի յեր։ Բազմաթիվ վարկատուների թշնամական շրջանը բոլորում է, պարտքերն այնքան մեծ են, վոր հույս չկա վճարելու—ապարդյուն դեսուդեն են ընկնում բյուրգերներն՝ պարտքի ծանր բեռը նրանց քաշում է դեպի հատակը։ Շպեյերյան տաճարային

կապիտուլը—մեկը խոշոր վարկատուներից—1450 թվականին հաջողեցրեց Մայնցի վրա դնել պապական ցասում և ինտեր-դիկտ։

Մայնցի մագիստրատն ասում է, վոր «այժմ... նրանք գե-րիների վիճակի մեջ են... վոչ մի տեղ հավասարիք չկա անձի և գույքի անձեռնմխելիության, քաղաքից դուրս նրանց համար չկա պահպանություն և խաղաղություն» և ավելացնում է. «չէ՞ վոր մենք ուզում ենք կատարել մեր պարտավորությունները Շպեյերյան տաճարական կապիտուլի հանդեպ, բայց այն ժամանակ մենք առիթ կտանք մեր դեմ դառնալու հազարավոր ուրիշներին, վորոնց նույնպես պարտքեր ունենք։ Մի հրդեհը կմարի, բայց հազարավոր նորերը յերևան կգան, և դրան վերջ չի լինի, վորովհետև հայցվորները չափազանց շատ են»։

Ֆինանսական դժվարություններից դուրս գալու վորոնում-ների մեջ, Մայնցի մագիստրատը փորձ է անում կռվի բռնվել յեպիսկոպոսի և Մայնցի հոգեորականության հետ, վորպեսզի վերջինիս արտոնությունների վերացման ճանապարհով և յեկե-ղեցու հարստության ոգնությամբ՝ քաղաքը դուրս բերի փա-կուղուց։

Քաղաքի վարչապետը, արդեն հիշատակած Կոնրադ Հու-մերին, մագիստրատի անունից դիմում է հոգեորականությանը և խնդրում մի տարով հրաժարվել մի շարք արտոնություն-ներից և այսուհետև մյուս քաղաքացիների հետ հավասար վճարել հացի և գինու տուրքերը։

Բայց սնանկացած քաղաքի արհեստավորները ձեռքի տակ չունեն հարկադրանքի ռեալ ուժ, վորը միայն կարող է հասցնել այդպիսի միջնորդության բավարարման։ Հոգեորականությունը մագիստրատի հետ գրագրություն է վարում, անընդհատ վի-ճում է յուր իրավունքների մասին՝ հրաշալի հաշվի առնելով յուր դրության հսկայական առավելությունները։

Յեպիսկոպոսը հիշեցնում է քաղաքին, վոր բյուրգերու-թյունը, մագիստրատի ընտրության իրավունքները և քաղաքա-յին ազատությունները, ստացել է յուր նախորդներից և, վոր, այդ իրավունքները հավիտենական են։ Հոգեորականու-թյունը յուր իրավունքները համարում է անսասան. առանց

այն էլ չափազանց շատ զիջումներ է արված քաղաքին։ Մի՞թե յեկեղեցու կողմից զոհաբերություն և օգնություն չի քաղաքին այն, վոր արդեն առաջ պակասեցրած են հոգևորականության ունեցած պարտքի տոկոսները, ինքը պարտքը ներված է մի յերրորդով և տրված են լրացուցիչ ոժանդակություններ։

Յեպիսկոպոս Դիտրիխն այնքան բարի յե, վոր մինչև անգամ համաձայնում է քաղաքին տալ ելի 14000 գուլդեն՝ նրա հետ դաշն և խաղաղություն կնքելու պայմանով։ Բայց այդ օգնության ստացման հետևին թաքնված է Մայնցը յեպիսկոպոսական քաղաք հայտարարելը։

Մագիստրատի դրությունն ավելի և ավելի յեր ծանրանում. մի կողմից փող կարելի յեր ստանալ միայն յեկեղեցուց, և նրան պիտի հարկադրել այդ բանին, մյուս կողմից անհրաժեշտ է յեկեղեցու աջակցությունն ու օգնությունը, վորովհետև յեպիսկոպոսը կարող է Շպեյերից և մյուս վարկատուներից պաշտպանվելու միջոցներ հաջողեցնել։

Վերջապես, կարծես բախտը ժպտաց քաղաքացիներին։ Յեպիսկոպոսական աթոռի համար յերկու ազդեցիկ իշխանների միջև սկսված պայքարը լայն ասպարեզ եր բաց անում քաղաքական ճարպիկ խաղերի համար, և քաղաքը հնարավորություն ուներ թանգ ծախելու յուր աջակցությունը—կարևոր եր միայն հաշվի մեջ չսխալվել։

Յեպիսկոպոսական պատերազմն այսպես սկսվեց. յեպիսկոպոս Դիտրիխին, վոր մեռավ 1459 թվականին, հաջորդեց կոմս Դիտեր ֆոն Իզենբուրգ-Բյուդինգենը։ Յերկու տարվա կառավարումից հետո՝ նրա և պապի միջև կոնֆլիկտ առաջացավ, և Պիոս II-ը պաշտոնազրկեց անհնազանդ յեպիսկոպոսին 1461 թվականի օգոստոսի 21-ին։ Յեպիսկոպոսական ամբիոնը տրվեց կոմս Ադոլֆ ֆոն Նասսաուին, բայց Դիտերն ամուր կպած եր իշխանությանը և չեր ուզում անձնատուր լինել։ Վեճը պիտի լուծվեր զենքով։

Բյուրգերները բանակցություններ եյին վարում և՛ Դիտերի, և՛ Ադոլֆի հետ, տատանվելով դաշնակցի վերջնական ընտրության մեջ և ճխտելով գինը։ Վերջապես հաղթեցին Դիտերի կողմնակիցները, դեպի վորը ձգտում եյին արհեստավորները և վորը շատ եր խոստանում։

Ցասումի տակ ընկած յեպիսկոպոսի՝ Մայնցի հետ կապած համաձայնությունն ասում եր, վոր մագիստրատը և քաղաքացիք միանում են Դիտգերի՝ պապին տված, վճռափոխության գանգատին, ապահովում է նրա և նրա դաշնակիցների պահպանությունը քաղաքում և քաղաք են ընդունում նրա հեծելազորը, բայց վոչ ավելի, քան յերկու հարյուր մարդ: Այդ ծառայությունների համար իբրև հատուցում, յեպիսկոպոսը հայտարարում է հոգևորականության մի շարք արտոնությունների վերացումը և բյուրգերներին ու քաղաքի բնակիչներին խոստանում է պաշտպանել պարտքերի համար կատարվող հարձակումներից ամբողջ մայնցյան կուրֆյուրստության մեջ:

Այդ համաձայնությունը քաղաքը դասում եր Ադոլֆ ֆոն Նասսաուի մահացու թշնամիների շարքը: Քաղաքացիք պիտի հասկանային, վոր հաղթելուց հետո, նա իրենց չի խնայի, կուրֆյուրստությունը համեղ պատառ եր, և հակառակորդները կռվում եյին լրջորեն:

Բայց մագիստրատն ու արհեստավորները ուզում եյին ստանալ ամեն տեսակ ոգուտներ, առանց լուրջ խճճվելու պատերազմի և նրան հետևող պատահականությունների մեջ—կարճատև և անխոհեմ քաղաքականություն: Նրանք համառությամբ պահպանում եյին պայմանագրի այն կետը, վոր Մայնցում Դիտգերի հեծելազորից յերկու հարյուրից ավելի չլինի և և չեյին համաձայնում նրա խնդրին՝ կայազորի թիվն ավելացնելու մասին: Կարծես թե պատերազմը չեր կարող սպառնալ նրանց կյանքին և կայքին:

Սրա շնորհիվ Դիտգերը Մայնցը յուր հիմնական հենակետը դարձնելու հնարավորությունից զրկված եր, իսկ քաղաքը յենթակա յեր լուրջ վտանգի:

Փաստորեն խճճվելով պատերազմի մեջ, քաղաքացիք հրաժարվում եյին պատերազմը հայտարարելուց և ինչպես ջայլամը մոտեց-
գլուխը կոխում է ավազի մեջ թշնամու անխուսափելի
ման դեպքում, նրանք մտածում եյին պարզապես քաղաքային
ամուր պարիսպների հետևին նստելով ազատվել:

Դիտգերի կողմնակիցների հորդորներին քաղաքացիք պարզապես պատասխանում եյին. «Քաղաքը ծանրաբեռնված է

պարտքերով, այժմ նրանց հաջողվել է փոխադարձ համաձայնության գալ մի քանի վարկատուների հետ և այդ պարտավորությունները պետք է կատարել, այլապես ամեն ինչ կկործանվի, իսկ պատերազմի հայտարարումը մեծ ծախսեր կպահանջի»:

Մայնցի քաղաքացիք հաշվի մեջ յերկու անգամ սխալվեցին—նախ՝ ընտրելով, անաջող հովանավոր, և յերկրորդ՝ վորոշելով, վոր պատերազմին կարելի չէ մասնակցել առանց կռվելու և կորուստներ կրելու:

Կոմս ֆոն Նասսաուն հաղթեց յուր հակառակորդին: Թըշնամու զորքերը մոտեցան քաղաքին և, ինչպես լինում է սովորաբար, առաջ լուռ և թաքնված՝ ղեկավարող կուսակցության թշնամիները, վոտքերի տակ հող զգալով, իրենց քաղաքացիներին հարվածեցին թիկունքից: 1462 թվականի հոկտեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը դավաճանները բաց արին քաղաքի դռները Ադոլֆի վարձկան զորքերի առաջ:

Քաղաքացիք փորձ արին պաշտպանվելու, բայց արդեն շատ ուշ էր: Մայնցի գիշերային փողոցներում, վորոնք շուտով լուսավորվեցին հրդեհներով, առաջացավ վոչ թե պատերազմ, այլ կոտորած: Այդ գիշեր մինչև հինգ հարյուր մարդ սպանվեց և հարյուր հիսուն կողոպտված տուն վոչնչացավ բոցերի մեջ: Անխնա կողոպտում և կոտորում եյին Իզենբերգի բոլոր կողմնակիցներին:

Մի որից հետո կուրֆյուրստ և արքեպիսկոպոս Ադոլֆը մտավ սանձահարված քաղաքը: Նրա կարգադրությամբ կալանքի տակ առնվեցին մոտավորապես ութ հարյուր անհնազանդ բյուրգերներ: Նրանք աքսորվեցին քաղաքից, իսկ նրանց գույքը բռնագրավվեց:

Հաղթող Ադոլֆն առատորեն պարգևատրեց յուր բարեկամներին և ոգնականներին անվնաս մնացած տներով և աչքից քցված քաղաքացիների կողոպտված գույքով:

Մայնցը զրկվեց վաղեմի ազատություններից և, ինչպես 300 տարի առաջ, նորից դարձավ յեպիսկոպոսական քաղաք:

Այսպես խաղացվեց Մայնցի դրաման:

Զանազան տեսակի զենքերի մեջ, վորոնցով տարվում եր կռիվը յերկու յեպիսկոպոսների միջև, ոգտագործվեց նաև գրա-

տպությունը—Մայնցի նվերն աշխարհին։ Մի քանի տպագրած փաստաթղթեր են մնացել սերունդներին և պատմաբաններին։

Ֆրիդրիխ III թագավորի նամակը 1461 թվականի օգոստոսի 8-ից Դիտերի պաշտոնազրկության մասին։

Դիտերի անջատումը Tibur Kalendas Septembris-ից պապ Պիոս II-ի ձեռքով 1461 թ.։

Դիտերի բաց նամակը նրա պաշտոնազրկության մասին 1462 թվականի ապրիլի 6-ին, և այլն։

Մայնցի ժամանակագրությունն ասում է, որ Դիտերի հրովարտակը, հրապարակված 1462 թվականի մարտի 30-ին, «տպված եր բազմաթիվ օրինակներ, Մայնցի առաջին գրատպող Յոհան Գուտենբերգի միջոցով»։

Այս վկայությունը լիովին հավաստի չի կարելի համարել, որովհետև այդ հրովարտակի գտնված օրինակները տպագրված են Ֆուստ-Շեֆերի տպարանի շրիֆտով։

Մայնցի փոթորկահույզ պատահարները Գուտենբերգի արվեստը ներքաշեցին չար հոսանքի մեջ և յենթարկեցին նրան քաղաքական նպատակների։ Իսկ ինքը Գուտենբերգը՝ փորձով իմաստնացած և տարիներով ծանրաբեռնված՝ անմիջական մասնակցություն չուներ այդ օրերի քաղաքական պայքարի մեջ։ Բայց գյուտարարի մտերիմներն ու ընկերները Իզենբուրգի կողմնակից եյին։ Գուտենբերգի քույր Ելզայի ամուսին Կլաուս Վիցտումը և նրա փեսա Յոհան Հումբրեխտը—յերկուսն էլ ընկան Մայնցի նոր տիրողի աքսորվողների ցուցակների մեջ և նրանց կայքերը բռնագրավվեցին։

Ադոլֆի կառողի թշնամիներից մեկն եր դոկտոր Կոնրադ Հումերին, վորը Գուտենբերգին փող եր փոխ տալիս նրա վեր-
ջին տպարանական աշխատանքների համար։ Հնարավոր է, վոր
«Կաթալիկոնի» հրատարակությունն իրագործվեց նրա փո-
ղերով։

Գյուտարարի համար հանգամանքներն անբարեհաջող են դասավորվում. նրա համակրանքը դեպի պարտված կուսակցությունը գաղտնի չեր կարող մնալ, բայց քաղաքի դժբախտությունն անսպասելիորեն արգասավոր յեղավ նոր արվեստի համար և արագացրեց նրա տարածումը Գերմանիայում և այլ

յերկրներում։ Անհանգստության և անվստահության այդ օրերին, Մայնցից հեռացած բազմաթիվ քաղաքացիների մեջ եյին նաև տպարանների գործարարները։ Քաղաքից հեռանալով նրանք ձեռնաթող չեյին անում իրենց գործը և այդ նրանց վաստակ տվեց, իսկ ոմանց նաև հարգանք օտարության մեջ։

Մայնցումն էլ գրատպությունը չկործանվեց. Ֆուստի և Շեֆերի ձեռնարկությունը պահպանվեց և մոտակա ժամանակի ընթացքում հրատարակում եր նոր տպագրական յերկեր։

Յեպիսկոպոսական պատերազմը և Մայնցի անկումը—Գուտենբերգի կյանքի վերջին անցքն է. այնուհետև դանդաղ մարում է նրա ծերունական գոյությունը։ Միայն գյուտարարի անունը բացված է, վորպես վաղեմի հաղթանակների դրոշ և հիշեցնում է կենդանի մարդու մասին։

Այդ դրոշը յերևում է հեռվից։ Դեռ վաղուցվանից ֆրանսիական թագավոր Կառլոս VII-ը գիտեր պարոն Գուտենբերգի մասին, վոր Մայնցումն է, գերմանական թագավորության մեջ, վորը հնարել է գրատպությունը։ Նրա մոտ ուղարկում է մետաղի վրա մասնագետ փորագրող Նիկոլա Ժանսոնին, Տուրի դրամատան պետին, նոր արվեստի մասին տեղեկանալու։

Այդ դրոշի փառքը հարկադրում է տիրական և փառասեր Ադոլֆ ֆոն Նասսաուին դուրս գալ նոր արվեստի գյուտարարի հովանավորի դերում՝ մոռանալով այդ մարդու նախկին մեղքերը։

1465 թվականի հունվար 18-ի դեկրետով, Մայնցի արքեպիսկոպոսը հայտարարում է, վոր «ծառայությունների համար, վոր ցույց տվեց մեզ և մեր քաղաքին հավատարիմ Յոհան Գուտենբերգը, նա ընդունվում է ծառայության արքեպիսկոպոսի պալատում, պարգևատրվում է հագուստով, ստանում է յուր տան համար քանի չափ հացահատիկ և յերկու տակառ գինի, բայց չվճարի և վոչ վոքի չտա, ազատվում է ամեն տեսակ տուրքերից և հարկերից մեր Մայնց քաղաքում»։

Շատ էլ առատաձեռն չվարձատրեց կուրֆյուրստը նշանավոր մարդուն։

Կուրֆյուրստի նվիրած նյութական բարիքներն, իհարկե, չեյին կարող ապահովել գյուտարարին, Գուտենբերգն ապրուստի



Գուտենբերգի դազգյահը

այլ միջոցներ պիտի ունենար. արքեպիսկոպոսական պալատի այդ նվիրաբերություններով եվ գյուտարարը յերկար չոգտվեց — նա մեռավ 1468 թվականին։ Մինչև յուր կյանքի վերջը նա տիրապետում էր տպարանին, վորը հետո անցավ դոկտոր Հումերիին։

Պահպանվել է մի փաստաթուղթ, գրված 1468 թվականի փետրվարի 26-ին Կոնրադ Հումերիի ձեռքով, վորը հաստատում է,

թենա կուրֆյուրստ Ադոլֆի բարեհաճությամբ Գուտենբերգի մահից հետո տիրանում է «մի քանի կաղապարների, շրիֆտի, գործիքների և այլ բաների, վորոնք վերաբերում են տպարանային արտադրությանը», վոր թողել է Գուտենբերգը իրենից հետո, վորոնք առաջ էլ, այժմ էլ նրա հաջորդի սեփականությունն են կազմում:

Սրա փոխարեն Հումերին պարտավորվում էր, յեթե նա ուզենա օգտագործել թված նյութերը, ունենալ տպարան միմիայն Մայնցում, իսկ տպագրական սարքը ծախել ցանկանալու դեպքում՝ գերադասություն տալ Մայնցի քաղաքացիներին:

Կա մի վերսիա, վոր գյուտարարը ծերության մոտ կուրացավ: Այս կլիներ հետևողական և վերջին հարվածը նրա անիրավացի ճակատագրի:

Գուտենբերգը թաղվեց Մայնցում ֆրանցիսկյանների[58] յեկեղեցում: Հետագայում այդ յեկեղեցին կործանվեց, և գյուտարարի գերեզմանից հետք չմնաց:

Յոհան Գենսֆլեյշ-Գուտենբերգի պատմությունը—մարդու և գյուտարարի—վերջացած է: Մեր առջևն է միաձույլ մի ժայռ, համարյա յոթանասնամյա կյանքի, վորի վաղեմիությունը—կես հազարամյակ է: Ժամանակն արդեն նրա վրա կատարել է յուր քայքայիչ աշխատանքը.

Գուտենբերգի կենցաղի բազմաթիվ տարիների անցքերը ջնջված են մոռացությամբ և գիտական հետախուզողների բոլոր ջանքերը չեն կենդանացնի գյուտարարի օրերն ու գործերը՝ նրանց լիակատար ավարտվածությամբ և գույների ինքնատիպ փայլով:

Պե՞տք է արդյոք ցավել այդ մասին:

Անցյալում մենք ամենից առաջ վորոնում ենք զարգացումը և հաստատումը մեր Թեորիայի, վորը տալիս է «կողմնորոշման ույժ, հեռանկարի պարզություն, հաստատ համոզմունք գործի մեջ, մեր գործի հաղթանակի հավատը»: Մարդկային պատմության փայլուն էջերը տալիս են մեզ մեծ վոգևորություն մեր պայքարի մեջ:

Ուշադիր քննադատական հայացքի տակ, ամենաուշ կեղծիքների բերուկ շերտերը՝ ավազն ու փոշին, վայր են թափվում

մարդկային անցյալի վերածնվող ճշմարտության և նրա առաջնակարգ ներկայացուցիչների կյանքի վրայից։ Գրատպության գյուտարարը կանգնում է մեր առաջ—թեկուզ միայն ուրվագծերով—յուր փոթորկահույզ և արգասավոր ժամանակի զարմանալի ագուցարանի մեջ։ Նա սևագործ բանվորն է յուր բեկվող դարաշրջանի, վորը խորտակում էր փտած ֆեոդալական հիմքերը, վորպեսզի կապիտալիստական կեղեքման և ավազակության վերջին վողբերգության միջով հասցնի մարդկությունը կոմունիստական հասարակության պայծառ ապագային։ Այդ սևագործ բանվորը յուր խնդիրը կատարեց լավ՝ հանդես գալով վորպես գեղեցիկ օրինակ յեռանդի, քաջարի համառության և հավատի դեպի յուր գործը։

XII. ԽՌՈՎԱՀՈՒՅԶ ԱՇԽԱՐՀԸ

Գուտենբերգը վոչ միայն գրատպությունն ստեղծեց, այլև նախապատրաստեց տաղանդավոր աշակերտների ամբողջ սերունդ։ Նրանցից մի քանիսը դեռևս ուսուցչի կենդանության ժամանակ տպարաններ հիմնեցին Գերմանիայի մի շարք քաղաքներում և նույնիսկ օտար յերկրներում։

Յերբ «Նոր արվեստը» անցավ վորոնումների և փորձերի զարգացման բոլոր աստիճանները, յերբ գրատպության տեխնիկան և՛ մշակված, և՛ յուրացրած, վարպետ Յոհանը իրեն չեր անջրպետում «արտադրողական գաղտնիքների» վահանով շրջապատող աշխարհից, վորտեղ բացված եյին լայն հնարավորություններ՝ նոր արտադրության զարգացման համար։ Անձնական հարստացման ձգտումը և սրա հետ անխուսափելիորեն կապված մրցման յերևույթը չեր, վոր վորոշում եր գյուտարարի և նրա ոգնականների ու հետևողների հարաբերությունները։ Յեթե Գուտենբերգը յուր գյուտի ֆորմուլան ամբողջովին չբանար նրանց առաջ, ի՞նչպես կարող եյին այդ մարդիկ այնպիսի արագությամբ հիմնել սեփական ձեռնարկություններ, ստեղծել տպագրական արտադրության բազմաթիվ նոր օրինակներ և, իրենց հերթին, սովորեցնել բազմաթիվ նոր վարպետների։

Մեծ գյուտարարը անսովոր առատաձեռնությամբ, լիքը բուռով շաղ եր տալիս յուր շուրջը նոր արվեստի սերմերը, հողը բարեհաջող եր, և բերքը չուշացավ։

Գուտենբերգը կարող եր յուր աշակերտներին (վորոնք

ցրվել եյին աշխարհում՝ վերջինս հպատակեցնելու գրատպության արվեստին) ասելիքն սկսել նույն խոսքերով, վոր, պատմաբանի վկայությամբ, մի ժամանակ արտասանեց նվաճող Ատիլլան յուր զինվորներին Կատալաունյան ճակատամարտից առաջ.

«Արդեն այսքան ժողովուրդների հաղթելուց հետո և, համարյա, հասնելով աշխարհի տիրապետության, յես անմիտ և ծիծաղելի կլինեյի իմ աչքում, յեթե մտածեյի դեռևս հրահրել ձեզ խոսքերով՝ կարծես թե դուք կռվել չգիտենայիք։ Թողնենք այսպիսի միջոցը վորևե համբակ-զորավարի և անփորձ զինվորականների, այս անվայել կլիներ և՛ ձեզ, և՛ ինձ»։

Իրոք, նոր գյուտի հաղթանակներն այնքան անվիճելի յեն և նրա մարտիկների վարժեցումն այնքան ամուր, վոր գործը կարիք չուներ հրահրման և հորդորի։

Ատիլլան Կատալաունյան դաշտերում և Գուտենբերգը Մայնցում պարտություն կրեցին. բայց Ատիլլայի հորդաների ջախջախումը հոների տիրապետությանը վերջ դրեց, իսկ Գուտենբերգի անհաջողությունը բոլորովին վնաս չեր հասցնում նրա խելքի և ձեռքերի գործին, վորովհետև մի դեպքում գործը վերաբերում է վայրենի հրոսակների ձգտման՝ ստրկացնելու և կոտորելու, իսկ մյուսում—գյուտարարական աշխատանքի կենսական ստեղծագործական սկզբունքին։

Գրատպության պատմության մեջ պահպանվել են Գուտենբերգի մի շարք աշակերտների անունները։ Դրանցից ամենատաղանդավորը՝ Շեֆերը, դավաճանեց յուր ուսուցչին։ Դեռ գյուտարարի կենդանի ժամանակ նա դառնում է Քրիստինա Ֆուստի ամուսինը և այս հանգամանքը վորոշում է նրա այդորվա վարքը և նրա վաղվա ուղին։ Շեֆերին կարելի յե հաշվից դուրս գցել։

Գուտենբերգի մոտ Շեֆերի հետ միաժամանակ աշխատում եյին Բերթոլդ Ռուպպելը՝ Հանաու քաղաքից և Հենրիխ Կեֆերը։ Նրանք յերկուսն ել ֆրանցիսկյան վանքում ներկա եյին Ֆուստի յերդմանը և ներկայացնում եյին գյուտարարի կողմը։

Կեֆերը 1473 թվականին յերևում է Նյուրենբուրգում, վորտեղ զբաղվում է գրատպությամբ Զենզենշմիդտի ընկերակցությամբ։

1462 թվականին Ռուպպելը, Մայնցի ավերածությունից հետո, տեղափոխվում է Բազել: Բարեպատեհ հանգամանքների շնորհիվ գրատպությունն այդ քաղաքում արագ զարգանում է: 1480 թվականին մոտ Բազելում կար 26 տպագրական ձեռնարկություն. հետևյալ տասնամյակում հիմնվում է քսան նորը, իսկ XV դարի վերջին տասնամյակում՝ ելի քսան:

Չորրորդ աշակերտը՝ ստրասբուրգցի Յոհան Նումայստերը, տեղափոխվեց Իտալիա և Ֆոլինյո քաղաքում, 1471 թվականին լույս ընծայեց "Leonardi Aretini de bello italiano adversus Gothos„ և 1472 թվականին "La comedia di Dante„:

Նշանավոր կարյերա չէր սպասում Յոհան Մենտելինին, որը պատկանում էր Ստրասբուրգի գեղարվեստագետների և ոսկերիչների ցեխին: Գուտենբերգի և Ֆուստի համատեղ աշխատանքի շրջանում, նա բնակվում էր Մայնցում և նրանց բաժանվելուց հետո, վերադարձավ Ստրասբուրգ, որտեղ գյուտարարի օրինակով, տպագրեց «Կաթոլիկոնը»-ը և աստվածաշունչը:

1468 թվականին Ֆրիդրիխ III-ը Մենտելինին՝ նրա արժանիքների համար, բարձրացրեց ազնվական արժանապատվության: Այդ «բարձր պատիվը» նա նվաճեց ըստ յերևույթին այն բանով, որ նա առաջիններից մեկն էր, որ դրեց գրատպությունը լայն արդյունաբերական հիմքերի վրա և, անկասկած, կարողացավ կապիտալ դիզել: Նա ոչ միայն լույս ընծայեց շատ բազմազան հրատարակություններ, այլև ձեռնարկեց նրանց նոր ձևի վաճառքի կազմակերպման: Նա յեր առաջինը, որ ավեց յուր ֆիրմայի արտադրանքի տպագրած ռեկլամը:

Բամբերգում տպագրության գործը հիմնեց Ալբրեխտ Պֆիստերը: Յենթադրություն կա, որ Պֆիստերը Բանբերգում, Գուտենբերգի անմիջական ղեկավարությամբ, տպագրեց 36 տողանի աստվածաշունչը:

Հնարավոր է, որ Գուտենբերգի աշակերտների շարքին էյին պատկանում սվենդեկմացի Կոնրադը և Առնոլդ Պաննարցը —առաջին տպագրիչներն Իտալիայում: Հռոմի մոտ գտնվող Սուբիյակո վանքում նրանք առաջին անգամ ձուլեցին ռոմանական տիպի շրիֆտ, բայց դեռևս գոթականի ուժեղ ազդեցությամբ:

Նրանց առաջին գիրքը լույս տեսավ 1468 թվականին:

Մեծ գյուտարարի վերջին աշակերտները՝ Հենրիխ և Նիկոլա Բեխտերմյունցե և Որտենբերգացի Վիգանդ Շպիսը, ուսուցչի հետ էին նրա կյանքի վերջալույսին։

Բեխտերմյունցե յեղբայրները գյուտարարին ազգական էին և, ըստ չերևույթին, աշխատում էին նրա անմիջական ղեկավարությամբ։ Յերբ 1467 թվականին ավագ յեղբայր Հենրիխը վախճանվեց, նրան փոխարինեց Վիգանդ Շպիսը, որի հետ միասին նույն տարվա նոյեմբերի 4-ին Նիկոլա Բեխտերմյունցեն լույս ընծայեց "Vocabularium latinotentonicum„։ Այս գրքի առաջին հրատարակությունը տպագրված է Գուտենբերգի «Կաթոլիկոնի» շրիֆտով։

Գուտենբերգի արվեստը տարեցտարի ավելի և ավելի արագ տարածվում է Յեվրոպայում և յերկրի քարտեզը սերմանում աշխատող տպարանների կետերով։

XV դարում տպագրած գրքեր էին լույս տեսնում Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդի, Հունգարիայի, Իսպանիայի, Անգլիայի, Դանիայի, Շվեդիայի շատ քաղաքներում և մինչև անգամ Թյուրքիայում (տեղեկություն կա Կոստանդնուպոլսում տպարան հիմնելու մասին)։

Մինչև 1500 թվականն ամբողջ աշխարհում արդեն տպագրված էր 30000 անուն գիրք։

Խոսք յերրորդ

Անհանգիստ մարդ էր այդ յունկեր Գուտենբերգը—անհանգստությունն ու հուզումը աշխարհ բերին նրա գյուտը։

Առանց այն էլ ապստամբություններն ու բունտերն ավելի և ավելի յեն ցնցում ֆեոդալական հիմքերը, առանց այն էլ շարունակ ավելի անհանգիստ է դառնում ասպետների, հոգևոր և աշխարհական տերերի քունը—ինչո՞ւ ուրեմն, դուք հարգելի Գուտենբերգ, վառած ջահը ձեռքին մոտենում եք այդ վառոդի պահեստին։

Պապերը խոսում էին տպագրությունը բոլորովին արգելելու անհրաժեշտության մասին և նրանք իրավացի էին։ Հոգևոր գրքերն առաջացնում են հերետիկոսություն և «դայթակղեցուցանեն զմի ի փոքրկանցս», իսկ աշխարհիկ գրքերը—ավելի

վատ՝ խարխլում են կրոնի հիմունքները և յեկեղեցու հեղինակությունը։ Գրքերի միջոցով տարածվող գիտությունները նույնիսկ վարդապետներին խլում են բարեպաշտությունից՝ «վարդապետները թողնում են հոգևոր վարժությունները՝ յերկրային գիտության հիմարություններին ծանոթանալու համար։ Այս չի՞ նշանակում արդյոք թողնել անբիծ ամուսնուն՝ թատրոնի պոռնիկների հետ միանալու համար»։

Յեվ ահա այժմ անհանգստացած պապը պետք է գրաքննություն մտցնի, հսկի հրատարակություններին, վորոնք լույս են տեսնում չգիտես ինչի՛ համար այդպիսի ապշեցուցիչ քանակությամբ, բռնագրավի վնասակարները, իսկ հանցավոր հեղինակներին և տպարանատերերին այրի խարույկների վրա։ 1546 թվականին պապը մտցնում է «Ցուցակ արգելված գրքերի»՝ բարի կաթոլիկներին մամուլի դայթակղություններից զերծ պահելու համար։ Այդ ցուցակի մեջ նշանակված են մարդկության շատ նշանավոր գրքեր, վորոնք մեծ ծառայություն են արել մարդկանց՝ բնության և կեղեքողների դեմ վարած պայքարում։ Այդ ցուցակն անվերջ ընդարձակվեց այն ժամանակից անցած տարիների ընթացքում, նա մինչև այսոր էլ գոյություն ունի։ Ճիշտ է, պապերն այլասերվեցին և իշխանություն չունեցին, վորպեսզի այրեն մամուլի անհաճելի յերկերը և պատժեն նրանց ստեղծողներին։ Բայց դեռ ամեն ինչ կորած չէ—«կան դեռևս դատավորներ Բեռլինում», և «Բեռլինի նոր դատավոր» Հիտլերը կենդանացնում է միջնադարի մռայլ սովորույթները։ Ֆաշիստական տիրապետության մի քանի ամիսների ընթացքում Բեռլինում այրված է 20 միլիոն հատոր «անբարեհույս» գրականություն։

Թագավորին և այլ տիրապետողներին շատ հոգսեր պատճառեցիք դուք, Գուտենբերգ, և ինչքա՜ն մարդ տուժեց ձեր պատճառով։ Միայն Ֆրանսիայում 1660 թվականից մինչև 1756 թվականը Բաստիլում բանտարկվեցին 869 հեղինակ, տպագրող, գրավաճառ և լրագիր հրատարակող։ Անգլիայում 1632 թվականին գրականագետ Պրայնի ականջները կտրեցին՝ պալատական թատրոնին վիրավորանք հասցնելու համար, բայց այս դեռ մարդկայնորեն եր։ Ֆրանսիայում Եթյեն Դոլեյին այրեցին, իսկ յերգիծաբան բանաստեղծ Կլոդ Լեպտին կախեցին։

Ձեզ մեղադրում են այն բանում, վոր դուք նպաստողն եք շատ հեղափոխությունների, վոր ձեր գյուտը ոգնեց վոտքի հանել և կազմակերպել մասսաներին, վորոնք ստեղծված եյին իր ժամանակին կերակրելու և հարստացնելու ֆեոդալներին, իսկ հետո՝ կապիտալիստներին։

Արդարացեք, յեթե կարող եք, վարպետ Յոհան։

Հասկանում եք, վոր դուք սպանել եք կուլտուրայի և արվեստի զարմանալի նվաճումները։ Մեծ անցյալը հին աշխարհի և հիմունքները միջին դարերի՝ մարդիկ մարմնացրին շենքերի մեջ։ Յեգիպտական պիրամիդները, հունական և հռոմեյական մեհյաններն ու հասարակական կառուցվածքները, միջնադարի տաճարներն ու պալատները—դրանք թանձրացումներն են ժողովուրդների նյութեղեն կուլտուրայի, նրանց կենցաղի, արվեստի և հավատալիքների—այդ քարե գրքերն են հեռացած սերունդների։

Դուք նրանց հակադրեցիք փոքրիկ թղթե գրքեր, և ճարտարապետությունը մեռավ, չքացան այն վսեմ հուշարձանները. նրանց փոխարեն սկսեցին կառուցել պարզապես թատրոններ, բաղնիքներ, բնակելի տներ, տեխնիկական կառուցումներ։

Վո՛չ թե յես, այլ գրող Վիկտոր Հյուգոն ե մեղադրել ձեզ այդ բանում յուր հերոսներից մեկի բերանով։

Ձեր գյուտը խառնվեց մինչև անգամ բնության հաստատած կարգերի մեջ, խախտեց և փոփոխեց նրանց։

Ինչի՞ համար ե ստեղծված ժամանակը։ Մոռացության համար, վորպեսզի մարդկության ամեն մի նոր սերունդ զգա իրեն ահեղ յերկրի վրա նույնպես անճարակ և մերկ, ինչպես նախորդները։ Անցյալ փորձի կուտակած գիտելիքներից քչերը միայն պահպանվում եյին բերանացի հաղորդումով։ Իսկ այժմ գրատպությունը կառուցել ե գրքերի պիրամիդներ, վորոնց մեջ պահպանվում են այդ գիտելիքներն ու փորձը։ Նրանց հիման վրա գնում ե մարդկությունը գիտության և տեխնիկայի զարգացման ուղիով առաջ և առաջ, հաստատելով յուր տիրապետությունը բնության ուժերի վրա։

Ինչի՞ համար ե ստեղծված տարածությունը։ Մարդկանց բաժանելու համար, վորպեսզի միայնակ և հանդիստ աշխատեն

միավորներն ու ընտանիքները յերկրի յերեսին «յերեսի քրտինքով ձեռք բերելու իրենց հացը», իսկ այժմ մամուլը ամեն որ և ամեն ժամ տարածում է գաղափարներ և տեղեկություններ ամբողջ աշխարհում, հաստատում է մշտական հոգևոր փոխանակություն մարդկանց և ժողովուրդների միջև, միացնում է միավորները և հզոր կոլեկտիվները և նրանց շպրտում կեղեքողների դեմ կռվելու՝ լավագույն ապագայի համար և բնության դեմ՝ նրա հզոր ուժերն ոգտագործելու համար։

Ձեր գյուտը վրդովեց և շարունակում է վրդովել աշխարհը. մենք դրանով մեծարում ենք ձե՛զ, Յոհան Գենսֆլեյշ-Գուտենբերգ։

Յեթե գրատպության յերևան գալը վրդովեց աշխարհը, ապա առավել ևս ներգործություն ունեցավ հասարակական գոյության վրա լրագրի առաջանալը։

Լրագիր։ Այժմ այս խոսքը հասկանալի յե ամեն մեկին, ինչպես հացը և աղը։

Բայց լրագիրը յուր ժամանակակից կերպարանքով—սրած քաղաքական սայրով—կապիտալիզմի ծնունդն է։ Հեռու անցյալում լրագրի «նախահայրերը» միայն տարրական ինֆորմացիայի պարզ միջոցներ եյին։

Դեռևս կայսերական Հռոմում իշխանության հրամանով, արտոնյալ մարդկանց փոքր շրջանի համար, ստրուկներն արտագրում եյին քաղվածքներ սենատի արձանագրություններից և ավելի ուշ՝ ավելի ընդարձակ «տեղեկագրեր», վորոնք բացի սենատի նյութերից, պարունակում եյին տեղեկություններ զանազան անցքերի մասին, հաղորդագրություններ հաղթությունների և զինվորական զորահանդեսների մասին։

Միջին դարերում լրագրերի դերը խաղում եյին իշխանների և առանձին քաղաքների և, յերբեմն, մասնավոր մարդկանց նամակները զանազան դեպքերի ինֆորմացիայով։ Այդ նամակները ձեռքից ձեռք եյին անցնում։

Հին Հռոմում տեղեկագրերը գրավոր ինֆորմացիա եյին փոքրաթիվ ընտրյալների համար—իշխանությունը կանոնավոր կերպով հրատարակում եր։

Միջին դարերում, երբ Եվրոպան բաժանվեց բազմաթիվ անկախ կամ համարյա անկախ պետությունների, իշխանությունների, ազատ քաղաքների, երբ միասնական պետական լեզուն չքացավ, ինչպես Հռոմում, երբ կուլտուրան ընկավ, ինֆորմացիան դարձավ բոլորովին պատահական և անկազմակերպ։

Տպագրության արվեստի գյուտը յուր մեջ կրում էր լրագրի անխուսափելի վերածնությունը, բայց արդեն բոլորովին այլ հիմքերով։

Տպագրական լրագիրն առաջացավ այն ժամանակ, երբ սկսվեց հաստատվել կանոնավոր կապը, լրագրի գոյության երկրորդ (գրատպությունից հետո) անհրաժեշտ նախադրյալը։ Այս պատճառով, թեև XV դարի վերջից պահպանվել են ինֆորմացիոն թերթեր, որոնք լույս էին տեսնում Գերմանիայում և Ֆրանսիայում, այնուամենայնիվ համարում են, որ առաջին տպագրական լրագիրը լույս է տեսել XVI դարի սկզբին։

1516 թվականին կայսր Մաքսիմիլյանի հրամանով, Ֆրանց Տուրն Տաքսիսը սարքեց առաջին կանոնավոր հաղորդակցությունը Բրյուսելի և Վիեննայի միջև։ Այդ օրինակով փոստային կապը զարգանում էր Գերմանիայի այլ մասերում և կապեց նրան հարևան երկրների հետ։ Հենց այդ ժամանակ առաջին անգամ սկսեցին պարբերաբար լույս տեսնել տպագրած ինֆորմացիոն թերթեր և ստացան լրագիր անունը։

Ժամանակակից լրագրի տիպին ավելի մոտ պարբերական հրատարակությունները, որ կանոնավոր լույս էին տեսնում կարճ ժամանակամիջոցներով, առաջ են գալիս մի ամբողջ դար ուշ։ Ֆրանկֆուրտում քաղաքացի ոմն Եգենոլֆ Էմմելը 1615 թվականին շաբաթաթերթ հիմնեց, հետևյալ տարին նույն քաղաքում լույս տեսավ կայսերական փոստի վարիչ Բիրգդենի մրցող օրգանը։ Մոտակա տարիներին լրագրերի հրատարակությունը լայն ծավալ է ստանում։

Արևմտյան Եվրոպայի ժողովրդական տնտեսությունը հասավ այն մակարդակին, երբ լրագրի երևան գալը դարձավ անհրաժեշտություն և այդ անհրաժեշտությունն իրացվում էր։

Ռուսաստանում "Куранты" լրագրի նախատիպը—ձեռագիր թերթիկներ՝ զանազան պետությունների կյանքի նորություն-

ներով (գլխավորապես քաղվածքներ օտարերկրյա լրագրերից) յերևան յեկան Միխայիլ Ֆեոդորովիչ ցարի օրով։

Պետրոս ցարի հրամանով, 1703 թվականի հունվարից, Մոսկվայում սկսեց լույս տեսնել "Ведомости„ լրագիրը (ուշադրության արժանի զինվորական և այլ գործերի մասին, վորոնք պատահում եյին Մոսկվայի թագավորության մեջ և այլ շրջակա յերկրներում)։ Մի տարվա ընթացքում լույս տեսավ 39 համար "Ведомости„, նրանք տպագրված են մի կամ մի քանի ութածալ թերթիկից պղտոր յեկեղեցական շրիֆտով։ "Ведомости„-ի մեջ զետեղվում եյին և ռուսական լուրեր (նրանց աղբյուրը—հրամանները) և օտարերկրյա տեղեկություններ, վոր քաղվում եյին օտարերկրյա լրագիրներից։

Պետրոսի "Ведомости„-ն ծառայում եր նախ և առաջ ռուսական կառավարության հաջողությունները ու գործերը փառաբանելու համար։ "Ведомости„-ի առաջին համարում, վոր ղեկավարել եր ինքը ցարը, տպված ե «Նորին մեծության հրամանով Մոսկվայի դպրոցները (ակադեմիաները) բազմանում են և 45 հոգի լսում են փիլիսոփայություն և արդեն դիալեկտիկան ավարտել են. մաթեմատիկան շտուրմանական (նավարարական) դպրոցում 300 հոգուց ավելի ուսանում են և գիտությունը լավ յուրացնում»։

Տպագրական արվեստի ներմուծումն Ռուսաստան ավելի քան 100 տարի յետ եր մնացել արևմտյան Յեվրոպայից։ Նա ուշացավ այն պատճառով, վոր Ռուսաստանը տնտեսապես և քաղաքականապես շատ եր յետ մնացել յուր արևմտյան հարևաններից։ Գուտենբերգի օրերին ռուսական յերկիրը գտնվում եր թաթարների տիրապետության տակ.

Ժամանակը դեռ չեր յեկել, և «Մոսկովիայում» հայտնված առաջին օտարազգի-տպագրողը չար բախտի հանդիպեց։

Դեռ XV դարի 90-ական թվականներին, Մոսկվա յեկավ Լյուբեկի տպագրող Բարդուղիմեոս Գոթանը վորպես թարգմանիչ։ Տպել ե նա արդյոք մեր մոտ վորևե բան՝ հայտնի չե, բայց արևմուտքում տպագրած գրքեր նա մեր մոտ բերեց։ Գոթանի այցելությունն Ռուսաստանին վողբերգությամբ վերջացավ՝ նրան մեր մոտ ջրում խեղդեցին։

Մի քանի տասնյակ տարուց հետո միայն փոփոխված տնտեսական պայմաններն առաջ բերին Ռուսիայի առաջին մամուլի հիմնումը։

XVI դարում փողային տնտեսությունը և առևտրական կապիտալն արդեն խոր արմատներ էյին գցել մոսկովյան թագավորության մեջ։ Ռուս յերկրի յերեկվա տիրապետողները—խոշոր ֆեոդալները (բոյարները) և վանքերը—հանդիպում են ամրացող հակառակորդների՝ հանձին բազմաթիվ մանր կալվածատիրական դասի գյուղում և առևտրական կապիտալի՝ քաղաքներում։ Ազնվականության և վաճառականության հաղթանակն արտահայտվում է դիկտատուրայով—ցարական իշխանության հսկայական ուժեղացումով. որինակը—Իվան IV Ահեղ կոչվածը։

Վաճառականության և ազնվականության շահերը պահանջում էյին նվաճողական քաղաքականություն, կապի ամրապնդում օտարերկրյա պետությունների հետ՝ ռուսական հումույթի համար նոր շուկաներ ստեղծելու և փոխանակության ուժեղացում։ Թագավորության մեջ սկսվում է վերագնահատություն շատ արժեքների՝ ռազմական կազմակերպության, վարչական ձևերի և գյուղացիական մասսաների շահագործման միջոցների։

Ոտարազգիներից տեղեկանում են գրատպության արվեստի մասին, իսկ ներքին պրոցեսները պետության մեջ ստեղծում են անհրաժեշտ նախադրյալներ՝ նրան հայրենի հողում ամրապնդելու համար։

Ցարական իշխանությունը Ռուսաստանում տպարան հիմնելու արտաքին խթանն ստացավ Կազանի թագավորությունը նվաճելուց հետո։

Իվան IV-ի զենքը նվաճեց Կազանի թաթարներին, յեկեղեցին պիտի ոգներ գրավման ամրացմանը. այս նպատակով կառավարությունը հոգատարում էր բազմաթիվ նոր վանքեր հիմնելու նվաճած յերկրում։

1553—1555 թվականներին Ահեղի հրամանով շուկաներում գնվում էյին ձեռագիր սրբազան գրքեր, հավաքվում էյին ամբողջ յերկրում և ուղարկվում Կազանի արքեպիսկոպոս Գուրիային։ Բայց հավաքած գրքերը չէյին բավականանում, հավաքածների մեջ էլ կանոնավոր քիչ կար։ Հենց այդ ժամանակ էր, որ

Ռուսիայում տպագրած յեկեղեցական գրքի պահանջ զգացվեց, վորպեսզի ցարերի աշխարհական սուրը ներդաշնակորեն լրացվի հոգևոր զենքով՝ ռուսական ինքնակալության յենթակա այլացեղ ժողովուրդներին կեղեքելու համար։

Ոտարերկրյա վարպետներ դուրս գրելու յերկու փորձը՝ մեր մոտ տպագրական գործը դնելու, 1547 թվականին գերմանացի Շմիդտի միջոցով և 1552 թվականին դանիական թագավորի ոգնությամբ, վերջացան անաջողությամբ։

Ռուս մարդիկ հիմնեցին առաջին ռուսական տպարանը— Կրեմլի Նիկոլա Գոստունսկի յեկեղեցու սարկավագ Իվան Ֆեոդորովը և Պետր Տիմաֆեյեվ՝ Մստիսլավեց կոչվածը։ Յենթադրում են, վոր նրանք տպագրական գործը սովորել են իտալացիներից, վորովհետև իտալական լեզվից եյին փոխ առել տպագրական գործիքների անունները, վորոնք հետագայում մտան մեր լեզվի մեջ։

Առաջին տպարանը—Տպագրության տունը—հիմնվեց Մոսկվայում Նիկոլսկայա փողոցում, նրա կառուցելը տևեց տասը տարի։

XIV դարում Մոսկովյան թագավորությունն այցելող ոտարականների վկայությամբ՝ «Յուր ձեռնտու տեղադրությամբ ամենախիտ բնակեցրած յերկրում, պետության կենտրոնում, յուր բազմամարդությամբ և ջրային հաղորդակցության հարմարությամբ, Մոսկվան պետության լավագույն քաղաքն է և գերազանցություն ունի ուրիշներից՝ նրա մայրաքաղաքը լինելու։

Ինքը քաղաքը համարյա ամբողջովին փայտից է և շատ ընդարձակ, բայց հեռվից ավելի ընդարձակ է յերևում։ Այդ առաջ է գալիս նրանից, վոր համարյա ամեն տուն այգի և բակ ունի. բացի սրանից, քաղաքի ծայրին, յերկար շարքերով ձգվում են դարբինների և ուրիշ արհեստավորների շենքերը, վորոնք իրենց աշխատանքի ժամանակ կրակ են գործածում. այդ շենքերի արանքում էլ ընդարձակ դաշտեր ու մարգագետիններ կան»։

Պոսեվինը[59] մոտավորապես վորոշում է Մոսկվայի բռնած տարածությունը, մինչև թաթարների ձեռքով նրա հրդեհվելը

(1571 թ.) 8000 կամ 9000 քայլ. Ֆլետչերի[60] ասելով, նա այն ժամանակ 30 մղոն շրջապատ ուներ։

Մեխովսկին ասում ե, որ «Մոսկվան յերկու անգամ մեծ ե Ֆլորենցիայից և Պրագայից», իսկ 1553 թվականին Մոսկվա յեկած անգլիացիներին նա յերևացել ե Լոնդոնի չափ։

Հենց այս մեծ քաղաքում «որ ընկած ե հեռու Արևելքում, յեթե ոչ Ասիայում, գոնե Յեվրոպայի ծայրում» Կրեմլի պարիսպների կողքին, Կիտայ-Գորոդի սահմաններում, բուսավ առաջին տպարանը։ Այնտեղ, 1563 թվի ապրիլի 19-ին սկսեցին և 1564 թվի մարտին վերջացրին առաջին գրքի տպագրությունը՝ «Գործք առաքելոց, Թուղթ տաճարական և Թուղթ սուրբ Պողոս առաքյալի»։

Այս գիրքը տպագրած ե հոլանդական սերտ թղթի վրա, ունի մի շարք զարդարանքներ և անպայման լավն ե։

Յերկրորդ հրատարակությունն եր (1565 թ.) «աղոթարանը», իսկ յերրորդը—և ըստ յերևույթին վերջինը—«ավետարանը», որ լույս տեսավ 1564—1568 թվականներին։

Առաջին տպագրողների այսպես աջող սկսված գործունեությունն ընդհատվեց հանկարծակի և արագ։ Այն աղետը, վորից հավանորեն յերկյուղ եր կրում Գուտենբերգը և վորից նա խուսափեց, մի դար հետո հասավ առաջին տպագրողներին հեռու և նրան անծանոթ Ռուսաստանում։

Գիրք արտագրողները, տեսնելով, որ գրատպությունը նրանց զրկում ե վաստակից, խռովություն բարձրացրին սատանայի արվեստի դեմ. տպագրատունը 1568 թվականին հրդեհեցին և կողոպտեցին, իսկ նրա վարպետները փախան և փրկեցին իրենց կյանքը։

Իվան Ֆեոդորովը և Մստիսլավեցը հեռացան Ռուսաստանից և ապաստան գտան Լիտվայում։

Գրատպությունը Մոսկվայում վերականգնեց յերեք տարուց հետո. Անդրոնիկ Նևեժան և Նիկիֆոր Տարասիևը, Իվան Ֆեոդորովի նախկին աշակերտները, շարունակեցին նրա գործը և ոգտագործեցին նրա թողած շրիֆտը։

Իվան Ֆեոդորովը ոտար յերկրում շատ աշխատեց տպագրական արվեստում, համարյա ամբողջ կյանքը, բայց այլևս Ռուսաստան չվերադարձավ։

XIII. ՀԵՏԱԳԱՅԻՆԸ.

Գուտենբերգն ստեղծեց տպագրական տեխնիկան, որն ապրեց դարեր: Միայն խորագույն սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որ առաջացան կապիտալիզմի հաղթանակով, հող ստեղծեցին հետագա արմատական տեղաշարժերի համար՝ տպագրական տեխնիկայի մեջ: Կապիտալիզմը վերակառուցեց տպագրական արվեստն ըստ յուր պատկերի և նմանության—նա մեքենաներ մտցրեց բոլոր պոլիգրաֆիական պրոցեսների մեջ, հիմնեց հսկայական հրատարակչական և տպագրական ձեռնարկություններ, բազմաթիվ անգամ արագացրեց տպագրական արտադրության զարկերակը և անսահման լայնացրեց մամուլի ազդեցությունը յերկրների և ժողովուրդների կյանքում:

Տիրապետության համար վարած կռվում, մամուլը դարձավ բուրժուազիայի հզոր գործիքը՝ աշխատավոր մասսաների շահագործման և կեղեքման գործում: Տպագրական արտադրությունն ինքը փոփոխվեց, դառնալով կապիտալիստական արտադրություն, որը ծառայում է յուր տեր-կապիտալիստին՝ հավելյալ արժեք ստանալու համար:

Մարդկային հասարակությունը բաժանվեց «յերկու մեծ բանակի, յերկու մեծ՝ մեկը մյուսի դեմ կանգնած դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի».—անխուսափելիորեն մամուլն էլ պիտի բաժանվեր յերկու միմյանց թշնամի բանակի: Բուրժուազիան և կապիտալիստական պետությունը՝ փողով, սեփականության իրավունքով, ոստիկանական ուժով և գրա-

քննությամբ, մամուլը կապեցին իրենց հաղթական կառքին և պրոլետարիատին թողին միայն ընդհատակյա տպարանը և միայն հնարավորություն՝ դաժան կռվով խլելու իրենց սեփական մամուլն ունենալու իրավունքը:

XIX դարը — բուրժուազիայի տիրապետության և ծաղկման դարը — նշանակալից է Գուտենբերգի արվեստի մեջ մտցրած զարմանալի նորմուծություններով. այդ արվեստը, նրա տեխնիկան, որ կարծես յերկար ժամանակ պահվել եր սառցարաններում անաբիոզի[61] վիճակում, նորից ընկնում է լույսի և ջերմության ազդեցության տակ:

Գյուտարարական միտքը, արթնանալով յերկարատև նիրհից, նորեն և նորեն վերադառնում է գրատպության, որպեսզի Գենսֆլեյշ-Գուտենբերգի գործն առաջ շարժի հեռու: Տպագրական տեխնիկայի այս կերպարանափոխությունների ուղին, ի հարկե, միայն մեկն է փոքրիկ կետագծերից համաշխարհային տեխնիկայի զարգացման քարտեզի վրա, որի հիմնական մագիստրալներն են՝ շոգեմեքենայի և ներքին այրման շարժիչի գյուտը, քիմիայի զարգացումը և էլեկտրականության բազմատեսակ օգտագործումը:

XVIII դարի վերջին գրատպությունը մի փոքր նախապատրաստական քայլ արավ տպարանական տեխնիկայի փոփոխման ուղիով — մինչ այդ գոյություն ունեցող փայտյա տպագրական մամուլը փոխարինվեց մետաղյա մամուլով: Այդ նորմուծությունը մտցրեց անգլիացի Լորդ Ստենգոպը, որի անվանը կհանդիպենք հետո, և ինքն ըստ ինքյան, չմտցրեց ոչ մի հեղափոխություն տպարանական արտադրության մեջ, բայց նա կենիգի համար դյուրացրեց արագատիպ մամուլը գործադրության մեջ դնելու խնդրի լուծումը:

Գուտենբերգի արվեստի հետագա առաջխաղացման մեջ կենիգը նրա ամենափայլուն հաջորդներից մեկն եր:

Այն ժամանակ, յերբ հնադարյան ձեռքի մամուլը տասժամյա աշխատորում հնարավորություն եր տալիս պատրաստել միայն մինչև 1000 տպագրում շարվածքից, արագատիպ մեքենան, մինչև անգամ, յերբ նա շարժման մեջ եր դրվում մկանային ուժով՝ տալիս եր 1000—2000 տպագրում մի ժամում:

Կենիգի գյուտը նշանավոր է նրանով, վոր նա անմիջականորեն վորոշեց, վոր տպարանում փոխանակ մարդկային ուժի գործադրման, տպագրության կարիքների համար պետք անցնել շոգեշարժի ոգտագործման։ Սրանով տպագրական գործի մեջ խնայվում եր հսկայական քանակությամբ մարդկային աշխատանք, բացվում եյին լայն հեռանկարներ տպագրության հետագա արագացման և վերջապես վճռվում եր տպագրական ֆաբրիկայի հարցը—նոր տիպի խոշոր կապիտալիստական ձեռնարկության, հզոր տպագրական արտադրանքով, վոր հեղեղեց յերկիրները լրագրերով, բրոշյուրներով և գրքերով։

Արագատիպ մեքենան յուր նախնական տեսքով պարզ է։ Նրա հիմնական մասը «տալերն» է, վոչ մեծ տամալ (платформа), յետ ու առաջ շարժվող, վորի վրա մետաղյա շրջանակի մեջ ամրացրած է շարվածքը կամ ստերեոտիպը։

Շարժվելով առաջ, տալերն սկզբից լիտերներն անց է կացնում առանձին գլանակների տակով, վորոնք լիտերները ծածկում են տպարանական ներկով։ Շարժումն անխափան առաջ է գնում և ներկ քսած շարվածքը հպվում է սպիտակ թղթին, վորը շարժվում է գլանի վրայով։

Տպվածքն ստացված է, տալերի վրայի շարվածքը յետ է սահում և տպագրած թերթը դուրս է գալիս ընդունողի սեղանի վրա։

Կենիգի նախորդը—անգլիացի Նիկոլսոնը—1790 թվականին հրապարակեց արագատիպ մեքենայի առաջին ծրագիրը։ Նիկոլսոնի ծրագիրը չիրականացավ՝ նոր գաղափարն արձագանք չգտավ։

Բսան տարուց հետո միայն Կենիգը վերջնականապես ձևակերպեց այդ գաղափարը և գլուխ բերեց առաջին արագատիպ մեքենայի պատրաստումը։

Զարմանալի չե այդ ժամանակը—XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբը. այդ ժամանակաշրջանում գյուտերն ու հնարվածքները բազմանում են խելակորույս արագությամբ։ Համարյա արագատիպ մեքենայի և թղթի մեքենայական պատրաստման հետ միաժամանակ (այս մասին կխոսենք մի քիչ հետո) առաջ է գալիս լինոտիպը—տպագրական գործի նոր բնագավառ-



Ժամանակակից տպագրական մեքենաների ցեխ Պեչատի տպարանում

Մշտապես ամուր կապ է յեղել բնագրի և նկարների տպագրության տեխնիկայի միջև։ Ինքը Գուտենբերգի գյուտն առաջ յեկավ այն հողի վրա, որ նախապատրաստված էր փայտի վրա փորված նկարների տպագրության պատրաստման պրակ-

տեկայով։ Գրատպությունը յուր գոյության առաջին դարում լայնորեն ոգտագործեց և զարգացրեց փայտագործությունը (ксилография) և արդեն XV դարի վերջին կյանքի կոչեց փորագրությունը պղնձի վրա (гравюра)։ Փորագրությունը պղնձի վրա խոշոր քայլ էր դեպի առաջ՝ գրքի նկարազարդման հատկության համար մղած պայքարում։

Բայց մարդկային միտքը դրա վրա կանգ չի առնում և **XVI** դարում հայտնվում է ոֆորտը։ Ոֆորտ նշանակում է քիմիայի գործադրությունը նկարազարդային տպագրության մեջ. նա նշանակելի չափով հեշտացնում էր գեղագետ-փորագրիչի աշխատանքը և վերացնում փորագրության գլխավոր դժվարություններից մեկը։

Բացատրենք այս մանրամասն։ Փորագրողի առաջ դրված խնդիրն էր՝ փորագրել գրաբշտիհելով (պողպատյա գործիք՝ թեք կտրած սուր ծայրով*) կամ ասեղով՝ վերարտադրության համար նշանակված նկարը հղկած պղնձյա տախտակի վրա։ Փորագրությունը վերջացնելուց հետո, դուրս կտրած խորացած գծերը լցնում էին ներկով, իսկ հարթ մակերեսի ներկը խնամքով մաքրում էին։ Այնուհետև թուղթն ուժեղ հուպ էր տրվում պղնձյա տախտակին. ներկը փոսերից ծծվում էր թղթի մեջ և նկարը պատրաստ էր։ Բայց այս ձևը դժվար էր և յերկարատև, մեծագույն խնամք և ճշտություն էր պահանջում փորագրողից —բավական էր մի անզգույշ շարժում, ուշադրության թուլացում և սխալ քաշած գիծը, գուցե հենց նկարը վերջացնելիս, ամեն ինչ կփչացներ և կհարկադրեր նկարը նորից սկսել։

Ոֆորտը փոխարինեց փորագրությանը հետևյալ հասարակ և անվտանգ ձևով՝ նկարը հանում են նախապես լաքով ծածկած և ապա մրոտած մետաղյա տախտակի վրա, սրանից հետո, նկարի խորությունն ստացվում է բորակաթթվի միջոցով (ֆրանսերեն “eau forte„), վորը ուտում-մաշում է մետաղի լաքով չծածկած տեղերը։

Լիտոգրաֆիան հնարեց գերմանացի Ալոյիզի Զեննեֆելդը 1796 թվականին, այդ գյուտը յերևան յեկավ այն պատճառով,

---

*) «Ղալամ»—գործիք, վոր գործ են ածում մեզ մոտ վոսկերիչները, արծաթագործները («զարգյարները»)։

վոր նոր հասարակական պայմանները հարուստ հնարավորություններ եյին առաջացնում պատկերազարդ հրատարակությունների և ձայնանիշների տարածման համար և նրանց արտադրությունը եժանացում էր պահանջում՝ ձեռնարկողների շահի աճման համար։ Զեննեֆելդը հաստատեց, վոր քարի մի առանձին տեսակը, վոր հետագայում կոչվեց լիտոգրաֆիական, ունի բոլոր անհրաժեշտ հատկությունները թանկ պղնձին փոխարինելու համար, և բաց է անում նոր մեծ հնարավորություններ՝ նրանցից նկարներ տպելու համար։

Լիտոգրաֆիական քարը պղնձի նման հեշտ է յենթարկվում դեղախարման և այս ճանապարհով Զեննեֆելդին հաջողվեց ստանալ քարից ցցուն և խորացրած տպագրում։ Բայց, վոր ավելի կարևորն է, նա գտավ տափակ տպագրության միջոցը։

Բանը նրանումն է, վոր լիտոգրաֆիական քարը հիմնականում բաղկացած է ածխաթթվային կալցիումից և մի կողմից ընդունակ է յուր վրա հեշտությամբ ընդունելու ճարպերը, մյուս կողմից՝ բորակաթթվի ազդեցության տակ, դառնում է կալցիումի բորակաթթվային աղ, վորը համարյա անզգայունակ է դեպի ճարպերը։

Հատուկ ճարպոտ մատիտով կամ տուշով (սրանց բաղադրությունը դիմադրում է թթվուտի ազդեցության) քարի վրա գծեր են քաշում, հետո մշակում են քարը թթվուտով և քիչ խոնավացնելով, ծածկում են ներկով. վերջինս կպչում է քարին միայն այն տեղերում, վորտեղ գծված եյին ճարպոտ գծերը, իսկ մաքուր տեղերը ներկ չեն ընդունում։ Այսպես իրականացավ տպագրությունը հարթ քարից։

Թե վորքան էր եժանացնում լիտոգրաֆիան տպագրությունը, կարելի յե դատել նրանով, վոր արդեն 1798 թվականին ձայնանիշների առևտրական Ֆալտերը գրում է Աուգսբուրգի ուրիշ վաճառական Հոմբարտին, «վոր նա սոնատն առաջարկում է 1 գուլդեն 33 կրեյցերի փոխանակ, 30 կրեյցերով, վորովհետև սոնատը տպագրված է նոր չեղանակով»։

Այլ հասարակակարգը, մարդկանց այլ հարաբերությունները իրենց կնիքը դրին գյուտարարներ Կենիգի և Զեննեֆելդի կյանքի վրա, վորը պակաս դժվար և հակասական չէր, քան Գուտենբերգի կյանքը։

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Յոհան Ֆրիդրիխ Կենիգը ծնվել է 1774 թվականի ապրիլի 17-ին Էյսլեբենում։ Նա մանր հողատիրոջ վորդի յեր։ Մանուկ հասակում հաճախում էր ժողովրդական դպրոցը, հետո փոխադրվեց տեղական գիմնազիան և, վերջապես, զարմանալի 1789 թվականին, յերբ հարևան Ֆրանսիան ցնցվում էր հեղափոխության առաջին շրջանում, դեռահաս Կենիգն աշակերտ մտավ Բրեյտկոպֆի և Հերտելի Լեյպցիգյան գրային տպարանը։

Այնտեղ նա անցրեց յուր գիտակից կյանքի կեսը, հասկացավ տպագրության հնացած ձևերի փոփոխման անհրաժեշտությունը և այնտեղ նրա յեռանդն ստացավ այն ուղղությունը, վորի մեջ հետո անշեղ կերպով բացվում էր նրա պողպատյա լարը։

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը. ջահել, ուժերով լի բուրժուազիան առաջին անգամ գիտակցեց յուր իշխանությունը։ Սաղմնավորվում էր ամբողջ հասարակական կյանքի կապիտալիստական վերակառուցումն։ Փարիզի հեղափոխական պայքարը բուրժուազիային ակնհայտնի կերպով ցույց տվեց մամուլի ուժը՝ իշխանության և շահի համար վարած պայքարում։ Ձեռքի տպագրական դազգյահը մի վատուժ ձի յեր, վորին քերթարան ուղարկելու ժամանակն էր. նոր տենդային տեմպերը պահանջում եյին մեքենա։

Մտամոլի համառությամբ, Կենիգը յերկար տարիներ ձգտում էր յուր ծրագրի իրագործման, վորը նրա մեջ կազմվել էր 1802 թվականի յերկրորդ կիսին։

Մարդկանց, ձեռնարկությունների և քաղաքների շարանն անցնում է գյուտարարի առջևից, բայց բոլոր փորձերն անաջող են։ Սկզբում Կենիգը տեղափոխվում է Բավարիա և այնտեղ Զուլե քաղաքում, վորտեղ զինագործական ձեռնարկություններ կային, մտածում է շինել յուր մեքենան տեղական փորձառու մեքենագետների ոգնությամբ։ Զուլեյին փոխարինում է Մեյնինգենը, հետո գյուտարարը քշում է Վյուրցբուրգ, այնտեղից նա ճանապարհորդություն է կատարում դեպի Մյունխեն և Վիեննա։

Կենիգը թափառում է յեվրոպական ցամաքում, փորձելով յերկրներ՝ առողջ, ձեռներեց վոգով մարդկանց, վորոնք չվախենային իրենց կապիտալը ներդնել նրա գյուտի իրացման մեջ և հասկանային, վոր նրա մեջ թաքնված է օգուտներ ստանալու հսկայական հնարավորություններ։ Բայց այդ տարիների Գերմանիան տնտեսապես խիստ հետամնաց էր. յեվրոպական աշխարհը ճզմված էր կորսիկացի նվաճողի կրունկի տակ և հիվանդ էր պատերազմով։ Մնում էր յերկու յերկիր, վորտեղ դեռ կարելի յեր բախտը փորձել՝ Ռուսաստանը և Անգլիան։

Կենիգը Վիեննայից յուր ծրագիրն ուղարկում է ռուսական ինքնակալին։ Ռուսաց կառավարությունն արձագանքում է նրա առաջարկին և աջակցություն խոստանում, պահանջելով գյուտարարից նրա մեքենայի մանրամասն նկարագրությունը և գծագիրը։ 1805 թվականի սեպտեմբերին գյուտարարը Լյուբեկի վրայով Պետերբուրգ է ուղարկում անհրաժեշտ նյութերը, իսկ հետևյալ տարվա մայիսին ինքն է ուղևորվում հյուսիսային մայրաքաղաքը։

Կենիգն այնտեղ նոր հիասթափության մեջ է ընկնում։

Յուր նախնական խոստումները՝ կազմակերպել տպարան, տալ Կենիգին 10.000 ռուբլի տարեկան վարձատրություն և ապահովել նրան բնակարանով, կառավարությունը չի կատարում։ Ապարդյուն կերպով նա Պետերբուրգում մաշում է այս աշխարհի ուժեղների շեմքերը—գործն առաջ չի գնում։ Նոյեմբերին Կենիգն ուղևորվում է Անգլիա։

Յերիտասարդ կապիտալիզմի, նոր, յեռանդոտ բուրժուազիայի այդ յերկիրը, դարձավ Կենիգի յերկրորդ հայրենիքը և նրա գյուտի ծննդավայրը։ Լոնդոնում Կենիգը, հանձին խոշոր տպարանատեր Թոմաս Բենսլեյի, գտավ մի կապիտալիստ, վորը համաձայնեց փող ներդնել նոր մեքենա կառուցելու համարձակ գործի մեջ։ Առաջին արագատիպ մեքենան պատրաստվեց 1812 թվականին, իսկ այնուհետև, յերկու տարուց հետո լույս տեսավ «Թայմսի» առաջին համարը՝ տպված Կենիգի մեքենայի վրա։

Տպարանի աշակերտ, աղքատ և թափառաշրջիկ Կենիգը յուր ուղին վերջացրեց նրանով, վոր ինքն էլ դարձավ ձեռնարկու—կապիտալիստ։ Հարստանալով, նա վերադարձավ Գերմանիա,

Բաուերի ընկերակցությամբ 1817 թվականի ապրիլի 10-ին գնեց Ոբերցելլ վանքի շենքը Վյուրցբուրգի մոտ և այնտեղ հիմնեց արագատիպ մեքենաներ պատրաստող յուր ձեռնարկությունը։

Կենիգ և Բաուեր ֆիրման գոյություն ունի մինչև մեր օրերը։

Այլ կերպ դասավորվեց նրա ժամանակակից Զեննեֆելդի կյանքը։ Դերասանի վորդի, Ալոյիզի Զեննեֆելդը ծնվել ե 1771 թվականին Պրագայում։ Շնորհիվ այն բանի, վոր նրա հայրը ծառայության մտավ Մյունխենի պետական թատրոնը, Ալոյիզին հնարավորություն ստացավ, վորպես թոշակառու, անցնել Մյունխենի գիմնազիայի և ճեմարանի դասընթացը։ Այնուհետև նա շարունակեց յուր կրթությունը Ինգոլշտատի համալսարանում, վորտեղ ուսումնասիրվում եր իրավագիտությունը։

Ուսանողական տարիներում ապագա գյուտարարը յուր ուժերը փորձեց դրամատուրգիայի ասպարեզում։ Նրա պիեսներից մեկը՝ «Աղջիկների գիտակը», բեմադրվեց Մյունխենի թատրոնում և լույս ե տեսել առանձին հրատարակությամբ։

Կյանքն հաջողությամբ եր սկսվում. և մատաղ հասակում ով չի յերազել փառքի մասին։ Բայց մոտակա հաջողության և փայլուն կարյերայի վարդագույն յերազները շուտով ընդհարվեցին դաժան իրականության հետ։ Հենց նույն 1792 թվականին մեռավ Ալոյիզիի հայրը և, համարյա, մուրացիկի դրության մեջ թողեց կնոջից և ութ յերեխաներից բաղկացած ընտանիքը։ Ալոյիզին ապարդյուն կերպով աշխատանք եր վորոնում, ձեռնունայն փորձեր եր անում կենսամիջոց ձեռք բերել գրականությամբ — վոչ մի հրատարակիչ չեր համաձայնում հրատարակել նրա գրվածքները։

Այն ժամանակ ձեռնարկու յերիտասարդն ինքը փորձ ե անում տպագրել յուր գրական աշխատանքները։ «Յուր միջոցներով» տպագրելու հեշտ ձև վորոնելիս նա հնարում ե լիտոգրաֆիան։

Համառ փորձերի ընթացքում նրան օգնության ե գալիս պատահականությունը, ավելի ճիշտ՝ յերկու պատահականություն։ Առաջին պատահականություն. Զեննեֆելդը ներկեր լուծելու համար գործ եր ածում գոլինգոֆենյան կրաքարի տախ-

տակ։ Այդ քարն այն ժամանակ լայն գործադրություն ուներ Հարավային Բավարիայում շինարարության, մայթերը սալելու և տնային զանազան մանր իրերի համար։ Զոլենգոֆենյան կրաքարը ամբողջ աշխարհում հայտնի դարձավ լիտոգրաֆիական քար անունով։

Երկրորդ պատահականությունը Զենեֆելդի տունը բերեց լվացարարուհին։ Նա եկավ սպիտակեղենը տանելու 1796 թվականի հուլիսյան օրը, բայց գրելու թուղթ չկար։ Ալոյիզըն տրված սպիտակեղենի հաշիվը ներկով գրեց քարի վրա։ Լվացարարուհու գնալուց հետո, նրա գլխում միտք ծագեց քարի մաքուր տեղերը դեղախարել բորակաթթվի միջոցով, հաշվի ցցուն բնագիրը ստանալու համար։

Փորձն հաջողվեց — բնագիրը քանի դեղախարվում էր, այնքան դառնում էր ցցուն և տպելու համար պետքական։

Այսպես սկսվեց լիտոգրաֆիական արտադրության պատմությունը։

Զենեֆելդն ամբողջ կյանքն աշխատում էր յուր գյուտի հետագա կատարելագործման համար։ 1818 թվին հրատարակած ձեռնարկի մեջ, նա արդեն թվում է քարից տպելու 27 զանազան եղանակներ՝ ցցուն, տափակ, խորացրած, մի կամ մի քանի ներկերով և այլն։

Մինչև անգամ, ուղղակի մահից առաջ (նա մեռավ 1834 թվականի փետրվարի 26-ին), անխոնջ Ալոյիզըն աշխատում էր տպարանական տուշի բարելավման վրա։

Բայց նա չկարողացավ օգտագործել յուր գյուտն անձնական բարեկեցության համար և չանցավ արդյունաբերության նավապետների շարքը՝ թեկուզ երկրորդականների։

Այն ինչ լիտոգրաֆիաներն ստեղծեցին շատ քաղաքներում արդեն XIX դարի առաջին տասնամյակում, և քիչ շա՛հ չեյին բերում նախաձեռնող մարդկանց. իսկ երրորդ տասնամյակից սկսած, լիտոգրաֆիան արդեն տիրապետող էր գրքերի նկարազարդման ասպարեզում։

Զենեֆելդի սեփական ձեռնարկությունը, շնորհիվ գյուտարարի անգործնականության, վողորմելի գոյություն էր քարշ տալիս, և նա մեռավ աղքատ, թողնելով կնոջն ու վորդուն համարյա առանց ապրուստի միջոցների։

Մենք առաջ հիշատակեցինք լորդ Ստենգոպի՝ մետաղյա տպագրական մամուլի գյուտարարի անունը։ Այդ նորմուծումով չի սահմանափակվում Ստենգոպի դերը տպագրական արտադրության բարելավման մեջ։ Նրա յերկրորդ գյուտը, այսպես կոչված մայրերը (մատրիցները) ունեն ել ավելի մեծ նշանակություն։

Ստերեոտիպն առաջին անգամ հնարեց եդինբուրգցի (Շոտլանդիա) վոսկերիչ Վիլլիամ Գեդը 1729 թվականին։ Լորդ Ստենգոպը կատարելագործեց Գեդի մեթոդը և դրանից հետո ստերեոտիպությունը կարևոր տեղ բռնեց տպագրության գործում։

Ստերեոտիպությունը շարվածքից ճիշտ պատճեն ստանալու արվեստն է։

Յեթե գրատպության գյուտը կնշանակեր փորագրատախտակի բաժանումը շարժական լիտերների, ստերեոտիպությունը, ընդհակառակը, կազմակերպեց պրոցեսը հակառակ ուղղությամբ —շարժական լիտերների շարվածքից պատճեն է հանվում մետաղյա տախտակի կամ թղթի ձևով։

Ստերեոտիպ ստանալու պրոցեսը կազմված է յերկու գործողությունից. սկզբից պատրաստ շարվածքից ընդօրինակում են մայրը (մատրիցան). տպման համար նախապատրաստված շարվածքի վրա դնում են խոնավ կարտոն՝ միմյանց սոսնձած մի քանի (մինչև 10-ը) թերթ բարակ թղթից։ Հատուկ խոզանակով հարվածում են կարտոնին, ստիպելով նրան կիպ հպվել շարվածքին և ընդունել լիտերների և կլիշեների բոլոր ցցունությունները։ Այս ձևով ստացած ստերեոտիպային մայրը (մատրիցան) շարվածքի հետ միասին տաքացվում է սեղմիչի տակ և ստանում է անհրաժեշտ ամրությունը։

Առանձին կաղապարի մեջ մայրերը (մատրիցները) լցվում են հալված մետաղով և ստերեոտիպը պատրաստ է—այս յերկրորդ գործողությունն է։

Ստերեոտիպի եյությունը նրանումն է, վոր նա շրիֆտը պահպանում է մաշվելուց, թույլ է տալիս զանազան տևողության ժամանակամիջոցից հետո բազմապատիկ տպագրել հրատարակությունները և, վերջապես, հնարավորություն է տալիս պատրաստել գլանաձև ստերեոտիպներ, վորոնք կանխո-



Ժամանակակից ռոտացիոն մեքենա Պետհրատի տպարանում

բոչեցին նոր հսկայական տեղաշարժի ուղղությունը տպագրական պրակտիկայում։

Արագատիպ մեքենայի յերևան գալը վերաբերում ե Նապոլեոնյան պատերազմների շրջանին—այն ժամանակվա դեռևս յերիտասարդ բուրժուազիայի առաջին հաղթությունների։ Անցնում են տարիներ, և կապիտալիզմը յերկրի վրա տարածում ե յուր արմատները, նրա տունկերը աճում և ամրանում են, բուրժուազիայի շահելու կատաղի վազքը արագությամբ ստեղծում ե ավելի հզոր և ավելի գրանդիոզ արտադրողական ուժեր, քան բոլոր նախորդ սերունդները միասին վերցրած։ Բնության ուժերի հպատակեցում, մեքենաներ, քիմիայի կիրառում հողագործության և արդյունաբերության մեջ, շոգենավեր, յերկաթուղիներ, ելեկտրական հեռագիր, ամբողջ յերկրամասերի հայտնաբերում, գետերի հարմարեցում նավագնացության, բազմաթիվ, կարծես հողից բուսած, բնակավայրեր»։

Կապիտալիզմի տնտեսական և քաղաքական գործունեության տենդային տեմպերի համար Կենիգի մեքենան քիչ ե․ պետք ե ավելի և ավելի արագ շպրտել աճող շուկաները լրագրեր և գրքեր, ավելացնելով հրատարակչական մագնատների ոգուտները։ Կապիտալիստական կոնկվիստադորների[62] կատաղի կռվին պետք ե շուտով հայթայթել թղթե զենքեր՝ շուկաներ գրավելու և շահագործվող մասսաներին հիմարացնելու համար։

XIX դարի քառասնական թվականներին հայտնվեցին արագընթաց տպագրական մեքենաների նոր կառուցվածքներ, վորոնց առաջին ավարտունն եր Բուլլոկի մեքենան—ռոտացիայի նախատիպը։

Բուլլոկի մեքենան քառասյուն լրագիրը մեկ ժամում տպում եր 5—7 հազար որինակ․ Նրա կառուցվածքի հիմնական նորությունն եր՝ տպումը ստերեոտիպից, վոր հագցնվում եր տպագրական թմկագլանի վրա և թղթի թերթերի փոխարինումը ռուլոնե ժապավենով։

Այնուհետև տարեցտարի, տասնամյակից տասնամյակ ծավալվում ե կոնստրուկտորների և մեքենաշինարարական ձեռնարկությունների պայքարը՝ մեքենաների հետագա բարելավման և տպագրական արտադրության բոլոր պրոցեսների մեքենայացման համար։

Թե վորքան է առաջ գնացել նորագույն ռոտացիայի կարողությունը, վոչ միայն Կենիգի արագատիպ մեքենայից, այլ և Բուլլոկի մեքենայից, կարելի յե դատել նրանով, վոր ինժեներ Վուդի «Ուլտրա-Մոդերն» ռոտացիան, սարքավորված 1928 թվականին «Նյու-Յորկ Թայմս» տպարանում, տալիս եր մի ժամում 50 հազար որինակ յերեսուներկու սյուն լրագիր։ Ներկայումս այդ տեմպերն ել յետ են մնացել։

Ռոտացիոն մեքենայի ստերեոտիպը հավասարապես պետքական է թե՛ բնագիրը և թե՛ նկարները տպելու համար։

Ֆոտոգրաֆիայի ոգտագործումը հեղափոխություն մտցրեց նկարազարդ կերտվածքների տպագրության ասպարեզը։ Նկարազարդման ֆոտոմեխանիկական յեղանակները, առաջանալով անցյալ դարի յերկրորդ կեսին՝ անցել են կատարելագործման ահագին ճանապարհ։

Ֆոտոմեխանիկական յեղանակի եյությունը կայանում է նրանում, վոր ամեն մի տարրկայի, նկարի, գծվածքի ֆոտոպատկերումը կարելի յե փոխադրել մետաղի կամ լիտոգրաֆիական քարի վրա, վորոնց վրա քիմիական մշակման միջոցով, մասնավորապես դեղախարումով (հիշենք պղնձի փորագրումը և լիտոգրաֆիան) ստացվում է կամ ցցուն կլիշե կամ տպման խոր կամ հարթ կաղապարներ, վորոնք վերարտադրում են ֆոտոգրաֆիան։

Այս ձևով հեշտ եր ստանալ նկարի սև գծերի և բծերի տպումը, բայց յերանգների անցման պատկերումը գյուտարարական մտքից յերկարատև ջանքեր պահանջեց։ Այդ խնդիրը լուծվեց ցանցավոր նեգատիվի գործադրությամբ։ 1890 թվականին գործադրության մեջ է մտցնվում ռաստրը—ցանց՝ մեջնառած ապակիով, վորը դրվում է ֆոտոապարատի մեջ որիգինալներից նկարելու համար։ Ստացվում է նեգատիվ՝ բաժանված քառակուսիների, վորոնց մեջ՝ ավելի լուսավոր քառակուսիներում կլինեն խոշոր կետերը, իսկ ավելի խավարներում՝ մանրերը՝ բոլոր անցումներով լույսից ստվերին։ «Կլիշեներ պատրաստելու ժամանակ պղնձիկի վրա կստացվի հակառակ պատկեր... Օրինակ՝ մարդ նկարելիս, վոր հագած է սև զգեստ, սպիտակ ոձիք, վանդակավոր փողկապ՝ զգեստը կտա համատարած խոշոր կետեր, ոձիքը՝ ամենամանր, փողկապը՝ զանազան, նայելով նրա յերփներանգությանը»։

Ցանցերը տարբեր խտության են լինում և ցանցերի խոշոր լինելու դեպքում, նկարի բաժանումը զանազան մեծության կետերի խմբումների՝ լավ տեսանելի է հասարակ աչքով, ինչպես, օրինակ, ամեն որ կարելի է տեսնել լրագրերում։

Ֆոտոմեխանիկական յեղանակները թույլ տվին փորագրության տափակ տախտակներից անցնելու գլանաձևներին և վոչ միայն ցցուն կլիշեների համար, այլև խորացրած և տափակ ձևերի։

Գոյություն ունեն մեքենաներ տիֆդրուկի համար, այսինքն՝ խոր տպագրության, վորով պատրաստվում են բոլորին հայտնի մասսայական պատկերազարդ հանդեսները և՛ արտասահմանում, և՛ ԽՍՀՄ-ում։

Վերջին տարիների ընթացքում, պատկերազարդ հրատարակությունների տպագրության ասպարեզում հսկայական աջողությունների հասավ օֆսետյան յեղանակը (մանավորապես բազմագույն), վորն ակներև մեծ ապագա ունի։

Այն ժամանակ, յերբ խոր տպագրության ռոտացիոն մեքենաները տալիս են արագություն, վոր բավականաչափ չէ և մնում սովորական տպագրական ռոտացիաների արագությունից և պահանջում են նկարների և բնագրի առանձին-առանձին տպագրում, օֆսետյան ռոտացիաները միատեսակ լավ վերարտադրում են բնագիրը և նկարազարդումը։

Օֆսետյան յեղանակը տափակ տպագրության «փոխանցող» յեղանակն է։ Տափակ տպագրության հետ մենք արդեն ծանոթացանք լիտոգրաֆիայի մասին խոսելիս։ Իսկ «փոխանցումը» հետևյալն է. օֆսետյան մեքենան, բացի սովորական տպագրական գլանից, ստերեոտիպի հետ միասին ունի լրացուցիչ փոխանցող ռետինե գլան։ Ներկով ծածկված տպագրական գլանը նախ հուպ է տրվում ռետինով պատած փոխանցող գլանին։ Ռետինն ընդունում է ներկը և փոխանցում է թղթին։

Յերրորդ ռետինե գլանի գործադրության դնելն առաջացել է նրանից, վոր տափակ տպագրության ժամանակ թղթի հպումը մետաղյա գլանին չի ապահովում նկարի բոլոր մասերի ներկի թղթին անցնելը, վորովհետև վոչ մետաղյա մակերեսը, վոչ թուղթը իդեալական հարթություն չեն կարող ունենալ։ Ռետինե գլանը վերացնում է այդ դժվարությունը։

Ոչ պակաս հոյակապ փոփոխություններ կրեց թղթի արտադրությունը XIX դարի սկզբին։ Այդ փոփոխությունները սերտ կերպով հյուսվում էին պոլիգրաֆիայի տեխնիկական վերազինման հետ, վորովհետև թղթի արտադրության աճումը խթանում էր տպարանների արտադրողականությունը և յուր հերթին առաջ շարժվում արագատիպ մեքենաների և ռոտացիաների արագ ավելացող պահանջի ազդեցության տակ։

Մեքենայացման առաջին տարրերը թղթի արտադրության մեջ մտցրած էին դեռևս Գուտենբերգից առաջ՝ թղթի ջրաղացների կազմակերպությամբ, բայց ամենապատասխանատու մասը —թղթի թերթի ձևավորումը—դեռ դարեր շարունակ արվում էր ձեռնայեղանակով։

Վերջապես, հենց ֆրանսիական Մեծ հեղափոխության նույն տարիներին, յերբ Կենիգը կրում էր յուր մեջ արագատիպ մեքենայի գաղափարը, ֆրանսիացի Լուի Ռոբերը մշակում էր թղթագործ մեքենայի ծրագիրը։ Թղթի առաջին մեքենան կառուցվեց և գործի դրվեց Անգլիայում 1803 թվականին։

Կ. Մարքսը շատ ուշադրություն է նվիրել թղթի արտադրությանը, համարելով թղթի մեքենան ամենանշանավոր տեխնիկական նորմուծություններից մեկը և տեխնիկայի զարգացման կարևորագույն տենդենցների փայլուն օրինակ. Նա գրում է.

«Հաջողությունը պայմանավորող յերկու մեծ սկզբունք լիովին մարմնացած են այդ զարմանալի ավտոմատի մեջ։ Արդյունաբերության բոլոր ճյուղերի ամենանշանավոր գործոններից մեկը հանդիսանում է արտադրության անընդհատությունը։ Առավել կատարյալ և առավել արտադրողական մեքենան այն է, վորն ընդունակ է անընդհատ արտադրողականության։ Այնտեղ, վորտեղ պատրաստվող առարկան առանց ընդմիջման (ուրեմն և առանց դանդաղելու) կարող է անցնել մեքենաներով մշակելու առաջին ստադիայից մինչև վերջինը, ամենայն հավանականությամբ, կարտադրվի ավելի լավ բանվածք և ավելի քիչ ծախսումով, քան այն դեպքում, յերբ առարկան յուր մշակման ամեն մի ստադիայում տարվի մի տեղից մյուսը…

Նա (թղթի մեքենան) իրենից ներկայացնում է ավարտած

սխեմ, որովհետև նյութը տրվում է մի ծայրից և պատրաստի քանվածքը դուրս է գալիս հակառակ ծայրից։ Այդ մեքենան ուրիշ տեսակետից էլ ցուցահանում է յուր զարմանալի կառուցվածքը, այն է՝ նա գործում է բոլորովին ավտոմատ կերպով։ Նա մարդուց օգնություն չի ստանում, այլ յուր վրա դրած խնդիրը կատարում է համակցության ճանապարհով և համապատասխան գործողությունով մասերի, որոնցից նա կազմված է։ Յեթե որևէ տեսակետից աջակցությունն անհրաժեշտ է, այդ միայն պատահական դժվարությունները վերացնելու իմաստով, բայց ոչ իրեն՝ արտադրությանը օգնելու համար»։

Թուղթ պատրաստող մեքենան և տպագրական ռոտացիան փայլուն ներկայացուցիչներն են ավտոմատացրած արտադրողական պրոցեսների, որոնք կազմում են ժամանակակից տեխնիկայի հիմունքը։ Այդ մեքենաների վերջին ներկայացուցիչներն, իհարկե, շատ հեռու յեն գնացել նրանից, ինչ կար Մարքսի կենդանի ժամանակ, բայց նրա տված բնորոշումը մինչև այսօր էլ լիովին պահպանում է յուր նշանակությունը։ Նորագույն մեքենաների մեջ հիմնական սկզբունքները, որ բացեց գիտական սոցիալիզմի հիմնադիրը, յերևում են էլ ավելի զարգացած ձևով։ Թե որքան առաջ և հեռու յե գնացել այդ ավտոմատների արտադրողական կարողությունը, կարելի յե դատել նրանից, որ ԽՍՀՄ-ի Բալախնայի գործարանի թղթի մեքենան համարյա հարյուր անգամ ավելի արտադրանք է տալիս ժամանակի մի միավորում, քան Դոնկինի մեքենան, որին ըստ յերևույթին յուր ժամանակին մանրամասն ուսումնասիրել է Մարքսը։

Տպագրական գործի տարրերից մեքենայացմանն ամենից յերկար դիմադրում եր շարվածքը։ Մինչև XIX դարի վերջին քառորդը շարում եյին ձեռքով (մաքսիմալ արտադրողականությունը 1000 տառ մի ժամում), յերբ, վերջապես, 1886 թվականին Օտտոմար Մերգենտալերը հնարեց շարող մեքենա—լինոտիպը, նա մի ժամում շարում է ավելի քան չորս հազար տառ՝ առանձին ձուլած տողերի ձևով։

Ամբողջ տողերի ձուլման անհարմարությունը, որ դժվարացնում եր սխալների ուղղումը, առաջացրեց նոր մեքենայի—մոնոտիպի—գործադրության մեջ դնելը՝ տառային մեքենական



Ժամանակակից «Լինոտիպ» մեքենաների ցեխ Պետհրատի տպարանում

շարվածքով։ Մոնոտիպը կառուցել է 1892 թվականին ամերիկացի Լանստոնը։

Գյուտարարական միտքը թափանցել է տպագրական արտադրության բոլոր անկյունները, մտցրել է հազարավոր մեծ ու փոքր նորություններ վարպետ Յոհանի գործի մեջ և անվերջ բարդացրել է այն։

Անդադար վազքով ընկած շահի հետևից, խթանված կապիտալիստական մրցման դաժան խարազանով, հրատարակչական գործը գլուխ ջարդելով առաջ էր վազում տեխնիկական հառաջադիմության ճանապարհով նրա համար, որ... բայց սրա մասին հետո։

Վերջին հինգ հարյուր տարվա ընթացքում գրատպությունը ոչ միայն արմատապես փոփոխել է յուր տեխնիկան, այլև աճել է աներևակայելի չափերով։

Մինչև 1500 թվականը հրատարակված է մոտավորապես 30,000 անուն գիրք, XVI դարում—285,000, XVII դարում—972,000, XVIII դարում—1,637,000, XIX դարում—6,100,000 և XX դարի առաջին 30 տարում—ավելի քան 5 միլիոն, այսինքն՝ համարյա այնքան, որքան ամբողջ նախընթաց դարում։

Գրային արտադրանքի, լրագրի և ժուռնալների տիրաժի աճումը վերջին դարի ընթացքում արտահայտվում է աստղաբաշխական թվերով. կարծես մարդկությունը՝ խելացնորության մեջ ընկած, որոշել է փաթաթել մայր ցամաքը տպարանական նշաններով ծածկված թղթե խանձարուրով և լցնել օվկիանոսները լրագրերի, ժուռնալների և գրքերի կապոցներով։

Իսկ այժմ այն մասին՝ որ հետո։

Մենք ապրում ենք արտադրողական ուժերի մեծ հուզումների տարիներում ընդդեմ կապիտալիստական արտադրության, որն ստեղծել է նրանց—աշխատավոր մասսաների հուզումները բուրժուազիայի դեմ։

Գրատպությունը, ջրի կաթիլների պես, արտացոլում է յուր մեջ հասունացած սոցիալական կոնֆլիկտի ամբողջ ցնցող պատկերը։

Փտած իմպերիալիստական կապիտալիզմը փակել է տեխնիկայի զարգացման հետագա ճանապարհը—նոր գյուտերը գոր-

ծադրություն չեն գտնում, ճգնաժամը կանգնեցնում է ձեռնարկությունների վերակառուցումը և նրանց ընդլայնումը։ Տպագրական արտադրության տեխնիկան, իհարկե, բացառություն չի կազմում։

Համաշխարհային իմպերիալիստական սպանդի սկզբից անցյած ժամանակաշրջանում ոչ միայն կանգ է առել հրատարակչական արտադրանքի աճումը, այլ նրա արտարկը մինչև անգամ պակասել է բոլոր խոշորագույն կապիտալիստական յերկրներում։

Միայն հաղթանակող պրոլետարիատի յերկիրը—Խորհուրդների Միությունը—կատարում է հաղթական յերթ՝ յուր տպագրական արտադրանքի անընդհատ լայնացման ուղիով, միայն նրանում բացված են տպագրական տեխնիկայի ամեն տեսակ նորմուծումների բոլոր հնարավորությունները և արթնացած են ամենալայն աշխատավոր մասսաների գյուտարարության վիթխարի ուժերը։

Մինչհեղափոխական Ռուսաստանում չկային տպագրական բարդ սարքավորում պատրաստող արդյունաբերական ձեռնարկներ. նա ներմուծվում էր արտասահմանից։ ԽՍՀՄ-ում, որ անց է կացնում լենինյան ինդուստրացման պլանը, արդեն յուրացրած է տպագրական գործի ամենաբարդ մեքենաների կառուցումը—շարվածքի, տափակ տպագրական մեքենաների և ռոտացիայի։

Խոսք չորրորդ

Տպագրական տեխնիկայի վիթխարի վերելքը կապիտալիստական դարաշրջանում անչափելիորեն ուժեղացրեց մամուլի դերը ժողովուրդների կյանքում։ Քաղաքականությունը, տնտեսությունը, գիտությունը, կենցաղը—հասարակական կյանքի բոլոր կողմերը կրում են իրենց վրա նրա մշտական ազդեցությունը։ տասնամյակից տասնամյակ, տարեցտարի մամուլը մի հաղթանակից անցնում է մյուսին, դառնալով, ինչպես օդն ու ջուրը, անհրաժեշտ բան հասարակական օրգանիզմի համար։

Բայց մամուլի այդ հաղթանակները միաժամանակ նրա

մեծագույն պարտություններն էին, վորովհետև բուրժուազիայի ձեռքին նա դարձավ գործիք աշխատավոր մասսաների կեղեքման, կաշառման, ռեկլամի և շանտաժի։ Կապիտալիստական աշխարհի մամուլը, վոր ուժի և իշխանության յերևույթ է, իրոք ստրուկ է հետադիմական գրաքննության և նրա ամեն մի շարժումը կոպտաբար սահմանափակված է դիվանագիտական կաբինետների, բանկերի և տրեստների կամքով։ Նա թվում է հառաջադիմության միջոց, նրա խռովահույզ կյանքն առաջացնում է առաջ շարժվելու յերևույթը, բայց իրոք նա միայն ամբարտակ է մասսաների մեծ շարժման ճանապարհին՝ դեպի լավագույն ապագան։

Այսպես է ամենուրեք, և՛ մերկապարանոց ֆաշիստական դիկտատուրայի և այսպես կոչված «դեմոկրատական» պետությունների մեջ։

Մի ժամանակ, ֆեոդալական հիմունքների հեղաբեկման որերին, բուրժուազիայի դերը հեղափոխական էր. այն ժամանակ, կարճատև ժամանակով, տպագրած տողերի գորշ ծխի միջով, վորոնք գովաբանում և արդարացնում էին շահագործման կարգը և բարձր իշխանությունը, պայծառ բոցի նման ժայթքում էին խռովարար հրատարակություններ, ազատ գրքեր։

Դեռևս XVII դարի կեսին, առաջին անգլիական հեղափոխությունը, յերբ «բուրժուազիան, դաշնակցած նոր ազնվականության հետ, կռվում էր միապետության, ֆեոդալական ազնվականության և տիրապետող յեկեղեցու դեմ» (Մարքս), ցույց տվեց, թե վորքան մեծ է մամուլի առաջադիմական դերը։ Բնորոշ է, վոր տպագրական խոսքը ամենալայն կերպով օգտագործում է ձախ դեմոկրատական թևը—լեվելլերները՝ հետևողական քաղաքական դեմոկրատիայի կողմնակիցները, վորոնք դուրս էին յեկել քաղաքային և գյուղական մանր բուրժուազիայի շարքերից։ Հենց այդ ժամանակ հայտնվում է տպագրության առաջին նահատակը, լեվելլերների առաջնորդ գրականագետ Լիլբերնը։ Այդ մարդը գիտեր մամուլի ագիտացիոն ուժը. այս գործին խպաստ դրեց յուր արտասովոր տաղանդը և դրա փոխարեն, համարյա յուր ամբողջ կյանքի ընթացքում, գտնվում էր կամ դատի տակ, կամ բանտում։

1789 թվականի ֆրանսիական Մեծ հեղափոխությունը փայլուն եջեր է արձանագրել հեղափոխական մամուլի պատմության մեջ։ Ժողովրդական բունտով յեռող Փարիզում, մինչ այդ փոքրաթիվ պարբերական հրատարակությունների քանակը կարճ ժամանակամիջոցում հասնում է 250-ի — այն ժամանակների համար հսկայական թիվ։ Այդ պարբերականը, վորպես անմիջական զենք քաղաքական պայքարի, դրա ամենալավ մասը բորբոքում է մասսաներին և նրանց մղում գրոհի հին կարգերի դեմ։ Դեռ ֆրանսիական Մեծ հեղափոխությունը մերկացնում է «ազատ մամուլի» առաջադիմական դերի վրա ունեցած հույսերի անմտությունը։

Դրանք հեղափոխական առաջին որերի մանկամիտ մտապատրանքներ եյին. կարծես մամուլը դասակարգային պայքարի սուր զենքերից չէ, և բուրժուական «մամուլի ազատությունը» բաց սողանցք չէ հակահեղափոխական արտելքի համար։ Վորքան ավելի եյին ծավալվում հեղափոխական անցքերը, այնքան ավելի պարզ եր դառնում այդ մտապատրանքների սնանկությունը, վորովհետև այդ շինծու ազատությունների ծածկույթի տակ բազմանում եր սպիտակ գվարդիական գրականությունը, վորի դեմ է ուղղված Կոնվենտի 1793 թվականի մարտի 29-ի դեկրետը, վոր հաստատում է թե՝ ամեն մի կոչ «ուղղված ժողովրդական գերիշխանության դեմ» պատժվում է մահով, վորովհետև «ազատ» մամուլի ոգնությամբ դավադրություն է նյութվում հեղափոխական ավանգարդի և նրա առաջնորդների դեմ, վորովհետև «ազատ» մամուլի շարժիչ ուժերն եյին՝ չարաշահությունն ու կաշառումը։

Յեվ ամեն մի նոր հեղափոխական շարժում նորից և նորից հաստատում է, վոր մամուլը հզոր գործիք է հեղափոխական այն ջոկատների ձեռքին, վորոնք արտահայտում են առաջավոր գաղափարներ և վորոնց պատկանում է ապագան — այսպես է յեղել 1848 թվականին, այսպես է յեղել Փարիզի Կոմունայի Մեծ օրերին և այսպես է յեղել Ռուսաստանում 1905 և 1917 թվականներին։

Բայց այն օրերը, յերբ յերիտասարդ բուրժուազիան կըռ-

վում էր ֆեոդալական մնացորդների վոչնչացման համար՝ հեռու անցյալում են։

Իշխանությունը խլված էր, բուրժուազիայի սոցիալական դերը փոխվեց և նրա մամուլը դարձավ հետադիմական մամուլ, վորովհետև նա ծառայում է հետադիմական դասակարգի, վոր պայքարում է ամրացող պրոլետարիատի դեմ, վորն ավելի և ավելի հավատով է գրոհում կապիտալիստական կարգերի ամրությունների վրա։

Պրոլետարիատի զարգացման հետ միասին յերևան է գալիս և հեղափոխական մամուլ. բանվոր դասակարգը սովորում է օգտագործել և՛ գաղտնի տպարանները, և՛ արտասահմանյան հրատարակությունները, և՛ կարճատև լեգալ հնարավորությունները, և՛ գրաքննությանը խաբելը։ Հեղափոխական մամուլը—սկզբում խաղաղ ուտոպիստական—կոփվում է դասակարգային ճակատամարտերի հնոցում և աճում։

Յեվ այդ մամուլի պարտությունները մեծագույն հաղթանակներն եյին և՛ յուր, և՛ բանվոր դասակարգի, և՛ մարդկության։

Քայլելով պարտությունների միջով—տպարանների կործանման, կալանքների, աքսորի և յուր մարտիկների մահապատիժների—աճեց կոմունիստական մամուլը՝ այն, վոր Խորհրդային Միության մեջ բոլշևիկների հավատարիմ ոգնականն է նրանց շինարարական պայքարում, իսկ կապիտալիստական յերկրներում անողորմ կռիվ է մղում մեռնող բուրժուազիայի դեմ, նրա վարձկանների և լակեյների դեմ։

Հեղափոխական պրոլետարիատի ձեռքին կոմունիստական մամուլը հսկայական համաշխարհային ուժ է։ Յոհան Ենսֆլեյշ-Գուտենբերգի գյուտը, ծառայելով այդ մամուլին, առաջին անգամն է, վոր ծառայում է ամբողջ աշխատավոր մարդկության բարորությանը։

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1 Պատրիկ— *այսպես էին կոչվում գերմանական քաղաքների ունևոր բյուրգերական տոհմերի քաղաքացիները, վորոնք մասնակցում էին քաղաքային ինքնավարության մեջ։*

2 Չոմպի— *ունեզրկված բանվորներ Ֆլորենցիայում, վորոնց «քրջոտներ» էին անվանում։*

3 Չինշ— *հողային տուրք (բահրա)։*

4 Սերվ— *(լատ. ստրուկ)— ֆեոդալական Արևմտյան Յեվրոպայում. առհասարակ —ճորտ։*

5 Կապելլան— *կաթոլիկական յեկեղեցում քահանա, վոր սպասավորում է կապելլայում, այսինքն՝ մատուռում, տնային յեկեղեցում կամ մեծ յեկեղեցու յերկրորդական բեմում։*

6 Մագիստրատ — *Գերմանիայում—քաղաքային ինքնավարության մարմին։*

7 Յանուս— *հին հռոմեական աստվածություն, աստված բոլոր սկզբնավորությունների։ Պատկերացվում եր յերկու հակառակ կողմերի դարձրած դեմքերով (դեպի անցյալը և ապագան)։*

8 Ռատուշ— *գերմանական քաղաքների ինքնավարության շենքերը։*

9 Աբելյար— *(1079—1142 թ.) ֆրանսիական միջնադարյան փիլիսոփա-ռացիոնալիզմի նախահայրերից մեկը։*

10 Եդիկտ— *Հռոմեական կայսրության դարաշրջանում և հետագայում— կայսրների և թագավորների կարևորագույն հրովարտակները։*

11 Մանուսկրիպտ— *(լատ.)—ձեռագիր։*

12 Կոզիմո-Մեդիչի *(1389—1464 թ.)—ներկայացուցիչ ֆլորենտյան բանկիրների և պետական գործիչների ընտանիքի, վորոնք մի շարք տարիներ կառավարում էին հանրապետական արտաքին ձևերը պահպանած Ֆլորենցիան։*

13 Թեոկրատիա— *(հուն.—աստվածպետություն)—պետական իրավակարգ, վորտեղ իշխանությունը գտնվում է քրմության կամ հոգևորականության ձեռքին։*

14 Մարտին-Լյութեր (1483—1546 թ.)—ամենախոշոր յեկեղեցական բարենորոգիչ (Գերմանիա), վորի անունով կոչվում ե ամբողջ բողոքական յեկեղեցին (Լյութերականություն)։

15 Պյութագոր (VI դար նախքան մեր թվականությունը)—հին հունական փիլիսոփա. նրան վերագրում են նույնպես մաթեմատիկայով և յերաժշտության թեորիայով զբաղվելը։

16 Արիստոտել (384—322 թ. նախքան մեր թվականությունը)—հնադարի խոշորագույն մտածող-գիտնականներից մեկը։ Լինելով իդեալիզմի հիմնադիրներից մեկը, Արիստոտելը համարվում ե ձևական տրամաբանության և նկարագրական կենսաբանության ստեղծողը։

17 Գալիլեյ (1564—1642 թ.)—իտալական մեծ ֆիզիկոս և աստղաբաշխ. Գտավ ճոճանակի ճոճման և առարկաների անկման օրենքները։ Տրվեց ինկվիզիցիայի դատին, արևակենտրոնային սիստեմը պաշտպանելու համար, ըստ վորի արևն ե, վոր գտնվում ե մոլորակային սիստեմի կենտրոնում և վոչ թե յերկիրը (ինչպես պնդում եր յեկեղեցին)։

18 Կուրֆյուրստ— գերմանական ուժեղագույն աշխարհիկ, նաև հոգևորական իշխանները, վորոնք օգտվում եյին կայսր ընտրելու իրավունքով։

19 Տրուվերներ— հյուսիս-ֆրանսիական, միջնադարյան բանաստեղծներ Տրուվերներ անվան տակ հասկացվում են գյուղացներգական «սիրագործության յերգերի» և ասպետական պոեմների ստեղծագործողները։

20 Կարմելիտներ— կաթոլիկական կուսակրոն միաբանություն, հիմնված Պաղեստինում, խաչակրաց արշավանքների դարաշրջանում, տարածվեց Արևմտյան Յեվրոպայում։

21 Թեոլոգիա— կրոնական իդեոլոգիայի տեսական հիմնավորումը և դավանանքների ու պաշտամունքների սիստեմի վերածելը։

22 Օլիգարխիա— այնպիսի պետական իրավակարգ, վորի ժամանակ պետական իշխանությունը գտնվում ե սակավաթիվ մարդկանց ձեռքում։

23 Օրթոդոքս— բառացի ուղղափառ, առանց վորևե ազավաղումների։

24 Ինկվիզիցիա— կաթոլիկական յեկեղեցու դատական կազմակերպություն՝ հերետիկոսության դեմ կռվելու համար։

25 Ռեյխլին Յոհան (1455—1522 թ.)—գերմանական հումանիստ, աչքի ընկնող գիտակ լատինական, հունական և հրեական լեզուների։ Առանձին նշանակություն եր տալիս աստվածաշնչի բնագրի քննադատական ուսումնասիրության։ Ռեյխլինի թշնամիները, Քյոլնի ինկվիզիտոր Հոխստրատենի գլխավորությամբ, նրան մեղադրում եյին դեպի հրեականությունն ունեցած կողմնակալության մեջ։

26 Հուտտեն Ուլրիխ (1488—1523 թ.)— գերմանական հումանիստ, աղքատ ասպետական ընտանիքից։ Հռոմեյական յեկեղեցու փոխերիմ հակառակորդ եր՝ հարեց Լյութերի բարենորոգչությանը և մասնակցեց ասպետական ապստամբության։ Հեղինակ մի շարք գրական յերկերի և մասնավորապես «Մութ մարդկանց նամակների», վոր գրված են ի պաշտպանություն Ռեյխլինի։

27 Ֆրագմենտ— հատված, մաս։

28 Ինդուլգենցիա— *մանրամասն տես գլ. 7, եջ 98։*

29 In folio— *գրքի չափը, որ ստացվում է թղթի թերթը յերկու մասի ծալելուց։ Ներկայում* in folio *չափը գործադրվում է սակավ՝ միմիայն առանձնապես շքեղ հրատարակությունների համար։*

30 Դոնատներ— *լատինական քերականություններ։*

31 Սիգնատուրա— *տպագրական թերթերի հերթական համարակալությունը, որ լինում է առաջին եջի ներքևում, գիրքը կազմելիս տպագրական թերթերը ճիշտ դասավորելու համար։*

32 Կուստոդա— *հետևյալ եջի առաջին բառը կամ վանկը։ Կուստոդան դրվում եր հնադարյան գրքերի տվյալ եջի աջ կողմից, փոխարենը նրանք համարակալում չունեյին և կարելի յեր շփոթել եջերի հետևողական կարգը։*

33 Ինիցիալ— *գլխատառ, առաջին բառի առաջին տառի պատկերագիրը սովորաբար խոշոր չափի, որ արվում եր ձեռագիր և առաջին տպագիր գրքերում, զարդարում եյին նկարներով և յերբեմն էլ ներկում։*

34 Կղեր— *կոչում, որ II դարից հատկացվեց հոգևորականությանը ի հակադրություն աշխարհականների (կղերական—հոգևորականությանը պատկանող մարդ)։*

35 Կանոնիկոս— *մայր տաճարի պաշտոնակատար քահանա, որ անդամ է կապիտուլի, այսինքն՝ յեպիսկոպոսին կից գոյություն ունեցող թեմական հիմնարկության, որը վարում է ծխական կամ կուսակրոն հոգևորականության գործերը։*

36 Եպիկենտրոն— *կետ, գիծ կամ տափարակ յերկրի մակերեսին, որտեղ երկրաշարժի ժամանակ հարվածը ամենաուժեղն է և ուղղված է վարից վեր։*

37 Դոֆին — *նախահեղափոխական Ֆրանսիայում թագավորական գահաժառանգի տիտղոսը։*

38 Վիլլան — *միջին դարերում կիսազատ կամ ճորտ գյուղացի։*

39 Ինսուրգենտ— *ապստամբ, ապստամբության մասնակցող։*

40 Տեմպլ — *Անգլիական թագավորի ապրելու տեղը Լոնդոնում։*

41 Սենյորիա— *ընտրական մարմին Ֆլորենցիայում, որը վարում է Ֆլորենցիայի հանրապետության գործերը։*

42 Հուս Յան *(1369—1415 թ.)—չեխական կրոնական բարենորոգիչ և չեխական ազգային ու կուլտուրական անկախության մարտնչող, դուրս յեկավ պապական իշխանության և ինդուլգենցիաների վաճառման դեմ. մեղադրվեց հերետիկոսության մեջ, բանադրվեց և այրվեց խարույկի վրա։*

43 *Ժակ-բոնոմ (շաշ Ակոբ)—ֆրանսիական ֆեոդալներն արհամարհանքով այսպես եյին կոչում գյուղացիներին։*

44 Կոլումբոս Քրիստափոր *(մոտ. 1446—1506 թ.)—նշանավոր ծովագնաց, որ գտավ Ամերիկան։*

45 Վասկո դա-Գամա— *(1469—1524 թ.)—պորտուգալական ծովագնաց, որ անցնելով Աֆրիկայի հարավային ծայրի բոլորքով, արշավանք կատարեց Հնդկաստան։*

46 Դիաց Բարթոլոմեո — XV *դարի պորտուգալական ծովագնաց։*

47 Պտղոմեոս-Կլավդիոս (II *դ. քրիստ. թվակ.)—հռչակավոր հունական աստղաբաշխ և աշխարհագրագետ։*

48 Սկրիպտորիա — *վանքին կից շենք, որտեղ վարդապետ-արտագրողները ձեռքով արտագրում եյին սրբազան գրքերը։*

49 Աբբա — *կաթոլիկների մի քանի հոգևոր անձերի կոչումը, առաջ միայն վանահայրերի։*

50 Պրիոր — *աբբատից հետո ամենաազդեցիկ անձը կաթոլիկական յեկեղեցու վանքում. նա փոխարինում է աբբային և նրանից ձեռնադրվում յուր պաշտոնին։*

51 Ինտերդիկտ — *միջին դարերում ժամասացության և ծեսեր կատարելու արգելանք, որ դնում եյին պապերը, որպես միջոց կռվելու անհնազանդ թագավորների, իշխանների և քաղաքների դեմ. որը յերբեմն տարածվում եր ամբողջ յերկրամասի վրա (քաղաք, մարզ, յերկիր)։*

52 Օբոլ—*մանր դրամ։*

53 Կապիտուլ —*տես վերը «Կանոնիկոս»—35։*

54 Կամերար[55], Ապոկրիզար[56], Ցելար— *կաթոլիկական վանքի պաշտոնները (կամերարը—հանդերձապահ. ցելարը—տնտես. ապոկրիզարը—վանական արժեքների պահպանող)։*

57 Դորմիտորիա — *վանական շենք, որտեղ քնում եյին վարդապետները։*

58 Ֆրանցիսկյաններ—*կաթոլիկական կուսակրոն, այսպես կոչված «մուրացիկ միաբանություն»-ներից մեկը, կոչումն ստացել է* XII *դարի վերջին և* XIII *դարի սկզբի յուր հիմնադիր իտալական միստիկ Ֆրանցիսկ Ասսիզացու անունից։*

59 Պոսսեվին— *յեզվիտ.* XVI *դարում յեղել է Ռուսաստանում և արտասահման վերադառնալուց հետո լույս ընծայեց «Մոսկովիա» անունով գիրքը։*

60 Ֆլետչեր Ջիլս *(1548 —1611 թ.)—անգլիացի ճանապարհորդ. որան անգլիական թագուհի Ելիզաբեթն ուղարկեց Մոսկվա, որպեսզի անգլիացիք ստանան մոսկովյան թագավորության առևտրի մենաշնորհ։*

61 Անաբիոզական դրություն— *կարծեցյալ մեռած դրություն*

62 Կոնկվիստադորներ— *իսպանական և պորտուգալական—հաճախ շատ փոքր—կամավոր զորախմբերի առաջնորդները, որոնք նվաճեցին միջին և զգալի մասը Հարավային Ամերիկայի։*

ՑԱՆԿ

Էջ

Խոսք առաջին (առաջաբանի փոխարեն) 5

Մաս I. ՄԱՅՆՑԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՅՈՀԱՆ ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

Գլ. I. Մայնցի քաղաքային գրագիր Նիկոլաուս Վերշտատի արկածը . . 6
« II Խոսք—ձեռագիր—մամուլ 26
» III. Տարիները Ստրասբուրգում 38
» IV Առաջին ներդրված նորավեպը 52

Մաս II ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՏԸ

Գլ. V. Վոսկե քաղաք Մայնցը 64
» VI. Գաղափարի մարմնացումը 76
» VII. Ֆուստ և Շեֆեր 92
» VIII Ժողովուրդը, կայսրները և պապերը 103
» IX. Վառոդ, կողմնացույց, գրատպություն 121
» X Յերկրորդ ներդրված նորավեպը 129

Մաս III. ՄԱՐԴՈՒ ՄԱՀԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԻ ԿՅԱՆՔԸ

Գլ. XI. Վողբերգություն Մայնցում և Գուտենբերգի մահը . . 150
« XII Խռովահույզ աշխարհ 160
« XIII. Հետագայինը 172

ՀԱՎԵԼՎԱԾ

Օտար բառերի բացատրություն 195

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007876

ԳԻՆԸ 3 Ռ.

696

A II/19431

В. ПРОСКУРЯКОВ

ГУТЕНБЕРГ

Гиз ССР Армении, Ереван, 1936 г.